

საბჭოთა

II სურ

საბჭოთა

გარეგანი, ჯანსაღი და სხვა სხვა

საბჭოთა

№ 10

საბჭოთა

1902

საბჭოთა

Типография Груз. Издат. Т—ва. | Сахаров, Вранг. Зримо. Гибридные.

1902

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 10

	Երես
1. ԼեոնեբոնիՄ, պատկեր Ա. Ահարոնեանի	5
2. ԱԳԱ ՆԷԳՐԻՅ, բանաստեղծութիւններ, թարգմ. Յ. Յակոբեանի	13
3. ՀԱՅԵՐԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ՀԵՏ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ ԵՒ ՅԵՏՈՅ, յօդ. Հ. Առաքելեանի	15
4. ՆԻՍՍԱ, պատմուածք Ա. Դեյլի, թարգմ. Յարրօի	21
5. ՕՐՍ ՏՐՏՈՒՄ, ՍԵՒ Է, բանաստեղծ. Ա. Իսահակեանի	35
6. ԵՂՕԻ ՔՈՌ ԲԱՆՏԸ, պատմուածք Շահրխարի	37
7. ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ, Կուրբաք-Հաբուցի	53
8. ՍՊԱՀԱՆԻ ՓԷՐԻԱ ԳԱՒԱՌԸ, նկարագիր Տիգրան Աբգարեանի	63
9. ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒ- ԹԻՒՆԻՅ, Տիգրանի	71
10. ՄՕՆՆԱ ՎԱՆՆԱ, զրամա Մօրիս Մեքեղիկի, թարգմ. Տ. Յովհաննիսեանի	95
11. ԱՂՋԻԿ, Առողջապահական-բարոյագիտական էտիւդ, բժյ. Վ. Աբծրուցու	121
12. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—32) Գ. քահ. Մկրտումեանց, «Ալէք. Գալաղցի քահանան», Տ. Ե.—33) Յ. Փ. ԷՄ. Շ. «Կեանքի գնով», Տ. Ե.—34) Willam Watson «Ծիրանի արեւել- քը», Տ. Ե.	159
13. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՅ, Հայոց զրամատիկական ընկերութեան խմբի ներկայացումները Թիֆ- լիսում, Ա.	166
14. ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ, Բաղաքային ընտրութիւնները Երևանում, Ա.—Դօ	185
15. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Կրիմիէնականների միջազգային ժողովը Պետերբուրգում.—Ոճրողիտութեան մէջ Նոր հոսանք.—Պրօֆէսոր Լիստի կարծիքը.—Ընչաքաղցու- թիւնը իբրեւ յանցաւորութեան շարժախթ.—Փողամու- հայ ինտելիգենտների նմուշներ.—Ազնուական կալուա- ծատիրութեան պահպանութիւն.—Լազարեան ճամբարա- նի Լիցէճնի 30-ամեակը	189

Նոր շրջան II տարի

Հրատ. XIV տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 10

ՀՈԿՏԵՄԲԵՐ

1902



Խ Ի Ֆ Լ Ի Ս

Типография Груз. Издат. Т—ва. | Տպարան Վրաց Հրատ. Հեղեղութեան.
1902

Дозволено цензурою, Тифлисъ, 31 октября 1902 года.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 10

	Երես
1. Լեոնեբրոնի՝ պատկեր Ա. Ահարոնեանի	5
2. ԱԴԱ ՆԷԳՐԻԻՑ, բանաստեղծութիւններ, թարգմ. Յ. Յակոբեանի	13
3. ՀԱՅԵՐԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ՀԵՏ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ ԵՒ ՅԵՏՈՅ, յօդ. Հ. Առաքելեանի	15
4. ՆԻՍՍԱ, պատմուածք Ա. Դելլի, թարգմ. Յարրօի	21
5. ՕՐՍ ՏՐՏՈՒՄ, ՍԵՒ Է, բանաստեղծ. Ա. Խաճկեանի	35
6. ԵՂՕԻ ՔՈՌ ԲԱԽՏԸ, պատմուածք Շահրխարի	37
7. ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒԴԸ, Կուրքաթ-Հարունի	53
8. ՍՊԱՀԱՆԻ ՓԷՐԻԱ ԳԱՒԱՌԸ, նկարագիր Տիգրան Աբգարեանի	63
9. ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ, ԳՐԱԿԱՆՈՒ- ԹԻՒՆԻՑ, Տիգրանի	71
10. ՄՕՆՆԱ ՎԱՆՆԱ, զրամա Մօրիս Մեհեղիկի, թարգմ. Տ. Յովհաննիսեանի	95
11. ԱՂՋԻԿ, Առողջապահական-բարոյագիտական էտիդ, բժշկ. Վ. Արծրունու	121
12. ՄՍՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—32) Գ. քահ. Մկրտումեանց, «Ալէք. Գալաղցի քահանան», Տ. Յ.—33) Յ. Փ. և Մ. Ե. «Կեանքի գնով», Տ. Յ.—34) Willam Watson «Ծիրանի արեւել- քը», Տ. Յ.	159
13. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ, Հայոց զրամատիկական ընկերութեան խմբի ներկայացումները Թիֆ- լիսում, Ա.	166
14. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ, Քաղաքային ընտրութիւնները Երևանում, Ա.—Դօ	185
15. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Կրիմիալիստների միջազգային ժողովը Պետերբուրգում.—Ոճրագիտութեան մէջ նոր հոսանք.—Պրօֆէսոր Լիստի կարծիքը.—Ընչաքաղցու- թիւնը իբրեւ յանցաւորութեան շարժառիթ.—Փողամու հայ ինտելիգէնտների նմուշներ.—Ազնուական կալուա- ծատիրութեան պահպանութիւն.—Լազարեան հեմարա- նի Լիգէօնի 30-ամեակը	189

in fur !

16. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Պարլամենտական նիստերի վերաբացումը Անգլիայում և Ֆրանսիայում.—Մակեդոնական հարցը.—Լըրուա Բոլիօի լոգուածը.—Կիլիկիայի կաթողիկոսական ընտրութիւնը.—Հայոց եկեղեցի Պարիզում:	195
17. ԷՄԻԼ ԶՕԼԱՆ ԵՒ ՆԱՏՈՒՐԱԼԻԶՄԸ, Ա. Ահարոնեանի .	203
18. ՆԱՄԱԿ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ, Կղերականութիւնը Գերմանիայում, Quidam	213
19. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	222
20. ՆԱՄԱԿՆԵՐ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ	224
21. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	237
22. ՅԱԽԵԼՈՒԱԾ, «ՕՐԱՄՈՒՑԻՆ», Վէպ Տուրգենեվի (Վերջ)	145—160

ԽՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է լոգուածագիրներէրից՝ դրել պարզ, մանաւանդ թուերը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի երեսի վրայ:

2. Զընդունուած մեծ լոգուածները պահում են խմբագրատանը 6 ամիս, իսկ փոքր լոգուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերագարձնում: Զեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը:

3. Գրուածքների վարձատրութեան չափը սրոշում է Խմբագրութիւնը:

4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած լոգուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. „Մուշի“ համարը չը ստացուելու դէպքում պէտք է Խմբագրութեան տեղեկութիւն տալ մինչև յաջորդ համարի լոյս տեսնելը: Այդ տեղեկութեան անհրաժեշտ է կցել տեղական պատալին գրասենեակի հաւաստագիրը (удостоверение), որ ամագրի համարը չի յանձնուած զանգատաւորին:

Լ Ե Ռ Ն Ե Ր Ո Ւ Մ

Երկու ընկեր էինք և գնում էինք սարերով, ձորերով, մի և նոյն հողան էր մեր երկսիս էլ միաժամանակ մեր յարկերի տակից դուրս չպրտել։ Այդ ֆուսս լունէր, գոնէ ճանապարհն ապահով լինէր։

—Ախ մեր լեռները, հեռուից նայում ես կապոյտ, ալիքաւոր բարձրութիւններ, խորհրդաւոր ու սիրուն, որ կարծես թարթում են ու գրաւում քեզ իրանց ծոցը. մօտենում ես, թաղւում ես ձորերում, կիրճերում և զարդանդն է պատում քեզ։ Լուռ սարսափը գալարւում է շուրջդ, պատում է կուրծքդ, ու խեղդում, խեղդում։ Ասում են լեռներում մարդ հեշտ ու ազատ է շնչում։ Այստեղ կարծես օդ չը կայ։

—Օդ կայ, թէ չը կայ, այդ մի և նոյն է, պէտք է անցնենք, լաւ է լուռ կաց և ձիուն զօր տուր շուտ անցնենք, դատողութեան ժամանակ չէ։

Ես լուռ կացայ. ընկերս իրաւունք ունէր, բայց ձիւ այն օրին չէր, որ զօր տալով բան դուրս դար, դեռ նրա բանը լաւ էր, մի կարճ հոնի փայտ, ծանր ու կոկ ձեռքին էր, անդադար զարկում էր իր ձիու կողերին և առաջ ընկնում։ Իմը՝ մի ողորմելի վտիտ կենդանի, ասպանդակների պատճառած ցաւը տանում էր, բայց ընթացքը չէր փոխում, ես չարչարում էի նրան, նա չարչարում էր ինձ։ Եւ գնում էինք, ճար չը կար։ Մեր մի կողմում բարձրանում էր Չարսաւայ սարը և միւս կողմում՝ Թաքեալթուն, երկսի ոտների տակ բլուր-

ներ ու ձորեր, մութ կիրճեր ու ժայռեր, մացառներ ու աղբիւրներ, և մեր ճանապարհը՝ որ գալարւում էր նրանց միջից, ինչպէս փախչող օձ, մերթ կորչում, մերթ մեզ հետ միասին բացւում արևի առաջ։

Կէս օր էր և դեռ մենք որքան պիտի գնայինք վտանգաւոր տեղերից ազատուելու համար։

—Անիծումձ Բարդողեան չղթայ, տեսնես ուրիշ աշխարհում էլ այսպիսի սարեր կան։

—Սիրուն սարեր են։

—Սիրուն են, թող հիմայ մի խումբ գլուխ կըտորողներ առաջներս դուրս գան, նոր կ'իմանաս սիրուն են՝ թէ չէ։

—Էլի նրանք սիրուն կը մնան, սարն ինչ անի, որ ես ու դու հիմայ այստեղ իրար մորթոտենք։

Ես լռեցի. նա դարձեալ իրաւունք ունէր, անտառն ինչ անի, որ այնտեղ գազաններ են բոյն դնում։ Հասանք այնտեղ, ուր լեռնաչղթան ասես ագամորդուն անցք տալու համար հնազանդ ձիու պէս մէջքը ծռել է և թամբ ձևացրել։

—Տեսնում ես այն սև, մեծ ժայռը մեզանից դէպի ձախ, ասաց ընկերս.

—Տեսնում եմ։

—Անունը գիտեաս։

—Ոչ։

—Նա կոչւում է Կոկորդ-կորոդ։

—Ինչո՞ւ։

—Որովհետև շատ ինձ ու քեզ նման ողորմելիներ գլուխները թողել են այնտեղ։

—Անիծումձ ժայռ։

—Ժայռը մեղաւոր չէ, մեզ էլ կարող են սպանել, բայց այդ ժայռը կը մնայ օրհնուած։

Ընկերս դարձեալ իրաւունք ունէր, ես գլուխս քաշ ձգեցի, մի պահ լուռ կացայ, մտածմունքի մէջ ընկղմած։

—Որ այդպէս է, ինչո՞ւ այստեղից եկանք, չէ՞ որ դու ճանաչում ես այս լեռների բոլոր անկիւնները:

—Ուրիշ ճանապարհ չը կայ, բայց ապահով եղիր, ցերեկով այս տեղերում վտանգը միշտ մեծ չէ. դէ, ցաւի տէր ենք, պիտի անցնենք. մարդ էլ պատահի մեր ինչը տանի:

—Ձէնք էլ չունինք:

Նա յետ նայեց մեղմ ժպտալով.

—Ձէնքով ի՞նչ կ'անէիր:

—Ի՞նչ կ'անէի, ես ի՞նչ գիտեմ, դէ վտանգաւոր սարերում անդէն լաւ չէ, գոնէ մի խէնջար:

—Տանք խէնջար ունէիր:

—Ձէ:

—Երբ և իցէ ունեցել ես:

—Ձէ, բայց կարելի էր ճարել:

—Ճարած խէնջարով բան չի դուրս գայ. ձիուդ զօր աուր, դու էլի յետ մնացիր:

Ես սկսում էի բարկանալ. ձիւ չէր գնում, չորս կողմերս սարսափելի, իսկ նա քշում էր առաջ այնպիսի խաղաղութեամբ, կարծես Կոկորդ-կտրօյ ժայռն առաջնեքս չը լինէր: Ինձ զայրացնում էին մանաւանդ նրա հանդարտ, անխուփ պատասխանները: Միթէ նա էլ չի վախենում ինձ պէս, էլ ի՞նչ կարիք կայ ինձ մօտ քաջ ձեւանալ, մտածում էի ես՝ նայելով նրա օրօրուն ու թիկունքին, նրա կարճ մահակին, որով անդադար խթում էր ձիու կողերը: Նրա ձին էլ մի բան չէր, բայց էլի իմից լաւ էր: Մտքովս մի բան անցաւ, գնամ ասեմ, դէ որ դու այդպէս քաջ ես, արի ձիերս փոխենք, և դու յետեից դնա՛, ես առաջից. ես յետեից վախենում եմ:

—Լսիր.

—Էլի ի՞նչ կայ, նա յետ նայեց... տեսայ այդ պարզ, խաղաղ դէմքը և ամաչեցի մտածածս յայտնել:

—Կեցիր ես հասնեմ քեզ, գուցէ ձիւ այդպէս լաւ գնա քոնի հետ կողք-կողքի:

Նա կանգ առաւ: Ես հասայ: Վրաս նայեց փորձող հայեացքով՝

—Դու շատ ես վախենում:

—Ի՞նչ կայ չը վախենալու. այս ժայռը, այս սարերը:

—Դու հաւատում ես բաղդիդ:

—Ի հարկէ:

—Եթէ հաւատում ես, էլ ինչո՞ւ ես վախենում, ինչ գրուած է, այն էլ կը կատարուի:

—Իրաւունք ունիս, բայց վախենում եմ:

Ես լռեցի և սկսեցի մտածել նրա ասածի մասին. ճիշտ որ թէ մարդ իր ճակատագրից ազատուել չի կարող, ինչո՞ւ եմ վախենում:

—Դէ դու ասո՛ւ, ինչո՞ւ եմ վախենում:

Հերթը նրան էր մտածելու. նա մի քանի րոպէ լուռ կացաւ, ձեռքը ճակատը տարաւ՝ չփեց, գլխարկը ուղղեց, ապա անհանգիստ կերպով ձիուն խփեց փայտով, ոտքերով շարժեց, որ շուտ գնա. երևի հարցս նրա համար էլ ծանր էր:

—Ինչո՞ւ ես վախենում, ասայ նա դանդաղութեամբ, երևի նրա համար, որ չես իմանում արդեօ՞ք մակաւիղ գրուածն է կասարում, թե՞ չը գրուածը:

—Ես չեմ հասկանում, դու միշտ...

Վը՛ղղ...

Մի դնդակ էր, որ Կոկորդ-կորոզ սև ժայռի կողմից եկաւ ու անցաւ մեր գլխի վրայով:

Վը՛ղղ... անցաւ երկրորդը:

—Հիմա հասկացա՞ր:

Ես էլ սիրտ չունէի նրան հասկանալու. սարսափած նայեցի դէպի ժայռի կողմը և տեսայ թէ ինչպէս վեր ցցուեց նախ մի մարդու պատկեր, ապա երկրորդը. քիւրդ աւաղակներ էին:

—Կանգ առէ՛ք, հրամայեցին նրանք մի զոյգ հրացանի փողեր մեղ ուղղած:

Մենք կանգ առանք. ճար չը կար:

— Յաժ իջէր ձիերից, լսուեց երկրորդ հրամանը:
Ընկերս մի րոպէ մնաց մտազբաղ.

— Տեսնես քանի՞ հոգի են, ասաց ինձ կամացուկ:

— Երկու են, ես լաւ տեսնում եմ. դրանից մեզ ի՞նչ
օգուտ. մի հոգի էլ լինէր այդ հրացանով մեզ...

— Դու էլի սկսեցիր:

— Յաժ իջէր, թէ չէ... լսուեց նոյն հրամանն աւելի
խիստ կերպով: Մենք ցած իջանք:

— Այժմ թողէք ձիերը և հեռացէք դէպի մի կողմ:

— Ձիդ թող և հեռացիր, ասաց ինձ ընկերս կա-
մացուկ:

— Իսկ դո՞ւ...

— Թող ասում եմ:

Նա ինձ երբէք այդպէս խիստ չէր հրամայել. նրա
միշտ բարի, մեղմ աչքերում ես տեսայ մի անսիրտ
վճռականութիւն, մի յամառ շեշտ, թւում էր, եթէ էլի
մի բառ ասեմ, ինձ կը խեղդի տեղն ու տեղը. ես հնա-
զանդուեցի:

Ընկերս իր ձիու սանձից բռնած մի քանի քայլ
առաջացաւ դէպի աւազակները.

— Նայեցէք, ասաց, ես իսպառ անդէն եմ. այս ձին
կատաղի է, եթէ թողնեմ կը փախչի, ինչպէս մրիկ և
ոչ ձեզ բաժին կը լինի, ոչ էլ մեզ՝ ափսոսէ. ցած եկէք
ու տարէք. մեզ էլ թողէք մեր ճանապարհը ոտքով շա-
րունակենք: Խեղճ մարդիկ ենք, ինչպէս տեսնում էք
մեր ցաւի համար չօլերն ընկած:

Ես նայում էի և չէի հասկանում, թէ ի՞նչ է միտքը,
քանի որ լաւ գիտէի, որ այդ ձիու կողերը մահակով էլ
ջարդես, դարձեալ փախչողը չէ, էլ ինչո՞ւ չի ձգում, որ
մենք թողնենք ու գլուխ առնենք կորչենք չուտով:

Աւազակները մի երկու րոպէ իրար հետ խորհր-
դակցեցին և ապա հրացանները միշտ մեզ վրայ սպառ-
նալի կերպով բռնած, ցած իջան ժայռից և առաջա-
ցան դէպի ընկերս, որ անխռով կանգնած՝ սպասում էր
նրանց:

Ահա նրանք բոլորովին մօտեցան, աներկիւղ ու վստահօրէն:

Ընկերս շարունակում էր կանգնել անշարժ ու անխռով:

Ահա նրանցից առաջինը ձեռքը մեկնեց ընկերոջս ձեռքից ձիու սանձը բռնելու: Ես նայում էի սրտատրոփ. մէկ էլ յանկարծ ընկերս ազատ ձեռքը բարձրացրեց և հոնի փայտով արագութեամբ մի ծանր հարուած իջեցրեց քիւրդի մեկնուած ձեռքի դաստակին ու փշուր-փշուր արեց. սա ցաւից մռնչաց, կծկուեց ու թեւը բռնած գետին ընկաւ. համարեա մի և նոյն վայրկեանին փայտի երկրորդ հարուածն իջաւ միւս բրդի գագաթին, որ նոյնպէս գլորուեց գետին հրացանը ձեռքից թողնելով:

—Վազիր, ճչաց ընկերս: Ես մօտեցայ: Մի վայրկեան յետոյ երկու աւազակները զինաթափ ու կապտտուած, մեր ոտների առաջն էին: Ես աչքերիս չէի հաւատում:

—Մի քիչ ջուր թափիր այս ուշաթափուած բրդի երեսին, թող ուշքի գայ:

Հրամանը կատարեցի, ինչպէս ստրուկ: Թակարդում բռնուած գաղանների պէս այս երկու բրդերն ընկած էին կանաչի վրայ և ապուշ-ապուշ նայում էին մեզ: Նրանց հետ պատահած անակնկալը վեր էր բոլոր երևակայութիւնից, և չյմեցրել էր այդ վայրենի գլուխները:

Ես նրանցից պակաս չփոթուած չէի, նայում էի, և չէի հասկանում, թէ ինչ գործ ունին այդ երկու գաղանները մեր ճանապարհի վրայ, այն աստիճան արագ կատարուեց այդ բոլորը:

—Ձեռք, մրմնջաց ջարդուած բազկի տէրը, առանց մեզ նայելու, կարծես ուրիշից էր սպասում մի քանի կաթիլ զովացուցիչ հեղուկ:

—Ձուր տուր սրան, ասաց ընկերս: Ես վազեցի մօտակայ աղբիւրը, գլխարկիս մէջ մի փոքր ջուր ածե-

ցի և բերի: Պապական թիւրդը խմեց, բայց չարունակում էր տնքալ ցաւից:

—Թեղ շատ է ցաւում, հարցրեց ընկերս:

Վիրաւոր թիւրդը նայեց նրա աչքերի մէջ, մի բան մումռաց և գլուխը քաշ ձգեց հարցը թողնելով անպատասխան:

—Ինչո՞ւ չես պատասխանում:

—Քեզ ի՞նչ, թէ ցաւում է:

—Ինձ ինչ թէ ցաւում է, ուզում էի կապել:

Քիւրդը հեղնաբար նայեց նրան, չէր հաւատում թշնամու խօսքերի անկեղծութեանը:

—Կապիր սրա թեւը, դարձաւ ինձ ընկերս: Ես մօտեցայ, պատռեցի քրդի շորերի մի մասը, վիրակապ չինեցի և պատեցի փշրուած բազուկը: Միւս ընկերը չարունակում էր նայել այդ բոլոր գործողութեանը զրպարած գազանի վայրենի աչքերով և կարծես ոչինչ չէր հասկանում:

—Ինչո՞ւ չէր սպանում մեզ, ասաց նա յանկարծ:

Ընկերս ժպտաց:

—Դուք մեր տեղը լինէիք կը սպանէիք:

—Անպատճառ:

—Ինչո՞ւ էք սպանում անմեղներին:

—Ես ի՞նչ գիտեմ:

—Մենք ձեզ չենք սպանի:

—Հապա ի՞նչ կ'անէք:

—Մի բան կ'անենք: Վեր կաց, սիրելիս, հեծնենք ձիերը, արևն արդէն թեքուեց, իսկ մենք շատ ճանապարհ ունենք:

—Իսկ սրանք:

Պատասխանի փոխարէն ընկերս արձակեց անզէն գերիներին:

—Գնացէք, ասաց նա:

Քիւրդերը վերկացան, իրար բռնած օրօրուելով գնացին նորէն դէպի Կոկորդ-կտրող սարը, իսկ մենք

վերցրինք նրանց զէնքերը, թռանք ձիերի մէջքին և բշեցինք, անցանք վտանգաւոր վայրերից:

—Աստ այժմ, սիրելիս, գրուածը կատարուեց, թէ՛ չը գրուածը:

—Ձը գիտեմ, պատասխանեցի, բայց ընկերս դարձաւ իմ աչքում մի հսկայ:

Դարձեալ գնում էինք, նա առաջից՝ ես յետևից, դարձեալ նրա յաղթ թիկունքն օրօրում էր և հաստ մահակն անդադար շարժում ձիու վրայ, բայց ես էլ չէի վախենում: Նա կարծես իր ձեռքում տանում էր իմ բաղդը, և այդ բաղդին էլ ոչ մի վտանգ չէր սպառնում: Նա երկար ժամանակ լուռ էր, ես էլ չէի համարձակում խօսել:

—Էլի՛ վախենում ես:

Ես լուռ էի:

—Այսպէս է, սիրելիս, կեանքի մեծ ճանապարհին, կեանքի մեծ կռիւի մէջ, թէ խորտակում ենք, ասում ենք գրուածը կատարուեց, թէ յաղթող ենք հանդիսանում, վտանգից ազատուելով, ասում ենք՝ ճակատներին գրուած չէր: Ինչ համար ճակատը լերկ ոսկր է, ուր ոչինչ գրուած չէ և չի կարող լինել:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Դ Ժ Բ Ա Ղ Դ Ը

(Ազա Նեգրիից)

Ողբում է ծովը, և արցունքներն ալիքով եռուն,
Միմեանց ճնշելով ժայռոտ ափերին, տնքում են հեռում:
Եւ կամարը խիստ յօնքերը կիտած, համակուած վշտով,
Կապարեայ ամպերն իրար խառնելով լուռ ու անտարբեր,
Մռայլ բարձունքից շեշտում է դէպ ցած հրեղէն շանթեր:

Ողբում է ծովը, և իր վշտալի կրծքին երերուն
Մի ջահիլ, սիրուն դիակ է տանում—ասես օրօրում...
Դիակն է տանում այն դժբաղդ, չքնաղ ջրահեղձ կոյսի,
Որը հայցելով անողոք բաղդից կեանքի փրկութիւն—
Գտել էր նրան մութ, կորստաբեր ծովի անդունդում:

Ողբում է ծովը, և նրա անզուսպ հեկեկանքներում
Հսւում է հառաչ, արցունք բռնութեան՝ կրած վշտերուն.
Հսւում է կեանքի, սիրոյ ցնորումն—ջերմ համբոյրների...
Եւ թւում է թէ՛ ժայթքում է բողոք կոյսի ջերմ կրծքից
Ե՛ւ անէծք նրան, որն անարգեց իր սէրն անբիծ:

Թարգմ. ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ

ԹԻԹԵՂԱԳՈՐԾԻ ՄԱՀԸ

(Աղա Նեգրիից)

Հսկայ շինութեան բարձր տանիքին
Վաղ առաւօտից նա աշխատում էր,
Կարիքն ու հոգսը իր ընտանիքի
Նրա եռանդը եռապատկում էր:

Երկար աշխատեց... և արեգակը
Մօտ էր կէսօրին՝ ճաշելու ժամին,
«Ծտապիր, ճաշի է ժամանակը»,
Ասաց նա ուրախ իր հարեանին:

Յանկարծ սայթաքեց բարձր տանիքից՝
Տապալուեց գետին ջարդուած դիակով:
Մարդիկ սարսափած այդ դժբաղդ դէպքից,
Կանգնել նայում են ապուշ նայուածքով:

Նորա համակուած կեղծ ցաւակցութեամբ,
Հետաքրքրուած հոսող արիւնով,
«Ափսոս» են ասում անամօթութեամբ
Ու անցնում—դէպքը մոռացման տալով:

Եւ միայն կինը ու քաղցած որդիք
Չեն մոռանալու աշխատաւորին:
Թոյն ատելութեամբ պիտի անիծեն
Բիրդ ու քարացած խիղճը մարդկային:

Թարգմ. ՅԱԿՈՒ ՅԱԿՈԲԵԱՆ

ՀԱՅԵՐԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ՀԵՏ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ ԵՒ ՅԵՏՈՅ *)

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

Հայերի անցեալը զրեթէ անծանօթ է եւրոպական հասարակութեան. նոյն իսկ ներկայ հայերին շատ քիչ էր ճանաչում եւրոպան և միայն Թիւրքիայում տեղի ունեցած 1894—1896-ի սարսափելի կոտորածները ծանօթացրին նրան հայերի գոյութեան հետ: Սակայն հայերը պատմական ամենահին ազգերից մէկն են կազմում. նրանք և քրիստոնէութիւնը ընդունող առաջին ազգերից մէկն են, որովհետեւ Քրիստոսից յետոյ նրա երկու առաքեալները՝ Թադէոս և Բարդուղեմիոս եկան Հայաստան և քարոզեցին նոր կրօնը, այդտեղ էլ մեռան և նրանց գերեզմանները այսօր էլ կան ու մեծ ուխտատեղիներ են համարւում: Քրիստոնէութեան I դարում շատ հայեր արդէն դաւանում էին քրիստոնէութիւնը, արդէն հայկական եկեղեցի էր հիմնուած, մինչև որ IV-րդ դարի սկզբին քրիստոնէութիւնը Հայաստանի տիրապետող կրօնը դարձաւ:

Բայց գեռ քրիստոնէութիւնից շատ առաջ հայերը լայն տնտեսական և իմացական յարաբերութիւններ ունէին Արևելքի նշանաւոր պետութիւնների և Յունաստանի ու Հռոմի հետ: Յոյն պատմիչները Հերոդոտոս, Քսենոֆոն, Ինչպէս և Աստուածաշունչը ցոյց են տալիս, որ հայերը ընդարձակ առեւտուր ունէին Տիրոսի և Բաբելոնի հետ. նրանք հաղորդակցութիւն ունէին և Հնդկաստանի հետ, որովհետեւ պարսից կիւրոս Թագաւո-

*) Այս լօղուածը Թարգմանութիւն է այն ղեկուցագրի, որ հեղինակը ներկայացրեց այս տարի սեպտեմբերի 4—10-ին Համբուրգում գումարուած Արևելագէտների XIII Միջազգային կօնգրէսին (XIII Congrès International des Orientalistes à Hambourg) „Les rapports des Arméniens avec l'Occident au moyen âge et après“ վերնագրով:

րը, կամենալով դեսպան ուղարկել Հնդկաստանի թագաւորին, հայոց թագաւորից խնդրեց տալ իրան առաջնորդներ: Յունաստանի հետ նրանց յարաբերութիւնը յիշատակուում է Մովսէս Պորթնացու պատմութեան մէջ և նոյն իսկ Տրոյայի պատերազմի ժամանակ. այդ պատմագիրը աւանդում է, որ հայոց նահապետ Զարմայրը, արարատեան գնդի հետ, գնաց օգնութեան ծերունի Պրիամին և նրա Հեկտոր որդու հետ ընկաւ պատերազմի դաշտում Աքիլլէսի ձեռքից:

Աւելի մօտ պատմական ժամանակներում, հայերի կուլտուրական յարաբերութիւնը յոյների հետ այնքան սերտ և յաճախ էր, որ հայոց Արտաւազդ թագաւորի արքունիքում յունական թատրոնական ներկայացումներ էին տրւում և ինքն եւ շարադրում էր յունական պիէսներ: Հայոց կրօնը, որ սկզբում զրադաշտական վարդապետութիւն էր, ստացաւ յունական դիւցաբանութեան կնիքը և յունաց Դիոս, Արտեմիս, Ափրոդիտէս, Աթանաս Հելիստոս, Ապոլլոն չաստուածները հայերից պաշտուած գլխաւոր դիքն էին, Արամազդ, Անահիտ, Աստղիկ, Նանէական, Մհրական, Տիւր անուններով: Այս դից արձանները կործանուեցին միայն IV-րդ դարի սկզբում, երբ քրիստոնէութիւնը վերջնականապէս հաստատուեց: Յայտնի է նոյնպէս Արշակունեաց հայոց թագաւորների յարաբերութիւնը հռոմայեցիների հետ. հայոց Արտաշէս կամ Տիրիթ թագաւորը Հռոմ գնաց Ներոն կայսրից թագն ընդունելու և, վերադառնալով, հռոմէական շատ բարձր ու սովորութիւններ մտցրեց Հայաստան: Այս Տիրիթ թագաւորի համար աւանդութիւնն ասում է, որ նա նուիրեց Ներոնին այն չորս պղնձաձոյլ ոսկեղօծ երիվարները, որ այժմ զարդարում են Վենետիկի ս. Մարկոսի տաճարը. այդ երիվարները Արշակունի հայոց թագաւորներից մինը, որ Գրիստոսից 100 տարի առաջ նուաճեց և մի փոքր ժամանակ տիրեց Հելլադային, փոխադրել էր Հայաստան. այդ երիվարները յետոյ տարուել էին Բիւզանդիոն, իսկ այնտեղից ապագայում փոխադրուել Վենետիկ:

Հայերի յարաբերութիւնները Հելլադայի հետ լայն ծաւալ ստացան մանաւանդ, երբ քրիստոնէութիւնը թէ Հայաստանում և թէ Յունաստանում տիրապետող կրօն եղաւ: Հայ երիտասարդները խմբերով ուղղւում էին Բիւզանդիոն, Աթէնք, նոյն իսկ Հռոմ սովորելու և կատարելագործուելու յունական գիտութիւնների և փիլիսոփայութեան մէջ և վերադառնալով հայրենիք, տարածում էին յունական քաղաքակրթութիւնը, թարգմանելով հայերէն թէ Ս. Գրքը և թէ յունական փիլիսոփաների ու նշանաւոր եկեղեցական ու աշխարհիկ հեղինակների գը-

րուածքները: Հին և Նոր կտակարանը թարգմանող Սահակ կաթողիկոսը և իր աշակերտները, հայոց այբուբենը հնարող Մեսրոպ վարդապետը, հայոց պատմահայր կամ «Հերոդոտոս» Մովսէս Խորենացին և մի քանի այլ պատմագիրներ, որոնք հաստատեցին հայոց գրականութեան Ոսկէդարը (IV և V դարերում), ամենքն էլ Հելլագոյի աշակերտներ էին: Առհասարակ այդ ժամանակ հելլենական քաղաքակրթութիւնը նշանաւոր ազդեցութիւն գործեց հայոց լեզուի և գրականութեան վրայ:

Սակայն հայերի Յունաստանի հետ ունեցած այդ սերտ առնչութիւնը, մանաւանդ նրանց քրիստոնէութիւն ընդունելը մեծ ազդեցութիւն պատճառ դարձաւ նրանց համար: Հայաստանը, իր աշխարհագրական դիրքի պատճառով, հանդիսացաւ Ասիայում միակ առաջաւոր քրիստոնեայ երկիրը, շրջապատուած լինելով առաջ զօրաստրեան կրօնի հետեւողներով, իսկ ապա մուսուլմաններով: Պարսկական Սասանեան թագաւորները, տեսնելով որ քրիստոնեայ Հայաստանը մի մեծ պատուար է և նեյտկ արեւելեան (յունական) կայսրութեան համար, սկսեցին ամեն կերպ աշխատել քրիստոնէութիւնը ջնջել Հայաստանից, որ այդ ժամանակ արդէն կորցրել էր իր անկախութիւնը և նորից հաստատել Զրադաշտի վարդապետութիւնը. երբ յորդոր, սպառնալիք, խոստումներ չազդեցին, պարսիկները ահագին զօրքով դիմեցին Հայաստան՝ կործանելու քրիստոնէութիւնը և հաստատելու կրակապաշտութիւնը, բայց հայերը իրանց Վարդան զօրավարի առաջնորդութեամբ 451 թ. յուլիսի 2-ին դուրս եկան Ատրպատականի այժմեան Խոյ գաւառում պարսիկների դէմ, և թէև Վարդան իր 1036 ընկերներով ընկաւ պատերազմի դաշտի վրայ, բայց պարսիկներն ևս այնպիսի հարուած ստացան, որ այլ ևս չը յառաջայան և վերադարձան: Այդպիսով քրիստոնէութիւնը պահպանուեց Հայաստանում և պարսիկները չը կարողացան առաջ դնալ դէպի Բիւզանդիոն: Դրանցից յետոյ մի մասնից յետեւից արաբները, սելջուկները, մօնղոլները, թուրքերը իրանց առաջին հարուածները թափում էին հայերի և Հայաստանի գլխին, ստիպելով նրանց ուրանալ քրիստոնէութիւնը, բայց հայերը անխախտ կերպով հաւատարիմ մնացին Գրիստոսի եկեղեցուն, անթիւ զոհեր տալով, ամեն տեսակ չարչարանք կրելով, կոտորուելով, ջարդուելով և պահպանեցին քրիստոնէութիւնը առաջաւոր Ասիայում, ամեն կողմից շրջապատուած մահմեդական երկրներով: Գուցէ այդ է պատճառը, որ մի ժամանակ մօտ 10—15 միլիոնից *) նրանք իջան 3—4

*) Այս թիւը ոմանք հասցնում են 30 միլիոնի:

միլիոնի: Հաստատապես կարելի է ասել, որ եթէ չը լինէր քրիստոնեայ Հայաստանը, արեւելեան կամ բելզանդիական կայսրութեան անկումը շատ աւելի առաջ տեղի ունեցած կը լինէր: Նոյն իսկ 1894—96-ի սոսկալի ջարդերին հայերը ենթակայ եղան այն պատճառով, որ քրիստոնեայ էին:

V-րդ դարի սկզբից, երբ հայերը կորցրին իրանց թագաւորութիւնը, մինչեւ 12-րդ դարը, երբ Փոքր Հայաստանի կամ Կիլիկիայի մէջ հաստատուեց մի նոր հայկական տէրութիւն (Ռուբինեան), հայերը դարձեալ առեւտրական և քաղաքակրթական յարաբերութիւններ ունէին Եւրոպայի և Բելզանդիայի հետ: Պրովօպիոս յոյն պատմիչը աւանդում է, որ 6-րդ դարում հայոց Դուին մայրաքաղաքը գլխաւոր վաճառատեղի էր, ուր Հընդկաստանից, Պարսկաստանից, Վրաստանից և յունական ու հռոմէական երկրներից տեսակ-տեսակ վաճառքներ էին բերուում: Ուրեմն 6-րդ դարում ևս Դուինը ծառայում էր միջնորդ Արեւելքի և Արեւմուտքի մէջ: Յայանի է նոյնպէս, որ բելզանդական նշանաւոր կայսրներից և զօրավարներից մի քանիսը հայեր էին, ինչպէս Նիկիֆոր, Յովհաննէս Չմիշկ, Լևոն, Վասիլ կայսրները, Ներսէս Պատրիկ զօրավարը և այլն: Իտալիայի Հռաւեն քաղաքի ս. Վիտալ եկեղեցու մէջ կան այժմ ևս դամբարաններ, որոնց արձանագրութիւնները ցոյց են տալիս, որ 9-11-րդ դարերի մէջ Հռաւենայի կայսերական փոխարքաներից մի քանիսը—Ներսէս, Գրիգոր և Իսահակ, հայեր էին և մի ամբողջ հայկական գունդ, Numerus Armeniorum, նստում էր այդ տեղ: 810-ին Նիկիֆոր կայսրը ուղարկեց մի հայ ղեսպան Արսափիոս (Arsaphius, Archag) անունով Ալուիսդրանա Չը մոռանանք յիշել և այն կարեւոր իրողութիւնը, որ հայերն եղան հռոմէական օրէնսդրութեան կամ Յուստինիանոսի հռոմէական իրաւունքի տարածողները Արեւելքում: Միտիթար Գօշի, XII-րդ դարի մի հայ վարդապետի կազմած դատաստանագիրքը, որ ծառայեց նաև հիմն վրաստանի վախտանդ թագաւորի օրէնսդրութեան համար, զրա ապացոյցն է:

Բայց ամենամեծ և ամենալայն յարաբերութիւնները Արեւմուտքի հետ հայերը սկսեցին 11-րդ դարի վերջերից, երբ հաստատուեց Կիլիկիայի թագաւորութիւնը և շարունակեցին ամենամեծ յաջողութեամբ մինչև 17-րդ դարը: Եւրոպական քրիստոնեաների խաչակրաց արշաւանքը, որի ժամանակ Ռուբինեանները և Կիլիկիայի հայերը ամենամեծ աջակցութիւն ցոյց տուեցին Եւրոպայի թագաւորներին, իշխաններին, զօրքին, հայթայթելով նրանց պաշար, զէնք, օժանդակ զօրք, մեծ զարկ տուեց այդ յարաբերութիւններին. լատինական, և նոյն իսկ ֆրանսիա-

կան լեզուն, զրականութիւնը մեծապէս ազդեցին հայոց զրականութեան և լեզուի վրայ. շատ լատինական, ֆրանսիական բառեր, սովորութիւններ, հասկացողութիւններ փոխ առին հայերը, իսկ եւրոպացիները հայերի միջոցով շատ բան սովորեցին Ասիայի մասին: Հեշտ է հասկանալ, թէ որքան մեծ և կարևոր ծառայութիւններ մատուցին հայերը խաչակիրներին, որովհետև նրանք միակ քրիստոնեայ ազգն էին այն բաղմաթիւ մահմեդական ազգերի մէջ, որոնց դէմ կռուելու էին գնում խաչակիրները: Այդ ժամանակ վաճառականութիւնը սաստիկ ծաղկեց Կիլիկիայում. հայոց Տարսուս և Ալաս նաւահանգիստները մի մի համախարհային քաղաքներ դարձան, որտեղ ախարհի ամեն կողմից նաւեր մտնում և դուրս էին գալիս: Հայերը բարեկամութիւն և դաշնագրեր հաստատեցին Վենետիկցիներին, Ճենովացիներին և Սիկիլիացիներին հետ, որոնց ձեռքումն էր այն ժամանակ ծովային վաճառականութիւնը, շատ ազատութիւններ և մաքսային արտօնութիւններ տուին նրանց և նրանց նաւերով լցուեցան Կիլիկիայի նաւահանգիստները. հայերը հայթայթում էին այդ ազգերին հում նիւթեր՝ բուրդ, կաշի, երկաթ, մետաքս, պղինձ, պաղլեղ, Հնդկաստանի, Չինաստանի, Ասորիքի և Պարսկաստանի բերքերը, որ կարաւանները ցամաքի ճամբով բերում էին Կիլիկիայի նաւահանգիստները, և անասուններ՝ ձի, ջորի, էջ, արջատ, նաև մուշտակներ, ցորեն, չամիչ, խաղող, գինի: Փոխարէնը ստանում էին ասուեղեմ, կսաւիք, ոսկեղիպակներ (Samiti), ապակեղէն, դէնք, նաւի կաղմուածք, չաքար, որ կարավաններով տանում տարածում էին Ասիայի խորքերը, հասնելով մինչև Մանջուրիա և Չինաստան: Այգպիսով հայերը միջնորդներ էին հանդիսանում ամբողջ Արևելքի և Արևմուտքի մէջ: Բայց մանաւանդ զարգացած էր հայերի յարաբերութիւնները Վենետիկի հանրապետութեան և Իտալիայի մի քանի քաղաքների հետ, ինչպէս Լիվոռնո, Հռոմ, և այդ յարաբերութիւնները, որոնց սկիզբն հասնում է ԺԱ-րդ դարին, շարունակուեցին նոյն իսկ Կիլիկիայի հայ թագաւորութեան անկումից յետոյ (14 դար) և տեղեկն մինչև 17-րդ դարի վերջը: Հայ-Վենետիկեան յարաբերութիւնների սկիզբն տրուեց երբ Ներիկ Դանտոլո դուքսն 1196-ին մի դեսպան ուղարկեց Կիլիկիա հայոց Լեւոն թագաւորի մօտ: Հայ թագաւորները ամեն տեսակ արտօնութիւններ և դիւրութիւններ շնորհեցին Վենետիկի նաւերին և վաճառականներին. Վենետիկի դոժերն և սենատն ևս փոխադարձաբար ամեն տեսակ դիւրութիւններ և արտօնութիւններ տուին հայերին հանրապետութեան մէջ և հայ այցելուների ու ճանապարհորդների թիւը այնքան շատացաւ, որ 1253-ին, կոմս

Մարկոս Ծիանի իր տներէն մինը նուիրեց հայոց ազգին իբրև հիւրանոց, որն մինչև այսօր ևս վենետիկում կոչւում է «տուն հայոց»: Դոժերը և հայոց թագաւորները շարունակ զեօպաններ և ընծաներ էին ուղարկում միմեանց և առհասարակ վենետիկ հանրապետութիւնը լուրջ գնահատում էր հայերի բարեկամութիւնը և պահպանում էր նրանց հետ խնամուած յարաբերութիւններ. երբեմն նա նաւային զինուորական օգնութիւն էր հասցնում հայերին, երբ սէլջուկ և մահմեդական ցեղերը սպառնում էին հայոց թագաւորութեան. մի ժամանակ նա մինչև անգամ լուրջ մտածում էր պապի հետ միասին մի նոր խաչակրաց արշաւանք կազմակերպել քրիստոնեայ հայոց թագաւորութիւնը ազատելու համար ամեն կողմից սպառնացող մահմեդականներից: Իտալիայի միւս վաճառականական քաղաքները և իշխաններն ևս, ինչպէս Պիզի դուքսերը, Հոռմի պապերը առանձին հողածութիւն էին ցոյց տալիս հայերին: Լիւդովիկո քաղաքում հայ վաճառականների այնքան բազմութիւն կար, որ 30 հարուստներ որոշեցին մի մեծ հայոց եկեղեցի շինել, 1701-ին, իսկ իննսովկենտիոս ԺԲ պապն մի հայ նշանաւոր վաճառականի Լատերանի կամուսթեան պատիւ տուեց, Հոռմի քաղաքացի անուանեց և Ոսկի խաչի կարմիր շքանշանը շնորհեց: Վենետիկի, Ճենուայի արխիւները շատ կարեոր և առատ գովումներ են պարունակում հայերի և վենետիկցիների 7—800 ամուսն յարաբերութիւնների մասին *):

Կիլիկիայի հայ թագաւորութեան անկումից յետոյ (վերջին թագաւոր Լևոն Լուսինեան մեռաւ Պարիզում 1393-ին), Կիլիկիայի հայերի առևտրական յարաբերութիւնները նուազեցին հետզհետէ և դադարեցին. դրա փոխարէն բուն կամ մեծ Հայաստանի հայերը, որոնք գտնւում էին թիւրքաց և պարսից տիրապետութեան տակ, շարունակեցին ունենալ Արևմուտքի հետ ոչ միայն առևտրական, այլ և քաղաքակրթական յարաբերութիւններ: Հայերը առաջինն են որ յաւերժացնում են Գուտտէնբերգի անմահ գիւտը Արևելքում: Դեռ հազիւ 50 տարի էր անցել տպագրութեան գիւտից, որ վենետիկում 1512-ին տըպւում է հայ առաջին գիրքը: Գալով Եւրոպա և սովորելով տպագրութիւնը, հայերը սկսեցին տպարաններ հիմնել և իրանց հայրենիքում ու այդպիսով Գուտտենբերգի անմահ գիւտը հայերի ձեռքով անցաւ Ասիա: Ապա մենք տեսնում ենք որ հայերը 1550-ին ուղարկում են իրանց Ստեփանոս կաթողիկոսին վե-

*) 1893-ին հայ գիտնական Ալիշան հրատարակեց մի գիրք այդ մասին այս վերնագրով „L' Armeno—Veneto“ Հայ-Վենետո

նետիկ, խնդրելու որ քրիստոնեայ հանրապետութիւնը դայ ազատելու իրանց պարսից լծից. նրանք անուանում են Վենետիկը *invincibil scudo della superba Italia*:

Մեծ Հայաստանում 16 և 17-րդ դարերում վաճառականութիւնը սաստիկ ծաղկեց և հայերը դարձեալ հանդիսանալով միակ միջնորդները Արևելքի և Արևմուտքի մէջ, իրանց վրայ դարձրին բոլոր աշխարհի ուշադրութիւնը: Նրանք գաղթականութիւններ և յարաբերութիւններ հաստատեցին Լեհաստանի, Աւստրիայի, Իտալիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի, Սպանիայի, Հնդկաստանի հետ: Վաճառականութեան գլխաւոր կենտրոններն էին՝ Ջուղայ աւանը (այժմ մի անշան գիւղ Արաքսի ափին ռուս-պարսկական սահմանագլխի վրայ) և Գանձակ քաղաքը: Պարսից Շահ Աբբասը I տեսնելով հայերի այդ ընդունակութիւնը և կամենալով ծաղկեցնել առևտուրը իր ընդարձակ կայսրութեան մէջ ոյժով փոխադրեց 1605-ին մօտ 300,000 հայեր Պարսկաստան և ջուղայեցիների համար հիմնեց Սպահանի մօտ Նոր-Ջուղան, տուեց նրանց զանազան արտօնութիւններ և առաւ իր հովանաւորութեան ներքոյ: Չանցաւ 50 տարի և հայերը ոչ միայն ամբողջ Պարսկաստանի և չրջակայ երկրներ, այլ և Եւրոպայի գլխաւոր վաճառանոցների առևտուրը գրաւեցին: Նրանք գրաւեցին և Հնդկաստանի վաճառականութիւնը, հաստատուելով առաջ Տելիի մէջ, անցնելով ապա Բօմբէ, Մատրաս, Կալկաթա, Բատավիա, Սինկափուր ու ուրիշ ծովեղբայ քաղաքներ, ուր առևտրական տներ և գաղթականութիւններ հաստատեցին: Հայերն առաջինն եղան, որ մեծ նաւերով Բենգալիայի ծովի և Գանգէս գետի մէջ սկսան նաւարկել և Հնդկաստանի վաճառքները հեռաւոր աշխարհներ տանել: XVII դարում Հնդկաստանի առևտուրը գլխաւորապէս հայերի ձեռքին էր, ուստի և նրանք սկսեցին օգնել նաև եւրոպացիներին, որոնք այդ ժամանակ նոր էին սկսել Հնդկաստան գալ: Հայ նաւերի ազգային դրօշակը Հնդկացի ծովերի մէջ այնքան ազատութիւն և յարգ էր ստացել, որ սպանիական և փորթուգալական հնդկական նաւահանգիստները, ուր ուրիշ ազգերի նաւերին արգելուած էր մտնել, բայց էին հայերի համար: Հայերը հնդկիւնների առաջ ևս մեծ յարգ ստացան, տարածելով նրանց մէջ եւրոպական կուլտուրա և արարներ, ուստի և Հնդկաստանի թագաւորներն ու իշխանները սկսեցին յանձնել նրանց կառավարչական և զօրապետական պաշտօններ, որոնց մէջ նրանք յաջողութիւն ցոյց տուին: Սինկափուրից հայերը տարածեցին իրանց առևտուրը հնդկական արքիպելագոսի կղզիները՝ Ճաւա,

Սուլթան, Բորնէօ, Փիլիպեան կղզիները և մինչև Չինաստանի նաւահանգիստները—Կանտոն, (ուր դեռ 14 դարի սկզբին հայերն սկսել էին յաճախել), Նանքին, Սիամի և Իրմանիայի երկիրներն ևս հայերի վաճառականութեան ասպարէզ էին. նրանք մուտ գործեցին նոյն-իսկ Թիբէդ և այդ բոլոր տեղերը նրանք տանում էին եւրոպական, գլխաւորապէս Վենետիկ ապրանք, իսկ այդ տեղերի ապրանքները տանում էին Եւրոպա. Շահ Աբրաս I իր դրամագլխով ընկեր էր հայերի հետ. Հայերը բացի դրանից Պարսից թագաւորների և Եւրոպայի արքունիքների յարաբերութիւնների մէջ թարգմանի և նոյն-իսկ դեսպանի դեր էին կատարում, օգնում էին Պարսկաստան եկած վենետիկցիներին և եւրոպացիներին և առհասարակ մեծ ծառայութիւններ էին մատուցանում եւրոպացիներին. Կարղինալ Ռիչլիէօ դհահասելով հայերի արժանիքը աշխատեց գրաւել նրանց Մարսէյլ, և այդ նպատակով Մարսէյլի մէջ հայերէն գրքեր սկսեց տպել տալ. Այդտեղ ևս հայերը գաղթականութիւն հաստատեցին. Աւստրիայի Մարիամ Թերեզա կայսրուհին հրովարտելով զանազան արտօնութիւններ տուեց հայ վաճառականներին և գրաւեց նրանց Թրիէստ, ուր մինչև այժմ ևս հայերի բնակած թաղը կոչւում է «Հայոց փողոց»։ Երբ անգլիացիները տիրեցին Հնդկաստանին, այդ բանին մեծապէս նպաստեցին հայերը, որոնք իբրև տեղական լեզուին, սովորութիւններին ու հանգամանքներին քաջ ծանօթ օգնեցին անգլիական Արևելեան ընկերութեան և առաջնորդեցին նրանց, թէև յետոյ ստիպուեցին սեղի տալ նրանց և անգլիացիների տիրապետութիւնը մեծ հարուած հասցրեց հայերի վաճառականութեան Հնդկաստանում։

Օսմանեան երկրների մէջ ևս 16, 17, 18-րդ դարերում վաճառականութիւնը բացառապէս հայերի ձեռքին էր. Կ. Պօլիս, Ջովլա, Ալեքսանդրիա, Ադրիանապօլիս, Բաղդատ, Հալէպ, Բասրա—ի էին հայ վաճառականների մթերքներով և գաղթականութիւններով։

Պէտք է յիշել, որ հայերը, սփռուած լինելով երկրագնդի վրայ և ձեռք բերելով ահագին հարստութիւններ, երբէք չէին խզում իրանց կապը մայր-հայրենիքի հետ և չէին մոռանում նրան. նրանք կամ իրանց գաղթականութեան վայրերում կրթական հաստատութիւններ էին հիմնում, բերել տալով Հայաստանից երեխաներ և կրթելով, ինչպէս Կալկաթա, Բոմբէյ, Մոսկուա, Վենետիկ, Պարիզ, կամ տպարաններ էին հիմնում և կամ ահագին գումարներ էին ուղարկում ու կտակում Հայաստանի մէջ զանազան բարեգործական, մարդասիրական հիմնար-

կուլթիւններ, — եկեղեցիներ, վանքեր, հիւանդանոցներ, դպրոցներ, կամուրջներ, ճանապարհներ, աղբիւրներ շինելու: Մինչեւ այսօր ևս Հնդկաստանի և Անգլիայի բանկերում գտնուում են միլիօնաւոր գումարներ, կտակուած Հնդկաստանի հարուստ հայերից այդ նպատակով, 200, 150 և 100 տարի մեղանից առաջ:

Եւ այսպէս հայերը բացառիկ դիրք գրաւեցին 16, 17 և մինչեւ 18-րդ դարի կէսը աշխարհիս առեւտրական ասպարիզում և միակ միջնորդները եղան Արեւմուտքի և Արեւելքի մէջ. նրանց առեւտրական, ֆինանսական, կուլտուրական գործողութեան ասպարէզը՝ Ամսդերտամից մինչեւ Կանտօն, Մոսկուայից մինչեւ Սինկափօր, Լեհաստանից ու Մօլտավիայից մինչեւ Հնդկաց արքայելագօսն և նաև մինչեւ Հաբեշտան և Աֆրիկայի ներսերը. բոլոր ծովերի մէջ նրանց նաւերը և բոլոր ցամաքային ճամբաների մէջ նրանց կարաւաններն էին տեսնուում:

Սակայն Պարսկաստանում տեղի ունեցած քաղաքական խառնակութիւնները աֆղանների արշաւանքից յետոյ, պատերազմները, բռնակալների յարուցած հալածանքները քրիստոնէայ հայերի դէմ, և Նոր-Ջուղայի կողոպտելը վերջ տուին հայերի այդ անհաւատալի աջողութեան և նրանց յարաբերութիւնները Արեւմուտքի հետ դադարեցին. նրանց հետ դադարեց և առեւտուրը: Հայերը աղքատացան և ընկան խոր տգիտութեան մէջ:

Այնու ամենայնիւ հայերը մի վերջին անգամ ևս ճիգ թափեցին քաղաքակրթական կապերը վերահաստատել Արեւմուտքի հետ: Եւ ահա մենք տեսնում ենք, որ 18-րդ դարի սկզբին, 1701-ին, մի հայ վարդապետ, Մխիթար անուշնով, Սեբաստիա քաղաքից, ամենամեծ նեղութիւններ կրելով կարողանում է հիմնել Վենետիկում, ս. Ղազար կղզում մի կրօնական միաբանութիւն, յատկապէս հայերի մէջ եւրոպական ուսում և քաղաքակրթութիւն տարածելու նպատակով: Եւ այդ Մխիթարեան միաբանութիւնը, որ 200 տարի անչեղ գործում է, կարողացաւ կուլտուրական մեծ կապ հաստատել Արեւելքի և Արեւմուտքի մէջ. մի կողմից նա իր հրատարակած հայերէն գրքերով և թարգմանութիւններով վերածնեցրեց հին հայկական կլասիկական գրականութիւնը և ծանօթացրեց հայերին եւրոպական կլասիկական գործերի հետ, միւս կողմից ծանօթացրեց եւրոպական գիտնական աշխարհը հայոց կլասիկ գրականութեան հետ:

Դեռ Մխիթարից մի քիչ առաջ, 17-րդ դարի վերջին և 18-րդի սկզբին պարսից լծի տակ ապրող հայ ժողովուրդի նըշանաւոր անձինք և մի քանի տեղերի կիսաանկախ իշխաններ, որ կոչւում էին մէլիքներ, համարձակ միտք յղացան—դիմել Հոռմի պապին և Եւրոպայի թագաւորներին, որ սրանք գան ազատեն Հայաստանը պարսիկների լծից և հիմնեն քրիստոնեայ պետութիւն։ Եւ ահա, ինչպէս ցոյց են տալիս Մոսկուայի, Միւնխէնի և աւստրիական պետական արխիւների մէջ պահուող զօկումենտները, (1698—1702 թ.,¹⁾ մենք տեսնում ենք, որ գերմանական իշխաններից մինը, Բէյնի պալատինատի կուրֆիրստ Յովհանն Վիլհէլմ լաւ ընդունելութիւն է անում հայերի առաջարկութեան, խոստանում է օգնել հայերին ազատուելու մահմեդականների լծից և իր վրայ առնել այդ գործի ձեռնբեցութիւնը. այդ նպատակով նա դրադրութեան մէջ է մտնում աւստրիայի կայսեր, Մեծն Պետրոսի, Վրաստանի թագաւորի և հայ մէլիքների հետ։ Կուրֆիրստը պէտք է ուղարկէր իր եղբօր Կարլին զօրքով Հայաստան, անցնելով Ռուսաստանից և հայերը մտադիր էին առաջարկել նրան Հայաստանի թագը։ Թէև կայսրը և Մեծն Պետրոս համակրում էին այդ մտքին, բայց ծրագիրը գլուխ չեկաւ, և հայերը մնացին պարսից լծի տակ, մինչեւ որ 1826-ին ռուսները ազատեցին նրանց մեծ մասը։

Ներկայացնելով այս համառօտ թուղիկ տեսութիւնը յարգելի կօնգրէսին՝ Հայերի Արեւմուտքի հետ ունեցած յարաբերութիւնների մասին, որի փաստերը հիմնուած են եւրոպական հեղինակների և արխիւների զօկումենտների վրայ, մենք նպատակ ունէինք ոչ թէ մի գիտնական հետազօտութիւն ներկայացնել կօնգրէսին, այլ միայն ցոյց տալ, որ հայերը, թէ պատմական ամենահին ժամանակներում, թէ միջին դարերում և թէ նոր դարերում հանդիսացել են գլխաւոր միջնորդ Արեւելքի և Արեւմուտքի մէջ, իւրացրել են իրանց յարաբերութիւնների շնորհիւ եւրոպական մտքեր, հասկացողութիւններ, արհեստներ, մի խօսքով կուլտուրան, և տարածել են Ասիայում և իրանց առեւտրական հմտութեամբ մեծ ծառայութիւններ են մատուցել Եւրոպայի շատ ազգերին։ Միևնոյն ժամանակ, նրանք ամբողջ 1500 տարի, կրելով սարսափելի նեղութիւններ, հալածանքներ, հաւատարիմ են մնացել Քրիստոսի եկեղեցուն և շրջապատուած անհամար մուսուլման ցեղերով, որոնք իրանց առաջին հար-

1) Այս զօկումենտների մի հաւաքածուն հրատարակեց 1898-ին պ. Կ. Եզեան։

ռևազնեցիք միշտ թափում էին նրանց գլխին, պահպանել են քրիստոնէութիւնը առաջաւոր Ասիայում: Դեռ այսօր ևս Թիւրքիայի և Պարսկաստանի հայերը, իրանց առեւտրական և կուլտուրական յարաբերութիւններով Եւրոպայի, գլխաւորապէս Ռուսաստանի, Ֆրանսիայի, Աւստրիայի և Գերմանիայի հետ, տարածում են այդ երկրներում եւրոպական կուլտուրայ:

Ն Ի Ս Ս Ա

(Ս. Դէլպի)

I

Մի սիգար վառելով Գաստօնն ասաց.

—Թէն պատմութիւնս երկար չէ, բայց զրամատիկական է: Օ՜հ, երբ յիշում եմ, մի փոքր սոսկում է գալիս վրաս—Յիշում եմ, երկու տարի առաջ, գեղաբուստի մինիստրութիւնն ինձ Պարսկաստան ուղարկեց: Պէտք էր ուսումնասիրել և նկարագրել Իրակ-Աջեմի նահանգը: Նախ Իսպահան գնացի: Երեք ամսից յետոյ ես արդէն գործս վիջացրել էի, բայց որպէս զի մինիստրութիւնն ինձ՝ ոչ լուրջ պահուող մարդու տեղ չը դնէր, ուստի անմիջապէս չը վերադարձայ՝ մնացի: Զաւիազանց ձանձրանում էի, երբ կառավարիչը փոխուեց: Շահը նախկինի տեղ՝ իր եղբորորդի Մալքում միրզին ուղարկեց:

—Նա, որ փրանսիա էր եկել.

—Այո, ուրեմն դու պէտք է ձանաչես իմ հերոսներից մէկին՝ Մահմէդ աղային, որ իշխանի հրամանակատարն էր: Նա գեներալի աստիճանն ունէր, կամ, ինչպէս Պարսկաստանումն են ասում—սարթիպ էր:

—Այո, այո, երեսնամեայ չքեղ և նուրբ մի երիտասարդ, որ երբեմն մեզ հետ ընթրում էր:

—Կարող եմ երևակայել իմ ուրախութիւնը, որ նրան այնտեղ պատահեցի: Այս արևելքը, հէնց որ կէս-պարիզեցի են դառնում, մի ինչ-որ հրապուրիչ բան են ունենում: Խառնուելով մեր բարձրերի հետ, կարծես նրանց նախնական վայրենութիւնը մի քիչ մեղմանում. այսպէս մի քիչ հալւում է: Ութ օրից յետոյ Սարթիպն և ես բոլորովին մտերմացել էինք և միմեանցից չէինք բաժանւում:

—Իսկ զրաման.

—Շատ եմ շտապում: Ես գեռ նախաբանն եմ պատմում: Մի գեղեցիկ առաւօտ՝ քաղաքում ձիով զբօսնում էի, մտածելով

և քաղաքի դիւթական տեսարաններից յափշտակուելով: Հարիւրերորդ անգամը կը լինէր այդ յափշտակութիւնս. բայց իրաւունք ունէի: Երեակայիւր քեզ, աջ ու ձախից կամարներով շրջապատուած անսահման ծառուղիներ, զարդարուած խոխոջուն գետով ջրուող վիթխարի ծառերով. աւելի հեռուն...

—Մի նկարագրութիւն: Սիրելիս, դիտես, այժմ մինիստրութեան համար բան չես յօրինում. դու ինձ մի դրամատիկական պատմութիւն խոստացար, պատմիր: Եւ, ինչդեմ, մանաւանդ նկարագրութիւն մի արա: Գաստօնը համաձայնելով չարունակեց.

—Ես Ձէհէլ-Սիւթուն քիօսկի մօտ էի հասել, երբ դէպի մի փողոց դառնալով պատգարակով մի կին տեսայ: Ընդհանրապէս պարսկուհիք փողոցում փաթաթուած իրերի են նմանում: Սովորաբար նրանք չարսաւով են լինում և բացի դրանից գլխի վրայ մի անսակ ծակ-ծակ քօղ են կրում, որ նրանց դէմքը ծածկում է:

Միւսների նմանութեամբ ինձ պատահած պարսկուհին իր վայելչագեղ և ճկուն կազմուածքը չէր ծածկել. ես նկատում էի նրա մեծ, կրակի պէս վառուող աչքերը: Ձիս հանդարտութեամբ պատգարակին էր հետևում: Ինձ թուաց թէ անծանօթուհին, մի երկու անգամ յետ նայեց: Բայց այնուամենայնիւ, որովհետև այսպիսի դէպքեր արեւելքում անհաւանական են, ուստի ես նրա վրայ համարեա թէ ուշադրութիւն չը դարձրի: Երկու օրից յետոյ, երբ գրեթէ մոռացել էի այս հանդիպումն, ես նորից պատահեցի պատգարակին: Այս անգամ մենակ չէի. Մահմէդ աղան ինձ հետ էր: Առաջին հայեացքից ես ճանաչեցի չարսաւաւոր կնոջն և մանաւանդ իր արտասովոր բոցավառ աչքերը: Ինչպէս անցեալ օրն, այժմ էլ նա յետ նայեց. բայց աւելի երկար: Ես տարթիպին նայեցի, բայց նա ոչինչ չը տեսել ձևացրեց:

Այսպէս մենք մօտ տաս բուպէի չափ գնում էինք, երբ պատգարակը յանկարծ դէպի Ջուլֆայի կամուրջը դարձաւ: Այս կամուրջն աշխարհի հրաշալիքներից մէկն է: Նա երեսնաչափ մեծ կամարներ ունի, որոնք լողանում են Ձէնդ-Դէհրուդ քամահաճ գետի մէջ: Ամառ ժամանակ գետը բոլորովին չորանում է, իսկ նոյեմբերին՝ (որի մէջն էինք) Ալպերի զարհուրելի հեղեղի նման արագընթաց և սոսկալի է: Ջուլֆայի կամուրջը կարծես մի ժամադրաւայր է, ուր երեկոներն զբօսնելու և թարմ օդ ծծելու են զալիս.

Իսկապէս ես տարակուսում էի բացարձակապէս իմ անծանօթունուս հետևել. նրա պատիւը վտանգելուց վախենալով:

Բայց նա, նա չը տարակուսեց. յանկարծ կիսով չափ պատգարակից դուրս թեքուելով նա իր թաշկինակը վայր գցեց:

—Է, էհ, պարսկուհիներն էլ կրակոտ են.

—Իսկ սարթիպը ոչինչ չասաց.

—Այդ բոլորին՝ ոչ, այնուհետև էլ ամբողջ մեր զբօսնելու ընթացքում նա լուռ մնաց: Մտախոհ դեմքով նա բեխերն էր կրծոտում: Պալատի առաջ հասնելով՝

—Միասին ներս գնանք—ասաց. նա: Եւ երբ նրա առանձնասենեակում մենակ էինք.

—Սիրելիս—շարունակեց նա—ես ձեզ իսկոյն նկատողութիւն չարեցի: Բայց, փոխանակ այս նուրբ թաշկինակը ձեր սրտին սեղմելով պահելու, աւելի լաւ է կրակը գցէք:

—Դուք ցանկանում էք...

—Ես ցանկանում եմ, որ դուք ձեզ խեղդել չը տաք կամ չը զանաւորուէք և կամ թէ Զէնդ-Դէհրուդ ձգուէք: Ես քաղաքի ոստիկանութիւնիցն եմ յանձնարարուած և ձեր կողմից՝ Քրանսիական դեսպանատան պատասխանատուն եմ.

—Բայց...

—Ո՛չ մի խօսք: Դուք, պարիզեցիքդ զարմանալի էք: Դուք ձեզ միշտ Կապիւսինեան բուլուարի վրայ էք երևակայում: Մենք, սիրելիս, արևելքումն ենք, իսկ արևելքում ամուսիններն կատակներ չեն անում: Պարիզում՝ ինչ և իցէ: Զեր անձանօթուհին ինձ համար անձանօթ չէ. նա Նիսսա է կոչւում:

—Նիսսա:

—Եթէ նրա անունը հրապուրիչ է, ամուսինն այդպէս չէ: Նո, հին արուարձանի մի շատ հարուստ վաճառական է, հռչակուած իր խստութեամբ և խանդոտութեամբ: Մայրն անգլիական ծնունդ էր, իսկ ինքն արեւելեան բարքեր ունի: Նա ձեզ չան պէս կը սպանէ:

—Եւ ինչպէս է կոչւում Իսպահանի այդ Կապոյտ-Մօրուքը.

—Աստուլլա: Նրա հետ ծանօթանալդ ցանկալի չէ: Էհ, բայց գիտէք զրտեղ է բնակւում: Ճիշտ գետի ափին կամուրջի ծայրին շինուած տան մէջ:

—Իսկ Նիսսայի մասին ինչ են խօսում:

—Օ՛ պարիզեցիք, մեզ մօտ կանանցով չեն զբաղւում, իսկ այն կանանց, որոնցով զբաղւում են... այո, նրանց մի տոպրակի մէջ կարելով ջուրն են գցում:

—Ի՞նչ սոսկալի բան:

—Օհ, այժմ մենք դեռ քաղաքակրթուած ենք—սառնութեամբ շարունակեց սարթիպը—մի ժամանակ տոպրակի մէջ մի կենդանի կատու էլ էին գցում: Զրի ազդեցութեամբ կա-

տաղելով՝ կատուն կնոջ գէմքն էր պատառոտում: Այժմ գոնէ այդ բանը չը կայ: Եւրոպայի ազդեցութիւնն:

Այս փոքրիկ խօսակցութիւնն ինձ մի փոքր սառեցրեց. իսկ Մամէդ աղան էլ այլ ևս չը շարունակեց: Ես նրա հետ ձաշեցի. իսկ երեկոյեան նա նուագածուններ բերել տուեց, որոնք ղէնդուլի եղանակով նուագներ ածեցին: Սակայն ես մտախոհ մընացի: Միշտ երիտասարդ կնոջ պատգարակից դուրս իոնարհուող շնորհալի և ձկուն մարմինը՝ և թաշկինակ գցող փոքրիկ ձեռքն էի տեսնում: Մի յամառ ձայն, մի հին բանաստեղծութեան յանգերգի նման իմ ականջիս երգում էր. — «Նիսսա!... Նիսսա!...»

Ամբողջ գիշերն ես կռմարի մէջ էի: Ես երազում էի, իբր թէ ինձ՝ Աստուլա անունով մի մեծ կատուի էի ներկայացնում, որն իմ գէմքս էր պատառոտում... Միւս օրն ես ժամը 11-ին զարթնեցի պատրանքիցս բոլորովին սառած:

II

Երեկոյեան պատշգամբում զովանում էի, երբ անեկի գէմքով մի պառաւ տանցածը դռնով արագութեամբ ներս մտաւ: Նա ինձ հետ խօսել էր ցանկանում: Նախ քան նրան կը պատասխանէին թէ ես հաւան եմ նրան ընդունելու, նա ինձ մօտեցաւ, և մեղ մենակ տեսնելով՝

— Քն՛ջ ես—հարցրեց ինձ մի այնպիսի վատ անգլիերէնով, որ ես հազիւ հասկացայ:

— Ես ժպտացի այն մարդուն յատուկ ինքնահաւանութեամբ, որին մի նման հարց ես առաջարկում:

Նա շարունակեց.

— Քն՛ջ մի բան եմ սուսջարկում: Այժմ գիշեր է, մեղ ոչ ոք չի տեսնի. դու ինձ կը հետևես: Ճանապարհի կիսին քո աչքերին ես մի ծածկոց կը դնեմ, յետոյ դու կ'երդուես, որ չը հետաքրքրուես իմանալու թէ քեզ ուր պիտի առաջնորդեմ:

— Համաձայն եմ:

Նա մի ծամածուծութիւն արեց, որ նրա գէմքն աւելի ես դաժան դարձրեց:

Նրա առաջարկութիւնն իսկոյն, մի անդիմադրելի խանդով ընդունեցի, որովհետև այդ օրուայ ընթացքում սարսափներս անցել էին, տխուր մտածմունքը մտքիցս քիչ-քիչ ջնջւում էր և միշտ լսում էի այն յամառ ձայնը, որ ականջիս երգում էր.

«Նիսսա!... Նիսսա!...» Պառաւ, անշուշտ, նրա կողմից էր եկել: Շուտով սենեակս բարձրանալով ես մի փոքրիկ բէվօլվէր

վերցրիւ Հինգ բոպէից յետոյ մենք փողոցումն էինք: Իմ արածս խենթութիւն, անմտութիւն էր, ես այդ շատ լաւ գիտէի. բայց կան անհեթեթութիւններ, որոնք չեն պատճառաբանում: Նիստան, այդ անծանօթ կինը, չը գիտեմ ինչ մի խորհրդաւոր ազդեցութիւն էր արել ինձ վրայ: Նրան նոյն-իսկ չէի տեսել, բայց խենթութեան աստիճան փափագում էի: Նրա բոցավառ հայեալքն իմ սիրտս հրդեհում էր:

Ջուլֆայի կամրջին հասնելով՝ պառաւը կանգ առաւ և գրպանից մի անթափանցիկ թաշկինակ հանելով՝ խիստ վարպետութեամբ աչքերս կապեց: Այլ ես ոչինչ չէի տեսնում: Նա բռնեց ձեռքիցս և ես նրան հետեւեցի: Աւելի զով օդ չնշելով, ես գուշակեցի, որ մենք գետովն ենք անցնում: յետոյ աջ ու ձախ զբօսնողների ձայներ լսեցի: Չէի էլ մտածում, թէ կարող են ինձ ճանաչել: Ես քայլում էի իմ երազով յափշտակուած, մանկահաս կնոջ ճկուն մարմնի կատուային շնորհալի կորածեութիւնների, փոքրիկ նուրբ ձեռքի և հրաքայտ ու կրակոտ աչքերի մասին մտածելով:

Մի քանի վայրկեանից յետոյ, պառաւը դէպի աջ ծռուեց, բայց Չէնդ-Դէհրուդի ափերը չը թողեցինք: Ես լսում էի սեղմուած և աղմկալից գետի թաւալումը, նրա կոհակների՝ կամրջի տակ մի վայրկեան փշրուելու ձայնը:

Վերջապէս առաջնորդուհիս կանգնեց: Մի բանալի ճռնչալ և պառաւը շատ ցածր ձայնով ասաց ինձ.

—Բարձրացիր.

Միայն հինգ քայլ և ես զգացի, որ ոտներս մի հաստ և փափուկ գորգի վրայ են կոխում: Միենոյն ժամանակ նա վերցրեց աչքերիս կապը: Ես գտնւում էի պղնձէ ճրագով աղօտ լուսաւորուած մի բաւական փոքր տեղ:

Սովորաբար Պարսկաստանում՝ սենեակի պատերը մերկ են լինում: Այստեղ ընդհակառակն: Կանաչ կարմիր մոզայիկ սեղանի վրայ խնկամանում անուշահոտ խնկեր էին վառում: արեւելքի այն գրգռիչ բուրմունքները, որոնք, ինչպէս հին գինու գոլորչի, մարդու հարբեցնում են: Դեղին կաշմիրով պատած պատերի վրայ կախուած էին երաժշտական գործիքներ—նէֆիրը, որ մեր սրնգին է նմանում, թմբուկներ, երկու քէմանչէ, ջութակի պէս մի բան և, կախուած օղակների մէջ, այստեղ՝ այնտեղ միմեանց խառնուած զէնքեր:

Դուրսը հնչում էր գետի խուլ, կանոնաւոր մռնչիւնը: Վարագոյրը մի քիչ բարձրացնելով՝ ես նկատեցի, որ գետը զալիս, նոյն-իսկ տան պատերին էր զարկւում: Համարեա նոյն բուպէին ես մի թեթեւ քստոց լսեցի գորգի վրայ: Յետ դարձայ.

Նիսսան էր... Ես չլացած մնացի: Նա 17—18 տարեկան կը լինէր, սե, խիտ մազերը թափուած հարուստ ծոծրակի և ուսերի վրայ, յիշեցնում էին Սալօմէ Ռէֆսօլտին: Թեթիւ սաթագոյն դէմքը՝ սատաֆի փոփոխական ցոլքեր ունէր: Ես զարմացայ, մանաւանդ, նրա չափազանց սպիտակ ատամների և չափազանց սև աչքերի հակադրութեամբ: Արտևանունքները, կոպերի շուրջը և չրթունքները, կարծես, նկարուած լինէին: Իր պայծառ, խաղաղ աչքերով ինձ նայելով՝ նա ժպտում էր: Յիշելով սարթիպի խօսքերը, ես մտածում էի, որ այս կինը նրա տաած զարհուրելին չի երևում:

Բռնելով ձեռքիցս և բազմոցի վրայ նստեցնելով նա ասաց.

—Ամուսինս Թեհրան ճանապարհուեց, մենք զուարճանալու ժամանակ ունենք:

Նա կոկորդային չեչտով արտաքանուած անզլիէրէնով էր խօսում:

Մի քանի բոպէից յետոյ, երբ նա պղնձէ գաւազանիկով փոքրիկ թմրուկի վրայ խփեց՝ սուրճ բերեցին: Այդ ժամանակ նա, բառերը խառնելով, սկսեց արագ-արագ խօսել, յայտնելով, որ ինքը չատ է ձանձրանում, և որ ինձ իսկոյն ի նկատի էր առել: Միևնոյն ժամանակ, նա աչքերն աւելի գորովալի էր դարձնում, ձեռքս աւելի քաղցրութեամբ էր սեղմում: Կամայկամայ աւելի մօտեցաւ ինձ, յանկարծ ուժով գրկելով՝ շրթունքները բերանիս միացրեց... Նրա ջերմութիւնն ինձ այրում էր, մի գրգռիչ մեղիութիւն վազում էր երակներիս մէջ: Ես սկսել էի գլուխս կորցնել երբ հարեւան սենեակից մի աղմուկ լսելի եղաւ: Յանկարծ, դուրս պրծնելով գրկիցս՝ նա, դողահար՝ ուղղաձիգ կանգնեց: Նրա կէս-անձնատուր լինելը, գգուանքները, յանկարծական վախը, այնպիսի արագութեամբ միմեանց հետեւեցին, որ ես ժամանակ չունեցայ քննելու իմ տպաւորութիւնները:

Միշտ իր չնորհալի և անուշ աշխուժութեամբ դէպի պատը վազելով, նա առանց վարանելու, այնտեղից մի փոքրիկ, երկար դանակ վերցնելով կիսով չափ թագցրեց իր թեւի տակ: Ետոյ դէպի ինձ դառնալով նա մի ազդու նշան արեց ասելով՝ «ապասիր»։ Եւ իսկոյն ծանր վարագոյրների յետեւում անյայտացաւ...

Մի անորոշ անհանգստութիւն զգացի: Սարթիպի ազդարարութիւններն էի յիշում: Մի փոքր անխոհեմ չէի եղել: Մի բոպէից հարեւան սենեակում յանկարծ աղմուկը վերսկսուեց— ձայն, գոռգոռոց, մի կարճ պալքար և վերջապէս լուրթիւն. Իսկոյն վարագոյրը բարձրացաւ և Նիսսան երեւաց: Նա բոլորո-

վին այլաշուշած էր, այնքան գունատ, որ դէմքի սատաֆային գոյնը համարեա թէ խառնուում էր մանեակի մարգարիտների հետ: Կէս յննուած պատին՝ նա կանգնեց. կարծես պատաստի դեղին ֆօնի վրայ յարմարացրած մի սպիտակ արձան լինէր:

Նա միշտ ժպտում էր, ժպտի մէջ իր սուր ատամները ցոյց տալով:

Մի քանի րոպէից, դիրքը փոխելով՝ նա մի քանի քայլ առաջ եկաւ. դանակն և ձեռքերը կարմիր էին...

—Տէր Աստուած, ի՞նչ կայ,

—Ոչինչ—ասաց նա դանակը մի անկիւն գցելով և մեծ հանդարտութեամբ աւելացնելով.

—Ամուսինս էր: Նա մեզ կը սպանէր, ուստի ես նախադասեցի նրան կանխել... Գնանք, օգնիր ինձ մարմինը ջուրը գցելու...

Ջարհուրանքից ապուշ հայկացքս նրան ուղղած ես անշարժ մնացի: Նա էլ ինձ նայեց, բայց աչքերը բացարձակ արհամարհանք էին արտայայտում:

—Այս ֆրանսիացիք... ի՞նչ ջղային են—ասաց նա մի այնպիսի շեշտով, որ կրէք չեմ մոռանայ. եւ ուսերը բարձրացնելով՝ մի աղախին կանչեց, որին հրամայեց լուսամուտը բանալ: Յետոյ, կարծես մի շատ բնական բան անէին, երկուսով մարմինը բարձրացրին և գցեցին գետի մէջ, որ իսկոյն իր մէջ խորասուզեց: Հաւատացիր, մի պարիզեցու համար՝ այդ դէպքը չախազանց արեւելեան էր: Խոստովանում եմ, ես մի յիմար սարսափով բռնուեցի և առանց մի խօսք ասելու, ինչպէս մի խենթ՝ ինձ դուրս գցեցի: Ո՞րտեղով էի անցել: Ոչինչ էլ չը դիտէի, միայն տաճն րոպէից յետոյ ես քաղաքումս էի: Ես առաջ էի գնում վախվիւնելով, կարծես թէ, սատանաների մի լէգէօն հետեւիս լինէր ինձ:

Տուն հասնելով՝ սենեակս մտայ և դուռը պինդ կողպեցի, անիծելով Նիսսային և արեւելեան բոլոր հուրիներին:

III

Որպիսի գիշեր! Առաւօտեան դէմ միայն մի ծանր քուն եկաւ վրաս:

Երբ զարթնեցի, արեգակն արդէն բարձրացել էր և ճառագայթները լայն չերտերով ցննեակս էին մտնում: Ի՞նչ էր պատահել: Առանց արդարութեան միջամտութեան մարդս չի կորչում: Նիսսան այդ բանը նոյն-իսկ չէր թաղցրիւ. աղախինը նրան տեսել և օգնել էր: Ես, ես էլ մասնակից էի այս գործում:

և միայն այն մասին մտածելով, թէ մի այդպիսի ոճրագործութեան մէջ ես էլ խառն եմ՝ սարսափից մաղերս բիղ-բիզ էին կանգնում։ Արդե՞ք ամեն բան յայտնել ֆրանսիական դեսպանին։ Դժբախտաբար նա արձակուրդ առնելով գնում էր, իսկ առաջին խորհրդականը չափազանց երիտասարդ լինելով իզուր էր նրան զիմել։ Յամենայն դէպս, սրանով ապագաս խորտակուել էր, իսկ գեղարուեստի միջնորդութեան առաջնորդները լաւ պաշտօն էր...

Ամբողջ օրն այսպէս մնացի, մի տեսակ տագնապի մէջ. չը համարձակուելով դուրս գալ տանից, Նախ քան մի ելք կը դանէի՝ գիշերը վրայ հասաւ. իսկ Նիսսայից՝ ոչ մի լուր։

Ձերբակալել էին նրան. թնչ էր եղել նաւ Եւ շուտ պառկեցի, բայց քնել չը կարողացայ։

Վերջապէս երկրորդ օրը ոչ մի լուր չը ստանալով՝ ես որոշեցի բարեկամ սարթիպիս տեսնելու գնալ (Սաստիկ երկմտութեան մէջ մնալս աւելի լաւ էի համարում)։ Ես վստահ էի. որ Մահմէդ-աղան նախաճաշից առաջ դուրս չի գալ։ Կէսօրուայ մօտ պալատ հասայ։ Ինձ ասացին, որ նա, ըստ սովորականին, իր առանձնասենեակումն է։ Ես լուր տուեցի և ներս մտայ։ Սարթիպը բազմոցի վրայ ընկողմանած՝ հանդարտութեամբ իր չիբուխն էր ծխում։

—Ա՛հ, դուք էք—նկատելով ինձ ասայ նա—լաւ էք։

—Շատ լաւ, չնորհակալ եմ.

—Ի դէպ—չարունակեց նա—նորութիւն գիտէք։

—Նորու... նորութիւն։ Ոչ, ես... ես ոչինչ չը գիտեմ։

—Յիշում էք Աստուլլային, հին արուարձանների այն հարուստ վաճառականին.

—Եթէ ես յիշ...

—Բայց այն Նիսսայի ամուսինը, որի մասին ես ձեզ խօսել եմ։

Ես մինչև ականջներիս արմատը կարմրեցի։ Ուրեմն վերջացել է, ոճիրը բացուել էր. և ես այդ դէպքի վերջը նախատեսել չէի համարձակուում։

Համարեա թէ անհասկանալի մի «այո» թոթովեցի։

—Խեղճ մարդ—չարունակեց սարթիպիս—յանկարծ անյայտացել է։

Կոկորդս մինչև խեղդուելու աստիճան կուչ եկաւ. սակայն ես պատասխանել կարողացայ։

—Ի՞նչպէս... նա... նա անյայտացել է... բա՛հ... շատ... շատ հետաքրքիր է.

—Այո շատ հետաքրքիր.

Եւ սարթիպը ուղիղ աչքերիս էր նայում: Ես ոչինչ չը խօսեցի և հէնց այն է, ուղում էի բոլորն էլ խոստովանել, որ նա ասաց.

— Պէտք է Թէհրան գնալ, և իսկոյն... թռչել: Իր մասին ոչինչ չը գիտեն:

Կրկին սարթիպը ուղիղ աչքերիս էր նայում: Կարճ լուծիւն տիրեց:

Յետոյ, ծխի մի երկար գիծ թողնելով բերանից, նա մի անվրդով հանդարտութեամբ աւելացրեց:

— Աստուած մեծ է!..

Ֆրանս. թարգմ. ՖԱՐՐՕ

*
* *

Օրս տրտում, սե է անցնում, յոյսս է վաղուան
օրուան վերայ.

Վաղուան օրն էլ սե-ամպի պէս եկաւ, նստաւ սրտիս
վերայ.

Հիմա դարձեր, ափսոս կ'ասեմ, անցած օրին երնէ՛կ
կուտամ:

Ափսոս կուտամ դալար կեանքիս, որ շուտ ընկաւ չար-
քաշ ճամբայ:

Ու օրերիս կարաւանը տխուր-տրտում առաջ կ'եր-
թայ.

Հազար ցաւով, մարդկանց ցաւով ծանր բեռնած ճամ-
բայ կ'երթայ.

Ա՛խ, օրերիս կարաւանը աչքը՝ կարօտ, սիրտը՝ կարօտ.

Ու աշխարհիս ցաւով բեռնած էս աշխարհով կ'անցնի,
կ'երթայ:

Ու մի օր էլ չոր չօրի մէջ կարաւանս կ'իջնի դադ-
րած,

Վար կը դնէ մէջքի բեռը — կեանքս, կեանքս մոխիր,
դարձած.

Ա՛խ, օրերիս կարաւանը աչքը՝ փափագ, սիրտը՝ պապակ,
Փուչ աշխարհիս ցաւով բեռնած էս աշխարհով կ'անցնի,
կ'երթայ...

Կարաւանս երբ որ իջնի, ես ինձ ու ինձ հաշիւ
կ'անեմ.

Թէ ո՛ւր հասայ, թէ ի՞նչ տեսայ, ինչո՞ւ եկայ էս մեծ
ճամբէն.

Շատ դադրեցայ, շատ չարչրուայ, հաշիւ անեմ, շահս
 ինչ էր,
 Ախր ինչո՞ւ ոտ դրեցի էս սուր ու փուշ, դժուար
 ճամբէն:
 Ծոփն ընկած մարդու նման նամարդ օձից կախ ենք
 ընկել.—
 Նամարդ օձը էս աշխարհն է—ու աշխարհին աչք ենք
 բացել.
 Ա՛խ, աշխարհից մի յոյս չը կայ—ճիճունների ենք կե-
 րակուր.
 Մի բուռ հողն է մեր բաժինը, թէ տէր դառնանք աշ-
 խարհին էլ:
 Ա՛խ, մերիկներ, հող պիտ' դառնաք, ինչքան սրտեր
 հող են դարձեր.
 Ազիզ սրտեր, խորունկ սրտեր սիրով վառուեր, հող են
 դարձեր.
 Ձեր բալէքը, ընկերներս մեր սրտերէն ելան-թռան,
 Ա՛խ ամենքն էլ էս աշխարհի անդուծ կամքով հող են
 դարձեր:

Ա.Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԵՂՕԻ ՔՈՌ ԲԱԽՏԸ

I

«Հայր սուրբ ջան, աջիդ զուրբան, մի օգնութիւն արա ինձ. միայն երկու ուրբլի է պէտք, որ մեր գիւղ հասնեմ»:

Այս խօսքերով եկեղեցու բակում դիմեց վարդապետին մի երիտասարդ գիւղացի, աջ թեւը կապած, հէնց այն րոպէին, երբ վարդապետը կամենում էր եկեղեցի մտնել: Գիւղացու մեծ, մորթէ փափախը, տրեխները, պատռտուած չուխան և ցաւոտ դէմքն աւելամայ դրաւեցին վարդապետի և փոքրածիւ ժամաւորների ուշադրութիւնը: Պարզ էր, որ նա նոր էր եկել Բագու և չընդադադող փարթամութեան մէջ իր փափախով և տրեխներով մի տարօրինակ հակապատկեր էր ներկայացնում:

—Ո՞րտեղացի ես, այ տղա, հարցրեց վարդապետը:

—Ծառայ եմ, ապարանցի եմ, Սաքոյի Եղօն եմ: Երկու շաբաթ կայ, եկել եմ Բագու, հիմա երկու մանէթ է պէտք, որ յետ դնամ գիւղ, մեր տուն:

Եւ գիւղացին նորից իր աղերսալի նայուածքը յաւելեց վարդապետի վրայ:

Նրա արեակէզ, փոշոտ դէմքը թախիծ, վիշտ էր արտայայտում, բայց ոչ տրտունջ, ոչ յուսահատութիւն. առաջին ակնարկից կարելի էր համոզուել, որ ձեր ա-

ռաջ կանգնած է մի միամիտ գեղջուկ, որի նահապետական պարզութիւնն ու անմեղութիւնը գեռ չէին խախտուել ապականուած քաղաքի նեխուած բարոյական մթնոլորտում: Այդտեղ, այո, կար վիշտ, բայց միևնոյն ժամանակ այդ վիշտը անմուռնչ տանելու վրձնական համբերութիւն:

— Է, լաւ, եթէ երկու շաբաթ է միայն, որ եկել ես այստեղ, էլ ինչո՞ւ ես այդպէս շատ յետ գնում. ինչի համար էիր եկել. — խոստովեամբ հարցրեց հայր սուրբը:

— Ծառայ եմ, եկել էի բախտս փորձեմ:

— Փորձեցիր միթէ և ի՞նչպէս:

— Բախտս քոռ դուրս եկաւ, Աստուած չուզեց, օրհնեալ լինի նրա կամքը. երեւի ճակատիս այդպէս էր դրուած... ի՞նչ անենք. Աստծու հետ հօ կուուել չէ կարելի. աղաչում եմ, երկու մանէթ շնորհիր, գառնամ մեր գիւղ:

— Երկու մանէթ, ինչո՞ւ անպատճառ երկու, միթէ այս մեծ քաղաքում չը կարողացար երկու մանէթ հաւաքել:

— Ես այստեղ ոչ ոքի չեմ ճանաչում, հայր սուրբ, մեր գիւղից մարդիկ կան, բայց նրանց տեղը չը գիտեմ. ինչ անէի, ողորմութիւն հաւաքէի. դուք մեր հայրն էք, դուք տուէք, աման, հայր սուրբ, մի խնայիր երկու մանէթը, տուր գնամ:

— Ախր երկու մանէթով ինչպէս կը գնաս Ապարան, այ տղայ, աւելի մեղմ և կարեկցական ձայնով ասաց վարդապետը:

— Ծառայ եմ աջիդ, հայր սուրբ. չորս մանէթ տուել է ինձ զավօդի տէրը. երկու մանէթ էլ պէտք է, որ այստեղից Աղստաֆա գնամ երկաթուղով:

— Իսկ այնտեղից ի՞նչ պէտք է անես:

— Աղստաֆից ոտքով կը գնամ մինչեւ մեր գիւղ: Այդ միջոցին եկեղեցին օրհնելու երրորդը հնչեց.

վարդապետը շտապով ներս մտաւ ասելով. «լաւ, սպասիր այս գիշեր, վաղը կը կարդադրենք»:

*
* *

Երեկոյ է, մութը կոխել է. երկնակամարի վրայ աստղերը սկսեցին փայլել. Բագուի աղակալից փողոցներում կառքերի, ձիաքարշների անց ու դարձը ականջ է խլացնում: մարդիկ անցնում են տենդային արագութեամբ, կարծես չարագործներ լինին, որոնց յետեւից օստիկաններ են ընկել ըռներու:

Հայոց եկեղեցու հանգէպ գտնուող հրապարակի լապտերները աղօտ, մեղմ լոյս են սփռում շրջակայքի վրայ, հեռւում լսւում է նաւի սուր սուլոցը և ամէն ինչ ցոյց է տալիս, որ նաւթային մայրաքաղաքի բնակիչները դեռ չեն մոտածում հանգստանալու, քնելու, թէև արդէն ժամը 10-ն է: Փշում է «գելավար» խեղդող բամին, որից բնակիչները կորչում են քափ քրտնքի մէջ. ամենքը վազում են այն միակ տեղը—բաղաբային այգին, ուր կարելի է փոքր ինչ դով օդ շնչել: «Անիծուի այս տեսակ բաղաբը», լսում են շարունակ խօսակցութեան ձայներ, «եթէ այս փողն չը լինէր, ոչ ոք չէր ապրի այս դժոխքում: ան մեր երկրի օդ, սառն ջուր, ուր էք»:

Քնած չէ այդ միջոցին և ապարանցի Եղօն, Սարգըսի տղան: Վարդապետի հրամանով ժամհարը նրան թող տուեց գիշերը անցկացնել եկեղեցու բակում: Պարզուելով զանգակատան լերկ սալայատակի վրայ, մօթալ փափախը գլխի տակին դրած բարձի տեղ և պատընտուած չուխան վրան ձգած վերմակի տեղ, նա ակնապիշ նայում է աստղաղարդ երկնքին. երբեմն երբեմն, երեւի փալտսի մէջ կապած թելի ցաւից, նրա դէմքը կծկւում է և նա «վայ նանի, վայ նանի» հառաչն է արձակում: Փողոցի աղմուկը, դղրդող կառքերը, տաք և հեղձուցիչ «գելավար» բամու վզոցը չեն հասնում նրա ականջին. նա, խլացած, ոչինչ չէ լսում: նոյն

իսկ ոչինչ չէ տեսնում: գործում է միայն նրա միտքը և գործում է արագութեամբ. ծանօթ պատկերներ մէկ մէկու յետեւից դալիս, սահում են նրա առաջից. թարմանում են յիշողութիւնները և նա, մոռանալով թեւի վերքի կսկիծը, ապրում է այդ յիշողութիւններով ու պատկերներով:

*
* *

Ահա իրանց գիւղը. դեռ երկու շաբաթ առաջ ինքն այստեղ էր. առաւօտը, լուսածագին, վեր էր կենում, գնում դէպի աղբիւրը, դով, սառն աղբիւրը, երեսը մի լաւ լուանում, խաչակնքում, վերագառնում տուն. Շուշանն արդէն աղլուսի մէջ կապել է հացը և պանիրը՝ հանգը գնալու համար. փոքրիկ Մուկուշը դեռ քնած է: Ծերունի հայրը, Սարգիս ապէրը ժամից վերադառնում է. նա, սովորաբար, տխուր է, երեսը կնճիռներով, խորշումներով ծածկուած. խորին թախիժ նկարագրուած է այդ գէմքի վրայ:

—Ապէր, ասում է Եղօն, ախր փոխանակ այդպէս հալումաշ լինելու, աւելի լաւ չէ թոյլ տաս գնամ Բագու, համ Գրիգորին գտնեմ, համ րախտս փորձեմ. կարելի է Աստուած մեզ էլ ողորմի, մենք էլ մի կտոր հացի տիրանանք, աղքատութիւնից ազատուենք:

—Այ որդի, պատասխանում է չարունակ Սաքօն, փոքր եղբայրդ՝ Գրիգորը գնաց. ահա ութ ամիս ոչ մի լուր չը կայ. մեռաւ, սաղ է, չը գիտենք. հիմա դու էլ գնաս, ո՞ւմ յոյսին ես թողնում ծերունի հօրդ, խեղճ կնոջդ և երեխայիդ. ո՞վ պէտք է մեզ պահի և կերակրի, ո՞վ պէտք է աչքերս փակի, վերջին մի բուռ հոգն ածի վրաս. չէ որդի, բախտը փորձելը լաւ չէ. Աստուած եթէ ուզենայ, եթէ վճռուած է, բախտը ինքն էր ոտքով կը գայ քո դռան չէմքին կը չօրի. լաւ չէ Աստծուն փորձել. քո պապերի բոյնը, քո արտն ու արօտը մի թող. մի կտոր հաց Աստուած միշտ կը տայ. ծտերին, անասուններին կերակրողը մեզ էլ կը հասնի:

— Չէ ապէր, ինչ ուզում ես ասն, ես պէտք է գնամ. ընկերներս կիրակի օր ճանապարհ են ընկնում, ես էլ նրանց հետ. հէրիք է, ինչքան քափ քրտնքի մէջ աշխատեցինք, թող մի քիչ էլ մենք հարստանանք, ինչպէս շատերն ուրիշ տեղերից գնացել հարստացել են, մի քիչ էլ մենք հարստանանք. երկու երեք տարի կ'աշխատեմ Բագուում, մի քիչ փող կը հաւաքեմ, կը վերադառնամ, պարտքերնիս կը տանք կ'ազատուենք մեր արիւնը ծծող պարտատէրից, և այն ժամանակ, մենք էլ բախտաւոր կը լինինք. ինչ ես զուր բախտիս առաջը կտրում:

Ծերունին ուշադրութեամբ մտածեց աչքերը գետին յառած, ապա ասաց ախ քաշելով:

— Դէ դու գիտես, որդի, գնա, Աստուած քեզ հետ. գուցէ փսրը եղբօրդ էլ ճարես հետդ բերես, նշանածի աչքը ճանապարհին է:

*
**

Կիրակի է. գիւղը առանձին կենդանութիւն է ստացել. Եղօն և մի քանի իրան նման աղքատ երիտասարդներ պատրաստում են ճանապարհ ընկնել դէպի Աւետեաց երկիրը, ոսկու հանքը: Եղօնց տանը մատաղ են արել. պատարագից յետոյ տէրտէրը և գիւղի համփաները հաւաքուեցին. մատաղը օրհնուեց, բաժանուեց. սուփրան դցուեց և տէրտէրն ու համփաները Սաքօ ապօր հետ մի քանի բաժակ օղի և գինի խմեցին. «Բարով գնաս, շուտով դաս, որդի, ձեր օջախը վառ, շէն պահես. լիանաս, կշտանաս և մեզ էլ լիացնես, կշտացնես»: Եղօն ոտքի կանգնած ծառայում է և շնորհակալութիւն յայտնում: Ծուշանը այս ու այն կողմն է վազում հազիւ արտասուքը զսպելով: «Քեզ մատաղ, Եղօ, մեզ չը մոռանաս, Գրիգորին հետդ բերես. շուտ գաս, մեր արեւը չը խաւարեցնես»:

Եղօն այնքան յուզուած էր, որ լաւ չէ յիշում, ինչպէս տէրտէրը «Տէր ուղղեա զճանապարհս» կարգաց,

Սաքօ ապէրը համբուրեց ճակատը, ինչպէս ինքը հօր առաջ չօրեց, օրհնութիւնն առաւ, ինչպէս ամաչելով, կարմրելով Շուշանին մնաս բարեւ ասաց, Մուկուչին համբուրեց և պաշարով լի խուրճինը ուսին գցելով՝ դուրս եկաւ գիւղից ու միացաւ ընկերներին:

Եղօն ուրախ է. ընկերների հետ «մուխամմազ» երգելով գնում է Դիլիճանի հրաշալի, զով անտառի միջով, չէ՛ որ նրա փափաքը կատարուեց, չէ՛ որ, վերջապէս, նա գնում է բախտ որոնելու. նա կատարելապէս հաւատացած է, որ այդ բախտը գտնելու է և գտնելու է Բաղում: «Ինչո՞վ եմ ես պակաս ուրիշներից, միթէ ես Աստծու ստեղծածը չեմ, միթէ ինձ պէս զօջաղ տղային Աստուած չի խղճայ: Չէ, անպատճառ կը տայ»: Միայն Եղօն չէ կարողանում երեւակայել, թէ ինչպէս է հարստանալու, ոսկիները ինչպէս են թափուելու գըլխին. նա լսել է, որ ոսկին թափւում է նաւթի ձեւով. յանկարծ, հողի տակից խփում է նաւթի շատրուան և մի քանի ժամուայ խփածը բաւական է մարդի հարստացնելու համար: Ճիշտ է, այն հողերը, ուր գտնւում են ֆօնտանները, ձրի չեն. ամեն մարդ չունի, բայց այդ հող չէ: Եղօն հաւատացած է, որ կը գտնուին շատ բարի մարդիկ, որոնք իրանց ֆօնտանի երկու երեք ժամուայ խփածը կը բաշխեն իրան, ասելով, դէ, Եղօ, դնա բախտաւորուիր: Ի՞նչ բան է մի երկու ժամը նրա համար, որի ֆօնտանը ամբողջ օրերով խփում է. այդ անպատճառ կը լինի, և Եղօն, արդէն մտքում օրհնում է իր անյայտ բարերարին: Որպիսի եռանդով Եղօն աշխատելու է այդ բարերարի համար: Նա արդէն աղատուած է տեսնում իրան, հօրը, Շուշանին գիւղական վաշխառու Մկրտումի ձեռքից. «Ա՛ռ, ահա փողդ, այլ եւս մի ծծիր մեր արիւնը, չպրտում է նա չարչուն երկու հարիւրանոց.—քո տուած երեսուն մանէթի տեղ ստացիր երկու հարիւր, յետ տուր մեր մուրհակը»: Ո՛հ, ինչպէս փայլում է Շուշանի երեսն ուրախութիւնից:

Ահա և Աղստաֆայի կայարանը. եղօն առաջին անգամն է տեսնում երկաթուղին. նա չլացած է. լօկօմոտիվը նրան թւում է մի վիթխարի դադան. խուրջինը ուսին՝ նա պլըշած նայում է. ընկերների օգնութեամբ մի կերպ տեղաւորւում է վագօնում և մինչեւ Բագու հասնելը, համարեա տեղից չէ շարժւում: Ինչքան խելքին զօռ է տալիս, նա չէ կարողանում ըմբռնել, թէ ինչ ոյժ է, որ մղում է երկաթուղին այսպէս արագ վազելու. «այստեղ սատանայի ձեռք կայ», վճռում է նա և աւելի կուշ է դալիս իր անկիւնում ու մի տեսակ թմրութեան մէջ ընկնում, մինչեւ որ ընկերներից մինը կողքին բթում է ու ասում. «վեր կաց, խուրջինդ հաւաքիր, հասանք Բագու»:

Բագու անունից նա ցատկում է, իբրեւ էլէքտրական ցնցումից. չէ՞ որ հասել էր իր փափագին, չէ՞ որ հասել էր, վերջապէս, այն տեղը, ուր իր երազները պէտք է իրականանային, ուր հարստութիւն պէտք է ձեռք բերէր և գնար աղատելու իր հօրը, ընտանիքը չարչի Մկրտումի ճիրաններից, քաղցրացնելու իր Շուշանի դառն օրերը և պատճառելու նրան անբաւ ուրախութիւն: «Տէր Աստուած, դու յաջողիր գործս», խաչակնքեց Եղօն դուրս գալով վագօնից, խուրջինն ուսին, մօթալ փափախը գլխին և շուարած նայելով դէս ու դէն վագոյ մմբօխի վրայ:

«Ո՞ւր են վագում սրանք այսպէս լեղատառա», մտածեց նա, և յանկարծ յիշեց. «ախր չէ՞ որ սակի հաւաքելու են դնում: Երեւի ամեն մարդ ուզում է ինքն առաջ ընկնի, ինքն առաջինը հաւաքի սակին: Տէր Աստուած, թող աչքդ քաղցր լինի իմ վրայ, ինձ եւս արժանացրու այդ բախտին. ես եւս քո արարածն եմ»:

Այս մտածմունքից նրան հանեցին ընկերները և խորհուրդ տուին գնալ իրանց հետ Բալախանի, ուր նա կարող է և գործ գտնել, և եղբօրը տեսնել:

Բալախանի նա, նոյն ընկերների օգնութեամբ, վարձուեց բանուոր Ն. պրօմիսլայի մէջ: Կառավարելը

մի երիտասարդ, ֆրանսոս ձեւով հագնուած ինժեներ, տեսնելով նրան ասաց. «Տո, այս բոլի արջին հրտեղից էք բերել»: Եղօն վիրաւորուեց, բայց նկատելով որ իր ընկերները ինժեների առաջ խոնարհ, գլուխը ծռած կանգնած են, կուշ տուեց վիրաւորանքը և լռեց: Նրան նշանակեցին օրական 60 կոպէկ վարձ և յանձնեցին վարպետներից մէկի հսկողութեան: Այլ եւս նա իր ընկերներից և համագիւղացիներից ոչ ոքի չը տեսաւ. ամեն մարդ իր գործին, իր գլխի համար է մտածում, ով ժամանակ ունի յիշելու թէ ի՞նչ եղաւ Եղօն, ի՞նչ է անում: Եղօն չը կարողացաւ առաջին շաբաթը որեւէ տեղ գնալ. անձանօթ, առանց առաջնորդի, նա չըշկըլուած մնում էր ամեն անգամ, երբ կամենում էր գործարանից մի տեղ հեռանալ. ամեն տեղ վիշկաներ, մեքենաներ, հորեր, սեւ նաւթ, սեւ ցեխ. ցերեկները նրան սաստիկ աշխատեցնում էին առաւօտից մինչեւ երեկոյ. իսկ երեկոյեան նաւթի մէջ կորած, սեւացած, նա յագնութիւնից տեղն ու տեղն քնում էր միւս մշակների հետ: Նա տանջւում էր մանաւանդ ծարաւութիւնից» որովհետեւ չէր կարողանում խմել Բալախանի նաւթահամ ջուրը: Եւ նա չէր հասկանում, գլուխը կտրում էր, բայց չէր հասկանում, թէ ինչպէս է հարստանալու այդ նաւթի, ցեխի, կեղտի մէջ, ինչպէս է դիզելու ոսկիներ: Ամբողջ մի շաբաթ եւս չը կարողացաւ որեւէ տեղեկութիւն ստանալ եղբօր մասին: Վերջապէս կիւրակի առաւօտ, իր համագիւղացիներից երկու հոգի եկան և նրան տարան իրանց հետ, ասելով. «Ինանք տրակտիր, կարելի է եղբօրդ էլ այնտեղ տեսնես. քեզ էլ մի լաւ կընքենք այսօր, մարդ դառնաս, տեսնում ես բոլի արջ ե՞ն անուանում»:

*
* *

Եւ ի՞նչ տեսաւ Եղօն. նրանք մտան մի ստորերկրայ պանդոկ. սկզբում Եղօն ոչինչ չը նկատեց. ծխախոտի թանձր մուխը, բողմաթիւ մարդկանց շնչառու-

Թիւնը առաջ էին բերել մի մշուշ, որի միջով շատ դժուար էր տեսնել, զանազանել առարկաները և մարդկանց, սոսկալի ժխոր էր տիրում այդ պանդոկում: Բաժակների չըրիկոց, ազազակներ, երգ, գոռոց գոչիւն, խապոտ ձայներ, շիշերի բացուելու տրաքոց, հայհոյանք. — ամենը իրար խառնուելով մարդի տկանջներն էին խաղցնում: Եղօն նստեց իր ընկերների հետ մի սեղանի առաջ. բիշ-բիշ նրա աչքերը սովորեցին տեսնել իրերը և մարդկանց և այն ինչ-որ նա տեսաւ, նա երբէք չի մոռանալ: Նա տեսաւ ռուս բանուորներ, նստած ռուս աղջիկների հետ, օղի, գարեջուր էին խմում և երբեմն երբեմն համբուրում, իրար հետ սիլի-բիլի անում:

Ամօթխած Եղօն կարմրեց, ըռընեց. ընկերները ծիծաղում էին, տեսնելով նրա այդ վիճակը և սկսեցին փափալ. շուտով նրանց սեղանի վրայ ևս երեւացին բաժակներ, գինի, գարեջուր: Նրան ստիպեցին խմել, բայց նրա կոկորդից ոչինչ ցած չէր լիջնում: Նրա միտքը արագութեամբ դործում էր. նա չէր հասկանում ինչպէս տղամարդը, որ գլխին փափախ ունի դրած, կորով է հրապարակով, օտարների ներկայութեամբ, օր ցերեկով կնոջ համբուրել. «Երեւի ռուսների ազաթն այդպէս է», մտածեց նա: Բայց այս ինչ է տեսնում: Նոյնը անում են և հայերը, իր աղարանցի ընկերները. քրտինքը կոխում է Եղօն յուզմունքից, իսկ ընկերները հռհռում են միայն, տեսնելով նրա վիճակը:

Եղօն յանկարծ ծլունկ եղաւ. նստած տեղից. կարծես նրան շիկացած երկաթով գիպան կամ օձ կծեց: Նրա չարաճճի ընկերները աչքով էին արել տրակտիրային աղջիկներից մէկին և սա մօտենալով, յանկարծ համբուրել էր նրան: Եղօն տմբողջ մարմնով դողում էր, կարմրատակել էր սաստիկ վերաւորուած զգալով իր ամօթխածութիւնը: Նա, զաւակի տէր, նա, որ գիշերները նոյն-իսկ վախենալով էր համբուրում Շուշանին, այժմ իր այտերի վրայ զգաց մի այլ կնոջ համբոյրը, որ կարծես այրեց, գազեց նրան. բնազդմամբ,

նա ձեռքով սկսեց սրբել այդ այրուած տեղը: Տէր Աստուած, այս սրտեղ է ընկել, այս ինչ աշխարհ է, միթէ այսպէս պէտք է փող աշխատել. հարամ լինի այսպիսի փողը: Նա բիչ էր մնում լաց լինի. նա զգում էր, որ պէտք է փախչել, հեռու փախչել այստեղից, և մտածում էր այդպէս էլ անել, երբ, յանկարծ, մի այնպիսի նոր բան տեսաւ, որ տեղնուտեղն մեխուած մնաց: Այս ինչ է, միթէ նա է, Գրիգորնէ, իր հարազատ եղբայրը. այն ամօթխած ամաչկոտ, հեղ, վախկոտ Գրիգորը: Եթէ պանդոկի տանիքը փուլ գար և գլխին թափուէր, Եղօն այնքան չէր զարմանայ. Գրիգորը նստած անկիւնի սեղանի մօտ, հարթած, համբուրում է մի կնոջ, թեւ ձգում է նրա պարանոցով, ինչ որ երգ է երգում խռպոտ ձայնով, նա կամենում է նորից համբուրել աղջկան, սա թոյլ չէ տալիս, ինչ-որ ասում է. Գրիգորը ձեռքը տանելով գրպանը, հանում է մի իւզոտած, կեղտոտ փողաման և հանելով թղթադրամներ, առաջ Յանոց, յետոյ Ծանոց, տալիս է նրան: Աղջիկը վերցնում է և թոյլ է տալիս համբուրուել իրան. Գրիգորը գարեջուր է պահանջում, նորից խռպոտ ձայնով երգում է, նորից կամենում համբուրուել աղջկան:

Եղօն բիչ է մնում շնասպառ լինի. նրա աչքերը մթնանում են, կարծէք մէկը նրա գլխին մի ահագին թոխմախով խփել է: Այնտեղ, գիւղում, հայրը, մայրը, ինքը, Շուշանն և Մուկուշը հաւում, մաշում են վաշխառու Մկրտումի ձեռքին, պարտքերի մէջ խրուած. այնտեղ, գիւղում, խեղճ նշանածը անհամբեր սպասում է Գրիգորին, որ գայ փող բերի, պարտքերը տայ, պսակուի, իսկ նա, այստեղ, նա իր փողերը ծախսում է գինեանում, անառակ կանանց հետ:

Եղօն զարմանում է, որ պանդոկը փուլ չէ գալիս և իրանց ամենքին տալիովը չէ անում: Զայրոյթը—կատաղութիւնը խեղդում են նրան, նա կամենում է հարայ տալ, պոռալ, բայց կոկորդը չորացել է:

—Տօ, ինչ ես աչքերդ չռել, նայում, կարծես մեղ

ամենքիս ուզում ես ուտել. ի՞նչ կայ,—ուսին խփելով ասացին ընկերները, չը հասկանալով ի՞նչ է կատարում Եղօի մէջ։

Եղօն միայն մատով ցոյց տուոց Գրիգորին և աղջըկան։

—Հո, հո, հո, քրքուացին ընկերները. եղբայրդ, էհ, ի՞նչ անենք, ջահիլ է, գուարճանում է. սպասիր, սպասիր, թող անցնի մի երկու ամիս, դու նրանից վաթթարը կ'անես. նստիր, նստիր, յիմար, խմիր գինին։

—Ե՛ս... պոռաց վերջապէս Եղօն և խեղագարի նման դուրս նետուեց պանդոկից, վախենալով որ չը լինի ինքն ևս եղբոր պէս դառնայ, մոռանայ հօրը, մօրը, Մուկուչին, Շուշանին և չարչի Մկրտումին։

Եւ նա քայլում է անծանօթ փողոցում շշկլուած այծեամի պէս. նա փախչում է պանդոկից ինչպէս վարակիչ բոյնից, բայց եղբայրը... Գրիգորին, մնաց ախր, բա ինքը ոչինչ չասի՞, բա թեից չը բռնի՞, չը փորձի՞ դուրս քաշել ցեխից։ Նա յետ է դառնում շտապ-շտապ, ներս է մտնում և առանց իր շուրջը նայելու ուղիղ դիմում է եղբոր վրայ և ձեռքն ուսին դնում։

—Գրիգոր, ա՛յ Գրիգոր, էս ի՞նչ հօղն ես տալի մեր գլխին։

Եղբայրը նայում է կարմրած աչքերով և կարծես չի հասկանում։

—Բա մեր տունը, մեր օջաղը, ախպէր, էդ ի՞նչ օրի ես. բա քո նշանածը...

Եղբայրը բարձրանում է օրօրուելով և ուզում է գրկել Եղօին, բայց էլի ընկնում է կեղտոտ նստարանի վրայ։

—Գնանք, ախպէր, ասում է Եղօն թեւը բռնելով և դէպի դուռը քաշ տալով. Գրիգորը թեւը դուրս է քաշում, ձեռները տարածած գրկում է աղջկան... Եղօն գլուխը կախ դուրս է դնում, իսկ բազմութիւնը յետեից հռհռում է։

Նզօն չը գիտէ, չէ յիշում ինչպէս նա կարողացաւ հասնել Բալախանի իրանց գործարանը. նա պառկեց ամբողջ օր, ամբողջ գիշեր նա չշնամի պէս էր. անկապ մտքերը վրդովում, խանգարում էին նրա ուղեղը. նա չը կարողացաւ մի րոպէ քնել: Միայն լուսաբացին, վեր կացաւ, սառն ջրով երեսը լուաց, և սև մտքերով պաշարուած՝ գլուխը քաշ գնաց աշխատելու. նա մոռանալ չէր կարողանում եղբօրն ու պանդուկը: Մի հօրի գլխին կանգնած, նա սկսեց պատեցնել մեքենան և որովհետև խելքը գլխին չէր, ուշքը ուրիշ տեղ էր, ոչ ոք էլ, ոչ գլխաւոր վարպետը, ոչ օգնականը իրան ոչինչ չէին հասկացրել, նա մեքենան պատեցնելիս, ձեռքը չը քաշեց ժամանակին և մեքենան ջախջախեց նրա թևը:

Նա ընկաւ ուշաթափ և երբ աչքերը բացեց իրան գտաւ հիւանդանոցում: Բժիշկը քննեց վէրքը, ինչ-որ հեղուկով սրսկեց, լուաց, կապեց և ասաց, որ կարող է բժշկուել, բայց թևը կարող է անպէտքանալ և թղթի վրայ ոռոսերէն մի բան գրելով տուեց նրան ու ճամբեց:

«Էս էլ իմ բոլ բախտիցն է» մտածեց Նզօն ու լուռ մտնջ գնաց գործարանը, թևը կտպած: Նա այժմ ուշրի էր եկել և նրա համար ամեն բան պարզ էր, վէրքը նրան սթափեցրել էր: Նա եկաւ բախտը փորձելու և փորձեց. Աստուած չը կամեցաւ, որ նա հարստանայ. դրա համար էլ նրա թևը կոտորուեցաւ. զուր տեղն ինքը չը լսեց հօրը, թողեց իրանց արտերը, այգին, իրանց տունը: «Եւ ով գիտէ, մխիթարում էր նա իրան, այս Աստուծու կողմից մի ազդարարութիւն է. եթէ մնամ այստեղ, գուցէ ես էլ եղբօրս նման մոռանամ ամեն բան, նամուս, խիղճ, հայր, մայր, կին. չէ, չէ փախչեմ, մի օր առաջ փախչեմ՝ այստեղից, սա դժոխք է, այստեղ ես կ'այրուեմ, կը տոչորուեմ»: Բայց Գրիգորը, ինչ է լինելու ասիւ: Հնա, նա մեռել է իրանց համար, այդպէս էլ կ'ասի հօրը և մօրը:

Նզօն մտաւ կառավարիչ-ինժեների մօտ մնաս բարեւ անելու և խնդրելու, որ հացը հալալ անի: Մեծա-

հոգի կառավարիչը ոչ միայն հացը հալալ արեց, այլ և չորս ուրբի էլ բաշխեց ճանապարհածախս: «Ճիշտ-որ բռի արջ է, մտածել էր նա, կարող էր մեղանից բաւական փող պահանջել վտանգուած ձեռքի համար»:

— Ինչ լաւ մարդ է, մտածեց Եղօն և գլուխ տալով դուրս եկաւ, մէջքին ձգեց իր փաքրիկ պարկը ու դիմեց երկաթուղու կայարանը: Այդտեղ նա խմացաւ, որ մինչև Աղստաֆայ տոմսակն արժէ վեց ուրբի. ինչ անի, երկու ուրբի պակասում էր. ում դիմի: Հայ մըշակները նրան խորհուրդ տուին գնալ հայոց եկեղեցին վարդապետի մօտ: Եւ նա դիմեց վարապետին:

II

Հաւերը կանչելիս Եղօն դեռ չէր քնած. լուսարացին աչքերը ծանրացան, քունը կսխեց և զարթնեց միայն այն ժամանակ, երբ ժամհարը կողքին բռնելով ասաց, «Վեր կաց, հէրիք քնես, գնա մշակութեան գլխի»։ Եղօն ոտքի կանգնեց, հագաւ չուսան, մօթալ փափախը դրեց գլխին, խաչակնքեց, համբուրեց եկեղեցու դուռը ու կանգնեց բակում: Երկար նա սպասեց. արևն արդէն մի քանի կանգուն բարձրացել էր երկնքի վրայ, երբ, վերջապէս, մի քանի անգամ ժամհարին աղաչանք-սղաղատանք անելուց յետոյ, նրան թոյլ տուին մտնել հայր սուրբի մօտ: Մտնելով, Եղօն մօթալ փափախը վերցրեց, մօտեցաւ, համբուրեց վարդապետի աջը և գլուխ տուեց երեք ուրիշ աղաների ևս, որոնք նստած էին նրա մօտ:

— Այս աղաներին, ասաց վարդապետը, նեղութիւն եմ տուել դան ալստեղ քո գործի համար. սրանցից երկուսը աւսովատներ են, միւսը բժիշկ: Պատմիր, տեսնենք ինչ ես ուզում:

— Մառայ եմ, ես ոչինչ չեմ ուզում. խնդրում եմ ինձ երկու ուրբի տաք, որ կարողանամ մեր գիւղը հասնել:

Վարդապետը աչքով արեց աղաներին. նրանցից մինը, դիմեց Եղօին.

—Անունդ ի՞նչ է, ռոտեղացի ես:

—Ծառադ, Սարգսի Եղօն, ապարանցի է:

—Ինչո՞ւ էիր եկել Բաղու:

—Եկել էի բախտս փորձեմ, մի բանի շահու տիրանամ, պարտքից ազատուեմ:

—Էհ, բախադ փորձեցիր, որ հիմա կամենում ես վերադառնալ:

—Հրամանքս, փորձեցի. բախտս քու դուրս եկաւ:

—Ի՞նչպէս թէ քու դուրս եկաւ:

—Էնպէս. Աստուած չուզեց որ հարստանամ, տուեց թեւ ջարդեց. Հիմա պէտք է մեր տուն վերադառնամ. երկու մանէթ պէտք է:

—Լսիր, Եղօ, վերկացաւ փաստաբանը և մօտենալով, կանգնեց նրա առաջ. լսիր, բախադ, ընդհակառակը, շատ լաւ բերել է. դու հիմա կարող ես հարքս տանալ:

Եղօն զարմացած նայում էր փաստաբանին:

—Հասկանո՞ւմ ես, ինչ եմ ասում. դու կարող ես հարստանալ:

—Ի՞նչպէս, աղա:

—Այ, այնպէս, որ դու գանդատ կը տաս զափօդի տիրոջից դատարանին և կը պահանջես երկու հազար ռուբլի. դատարանն էլ կը վճռի առնել նրանից այդ փողը և տալ քեզ:

—Բայց ինչի՞ համար, ի՞նչ է արել ինձ զափօդի տէրը, որ նրանից դանդատ տամ:

—Ի՞նչ է արել. նա է մեղաւորը, որ թեղ կոտրուել է:

—Նա է մեղաւոր, բացականչեց Եղօն. չէ, աղա, հողի ունեւմ տալու Աստուծուն. նա սկի էլ մեղաւոր չէ. նա ինչ անի, խեղճը. ես նրա երեսն անգամ չեմ տեսել:

—Բառ ո՞վ է մեղաւոր, յիմար, զայրացած ասաց
փաստաբանը:

—Ո՛վ, իմ բռն բախտը. Աստուած չուղեց, որ ես
հարստանամ. տուեց թեւ ջարդեց, եթէ ուղէր, թեւ
սաղ կը մնար, ես էլ կ'աշխատէի, մի օր էլ գուցէ զա-
ւօգի տէրը խղճար ինձ, իր նաւթի հորի մի օրուայ
խփածը տար ինձ: Ձէ, աղա, հոգի ունեմ ապու, զա-
ւօգի տէրը ոչ մի մեղք չունի. դեռ մարդն ինձ չորս
ուրբի բաշխեց, Աստուած նրա երեխաներին պահի:

Վարդապետի, երկու փաստաբանների և բժշկի
ջանքերը՝ համոզելու Եղօին, որ զաւօգի տէրն է մե-
ղաւոր, որովհետեւ նա չը պէտք է անփորձ, խամ մար-
դին այնպէս վտանգաւոր դործ յանձնէր, պէտք է ցոյց
տար մեքենան գործածելու եղանակը—ապարդին ան-
ցան: Եղօն չը կամեցաւ համոզուել, այլ շարունակ կըր-
կընում էր.

—Ո՛չ, նա իսկի էլ մեղաւոր չէ. մեղաւորն իմ՝ քոռ
բախտն է:

Անճարացած, վարդապետը տուեց նրան հինգ
ուրբի և Եղօն, խոր գլուխ տալով. մեկնեց: Ճանա-
պարհին նա մի խանութից մի բիշ հաց ու պանիր գնեց,
դրեց խուրջինի մէջ, մի փոքրիկ էլ խաղալիք գնեց Մու-
կուչի համար և դնաց կայարան:

Եղօն ազատ շունչ քաշեց երբ հասաւ Աղստաֆայ,
իսկ երբ շնչեց Դիլիշանի անտառների օդը, խմեց աղ-
բիւրների պաղ, քաղցր ջուրը, նա վերակենդանացաւ:

Նա քայլում էր ու մտածում իր կեանքի այդ վեր-
ջին երկու շաբաթի մասին, եղբօր մասին, այն զար-
հուրելի պանդոկի մասին: Մի քանի օրից յետոյ նա
գիւղ հասաւ:

—Եղօ, որդի, ի՞նչ շուտ, էս ի՞նչ օրում:

—Ապէր, բախտս փորձեցի և քոռ դուրս եկաւ.
ձեռքս էլ վրան դրի:

—Եղբայրդ...

—Էլ մի հարցրու, նա աննամուս է, նա մեռած է մեզ համար:

—Փառք քեզ Աստուած, միմիջաց ծերունին լացա-
կամած, քո կամքն է,

—Փառք քեզ Աստուած, կրկնեց որդին:

Եւ վերստին սկսուեց գիւղական կեանքն իր արտ
ու արօտով, իր վար ու ցանքով, իր հնազանդ ճակատա-
գրքով:

ՇԱՀՐԻԱՐ

ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ

III

Իմ նամակների հետևողութեան մէջ, սիրելիս, դու երեւի առանձին, կանխամտածուած սխառեմ չես դռնիւ Արդարեւ, ես խոյս եմ տալիս չոր ծրագրից, որի համեմատ պիտի իրար վրայ կուտակէի հում նիւթերի, աշխարհագրական, ազգագրական, պատմական, տնտեսագիտական փաստերի ամբողջ շարքեր և թուանշանների ամբողջ սիւներ, բայց ոչ կենդանի պատկերներ ապրող, շարժող, գործող, ուրախացող, տքնող մի ժողովրդի։ Մենք ապրում ենք թուանշանների դարում, ամեն ինչ, մինչև իսկ մարդկանց բարոյականը դարձել է թիւ, ասանց թուի էլ ոչ ոք չի խօսում։ Կարծես Պիւթագորոսի երազներն իրականանում են, թւերը դարձել են այն հզօր առանցքը, որի շուրջը մարդիկ դառնում են յարաշարժ մեքենաների պէս։ Նիւթն ու թիւը խեղտում են մեզ, մի տեսակ մանրա է դարձել ամեն մի երկու խօսք արտասանելիս կամ գրելիս աւելացնել՝ «տնտեսական» տեղի թէ անտեղի։ Տնտեսական ֆակտորների ոյմն ու ազդեցութիւնն անշուշտ միշտ ահագին է եղել հասարակական բոլոր երևույթների վրայ բոլոր դարերում և բոլոր երկրներում, բայց կեանքն ամբողջապէս միմիայն նիւթ ու թիւ նշատի, հոգեկան, իգէօլոգիական ֆակտորները անտես առնելով՝ կը նշանակի, նրան դարձնել չոր ու հիւծախտաւոր։

Ես ապրում եմ այս երկրի մի գիւղում, ուրեմն բուն ժողովրդի ծոցում, տեսնում եմ ու մասնակից եմ նրա առօրեայ կեանքին, որ արտայայտում է մանր ու մեծ բազմաթիւ երևույթների մէջ իմ աչքի առաջ, և ինչ որ տեսնում եմ՝ գրի՛ եմ առնում յիշատակարան պահողի պէս։

Պատկերները բազմադան են, չափ անգամ, ինչպէս տապի, անսխառեմ, բայց ուրիշ կերպ չի էլ կարող լինել, որովհետև կեանքը չափազանց բարդ է, որպէս զի կարելի լինի նրա ար-

տայայտութիւնները, նրա բազմապիսի կենտրոնամերժ երեւոյթները չափած, ձեւած նախագծի տակ դնել: Այդ հնարաւոր է նրանց համար, որոնք կեանքի վրայ նայում են զուտ տնտեսական տեսակէտից, որոնց համար կեանքը նիւթ է ու թիւ, իսկ մարդը մի արտադրող ու սպառող մարմին, մի մեքենայ, մի կենդանի մեքենայ: Այսպիսի հասկացողութիւնից ցուրտ է փրշում և մարդու հոգին մրսում է:

Առօրեայ սովորական յարաբերութիւնների մէջ, երբեմն մի պատահական խօսակցութիւն, մի անակնկալ ծանօթութիւն, շատ անգամ մի աննշան դիպում, այնքան ուսանելի են որ և է անհատի, հասարակութեան՝ նոյն-իսկ ամբողջ մի ժողովրդի հոգեկան աշխարհի այս կամ այն կողմը պատկերացնելու համար: Ահա այս է, որ ես փնտռում եմ այստեղ՝ չվէյցարական գիւղում իմ շրջագայութիւնների, զբօսանքների ժամանակ, դիպումածական ծանօթութիւնների, խօսակցութիւնների մէջ:

Այս բոլորն փերադարձայ մի փոքրիկ ճանապարհորդութիւնից, գնացել էի մի հեռաւոր գիւղ ընկեր ուսանողին այցելութիւն Ժիւրա լեռան ստորոտում: Մտքովս էլ չէր անցնում, որ վերադարձիս պէտք կը համարեմ գրի առնել այդ օրուայ տպաւորութիւնները. բանից գուրս եկաւ, որ այս երկրի որ կողմը դառնաս, ինչ և անես, անպատճառ ուշադրաւ երևոյթներ պիտի տեսնես, որոնց գրի առնելը մեր երկրի, մեր ժողովրդի համար երբէք անօգուտ չէ:

Դիտաւորութիւնս իմանալով ոուս սպան ընկերացաւ ինձ և մենք վաղ առաւօտից ճանապարհ ընկանք դէպի Ժիւրա՝ ոտքով: Անցեալ անգամ այս սպայի մասին գրելիս ես մոռացայ աւելացնել որ նա բժշկւում է բեւմատիզմից Պիդուից քիչ հեռու Շեքր գիւղում, այս կողմերում յայտնի բժիշկ Րէյմոնտի մօտ կնայպի մեթոդով և ման է զալիս համարեա ոտաբորիկ, համարեա եմ ասում, որովհետեւ նրա կրած բարակ կաշուէ սանդալները հազիւ են ծածկում նրա ներքանները՝ բաց թողնելով ոտքի ստորին մասը մինչև սրունքները: Կարող ես երեւակայել, թէ որքան տարօրինակ է այս ոտաբորիկ, բարակ մետաքսէ բլիւզով ու երկար միջուքով, կճատ քթով օտարականն այս կողմերում: Այս տարօրինակութիւնն էր որ գիւղի եզրում գրաւեց մի չվէյցարացու ուշադրութիւն և նա մօտենալով սպային շատ քաղաքավարի կերպով ասաց.

— Եթէ Monsieur-ը կարծում է, թէ Պիդուում կօչկալար չը կայ և այդ պատճառով ոտաբորիկ է չըջում, չարաչար սխալւում է. իրաւ է, այստեղ գիւղ է, մենք գիւղացիներ ենք, բայց էլի մեզ պատշաճ կօչիկներ ենք հագնում: Ձեր խոսարն ծառան

կօշիկակար է, վերջապահը նա խորը գլուխ տալով: Մենք մի վայրկեան չփորձուեցինք այս անսպասելի ճառի առաջ, ապա անմիջապէս նկատելով՝ որ մարդը մի երկու բաժակ աւելի է գարեջուր խմել, ժպտացինք, խոսացանք կօշիկ կարել տալ և առաջ անցանք: Աննշան դէպք, բայց ես յետոյ քեզ կը պատմեմ, թէ դա ինչ անսպասելի, ինչ հետաքրքիր հետեւանք ունեցաւ մեզ համար:

Հետաքրքիր է երբեմն սպայ ընկերակից ունենալ: Երկաթէ ձեռնոցների մէջ ապրած այս մարդիկ շատ անգամ աշխարհի, քաղաքակրթութեան, բարոյականութեան մասին ունեցած իրանց հասկացողութիւններով անմեղօրէն տարօրինակ են: Գնում ենք լայնարձակ դաշտերով ընակութիւններից հեռու. մեր առջև գտնում ենք ջրհորի նման մի վիհ, չը գիտեմ երբ և ինչո՞ւ փորուած այստեղ. և այդ վիհի շուրջը, այս հեռաւոր վայրերում, մարդիկ պէտք են համարել երկաթէ լարերով պատել որ և է ձախորդ դիպուածի առաջն առնելու համար:

—Նայեցէք, նկատում եմ՝ ուղեկցիս, նայեցէք, թէ հեռու համարեա ամալի տեղում ի՞նչ խնամքով պատել են այս վիհը, որ մարդ կամ անասուն չ'ընկնի. ինձ համար սա մի հետաքրքիր փաստ է այս ժողովրդի հասարակական ինստիտուտների, համեմալախութեան ոգու, նոյն-իսկ նրա բարձր կուլտուրայի:

—Այստեղ ես հետաքրքիր ոչինչ չեմ գտնում և ըստ իս փոս փորողի վզակոթին պիտի տալ:

—Բարեկամ, չվէյցարացին անօգուտ տեղը փոս չի փորի, եթէ կայ, կը նշանակի հարկաւոր է. «վզակոթը», բարբարոսութիւն է, երկաթէ այս թելերն իբր հասարակական խնամքի մարմնացումն կուլտուրան են ներկայացնում:

Վէճը երկար շարունակւում է ճանապարհին և սպսն ոչ մի կերպով չի ուզում համաձայնել, որ «վզակոթից» դուրս ուրիշ կուլտուրա կարող է լինել:

Լռում եմ և միտս են գալիս մեր գիւղերի փողոցները, ուր դիչերային խաւարի մէջ շատ անգամ մարդ վիզը, ոտքը կտորելու վտանգի մէջ է. ցորենի հորեր, հին չորացած ջրհորներ, որոնք ամեն քայլափոխում առաջդ են բացւում, և չկայ ոչ ոք, որ բողբոջ և ծածկել տայ: Մարդը հասարակական խնամքի, հոգածութեան առարկայ չէ, ապրում է միայն դիպուածի պատահականութեան ցանցի միջից սողոսկելով, մինչև կը հասնի վիզը կամ մէջքը կտորելու կատաստրոֆային օրը: Այնտեղ վիհերով ծածկուած են բանուկ փողոցները, այստեղ հեռաւոր, ամալի դաշտերում, անտառների մէջ վիհը չըջափակուած է:

Եզրակնացութիւնը քեզ եմ թողնում, սիրելիս, դու երևի

ինձպէս դեռ չես մոռացել Ս.-ենց նեղ փողոցի վրայ գոմի պատի տակ ջրհորը, որ տարիների ընթացքում անփոյթ կերպով բացուած էր այնտեղ գիշերները հաստատ մահ սպառնալով:

Որքան և մարդ անծանօթ լինի, Շվեյցարիայում չի մոլորուկ երբէք, որովհետեւ ամեն կողմ գեղեցիկ խճուղիներ կան ծառադարձ ու հովաշատ և ամեն մի անկիւնում, ճանապարհների ճիւղաւորութեան սկզբում գեղեցիկ սիւների վրայ կարելի է կարդալ թէ այս ու այն կողմում որ գիւղերն են, քանի կիլոմետրով հեռու, ինչ բարձրութիւն ունին ծովի մակերևոյթից: Այս յարմարութիւններով ի հարկէ կարելի է օրերով ճանապարհորդել առանց որեւէ դժուարութեան, բայց ես և ուղեկիցս ճանապարհորդութիւնն աւելի հետաքրքիր դարձնելու համար երբեմն-երբեմն թողնում ենք մեծ ճանապարհները և բլունում խոտոր ուղղութիւններ. այդ դէպքերում պէտք է լինում մերթ այստեղ, մերթ այնտեղ տեղեկութիւն հարցնել պատահած անձանց: Ճանապարհ են ցոյց տալիս օտարականներին արեւելքում, ճանապարհ են ցոյց տալիս և այստեղ, բայց ինչպէս, ահա այս է հետաքրքիրը:

Բոլոր երկրներում, բոլոր ժամանակներում ճանապարհորդը, օտարականը նկատուել է իբրեւ Սատուծոյ հովանաւորութեան տակ գտնուող մի մարդ. արեւելք՝ մանաւանդ, մի առանձին պատկառանք ու խորհրդաւոր հաւատ է տածել դէպի ճանապարհորդի ճակատագիրը՝ թելադրուած այն երկիւղած կնիքներով: Ինչ, թէ գուցէ թափառական խեղճի արտաքինի տակ որեւէ սուրբ կամ նոյն-իսկ աստուածութիւնն է շրջում աշխարհի վրայ մարդկանց արգարութիւնն ու ճշմարտախրութիւնը փորձելու եւ մարդիկ բայց են արել իրանց դռներն օտարական հիւրի առաջ, ինչամեկ և ճանապարհ են ցոյց տուել նրան: Օտարականին ճանապարհ ցոյց տալն արեւելքում նկատուել է և նկատուում է իբր մի կրօնական երկիւղածութեան գործ, մի նուիրական պարտք երկնքի առաջ, որ մարդու բարոյական հասկացութիւնների միակ աղբիւրը և ներշնչողն է համարուում:

Անշուշտ, զրաւիչ բան է, որ մի մարդ թէկուզ աստուածահաճոյ գործ կատարելու համար ճանապարհ ցոյց տայ, օգնի մոլորուածին, բայց ես աւելի զրաւիչ կը լինէր, եթէ նոյն գործողութիւնը կատարուէր ոչ իբրեւ կրօնական պարտք վաստակի գերագոյն հատուցման ետաւէր ակնկալութեամբ:

Սիրելիս, դոգմերի հետ կապուած, անհունի անծանօթ աղբիւրներից բղխող բարոյականութիւնը ժամանակի ընթացքում դառնում է չափազանց խախուտ. բանականութիւնն է, որ յաւիտենական է դարձնում բարոյական իդէան: Ի՞նչ արժէք ունի,

օրինակ, քիւրդի մօրալը, որ նրան արգելում է սպանել իր տունն սպաստանած օտարին, բայց թոյլ է տալիս կողոպտել նոյն հիւրին հէնց-որ վերջինս իր դռնից մի փոքր հեռանայ: «Ղօնաղը սուրբ է» արեւելքում, այդ լաւ, իսկ եթէ նա ամենին սուրբ չէ և իր հոգսերի համար թափառող մէկն է: Ահա այստեղ են հեռանում իրարից դժգոհի և բանականութեան առողջ հիմքերի վրայ հաստատուած մօրալները, արեւելքն ու արեւմուտքը:

Առաջինը՝ որին մենք դիմեցինք ճանապարհի ուղղութիւնը հարցնելու մի գիւղացի էր, նա վերադառնում էր կիրակնօրեայ զբօսանքից իր կնոջ և երկու երեխաների հետ: Մարդը լաւ յոգնած էր, երեխ չատ էին քայլել:

—Պարոն, հաճեցէք մեզ տեսլ, Լա-Կուզը գնալու համար կարող ենք այս անտառով անցնել:

—Անշուշտ, պարոններ, բայց անտառում կաժաններ շատ կան, դուք կարող էք մոլորուել, էլիիզ, դարձաւ նա կնոջը, դու քայլիւ երեխաների հետ մինչև ես վերադառնամ:

Եւ նա առաջ ընկաւ, ներս մտաւ անտառը, երկար քայլում էր մեզ հետ մինչև գուրս եկանք վստահելի կաժանի վրայ:

—Այժմ կարող էք ուղիղ գնալ:

Շնորհակալ եղանք, նա ժպտաց մեզ շվեյցարացու բարի մպտով և յետ գնաց:

Անտառից դուրս գալով մեր առջև նկատուած ենք մի փոքրիկ տնակ, բոլորովին մենակ, բոլորովին հեռու միւս ընա կոթիւններից, տնակից դէպի զանազան կողմեր տանում են երկու շաւիղներ, որով գնալ—մօտենում ենք տնակի դրանը, մեզ հանդիպում է մի կին և մի եօթ տարեկան տղայ:

—Տիկին, ներեցէք, որ ձեզ անհանգիճա ենք անում, օտարական ենք և կ'ուզէինք իմանալ, թէ այս երկու շաւիղներից որը կ'առաջնորդի մեզ Լա-Կուզը:

—Շնոր, դարձաւ նա մօտը կանգնած փոքրիկ երեխային, գնա պարոնների հետ, մտիւր մօտակայ անտառը, տար մինչև ախտեղ, ուր ճանապարհները կտրում են իրար, յոյց տուր և շուտ արի:

Փոքրիկ Շարլը կարծէք ուրախ էր մօր հրամանին. նա ցատկոտելով առաջ անցաւ և առանց մաղի չափ անդամ քաշուելու, օտարականների շուտով մեզ հետ ծածկուեց անտառում: Տեսնելով որ ճանապարհը երկարում է և երեխան մենակ պիտի վերադառնայ, մենք առաջարկում ենք փոքրիկին մեզ թողնել և էլ առաջ չը գնալ, մանաւանդ՝ որ երկնքում ամպեր

կան և մեր չափածառով կարող է թրջուել: Իզուր անցան մեր բոլոր ջանքերը, մանուկը չարունակում էր գնալ առաջ անդադար կրկնելով որ ինքը չի վախենայ մենակ վերադառնալ, որ մայրիկն ստաց գնալ մինչև ճանապարհների հանգիպած տեղը: — Բայց դու յետոյ մենակ պիտի վերադառնաս, իմ փոքրիկ:

— Ես միշտ մենակ գալիս եմ այստեղ սուներ կհաւաքելու: Եւ փոքրիկը վազում է առաջ, մինչև հասնում ենք նշանակած տեղը: Նրան տալիս ենք մի քանի սու և նա merci ասելով յետ է դառնում և վազելազ տուն գնում: Մենք երկար ժամանակ կանգնած նայում ենք այդ անտառների դաւակին, այդ անմեղ հրեշտակին, որ երգում է անհոգ, որ չի վախնում խուլ անտառում, և որի մայրն էլ մազի չափ անհանգիստ չեղաւ նրան ուղարկել անծանօթ օտարականների հետ այս խուլ վայրերը: Եւ ինչից վախենան, մարդից, բայց մարդը վաղուց է դադարել այստեղ զազան լինելուց, դայլիւրից, բայց ամբողջ Շվեյցարիայում մի հատ գայլ չը կայ, իսպառ ջնջել են շատ վաղուց: Թող լուր տարածուի, թող լրագրերում գրուի, թէ այս ինչ անտառում մի գայլ կամ մի աքի է յայտնուել, անմիջապէս բազմաթիւ ընտիր որսորդական խմբեր կը կազմակերպուեն և մի քանի օրից յետոյ գազանի արիւնաթաթախ պին կը բերեն:

Երեխան, մենակ՝ անտառում...

Ինչպէս չը յիշեմ, սիրելիս, մեր ողորմելի գիւղերը, մեր անտէր խեղճ ու կրակ ժողովուրդը, որ տառնեակ տարիներ դողում է մի հատ բորենուց և որ տարին մի քանի երեխայ զոհ է տալիս գազանին, ինչպէս հէքիաթների վիշապին: Իմ ուքո մանկութիւնն էլ խօս անցել է բորենու սարսափի տակ: Երբ չեմ ես, ընկեր, ինչպէս էինք դողում ամառային գիշերները կտուրների վրայ, երբ գգիւրը կանչում էր «կապտեցէք երեխաներին, ճրագը վառ պահէք, գէլն էլի դուրս է ընկել, զգոյշ քնեցէք»: Դէ արի ու քնիր, հով կարող էր աչք փակել, մենք սարսափով սպասում էինք թէ գազանը Բրը կը գայ մեր կուրդից բռնելու: Հէնց այս բռնէիս կտրուցի մեր երկրից եկած թերթերում, թէ բորենին դարձեալ երեխաներ է տանում, քանի տարի է, քանի երեխաներ պատառ-պատառ եղան, յօշոտուեցան:

Տէր Աստուած, մեր երկիրը դեռ քարէ դարումն է սպրտում, երբ գազանի մոնչոցը լսելով կիսամերկ մարդը վազում էր այրը մտնում և մի մեծ քարով անյոքը փակում:

Թող այստեղ Շվեյցարիայում մի գազան վիրաւորի մի

երեսխայի, ամբողջ երկիրը տակն ու վրայ կը լինի, բոլոր ընտիր հրացանաւորները բան ու գործ թողած գէնքը վայր չեն դնի, մինչեւ զազանն ընկնի: Անցեալները լրագրերում գրուեց, թէ վալէ կանտոնում մի փոքրիկ օձ կծկւ է մի գիւղացու. ինչ աղմուկ բարձրացաւ, լրագրերում ինչքէր գրեցին. հարց ու փորձ, պաշտօնական և մասնաւոր հաղորդագրութիւններ, թէ մօտերքում դեղատուն եղել է, բժիշկը չուտ հասել է, հիւանդի վիճակն ինչպէս է, օձն ինչ գործ ունէր անտեղ, որտեղից պիտի եկած լինի, ինչ պիտի անել, որ նման դէպք չը կրկնուի և այլն և այլն: Բարեբաղդաբար խածածն անվտանգ էր, այստեղ վտանգաւոր մեծ օձեր չը կան:

Մեզանում իւրաքանչիւրն ապրում է իր համար, իր ցաւի մէջ տապալկուած, համայնական գործակցութեան ոգին բացակայ է: Դայլը երեսխայ է տանում, փոխանակ ընդհանուր ուժերով գաղանից աղատուելու, իւրաքանչիւրն աշխատում է իւրայինների ճարը տեսնել, գիշերները բարձր տեղ պառկել, իսկ ով անկարող է, ով միջոց չունի, թող նրա զաւակը գազանը տանի:

Ողորմելի, բայց և յիմար ժողովուրդ. երբ դու կը սովորես մի փոքր դէմ գնալ քո սեւ ճակատագրին, երբ դու կը հասկանաս թէ աշխարհում այլ վիճակ, այլ կեանք հնարաւոր է նաև քեզ համար...

Սիրելիս, ես քեզ իմ նախորդ նամակում նկարագրել էի այստեղայիների զարմանքը մեր գիւղական տան և մանաւանդ մեր թոնիրների վրայ. ես անկարող եմ նկարագրել սրանց ապշութիւնը, երբ անցեալ օրը մեր երկրի թերթերում կարդալով ես պատմեցի բորենու արչաւանքների մասին: Գիտես, եթէ ես ասէի, որ մեր երկրում մարդիկ գլխի վայր են ման գալիս, կամ սողունների նման միշտ սողում են փոքրի վրայ, կամ հացի փոխարէն քար են կրծում, կամ անասունների պէս բառաչում են, ես աւելի չէի կարող զարմացնել, քան երբ ծանօթացրի, նրանց մեր բորենու էպօպէյի հետ:

Է՛հ թողնենք, ես բուն հարցից շատ հեռացայ, զգում եմ, որ երբ հարցը մեր երկրի յաւերին է գալիս, ես իստակ չատախօս եմ դառնում: Ներքի ինձ, սիրելիս, այդ թերթերում, զարգը մարդու աշուղ կ'անի, ասել են մեր միշտ զարդոտ հայրենակիցները:

Շարունակում ենք մեր ճանապարհը:

Անտառից դուրս ենք գալիս, երեք երեսխայ՝ 10—12 տարեկան միասին արածայնում են մի քանի կուլեր:

—Լսիր, փոքրիկ, դիմում ենք մէկին, Լա. Կուզրը հետու չէ:

—Ո՛չ սլարոններ, այ, ի՞նչ մինչեւ առաջիկայ գիւղը, ան-

ցէք կամուրջը, դուրս եկէք գիւղից ե կը քայլէք էլի կէս ժամ: Աքանչելի պատասխան մանուկների բերանից, «իջէք, անցէք, կը քայլէք կէս ժամ»—անմեղ, գրաւիչ խմայականութիւն է փայլում այս հակիրճ, խելացի ցույումների մէջ:

Քայլում ենք, Լա-Կուդրը հեռու չէ. ահա մի անակ, որի երկու կողմով անցնում են երկու ճանապարհներ. փոքրիկ ցանկապատից նայում է մի կին:

—Տիկին, այս երկու ճանապարհից որն ընտրենք Լա-Կուդր մտնելու համար:

—Երկուսն էլ զանազան կողմերից այնտեղ են տանում:

Մենք յայտնում ենք մեր ցանկացած տունը. նա ցոյց է տալիս դէպի աջ: Մենք առաջ անցանք սովորական Mercier-ն ասելով: Բաւական հեռացել էինք, երբ մէկը յետևից մեզ կանչեց. յետ ենք նայում, ճանապարհ ցոյց տուող կինն էր:

—Պարոններ, մոռացայ ասել, որ երբ հասնէք կամրջին, մի անցէք, այլ շարունակեցէք բարձրանալ ափով, այդպէս աւելի շուտ կը հասնէք:

Այս արդէն մի այնպիսի ուշադրութիւն էր դէպի օտարականը, որ մենք խօսք չը գտաւք մեր հիացմունք ու չնորհակալութիւնը յայտնելու: Եւ երբ մարդ մտածում է, որ այս բոլորը կատարւում է ոչ կրօնական երկիւղի գրգռմամբ, ոչ՝ որովհետեւ «ճամբորդը սուրբ է և Աստուծոյ հովանու տակ», այլ որովհետեւ նա մի մարդ է, դէպի որը պարզ մարդկային պարտք պիտի կատարել առանց որեւէ ակնկալութեան երկնքում կամ երկրի վրայ, այն ժամանակ մարդու հոգին հիացմունքով է լցւում: դէպի այս ժողովուրդը, դէպի նրա աղնի, մարդասէր արագիւնները, դէպի նրա նախապաշարմունքներից ազատ, առողջ մօրալը:

Դու անշուշտ չես մոռացել մեր մանկութիւնից մի դէպք, սիրելիս, մի անգամ մեր գիւղով անցնում էին երկու օտարականներ՝ մարդ ու կին, եւրոպական զգեստներով: Սա մի անօրինակ երևոյթ էր, մեր տեսած առաջին տղամարդն էր կարծեմ, որ չուխայ և մորթէ փափախ չունէր, առաջին կինը, որի երեսը, բերանը ծածկուած չէր և գլխարկ ունէր գլխին: Ձմեռ էր. մենք մի խումբ երեխաներով նախ բերանաբաց ապուշապուշ նայեցինք, ապա չը զիտեմ որը մեղանից կամայուկ ասաց մեզ:

—Չարկենք ձնագունդով:

—Չարկենք, կրկնեցինք բոլորս, և մի քանի բոլեցից յետոյ խեղճ օտարականը չը գիտէր, թէ մեր ձնագունդերից ինչպէս պաշտպանի իր ճշացող, սարսափած կնոջը և իրան: Իսկ մի

վայրենի տեսարան էր, նրանք հազիւ-հազ փախչելով ազատուեցին մեր ձեռքից: Յետոյ երբ յայանուեց, որ ծեծուածը հաշտարար դատաւորն է եղել իր կնոջ հետ... սարսափ: Երկար ժամանակ սպասում էինք թէ մեզ ամբողջ գիւղի հետ Սիրիբ պիտի տանին: Չը տարան, ասում էին, թէ դատաւորը ներել է զիջելով մեր ծնողների ազաւանքին: Համեմատիք օտարականը մեր գիւղում, և չվէյցարական գիւղում: Մենք հասանք վերջապէս մեր յանկացած գիւղը և երեկոյեան յետ եկանք բերելով մեզ հետ բազմաթիւ տպաւորութիւններ: Տանը մեզ սպասում էր մի այլ անսկիւալ այդ տպաւորութիւնները կատարեալ դարձնելու համար:

Հասնում ենք տուն, տանտիկինը մեզ դիմաւորում է շատ վշտացած գէմբով և անմիջապէս սկսում է ներողութիւն խնդրել, որ մենք ենթարկուել ենք վիրաւորանքի իրանց գիւղում:

— Բայց մեզ ոչ ոք չի վիրաւորել, տիկին, դուք իզուր էք անհանգիստ լինում:

— Ի՞նչպէս չէ, այստեղ մեր հարեանը սլարոն սպային առնել է, թէ նա ոտաւորիկ է և ծաղրել է:

Հասկացանք, բանից դուրս եկաւ, որ մեր հեռանալուց յետոյ ճանապարհի սկզբում մեզ պատահած միջադէպը հարբած գիւղացու հետ իսկոյն տարածուել է գիւղում, լսողները անհանգիստ են եղել, որ օտարականները վիրաւորանքի են ենթարկուում, իսկոյն հաղորդել են և մեր տանտիկնոջը: Խեղճ կինն ամբողջ օրը մտածել է թէ մեզ ի՞նչպէս դիմաւորի, ի՞նչպէս ներողութիւն խնդրի: Պէտք եղաւ կրկին և կրկին հաւատախաջնել բարի տանտիկնոջը որ մենք բնաւ վիրաւորուած չենք, որ ընդհակառակը շատ էլ դուարճացել ենք նրա ճառով:

— Հարբած էր, զիտէք, պարոններ, հարբած էր, գէ՛ երբ մարդ մի փոքր աւելի է խմում...

Խեղճ, միամիտ չվէյցարուհի, և մենք կուշտ-կուշտ ծիծաղում ենք այդ գէպի և նրա այս աստիճան անսպասելի հետեանքի վրայ:

Յը գրութիւն.

Լենկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

ՍՊԱՀԱՆԻ ՓԷՐԻԱ ԳՍԻԱՌԸ

(Հայ ազգաբնակչության բնդիւմուտ նկարագիրը)

Փէրիա գաւառը, որ ընկած է Սպահանի արեւմտեան կողմում, բաղկացած է բաղմաթիւ գիւղերից: Սրանց 16-ը՝ Դովլաթաբադ, Քրդեր, Նամակերտ, Ղաուզուն, Դրախտակ, Ղարամեկիք, Միլակերտ, Շուրիչկան, Շահբուլաղ, Խունկ, Բժկերտ, Սանգիրարան, Խոյզեան, Դաջան, Հազան և Բոլորան զուտ հայաբնակ են: 9-ը՝ Սվարան, Չիզեան, Սնկերտ, Աղիզեան, Բարդաղայ, Ներքին-Խոյզեան, Ազնաուուլ, Հէզարջրիք և Փահրայ հայ և պարսիկ խառն են, իսկ մնացեալները զուտ պարսկաբնակ:

Ամբողջ Փէրիա գաւառը ունի արգաւանդ գետին, տուտ բուսականութիւն, ականակիտ աղբիւրներ ու զանաթներիջրանցքներ, ընդարձակ արօտատեղեր և վերջերս տնկուած այգիներ: Գիւղերից մի մասը «Խալէսէ»—արքունական է, միւս մասը «առբաբի»—կալուածատիրական: Խալէսէ գիւղերի բնակիչները վճարում են միայն իրանց մշակած գետնի հարկը, իսկ ձեռք բերած բոլոր արգիւնքը մնում է իրանց: Սակայն առբաբի գիւղերինը պարտաւոր են վճարել գլխահարկ և ստացած բերքերի «սէքուն»—երրորդական մասը: Շատ քիչ բացառութեամբ, բոլոր առբաբի գիւղերի բնակիչները հարստահարւում ու կեղեքւում են իրանց առբաբներից անխիղճ կերպով:

Գաւառիս բոլոր հայերը ըստ 1901 թուի չնչագրութեան բաղկացած են 1522 ընտանիքից—11,116 անդամներով: Բնակւում են անյարմար տներում և մութ սենեակներում, որոնց պատերը չինուած են ջեխից, իսկ առաստաղը ճիւղերով ծածկուած գերաններից: Բայի միակ երթիկակալ ղոնից, ուրիշ սրէ պատուհան, կամ լուսամուտ բանալու գաղափար չըկայ ընդհանրապէս: Ամեն սենեակ անպայման կերպով ունի իր թոնիրը

և երգիլը: Ընդունարանի անհրաժեշտ զարգարանքն են կազմում յատակին փռուած մի քանի կտոր գորգերը և անկիւնում բաղմնեցրած ղէյլանը՝ իւր սարք ու կարգով, ուրիշ ոչինչ: Իսկ գիշերը սրանց վրայ աւելանում է և նահապետական ձիթի ճրագը:

Տղամարդիկ հազնւում են պարսիկ գիւղացու տարազով— երկար արխալուզ, լայն գօտի, լայն վարտիկ, չարուխ կամ «գիւլա» կոչուած տեղական տրեխ և թաղիքից պատրաստուած փափախ— իսկ կանայք՝ Հայաստանի գիւղերից բերած հին տարազով են: Ամեն բանում և մանաւանդ զգեստի կողմից, ամբողջ գաւառում բացառութիւն կազմող համարեա թէ չը կայ:

Բարբառը բաւական մօտ է Արարատեան գրական բարբառին, խօսում են շատ մաքուր և պարզ արտասանութեամբ: Ծաղրում են նոր-ջուղացիներին, սրանց մի քանի տափակ արտասանութիւնների և ծոմած բառերի համար: Բոլոր խօսակցութիւնները համեմած են լինում ս. գրքից բերան արած վկայութիւններով:

Համարեա բոլոր գիւղերում, ուր գտնւում է քիչ-շատ գրկ-կարդալ իմացող «ափրայու», այնտեղ կայ և դպրոց, որը բաղկացած է մի մութ սենեակից, մի քանի աշակերտներից, մէկ երկու կտոր թաղիքից և մի քանի կարտուած ու զգլգուած այբբենարան-սաղմոսից: Իսկ Նամակերտ, Սանդիբարան և Խոյզեան կենտրոնական գիւղերինը՝ քիչ-շատ նման են դպրոցի թէ չինութեան և թէ դասատուութեան կողմից: Ուսման առարկաներն են՝ կրօն, գրարար հայերէն, պարսկերէն և անուամբ և եթ թուաբանութիւն: Վերջերս այս դպրոցներում դասաւանդում է նաեւ Հայոց պատմութիւնը: Նամակերտ գիւղում բացուած է նաև օրիորդաց դպրոց, ուր յաճախում են 50-ի չափ ոտարորիկ աղջիկներ, մի ինչ որ տիրացուից «գրքի սև ու սպիտակը սովորելու»:

Թաւրիդից «Մշակ»-ին թղթակցող մի ոմն՝ պ. Ս. Նոյն լրագրի սոյն տարուայ 127-րդ համարում գրել էր ի միջի այլոց և հետևեալը.

«Միջնակարգ դպրոցի կարիքը զգալի է դառնում մանաւանդ այն պատճառով, որ գաւառների համար հարկաւոր են ուսուցիչներ, մանաւանդ այնպիսի ուսուցիչներ, որոնք մտնէին աւելի իր ու անկիւնները (ուր նոյն իսկ հայր իր մայրենի լեզուով խօսել անգամ չը գիտէ, օրինակ Սուլդուզը, Սպահանի գիւղերը) ամեն տեսակ արգելքների յաղթէին և մեր խորթացած եղբայրներին սովորեցնէին իրանց մայրենի լեզուն»:

Առաջարկութիւնը ըստ ինքեան աւելի քան ցանկալի է, և մենք էլ երկրորդում և երրորդում ենք պ. Ս.-ին. սակայն Սպա-

հանի բոլոր գիւղերում դուք չէք տեսնի պ. Ս.-ի «մայրենի լեզուով խօսել անգամ չը գիտցող» հա յրնակիչներ: Ուրեմն, թող ներուի ինձ ասել, որ այս լուրը բոլորովին անհիմն է:

Խոյզեան, Սանգիբարան և մանաւանդ Նամակերտ գիւղերի եկեղեցական երգեցողութիւնը գերազանցում է նոյն-խոյ Նոր-Ջուղայի եկեղեցիներին: Ունին կանոնաւոր ձայնադրագէտ միաձայն երգեցիկ խմբեր, որոնք իրենց համերաշխ երգեցողութեամբ զարմանք են պատճառում այցելու օտարականին:

Շատ վատն են և աներկիւղ: Սովորական բան է տեսնել, նոյն-խոյ պարսիկների հետ խառն բնակուող գիւղերում, մի հայ կին, կամ աղջիկ մեն-մենակ արար հնձելիս, կամ պարօտիզը ձեռքին՝ ճնճուկ քշելիս: Թող արիւնը աչքն առնի նա, որ կը համարձակուի մօտենալ, կամ սնքադաքավարի վերաբերուել այդ մենաւոր գեղջիկուն, բնութեան այդ հարազատ զաւակին:

Անշափ կրօնամոլ են: Թէկուզ աշխարհ քանդուելու լինի, կրօնականն ոչ մի աննշան պարտականութիւնը զանցառութեան չեն տալ: Թէկուզ ամենածանր հիւանդութեամբ բռնուած լինին, այնուամենայնիւ օրապասերը և շաբաթապասերը չեն ուտում: Պատահեց մեզ այցելել մի տուն, ուր դիֆտերիտով բռնուած մի 10 տարեկան աղայ սաստիկ նեղուում էր, այնպէս որ, խօսել անգամ դժուարանում էր: Երբ գիմեջին մեզ, խորհուրդ տուինք, զոնէ տաք պահել, վնասակար ուտելիքներից հեռու և միայն կաթով ու ձուով կերակրել: Մէկ էլ լսում ենք. «Տօ, էտէնց էլ բան կը լինի, ո՞վ է տեսել Վարդավառի պասին կաթ ու ձու ուտել, չէ, Աստուած որ ուզի փրկի, կը փրկի»: Եւ իրաւ, ոչ ծնողները և ոչ ինքը՝ աղան համաձայնուեց «պասը կտրել»: Հետեանքք բնականաբար այն եղաւ, որ մինչև մեր վերադարձը, դեռ խեղճ երկխոսն տանջւում էր:

Անշափ սնահուատ են ու նախապաշարուած: Ո՛չ բժիշկ ունին, ոչ դեղ գործածելու դաղափար. որովհետեւ ամենեկին հաւատ չեն ընծայում մարդկային հնարներին: Դրանց դէպիզն է «բան-բան Աստուած»: Եթէ ամբողջ օրերով էլ քարոզես և փատերով ապացուցանես, դարձեալ երկնքին նայելով կ'ասեն. «մարդուս ումբըը էնտեղից կտրուած չը լինի հա, եթէ ոչ մարդս լինչացու ա, որ կարնայ մի բան անել»: Իրանց խելքով բժշկութիւն անելուց առաջացած վտանգները սովորական բաներ են. օրինակ հիւանդ յղի կնոջ իբր թէ «ազատել» կ'ամենալով փորին են խփում. սակայն բնականաբար ծննդի փոխարէն մահն են շտապեցնում: Աչքացաւով բռնուածի աչքերը երբեմն

բռնութի ածելով՝ առողջացնելու փոխարէն աւելի եւս կուրացնում են, և այլն, և այլն: Որիէ համաճարակ հիւանդութեան ժամանակ «մեղք» կամ «Ասածու դէմ կռիւ» համարելով զգուշութիւնը, երբէք փոյթ չեն տանում տան միւս անդամներին հեռու պահել հիւանդից, և այսպէս իրարից վարակուելով կոտորւում են անխնայ: Մեր ներկայութեամբ մի բազմանդամ ընտանիքից այս ամառ մէկ ամսուայ ընթացքում դիֆտերիտով մեռան 12 հոգի: Մի տնից 3, 4, կամ 5 մեռնողներ սովորական են: Յաճախ մարդ պատահում էր այնպիսի տներ, որոնց բոլոր անդամները մեծից մինչև փոքրը աչքացաւով կամ տենդով էին բռնուած: Միակ միջոցը, որ գործ է ածւում հիւանդի համար, դանակով «աղօթել» ու կամ «մոմ խալել» ու կախարդական սովորութիւնն է: Ասենք, գիւղացին այնքան էլ մեղք չունի այս միջոցները գործադրելու մէջ. քանի որ տեղիս՝ Նոր-Զուղայի Ս. Կատարինեան Կուսանաց Վանքի միաբաններից ոմանք էլ արձակ-համարձակ նոյն բանն են անում, և խեղճ ժողովրդի հաւատը հարստահարելով՝ աւելի նախապաշարում նրան:

Առտնին կիանքը մեղ յիշեցնում է նահապետական դարը: Ամեն մի տուն բաղկացած է մի քանի եղբայրների ընտանիքից. մինչև որ այլ եւս հնար չի լինում միասին ապրելը, երբէք չեն բաժանւում միմեանցից: Շատ ընտանիքներ բաղկացած են 25-40 անդամներից: Ամուսնացնում են զաւակներին շատ վաղ, Ասենք, վերացրել են մասամբ օրորոցի նշանադրութիւնը, սակայն 16 տարեկան տղան և 14 տարեկան աղջիկը արդէն արքունքի հասած են համարւում և հետևապէս հարսնիքի ժուգն (ժամանակն է): Սովորական բան է նաև 14-16 տարեկան տղային ամուսնացնել 20-22 տարեկան աղջկայ հետ: Որովհետև ծնողներն իրենց զաւակներին ամուսնացնում են, շատ անգամ իրանց բան ու գործին մի աշխատող ձեռք աւելացնելու համար: Երբեմն տան մեծ հարսները իրանց օգնական բերելու համար՝ այսպէս են ստիպում ամուսիններին, նրանց փոքր եղբայրներին ամուսնացնելու. «Ախր, ես լինչ մեղք եմ արել, որ տան կով ու կիթն, արտի զամ ու քամը, երխեքանց գոռ ու բէգեարը ողջ իմ վզին ընկած ընի: Աստուած պահի ախպէրդ՝ հահասել է, պսակել տուր, էլի, ոնց որ ախպէրդ քեզ, էնէնց էլ հարսն ինձ քօմակ կըլնի»:

Ծրծաղելի ընտանեկան սովորութիւններ ունին Նրեխաներն իրենց մայրերին «մայրիկ» չեն կոչում, այլ «հարսի»: Իսկ տան միւս հարսներին՝ «խնամոնց աղջիկ»: Շատ անգամ նոյն իսկ այդքանն էլ են զլանում ասելու, այլ կանչում են ուղղակի

այն գիւղի անունով որտեղից հարս են բերել, օրինակ, «էյ զառզունցի, քեզ եմ ասում», «խոյզէանցի, էսդին մտիկ տուր» և այլն: Կինարմատը մինչև 70-80 տարեկան հասակը չը հասած, իրաւունք չունի տղամարդկանց հետ խօսել, կամ նրանց ներկայութեամբ նստել: Աղջկայ ուրախութիւնն և աղատութիւնը մինչև նրա նշանուելն է: Մինչև այդ ժամանակն, իրաւունք ունի խօսել, սառն հարսները համար թարգման դառնողը և այլն և այլն, սակայն նշանուելուց և մանաւանդ ամուսնանալուց յետոյ՝ պէտք է մնաք բարեւ ասի բոլոր նոյն-իսկ անմեղ զուարճութիւններին անգամ և գլխի մի ահագին կոյտ՝ պատաստանքի հետ միասին «համշաղ» — քնթակալ կապած՝ զառնայ անխօս մումիա: Ախր «ջահիլ զայիֆի (կնոջ) համար այիբ (պակասութիւն) ա խօսալը ու մարդամէջ երևալը»: Այսպիսով մեր ողորմելի կանայք ստիպուած են իրանց միտքը նշանացի ձեւերով արտայայտել: Այն աստիճան են խեղճերը հաշտուել իրանց կեանքի այս անբնական ձևի հետ, որ ատելով ատում են նորջուղայեցի կանանց, որովհետև սրանք թէ քնթակալ չեն գործածում և թէ մարդկանց ներկայութեամբ խօսում են. «Տօ, հողն գայ գլխիս, բայռ ռեխներով ոնց չեն ամհնում մարդու մօտ երևալ»: Չեն բարեհաճում մինչև անգամ խօսել հետները. «ախր բայռ ռեխով զայիֆէն էլ ինչ հայեա-շարմ (ամօթ) ունի» որ հետն էլ դեռ խօսեն:

Նորահարսները պարտական են իրանց նոր գնացած տանը գտնուող բոլորին, 6 տարեկանից մինչև ծերունիներին, ծառայել որպէս սպասաւոր, որպէս վարձկան աղախին: Պատահել է մեզ տեսնել ութն տարեկան մի տղայ հրամայելիս իրանց տան 30 տարեկան մի հարսին, «տօ, հարսի, մի քիչ ջուր բի (բեր)», և որովհետև տանը պատրաստի ջուր չի եղել, խեղճ հարսը ստիպուած է եղել վազել մօտակայ աղբիւրը ծանր դորակով ջուր բերել և իր տագեր տղայի, կամ թոռան ծարաւը զովայնել: Բերելիս, ամենայն խոնարհութեամբ հեռուից պլուխ տալով՝ մատուցել է ջուրը, սակայն ինքնաբաւական լակոտը ամանը վերադարձնելով և վերջին երկրպագութիւնն էլ ընդունելով, փոխանակ սովորական «ուրախ ապրեսն» ասելու, բաւականացել է միայն մի կոպիտ նկատողութիւն անել «հա, ոտդ էր կոտրուել, թէ գնացելիք նոր աղբուր բանալ»:

Մի երիտասարդ հօր համար մեծ «այիբ» է հօրը ներկայութեամբ իր երեխային սիրելն, այլ պէտք է վարուի այնպէս, ինչպէս կը վարուի մի օտարական, մի անծանօթ մարդ: Նոյնպէս և մի հարսի համար երբեք վայելուչ չէ մեծերի ներկայութեամբ իր մօտ ազգականին, կամ նոյն-իսկ ծնողներին տես-

նեյիս՝ ժպտերես բարեկ, կամ ողջութիւնը հարցնել, այլ պէտք է սովորական երկրպագութիւնը տայ և թողնի անցնի, որպէս օտարական մէկը:

Զը տեսնուած բան է կանանց և տղամարդկանց միասին ճաշելը, կամ թէյ խմելը, որովհետև ուտելու և խմելու համար հարկաւոր է իջեցնել քնթակալը, և այդ աշխարհիս անկարելի բաներից և անպատուարներ երևոյթներից մէկն է համարուած մեր հայ չինականի խելքով: Մի անգամ, երբ շատ ստիպեցինք մի հարսի մեր ներկայութեամբ թէյ խմել, խեղճը «քաղքցի պարոնի խաթրը չը կոտրելու համար» առանձնացաւ նոյն սենեակի մէկ անկիւնը և յետը դէպի մեր կողմն դարձնելով միայն զիջաւ ահ ու դողով դատարկել թէյի բաժակը:

Գիւղերից ոմանք թաղուած են խոր տգիտութեան մէջ, չնորհիւ իրանց նման ազէտ, իսկ անկարգութեամբ գերազանցող քահանաների ու ռէյսների: Այսպիսի գիւղերի եկեղեցիները ներկայացնում են ուղղակի զայթակղութեան վայր: Միլակերտ գիւղում, ինչպէս հաւատացնում էին, մի աննշան պատճառով քահանաները յարձակւում են միմեանց վրայ եկեղեցում, ժողովրդի ներկայութեամբ և զորս դու պատուերեցեր խփում միմեանց և փետտում մօրուքները: Շուրիչկան գիւղը, որ Պարսկաստանի թեմում ուխտագնացութեան սիրահար հայի միակ ուխտատեղին է, և որի գրչագիր աւետարանով *) երգւում են նոյն-իսկ մահմեդական բախտիարիները, ընկած է ծայրայեղ աղքատութեան և աւերակ դրութեան մէջ: Միխթարական ոչինչ չը կայ այստեղ: Մինչև անցեալ՝ 1901 թիւը, այս արգիւնարներ սւեւտարանի հասոյթը հերթով յափշտակւում էր գիւղացիներից, իսկ եկեղեցին օր ըստ օրէ քանդւում ու աւերւում: Միայն այս տարի, տեղիս հոգևոր իշխանութեան չնորհիւ, այդ հասոյթները յատկացուեցին եկեղեցուն, այս կարգադրութեամբ միայն՝ յուսալի է տպագայում ունենալ ուխտաւորների իջնելու տեղ և ըստ կարելւոյն չնորհքին եկեղեցի: Դրամի կողոպտելը դեռ ոչինչ, կողոպտելիս են եղել և այն եկեղեցական անօթները ու նուէրները (օր. թաշկինակ, մետաքսեայ ծածկոցներ, զարդեր և այլն), որոնք նուիրարբերուած էին լինում ջերմեռանդ ուխտաւորներից: Այս կերպ աւազակութիւնից յառաջացած՝ եկեղեցու մի շարք անշքութիւնից պատմենք մէկը: Մեր ներկայութեամբ ուխտ կատարելիս, ջուրը օրհնեցին ասիական

*) Բոլոր գիւղերն ունին իրանց առանձին եկեղեցին և համարեա բոլոր եկեղեցիներում գտնւում են գրչագիր հին աւետարաններ, որոնցից ոմանք մինչև ութն հարիւր տարուայ հնութիւն ունին:

դալաքների գրպանի մի կեղտոտ ջամի մէջ, որից և խմեցին խեղճ ուխտաւորները, այն ինչ մի քանի անգամ տեղիցս՝ Նոր-Ջուղայից արծաթեայ քանդակուած գաւաթներ են նուիրուած եղել: Հակառակի պէս, բոլոր գաւառի ամենատղէտ քահանաներն էլ այս գիւղումն են գտնուում, կարծես վերոյիշեալ անկարգութիւնները կատարեալ դարձնելու համար: Վարդափառ կիրակին, երբ այստեղի եկեղեցում պատարաւ տեսնելու գլխաւորութիւնն ունեցանք, տեսնենք ինչ, դեռ բաւական մնացած մինչև պատարագի վերջանալը, յանկարծ արձակեցին եկեղեցին մոմերը հանգցրին և ժողովորդը սկսեց դուրս քաշուել: միայն մեր բողոքի վրայ զիջան շարունակել ընդհատուած պատարագը: Բանից դուրս եկաւ, որ միշտ, այդպէս են արել և այդպէս էլ վարժեցրել ժողովրդին:

Մի ուրիշ գիւղում՝ Ագնաւուլում եկեղեցին ինչ խաչկալ ունի, ինչ անհրաժեշտ գրքեր: Անպատուարեր է մանաւանդ Ձիգեան գիւղինը, որ տեղիս «Ազգ» երկուսս—գլորոցներս—ի սեպհականութիւնն է, առանց խաչկալի մի սեղան, մի քանի կաւէ աշտանակներ, մի քանի կտոր փալաս-փուլումներ և վերջապէս: Տեղիս՝ Նոր-Ջուղայի բոլոր եկեղեցիներում թափուած են մի քանի տասնեակ անգործածական աշտանակներ և այլ անօթներ, պատկերներ ու զգեստներ, միթէ չէ՞ կարելի դրանցից մի քանիսն ուղարկել նոյն թեմի գիւղերի չքաւոր եկեղեցիներում գործ ածելու: միթէ ութերորդ «մահու չափ մեղք» կը լինի նուիրատուի համար, այդ իրերը փոխանակ փոշոտուած ու ժանգոտուած թափելու անօթատների անկիւններում, ուղարկել գիւղերը:

Անհրաժեշտ է և մենք պարսպ են համարում հրաւիրելու թեմիս հոգևոր իշխանութեան լուրջ ուշադրութիւնը, այս գաւառի եկեղեցիների բարեկարգութեան, քահանաների բարեկարգութեան և ժողովրդի լուսաւորութեան վրայ: Մեզ ամենին չեն զարմացնում վերոյիշեալ զեղծմունքները և ինչ էլ բարկացնում: Ախր ինչ ենք տուել գիւղերին, որ հիմա ինչ իրաւունք ունենանք պահանջելու: Այսքան տարիներ, չասեմ դարեր, թեմիս հոգեւոր իշխանութիւնը ինչ է արել խեղճ գիւղացիների յառաջագիւղութեան գործում, որ քարոզիչն է ուղարկել, որ այցելու հովիւը, որ հաշուետեմը, որ քննիչը, դեռ չատ լաւ է որ այսքանն էլ կայ:

Թեմիս առաջնորդարանը մինչ այժմ ամենին ուշադրութեան չի արժանացրել այս խեղճ գիւղերի մասին հոգալը, այլ բաւականացել է միայն չոր-չոր կոնգակներով ու նամակներով այս ու այն հրամանները արձակել, որոնք երբեմն գործադրուել

են, երբեմն ոչ, Միայն այժմեան թեմակալ արքեպիսկոպոս՝ Սահակ Այվատեանն է, որ այս տարի առաջին անգամ հիմք դրեց այս կարևոր գործին, և որպէս այցելու հովիտ՝ ուղարկեց այս գիւղերը շրջելու Ամենափրկչեան վանքի միաբան՝ Եգնիկ վարդապետին որ և ունեցաւ իր բարերար հետևանքը ընդհանուր առմամբ, թէ եկեղեցիների տումարները ստուգելու և կարգի բերելու և թէ այլ և այլ անհատական վէճերի առաջն առնելու գործի մէջ, Շնորհաւորում ենք այս նոր երևոյթը և մաղթում, որ լինի յարատև ու արդիւնաւոր:

ՏԻԳՐԱՆ ԱԲԳԱՐԵԱՆ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒ-
ԹԻՒՆԻՑ *)

Les vingt et un jours d'un Neurasthenique par
Octave Mirbeau. (Ջղագարի մը քսան ե մէկ օրերը)

Հաղարներէն մէկը այսպէս սկսեց իր պատմութիւնը.

«Քլիշիի **» ծառուղին, կէս գիշերէն մէկ ժամ անցած՝
Կ'անձրեւէ։ Սալայատակի իւղոտ յետը քայլը կը դժուարացնէ
ու կը սահեցնէ։ Ծառուղին գրեթէ ամայի է. Հաղուադէպ ան-
ցորդներ՝ դէմքը վերարկուներու վեր դարձած օձիքին մէջ թա-
ղած՝ կ'անցնին. հաղուադէպ կառքեր՝ կը թաւալին պարապ, և
կամ կը տանին չես գիտեր ինչ, դէպի չես գիտեր ուր. հաղուա-
դէպ կիներ՝ մայթերը կը չափչփին որ՝ լուսնին տակ, դժգոյն
լոյսերու պէս կը փափլան։

—Պարոն... պարոն... տունս եկէք։

Կոչեր՝ որոնց կը խառնուին յայրատ լուտանքներ և սպառ-
նանքներ։ Յետոյ լռումներ... և անյայտայումներ... և վերա-
դարձներ։ Ան՝ կուգայ, կը դարձդարձի, աննշմարելի կը դառ-
նայ, կ'անհետանայ, նորէն կը դառնայ ու առջեւդ կը փլի, ինչ-
պէս ազոաւ դաշտի մը վրայ, ուր դիակ կայ։

Տեղ, տեղ, գինեվաճառներու խանութներ միայն բաց են,
որոնց առջեւ վառած լոյսերը՝ քնացած տուներու խաւարչտին
զանգուածը կը պատռտին դեղնորակ լուսաւորումներով։ Ու
ալկոլի և մուշկի բուրումներ—ոճիւր և պոռնկութիւն—եղբայրա-
կան յորձանքներով կը չրջին օդին մէջ։

—Պարոն... պարոն... տունս եկէք։

Հինգ վայրկեանէ ի վեր, կին մը ինծի կը հետեւի, զոր

*) Յե'ս «Մուրճ» № 9.

**) Քլիշի ծառուղին՝ Մօնմարթրի ժողովրդական ու աղքատ թաղին
մէջ կը գտնուի. այդ ծառուղին վրայ է, ուր կը թափառին Պարիզի ամե-
նէն խեղճ, փողոցային կիները։

ես չեմ տեսներ, և որուն՝ յամառ քայլափոխն ու ձայնը միայն կը լսեմ յետեւէս, որ այս միօրինակ և պաղատական յանկերզը կը շնչայ.

—Պարոն... պարոն... տունս եկէք:

Լապտերի մը առաջ կանգ կ'առնեմ: Կինը նոյնպէս կանգ կ'առնէ, բայց լոյսի ճառագայթումէն դուրս կ'ընամ, սակայն, զինքը գննել, Բնակչիկի չէ անիկա, *ան, ոչ, ոչ ալ փորձող*, և իր ազդած մարմոքին ամբողջ անջրպետով՝ մեղքին զազաւարը կը վանէ: Որովհետեւ մեղքը՝ յնծութիւն, մետաքս, բուրմունք և անգուրուած բերաններ, և յնորած աչքեր, և ներկուած մազեր, և խորանի մը պէս զարդարուած՝ բաժակի մը պէս լուայուած՝ կուռքի մը պէս նկարուած միս է: Հարուստ թախծութիւն, ճոխ նողկանք, չքեղ սուտ, ոսկիէ և մարգարիտէ աղետեղութիւն է նաեւ: Թշուառը այդ բաներէն ոչ մէկը ունի ինծի ընծայելու համար: Աւելի թշուառութենէ քան ոտքիքէ ծերացած. անօթութենէ կամ մութ խղիկներու մէջ եռ եկող ծանր հարբեցողութիւններէ խամրած՝ իր եղերական արհեստին ահուկի աշխատանքէն տձեւցած՝ դանակի հարուածի սպառնալիքին տակ հարկադրուած՝ քալելու, միշտ քալելու, գիշերուան մէջ, դէպի թափառող ու փնտռող ցանկութիւնը. զինքը կողոպտող մակերէն՝ (*souteneur*) ազատ արձակելու համար փրկանք պահանջող ոտտիկանին ուղարկուած, կահաւոր խցիկին և բանտին մէջ տարուբեր,—*օ, ցաւագին բան մըն է զինքը տեսնել: Սեւ քրդէ թեթեւ քառաքօ (caraco) մը իր կուրծքը կը ծածկէ. ցեխոտ վտաւակ (jupon) մը իր սրունքները կը ծածէ, դուխը ծածկած է անսահման գլխարկով մը, որուն փեղուրները անձրեւէն կախ ընկած են. ու փորին վրայ խաչածեւ պահած է իր ձեռքերը, ցուրտէն կարմրած երկու հէգ ձեռքեր—*օհ, ոչ լիտի—երկու հէգ, անճարակ, կոշկոռած ձեռքեր զոր մինչեւ մատները կը հագուեցնեն երկու հինաւուրց կիսաձեռնոցներ: Ուրիշ ժամու մը, ուրիշ տեղ մը ու առանց կոշուծի այդ չեւտին, ես զինք անգործ սպասուհի մը պիտի կարծէի և ոչ թէ մայրերու թափառիկ մը: Անշուշտ, կը կասկածի իր տըգեղութենէն, գիտէ թէ իր մարմինը շատ քիչ հեշտանք կ'ընայ նուրիւկ, որովհետեւ անիկա հետզհետէ կ'աւրուի իմ նայուածքիս տակ, իր ու իմ դէմքիս մէջտեղ մթութիւն ու մթութիւն կը դիզէ և աւելի ողորմութիւն խնդրելու, քան հաճոյք ընծայելու երեւոյթով՝ ու վախկոտ, դողդոջ, գրեթէ ամօթահար ձայնով մըն է, որ կը կրկնէ.**

—Պարոն... պարոն... տունս եկէք... Պարոն... ինչ որ ուզէք պիտի ընեմ... Պարոն... պարոն...

Որովհետեւ ես չեմ պատասխաներ, ոչ զգուանքէ և ոչ ալ արհամարհանքէ մղուած՝ այլ որովհետեւ, նոյն պահուն իսկ, կարեկցութեամբ կը դիտեմ, իր վիզը կարմիր գիծով մը քստմընելի կերպով շրջապատող բուստէ (մէրջան) մանեակ մը, շատ կամաց, աւելի ցաւագին պաղատանքի շեշտով մը, կ'աւելցնէ...

—Պարոն... եթէ նախամեծար կը համարէք... Պարոն... Տունս պզտիկ աղջիկ մը ունիմ... Տասներեք տարեկան է, պարոն... շատ, շատ սիրուն... ու անիկա կ'նոջ մը պէս մարդիկը գիտէ... պարոն... պարոն... Կ'աղաչեմ... տունս եկէք... պարոն... պարոն...

Իրեն կը հարցնեմ.

—Ո՞ւր կը բնակիս:

Ու, շտապագին, մատնացոյց ընելով դիմացը գտնուող փողոց մը որ ծառուղիին վրայ կը բացուի խաւարչտին ծնօտի, անդնդային կոկորդի մը պէս, կը պատասխանէ.

—Շատ մօտիկ... նայեցէ՛ք հոն... երկու քայլ անդին... խնայ որ շատ գոհ պիտ մնաք:

Վազելով կ'անցնի փողոցը՝ ժամանակ չը ձգելու համար որ միտքս փոխուի, կարծեցեալ ցանկութիւնս պաղի... Իրեն կը հետեւեմ... Ա՛հ, խեղճ ու կրակը... Ամէն մէկ քայլին՝ գըլուխը յետ կը դարձնէ, ապահով ըլլալու համար որ չեմ մեկնած, ու ահագին ու կլոր ջրակոյտերու վրայէ, հրէշաւոր գորտի մը պէս կ'ոստոտտէ: Գինետունէն ելող մարդիկ զինքը կը նախատեն... Փողոցին մէջ կը խորասուզուինք... Ան առջեւէս, ես յետեւէն, կը քալենք դէպի հետզհետէ սեւ բան մը:

—Հոն է... կը բացագանչէ կինը...

—Կը տեսնես, քեզի սուտ չըսի...

Կիսաբաց դուռ մը կը հրէ՛ նեղ նրբացքի մը խորը, քարիւղէ լամբար մը՝ որուն պատրոյզը կը միտայ ու կը դողդղայ, պատերուն վրայ ոճիւրի նշոյլներ, մահուան ստուերներ պարել կուտայ: Ներս կը մտնենք... Ոտքերս կակուղ բաներու կը դըպչին, թեւերս կպչուն բաներու կը քսուին...

—Սպասէ՛ քիչ մը սիրականս... Սանդուղը շատ վտանգաւոր է...

Վստահութիւնը նորէն վրան եկած է:

Հասկանում է որ այլ եւս պէտք չէ ստորնանայ, թէ այլ եւս ինքը՝ այնքան ալ տգեղ չէ գուցէ, քանի որ ես հոն եմ, քանի որ զիս իր ձեռքերուն մէջ ունի, քանի որ գրաւած է, տուն բերած է մարդ մը, մարդ մը՝ զոր հարկաւոր է պահել գգուանքի բառերով՝ առատաձեւութեան զրդեկ սիրոյ խոստումներով... Սիրոյ... Ես այն վարսնկոտ «Պարոն»-ը չեմ այլեւս

որուն քիչ առաջ կը պաղատէր. ես «սիրական» եմ, սպասուած չահը, ահ՝ որ իրեն հետ կը բերէ, թերեւս, վաղուան ուտելիքը, կամ վճարելիքը՝ այն զգուշի, շուայտ հարրեցողութեան՝ որով կը մոռցուի անօթութիւնը, ու ամէն բան, ամէն բան, ամէն բան...

Լամբարին գալարուող բոցէն, աշտանակ մը կը վառէ, ու, ցոյց տալով ինծի ճանապարհը՝ առջևէս սանդուղէն վեր կելլէ: Վերելքը տաժանելի է: Խեղճը՝ դժուարութեամբ, ճիգով կը բարձրանայ. շունչը կը սպառի, կը սուշէ, կը խորրայ. ազատ ձեռքովը իր փորը կը վերցնէ որ, չափազանց ծանր բեռի մը պէս զինքը կը նեղէ, կը ճնշէ և որը չը գիտէ ինչ ընէ:

—Անհամբեր՝ մի ըլլար, սիրական...

Երկրորդ յարկն է...

Ու բազրիկը (rampe) կաշուն է, պատերը կը ջրօտնն ու կը կաթկթեն, տախտակէ աստիճանները կը ճարճատեն ոտքերու տակ. պէտք է ստամոքսը ամուր բռնել այն սրտախառնուկներուն դէմ զոր կը պատճառեն մարդոց բերած ցեխին անտանելի հոտերը. ազտերը՝ որոնց խոնաւութիւնը ժահրի հոտը աւելի կը սաստկացնէ, և լաւ չը փակուած կղկղանքները: Սանդուղին վրայ, դռներուն առջև խնդացող, պոռացող, ազերսող ձայներ կը լսուին, ձայներ՝ որ կը սակարկեն, կ'սպառնան, կը պահանջեն, յայրատ ձայներ, հարբած ձայներ, խեղդուկ ձայներ... Օ՛, այս ձայները: Գիշերուան, սարսափի, թշուառութեան և... հաճոյքի այս վայրում, այս ձայներու տխրութիւնը!

Վերջապէս հասած ենք: Բանալին ճոնչեց փականքին մէջ, դուռը ճոնչեց իր ծխնիններուն վրայ, ու արդէն կը գտնուենք պղտիկ սենեակի մը մէջ, ուր կանաչ ուշիս է՝ (reps) պատուած՝ կաղ, թիկնաթոռ մը կայ և խղճուկ անկողին մը միայն որուն վրայ քնացող պառաւ մը աղմուկէն կարթննայ ու կը ցլուի, ուրուականի մը պէս, ու իր՝ կլոր, դեղին, տարօրինակ կերպով սեւեռող, և գիշերը, անտառներու մէջ հսկող թռչուններու աչքին համանման աչքերով զիս վերէն վար կը չափչփէ... Պատուհանին դիմաց, մէկ պատէն միւսը երկնցած չուանի մը վրայ ճերմակեղէններ փռուած են չորնալու համար.

—Ես քեզի չը՞սի, որ ասոնք վերցնես, յանդիմանական կերպով կուղղուի կիներ պառաւին՝ որ տեսակ մը մոլորոցով կը վերցնէ ճերմակեղէնները և կը դիզէ թիկնաթոռին վրայ:

Դռնէ մը կը մտնենք ուրիշ սենեակ մը... Ու մենակ ենք, կը հարցնեմ.

—Ո՞վ է այս պառաւը.

—Փոքրիկ աղջիկը ինծի հայթայթողն է, սիրականս...

—Մայրը.

—Ո՛չ, ինչ կըսէք: Ձը գիտեմ ուրկէ է գտեր:

Երէկուրէն է ի վեր է միայն որ սղտիկը մօտս է... Խեղճ պառաւը բաղդ չունի... Ա՛հ, չիտակը ան ալ շատ դժբաղդ է... Ջաւակը Նոր Կալէդոնիա է արսորուած... Ժամանակով իմ սիրահարս էր... Պլանչ փողոցի ժամագործին խանութը զողութեան մտաւ, գիտես հա, էն ժամագործը... Իր աղջիկները անառակատուններու մէջ են... ու բան չեն տար իրեն... Վերջապէս պէտք է որ ինք ալ ապրի, հէ, այնպէս չէ...

Յետոյ.

—Փոքրիկը այստեղ բերած է... որովհետեւ իր տունը... Ա՛հ, տեսնելու բան է... Այնքան աղքատ է, այնքան աղքատ որ չեմ կրնար պատմել...

Սենեակը հագիւ թէ կահաւորուած է ու անասելի անձկութիւն մը ցոյց կուտայ... Պատուհաններն առանց վարագոյրի են, վառարանը առանց կրակի: Խոնաւութիւնը պատերուն թուղթը կը կեղեւէ որ՝ տեղ-տեղ վար կը թափին, մեռած մորթի պատառներու պէս... Սենեակը ցուրտ է... Կինը ներողութիւն կը խնդրէ...

—Ո՛չ փայտ եւ ոչ ալ ածուխ ունիմ... Ա՛հ, ձմեռը այնքան շուտ վրայ հասաւ... Ասկէց զատ, ամիս մըն է որ ոստիկանները եկան... Ձիւս ծակը նեակցին... Երեք օր կայ որ զիս ազատ արձակած են, հաւատալու բան է...

Ու կ'աւելցնէ.

—Ա՛հ, եթէ իրենց տալու քսան ֆր. ունեցած ըլլայի... զիս հանգիստ ձգած պիտի ըլլային... Ա՛խ, հէրն անիծածներս... Ձէ, չիտակը, կլլուելու բան չէ... Կան՝ որ «երանութիւն մը» կը խնդրեն... ուրիշներու զրամ կուղեն... Ինծմէ, միշտ զրամ կը պահանջեն ինծմէ: Արգելուած ըլլալու էր ասիկա...

Սենեակին խորը, մեծ անկողին մը կը փռուի՝ երկար բարձի (traversin) մը վրայ բարձրակարկառ երկու բարձիկներով... Քովը ուրիշ անկողին մը, աւելի փոքր, ուր ծածկոյթներու մէջէն դուրս ցայտող խարտեաշ մաղերու խռիւ մը կը նշմարեմ, ու, այս խարտեշութեան մէջ, նուրբ, դժգոյն դէմք մը՝ որ կը քնանայ:

—Փոքրիկն է, սիրականս... Թեթեցիր քիչ մը, որ հանգիստ ընես... Հիմա զինքը կ'արթնցնեմ... Ա՛հ, հիմա պիտի տեսնես որքան անառակ ու վարպետ է... Դժգոհ չը պիտի մընաս, իմ հոգիքն...

—Ձէ... չէ... հանգիստ ձգէ:

—Ա՛հ, մի վախճար... ամէն մարդու հետ առաքաստ չի մտներ... առատսձեան պարոններու հետ միայն կը պառկի...

—Չէ... Թո՛ղ տուր քնանայ...

—Ինչպէս որ կուզես, սիր ական...

Ինծի առաջարկած ոճիւրին գիտակցութիւնը չունի, ու իմ մերժումս՝ մանաւանդ թէ ղինքը կը զարմացնէ... Ես ղիտեցի ղինքը, երբ կուզէր երեխան արթնցնել: Ձեռքը չի դողաց, իր սրտին մէջ չը դգայ այն ցնցումը՝ որ արիւնը կը վանէ ու դէմքը կը դժգունեցնէ: Իրեն կը հարցնեմ.

—Եթէ ոստիկանութիւնը զայն տնէդ գտնէ... ղիտեա Ե. ղերնադատ Ատեանը, կենտրոնական բանտն է տեղդ:

Կինը տարտամ չարժում մը կը դժէ ու կը պատասխանէ.

—Շատ լաւ... բայց ճարս ինչ է:

Բայց ան նորէն վստահութիւնը կորսնցուց իմ խստագէմ ու տրտում կերպարանքիս առջեւ: Այլ ևս չի համարձակիր բռնաւ ինքզինքը հայելիին մէջ դիտելու. չի համարձակիր, նոյնպէս, ինքզինքն ինծի քուցնելու բնաւ, աշտանակի աղօտ լոյսին մէջ անգամ... Ու ջուրը իր գլխարկէն կը կաթկթի, ինչպէս թրջուած տանիքէ մը... Աշտանակը վառարանին վրայ դրաւ, մեծ անկողինն մօտ եկաւ, ու կիսաստուերին մէջ կը պատրաստուէր հանուելու.

—Ո՛հ, կ'ըսեմ իրեն... Իգ՛ուր է... քեզ ալ չեմ ուզեր:

Ու ձեռքին մէջ կը սահեցնեմ երկու ոսկի՝ զորս կը դարձնէ ու կը դարձմէտէկ ափին մէջ, մատովը կը կռէ, ու յետոյ, առանց բառ մը ըսելու, շուարած ակնարկով մը՝ կը դիտէ զանոնք:

Ես ալ իրեն ոչինչ ունիմ ըսելիք: Ու ինչ պիտի ըսէի: Իրեն քարոզել ղղջիմ. առաքինութեան հրաշքները: Բառեր, բառեր, բառեր... Ինքը չէ յանցաւորը: Ինքը ճիշտ այնպէս է, ինչպէս պահանջեց, որ ըլլայ ընկերութիւնը՝ նրան անյագ ախորժակին պէտք է, ամէն օր մատուցանել՝ մարդկային հոգիի լայն կերակրաբաժինը... Իրեն խօսել ատելութեան, ըմբոստատումի մասին... Ինչ օգուտ... Դարձեալ բառեր... Թշուառութիւնը չափազանց վատասիրտ է. անիկա քաջութիւնը, չունի երջանիկներու եսասէր ուրախութեան վրայ ճօճելու զանակ մը, ոչ ալ ծփացնելու ջան մը... Աւելի լաւ է ուրեմն որ ես լռեմ!... Եւ արդէն ես այստեղ չեկայ բարոյախօսի մը պէս ճառ կարդալու: Ժամանակը չէ՛ ունայն, բուռն խօսքերու, որոնք բանի մը չեն: ծառայեր ու ալ աւելի յոյց կուտան միայն՝ ֆռազներու պարպութեան մէջ՝ գործողութեանց պարապը... Ես եկայ տես-

նելու համար, ու տեսայ... Ինծի միայն մեկնել կը մնայ... Մնաք բարով!...

Երեխան կը քնանայ միշտ իր անկողնին մէջ, խարտեաչ պսակով մը... Արբունքի չը հասած լլկումները՝ իր բերանը թարչամեցուցած են արդէն, չունչը հոտեցուցած՝ ու իր փակուած աչքերուն անկիւնը ճաթոտութիւններ դրած, Գովի սենեակին մէջ պառաւին դեգերելն կը լսեմ, որ ճարճատող տախտակամածին վրայ իր հնամաչ մուճակները քաշ կուտայ, կինը իր երկու ոսկեղբարմը՝ երկար բարձին տակ պահեց, ու կամացուկ ըսաւ ինծի.

—Պառաւը հիմա պիտի կատղի պզտիկին հետ պառկած չըլլալուդ համար... Բան մըն ալ անոր տուր, որպէս զի ինծի տուածդ ձեռքէս չ'առնէ... Չար պառաւ մընէ, ու տէգ, ճրչափ տէգ (rosse)... Ա՛հ խնչոր... Եւ յետոյ սպասէ որ քեզի լոյս բռնեմ, պարոն... Սանդուղը շատ վտանգաւոր է...»

Ու անաւասիկ ինչ որ կը պատմէ ուրիշ մը.

«Անցեալ օր, տունս, ատաղձագործ մը կար, որ գրադարանս նորոգելու եկած էր, Շատ խելացի՝ և խօսակցութիւն սիրող մարդ մըն է:

Աշխատած ժամանակ.

—Երեխաներ ունիս, հարցուցի.

—Ո՛չ... պատասխանեց, խստութեամբ... Ու քիչ մը դադարէ յետոյ... աւելի մեղմ ձայնով մը.

—Ոչ մէկ զաւակ ունիմ հիմա... Երեք հատ ունէի... Ամենքն ալ մեռան...

Ու գլուխը ցնցելով, աւելցուց.

—Ա՛հ, ճշմարիտը, երբ մարդ եղած չեղածը կը տեսնէ... ու այն չարչարանքը որ կը քաշէ կեանքի մէջ... Թերիս աւելի լաւ եղաւ որ մեռան... Հէգ, թշուառ պզտիկները... Գէթ, չէն տառապիր:

Գիշ մը անգթութեամբ պնդեցի.

—Շատո՞ւց է որ վերջինը մեռաւ.

—Տասը տարի է, պատասխանեց.

—Անկէ վեր...

—Անկէ ի վեր, կըմբռնէք, հարկաւ, որ ոչ ես, և ոչ ալ կինս՝ ուրիշ զաւակ ունենալ չը փափա գիճք... Ա՛հ, ոչ, զոր օրինակ:

Իրեն բացատրեցի Պիօ *) օրէնքին հիանալի յօդունուածքը,

*) Պիօն ծերակուտական մըն է որ ֆրանսայի բնակչանուադութեան դէմ կռուելու համար բուրժուալի մը հանճարեղ հնարագիտութեամբ—և

որուն համեմատ զաւակ չունենալուն, կամ, այլ եւ ոչ մէկ կենդանի զաւակ չունենալուն համար վատ հայրենասէր մը ըլլալով... տուրքի մը պէտք է ենթարկուէր, եթէ այդ օրէնքը քուէարկուէր սակայն...

Կեանքը իմաստասէրի աչքով դիտել վարժուած ըլլալուն, շատ զարմացած չերեցաւ.

— Ամէն բան կը սպասեմ օրէնքներէն, ըսաւ ինծի առանց դանդաղութեան... Օրէնք մը, *parbleu!*... Գիտեմ թէ ի՞նչ է, օրէնք մը... Գիտեմ որ անիկա երբէք մեղիպէսներուն համար չէ... Օրէնքները՝ միշտ, աղքատներուն դէմ, հարուստներուն ի նպաստ շինուած են... Բայց, այսուհանդերձ... ան՝ որուն վրայ կը խօսիք... քիչ մը չափազանց պղպեղոտ է... Որովհետեւ, եթէ ես ալ տղայ չունիմ... յանցանքը իրենցն է...

— Յանցանքը իրենցը... Որո՞ւ...

— Բայց իշխանութեանց... Պետութեանն է... ես դիտեմ... այն բոլոր մարդուկներուն՝ որ օրէնքներ դարբնելու պաշտօն ունին, նոյնպէս անոնց՝ որ կոչուած են զանոնք զործադրելու... Սա շատ պարզ է... ու մանաւանդ նոր չէ... Պետութիւնը— պէտք է արդար ըլլալ—կը պաշտպանէ հաւնոցի թռչունները, ցուլերը, ձիերը, շները, խոզերը հիանալի նախանձախնդրութեամբ մը, և գիտական յառաջգիմութեանց շատ վարպետ հասկացողութեամբ մը, Այս զանազան և շահագրգիռ կենդանիներուն համար, առողջապահական անթերի բուժանումի մը եղանակները գտած են։ Ֆրանսական ամբողջ հողին վրայ, ընտանի կենդանիներու այլ և այլ ցեղերուն ազնուացման համար—ալ թիւ չունեցող—ընկերութիւններ կան։ Անոնք գեղեցիկ ախոռներ... գեղեցիկ դամբարաններ... գեղեցիկ հաւաքներ... գեղեցիկ շնաքներ ունին... Լաւ օդաւէտուած... լաւ ջնուցուած... և օժտուած ոչ միայն հարկաւոր առարկաներով... այլ մեծ չքեղութեամբ... Այդ բազմաբնուէր կենդանիները կը պահուին յարատեւ ու բացարձակ առողջութեան մը մէջ... հանապազօրեայ լուացումներով, ասիտ ֆէնիքի, պօռիքի արմատական հականեխումներով՝ ամէն վնասակար սերմէ, ամէն ախտաւոր վարակումէ ազատ... Ե՛ս, քեզի խօսողս, իմ ձեռովս կառուցի այնպիսի հաւնոցներ՝ որ ճշմարիտ պալատներ են... Շատ բարի... Կենդանիներուն տրուած այդ մանրակրկիտ ինամքներուն նախանձոտ չեմ... Թող, անոնց հեղինակները՝ մրցումներու մէջ պսակեն նոյն-խակ... վարձատ-

արդէն ո՞ր բուրժուան հանճարեղ չէ՝—առաջարկեց, վերջերս, ամուրիներու վրայ տուրք դնել.

րեն... Թող անոնց զրամական գումարներ տան երկրագործական ակումբներու մէջ, կընդունին... Ինծի համար բոլոր կենդանի էակները պաշտպանութեան, հնարաւոր ամէն երջանկութեան իրաւունք ունին... Բայց կը փափագէի որ տղաքները—մարդոց տղաքները—այս բոլոր... կենդանասիրական... բարեքներէն սխտեմատիք կերպով չը հեռացուէին, ինչպէս այժմ... Արդ, կերևի թէ այդ բանն անկարելի է: Երեխայ մը, անարժէք առարկայ մըն է երախան... Մարդկային այդ որդը կրնայ սատկիլ, և անհետանալ... Ի՞նչ փոյթ... Վարչականօրէն, նորածիններու նախճիրներ կը կազմակերպեն նոյնիսկ... որպէս թէ մարդկային ցեղի վտանգաւոր վիտումի մը սպառնալիքին տակ գտնուէինք... Ու այս գեղեցիկ ընկերութեան վարիչները, տէրերը—որ, կթէ ոչ նախապատճառը, գէթ՝ այնքան զայրացկոտ հայրենասիրութեամբ մը իրենց մատնանիչ ըրած չարիքին անտարբեր շարունակողներն են—դառնօրէն կը տրտնջման թէ երախաներու ծնունդը հետզհետէ կը նուազի, այն երևութեան ընդ որոնց աշխարհ գալը կարգելեն, կամ զոր ծնած չի ծնած կը սպաննեն, ամենէն ապահով և ամենէն արագ միջոցներով... Որովհետեւ ճշմարիտ որդեսպանը՝ իրենց զաւակը մեռցանելու անկարող աղջիկ—մայրերու նկատմամբ այնքան անգութ այս ընկերութիւնն է... Պէտք է տեսնել զինքը ինչպէս կ'երգուընցնէ ընտանիքները բեղմնաւորելու կրցածնուն չափ ու ալ աւելի. և կամ կը սպառնայ զրամական շատ խիստ աուգանքներու ենթարկել, երբ, անոնք՝ չուզելով ծնունդ տալ՝ անխնայօրէն թշուառութեան և մահուան դատապարտուած էակներու կը խորհին վերջապէս ամուլ մնալ... Է՛հ ուրեմն, ո՛չ... Բան մըն ալ մտիկ ընել չենք ուզեր...

Այս ամէն խօսքերը ըսած էր հանդարտ շեշտով մը, երբ, կրկին սանդուղի մը ծայրին հեծած, մետօղիկ ու յամբօրէն տախտակ մը կը սղոցէր... Տախտակը սղոցելէ յետոյ, թիւերը խաչաձևեց և գլուխը ցնցելով ինծի նայեցաւ.

—Ըսէք, պարոն, գոչեց... ըսածներս ճիշտ չմնա. Ի՞նչ ելեր գլուխնիս կ'արդկեն իրենց անիծուած ընակչանուագութեամբ... Երբ այս բոլոր պատուական խեղկատակները իրենց խղճի քննութիւնը կատարեն, և ազնուօրէն ճանչնան թէ մենք չենք չարիքին պատճառը... այլ ընկերութեան կազմակերպութիւնն իսկ... երջանիկները միայն պաշտպանող օրէնքներու բարբարոսութիւնն ու կապիտալիստ եսասիրութիւնը նոյնիսկ... այն ատեն թերեւս կարողանանք իրարու հետ խօսիլ... Մինչեւ այդ օրը սակայն, մենք պիտի շարունակենք խամբող հովէն նետել մարդկային հունտն ու կեանքի սերմերը... Ինծի ինչ, հարըս-

տուժիւնն ու փառքը երկրի մը, ուր մէկ հատիկ իրաւունք մը ունիմ, թշուառութենէ, տգիտութենէ և ստրկութենէ սատկելու իրաւունքը...

Իրեն հարցուցի այն ժամանակ թէ ինչո՞ւ և ինչպէս իր զաւակները մեռած էին.

— Ինչպէս կը մեռնին ամենքը կամ դրեթէ ամենքը մեղ մօտ, ինձի պատասխանեց... Ա՛հ, այս պատմութիւնը կարճ է, և անիկա պատմութիւնն է իմ ամէն ընկերներուս... Մէկէն միւսը՝ թշուառութեան ձեւը կարող է փոխուիլ երբեմն, բայց խորը միեւնոյնն է... Քիչ առաջ ըսի ձեզի, որ երեք տղայ ունէի... երեքն ալ առողջ, զօրեղ և լաւ կազմուածք ունէին, ու ընդունակ՝ պատուական կեանք մը ապրելու, կ'ապահովեցնեմ ձեզ... Առաջին երկուքը՝ իրարմէ տասներեք ամիս յետ-առաջ ծնած՝ միեւնոյն կերպով մեկնեցան... Գործաւորական ընտանիքներու մէջ, հազուադէպ է՝ որ մայրը իր կաթովը կարողանայ դիւեցնել իր զաւակը... Վատ կամ անբաւական սնունդ... տնային հոգեր... աշխատանք... չարաչար վատակում (surmenage)... վերջապէս, գիտէք ինչ է... Երեխաները ծծակներու (biberon) դրուեցան... բայց չուտով հալեցան, մաշեցան... Չորս ամսի յետք, այնքան լղարած ու հիւանդ էին, որ մոտատանջ եղանք... Բժիշկը ինձ ըսաւ... «Parbleu! միշտ միեւնոյն բանն է... կաթը ոչինչ չարժեք... կաթը ձեր երեխաները կը թունաւորէ»։ Այն ատեն բժիշկին ըսի. «Տոյց տուէք ինձի՝ ուր լաւ կաթ կայ, երթամ գնեմ»։ Բայց բժիշկը գլուխը թոթուեց և պատասխանեց. «Պարիզի մէջ լաւ կաթ չը կայ... Գիւղ ուղարկեցէք ձեր տղան»։ «Տղեկը յանձնեցի Աղքատախնամին (Assistance publique), որը զայն յանձնեց պէրշոն ստնդուի մը... Ութ օրէն մեռաւ... Մեռաւ, ինչպէս կը մեռնին ամենքը, գիւղի մէջ, խնամքի պակասէն, գեղջկական անդթութենէն... աղտոհղութենէն... երրորդը՝ տունը պահեցի... չատ լաւ մեծցաւ... իրաւ է թէ, այդ պահուն, կինս և ես առատ օրականներ կը չահէինք, և փողի պակասութիւն չէինք քաշեր... Գիրուկ, վարդագոյն էր, երեք չէր պոռար... Անկարելի էր աւելի զօրեղ, աւելի գեղեցիկ երեխայի մը հանդիպել... Չը գիտեմ ինչպէս աչքի հիւանդութիւն մը խլեց որ այդ ժամանակին, թաղին մէջ կը տիրէր... բժիշկն ինձի խորհուրդ տուաւ զինքը հիւանդանոց գնել... Այդ հիւանդութեան մասնաւոր հիւանդանոց մը կար։ Օ՛հ, հիւանդանոցները չէ որ կը պակսին... փոքրիկը բժշկուեցաւ, բայց այն օրը ուր մայրը գնացած էր զինքը տուն բերելու, դէմքը աւերուած դտաւ և ահուկի խթերու մատնուած... մանկական փորհարութիւն ստացած էր... Եւ արդէն չէին ալ խնամեր զինքը...

Մայրը այդ բանի մասին զարմանքը յայտնեց... Ներքին բժշկի (interne) կտոր մը՝ որ այնտեղ կը գտնուէր, ըսաւ. «Այստեղ աչքի հիւանդութիւնները միայն կը բժշկեն... եթէ կուզէք որ տղուդ փորհարութիւնն ալ բժշկեն... ուրիշ հիւանդանոց մը տարէք, «Մայրը շատ աղաչեց, պաղատեց, սպառնաց, իզոյր... Թեկերուն մէջ առաւ իբ խեղճ զաւակը և իրեն ցոյց տրուած հիւանդանոց մը առաջնորդեց... Տղան ճանապարհին մեռաւ... Ահաւասիկ! Եւ տակաւ երես ունին ինծի ըսելու. «Ջաւախներ ունեցէք, nom de Dieu!... զաւակներ ունեցէք... Ա՛հ, ո՛չ... համը բերանս մնաց...»

Ու ուսերը ցնցելով՝ աւելի ուժեղ ձայնով մը ըսաւ.

— Շատ տարօրինակ են, սա չքեղ պարօնները!... Ժողովուրդը աւելցնելու համար հնարքներ փնտնելու փոխարէն, աւելի լաւ կընէին ժողովուրդին մէջ երջանկութիւնը աւելցնելու միջոցը գտնելով... Այո... mais ça... ils s'en fichent!... (բայց այդ ալ, իրենց հոգն անգամ չէ):

Երբ իր գործն աւարտեց, մատենադարանին դարակներուն վրայ շարուած հատորները աչքէ անցուց.

— Վոլգէր... գոհեց... Դիդո... Ռուսո... Միլլէ... Տօլստոյ... Անատօլ Փրանս... Այո, այս բոլորը շատ գեղեցիկ են... բայց ինչի կը ծառայէ... Գաղափարը կը քննադատէ գրքերուն մէջ, ձյմարտութիւնն և երջանկութիւնը անոնցմէ՛ գուրս չեն ելլեր երբէք...»

Գործիքները հաւաքեց և գնաց, տրտում... տխուր...»

Երբորդ մը որ նօրմանտիացի հողատէր մըն էր, պատմեց.

«Հայր Ռիվօլի պատ մը ունի, Այս պատը ծամրուն եղերքն ի վար կ'երակրի: Անձրկներն և ուղեյարդարին բրիչը՝ անոր հիմերը փորած են. քարերուն տակի հողը թափած՝ իրենց տեղը հաստատ չեն, ու ծերպեր կը բացուեն: Եւ սակայն անիկա սիրուն է իր հին աւերակի տեսքով: Քանի մը հերիկներ (iris) անոր կատարը կը պսակեն. վայրի վշիններ, ձարախոտներ, գառնադմակներ (joubarbe) անոր ճեղքերուն մէջ կ'աճեն. քանի մը դիւրաբէկ խաչխաչներ նոյնպէս կը սոնքան որմնաքարերու միջև: Հայր Ռիվօլի իր պատին բանաստեղծութիւնէն չ'ազդուիր ու զայն երկարօրէն քննելէ՝ խարխուլ քարերը շարժելէ յետոյ, ինչպէս կը շարժեն խեղճ մարդու մը ծնօտին մէջ ատամները, վերջապէս կ'որոշէ զայն նորոգել:

Որմնադիրի պէտք չունի, որովհետև կեանքին մէջ ամեն արհեստ ըրած է: Գիտէ շաղախ ծնծել, ինչպէս տախտակը մը ողորկել (raboter), երկաթի կտոր մը կոել, հեծանի մը քառանկիւնի ձև տալ: Եւ յետոյ որմնադիր մը թանգ արժէ և աշխա-

տանքն ալ առաջ չերթար: Հայր Ռիվօլի քիչ մը կիր, քիչ մը աւազ կը դնէ, ճամբուն վրայ, իր պատին տակ, քանի մը որմնաքար կը հաւաքէ զոր գտած է իր ցանկապարտէզին մէջ ու կսկսի ահա, աշխատիլ:

Բայց, առաւօտ մը, առաջին ծերպը գոցելու համար հապիւ թէ կէս ծնիւիչ չաղախ նետած է ու առաջին քարը զետեղած, երբ, յանկարծ, յետեւէն, խիստ իրեն կը պոռան.

—Է՛յ, հայր Ռիվօլի, ի՞նչ կը չինէք այդտեղ.

Agent voyer-ն է՝ (ճամբաներու մաքրութեան վրայ հսկող պաշտօնեայ) առաւօտեան պտոյտի կլած: Կոնակին վրայ կը կրէ երկրաչափական գործիքներով լեցուն պարկ մը, և թիւին տակ, ճերմակ ու կարմիր ներկուած երկու հարթաչափ...

—Ա՛հ, ա՛հ, կ'աղաղակէ նորէն, վարչական կանոնադրութեան իբրեւ ահուկի արձան, ճամբուն եզերքը գամուած կանգ առնել է յետոյ... Ա՛հ, ա՛հ, այս տարիքին մէջ... տակաւին օրինազանց կը գտնուիք... Ըսէք տեսներ, ի՞նչ կը չինէք այդտեղ.

Հայր Ռիվօլի յետ դարձաւ և ըսաւ.

—Է՛հ, ի՞նչ... պատտ կը նորոգեմ... չէք տեսներ ամեն կողմէն կծիկը կը դնէ, կը փչի...

—Կը տեսներ... կը պատասխանէ պաշտօնեան... բայց արտօնագիր ունի՞ք.

Հայր Ռիվօլի կը շուարի և ոտքի կելլէ, երկու ձեռքերովը թմրած մէջքը բռնելով.

—Արտօնագիր, կըսէք... Իմ պատտ իմա է թէ չէ... Ի՞նչ պէտք ունիմ արտօնագրի՞ պատիս հետ ուղածիս պէս վարուելու համար... քէֆս ուզէ քար ու քանդ կընեմ, քէֆս ուզէ կը չինեմ...

—Վարպետորդիւթիւն չուզեր հէ, պառւած մեծխօսիկ... Գիտէք թէ բանն ի՞նչի մէջ է...

—Վերջապէս... կը յամառի հայր Ռիվօլի... այս պատը իմա է թէ, ո՛չ:

—Այս պատը ձերն է... բայց ճամբուն վրայ կը գտնուի... Եւ դուք իրաւունք չունիք նորոգելու պատ մը որ ձերն է և ճամբուն վրայ կը գտնուի...

—Բայց չէք տեսներ որ ալ ոտքի վրայ կենալու կարողութիւն չունի և եթէ չը նորոգեմ, մեռած մարդու մը պէս գետին պիտի ընկնի...

—Կարելի է... Ատ ինծի չի վերաբերիր... Ես ձեզ դէմ տեղեկագիր (procès verbal) պիտի տամ. նախ, ձեր պատը առանց արտօնութեան վերանորոգած ըլլալնուդ համար, երկրորդ, նոյնպէս առանց արտօնութեան, հասարակաց ուղիին

վրայ չինուածանիւթեր դարսելնուդ համար: Յիսուն եկիւնոց տուգամ'ք մը ունիք ջնծալու, հէ, հէ հայր Ռիվօլիս... Անգամ մըն ալ տգէտ ձեռնալը պիտի սորվիք...

Հայր Ռիվօլի, իր ատամնաղուրկ և փուռի մը պէս սև բերանը, մեծ-մեծ կը բանայ... Բայց իր չուարումը այն աստիճանի է՝ որ բառ մը անգամ չի կրնար արտասանել: Աչքերը՝ մանրագիտական հոլերու (toupie) պէս՝ ակնակապիճներու մէջ կը դառնան: Վայրկեան մը յետոյ, խոր վհատութեան չարժուժով մը գգակը ձեռքերու մէջ սեղմելով կը հեծեծէ.

— Յիսուն էկիւ... ըլլալու բան է... Յիսուն-Աստուած:

Պաշտօնեան կը շարունակէ.

— Տակաւին չի պրծանք... Պատերնիդ պիտի նորոգէք...

— Ո՛չ, ո՛չ... Հեմ նորոգեր... պատս յիսուն էկիւ չարժեր... պատահածը թող պատահի...

— Պատերնիդ պիտի նորոգէք, կը շարունակէ պաշտօնեան հրամայական: չեշտով մը... որովհետեւ փլչելու մօտ է և փլչելով ճամբուն կրնայ վնաս հասցնել... Ու լաւ միտք պահեցէք այս բանը, եթէ ձեր պատը փուլ գայ, ձեր գէմ նոր տեղեկագիր մըն ալ պիտի չինեմ, ու այս անգամ, հարիւր էկիւի տուգանք մը պիտի հարկադրուիք վճարել:

Հայր Ռիվօլի խելքը գլխէն կը թռչնէ.

— Հարիւր էկիւ... Ա՛հ քամբաղդ, ինչ ժամանակի մէջ կապրենք կոր...

— Բայց ամենէն առաջ, ինծի լաւ ականջ տուէք... տասներկու սունոց պաշտօնական թուղթի մը վրայ, ոստիկանութեան վերատեսչէն արտօնութիւն պիտի խնդրէք...

— Գրել ըսուած բանն ինչ է չը գիտեմ...

— Ատ իմ գործս չէ... չատ չերկարենք, լինցաւ... Բայց աչքս վրանիդ է հա...

Հայր Ռիվօլի տուն կը մտնէ: Չըգիտէ թէ ինչ որոշում տայ. գիտէ սակայն որ վարչութիւնը խեղճերու հետ կատակ չի ընել: Եթէ պատը նորոգէ յիսուն էկիւ տուգանք. եթէ չը նորոգէ հարիւր էկիւ... Չինքը կը ստիպեն որպէս զի պատը նորոգէ միևնոյն ժամանակ նորոգելը կ'արգելեն: Ամէն պարագայի մէջ յանցաւոր է և պէտք է վճարէ... Գաղափարները կը շփոթին: Գլուխը ջաւիլ կը սկսի: Եւ, իրենց ամբողջ տարածութեան մէջ՝ իր անկարողութիւնն և չքաւորութիւնը զգալով՝ կը հառաչէ.

— Պատգամաւորն ալ, անցեալ օր, ինծի ըսաւ որ՝ ես գիւրիչիւան եմ... Թէ ամէն ինչ միայն ինծմով կըլլայ և թէ ուղածս կարող եմ ընել...

Դրացիի մը՝ որ քաղաքապետութեան անդամ ըլլալով օրէնքը գիտէ, խորհուրդ հարցնելու կերթայ.

—Այդպէս է, հայր Ռիվօլի... կըսէ իրեն այս վերջինը կարևոր մարդու մը կերպարանքով: Պէտք է այդպէս ընել... Ու որովհետեւ դուք գրել չը գիտէք բնաւ, սիրով այդ պզտիկ ծառայութիւնը կը մատուցանեմ ձեզ երախտապարտ ընելու համար... Հիմա ձեր խնդրագիր կը խմբագրեմ...

Խնդրագիրը տրուած է: Այնուհետեւ երկու ամիս կանցնի... Ոստիկանութեան տեսուչը չի պաասխաներ... Ոտանաւորներ կը շինեն, իրենց ստորագաս պաշտօնականերու կիներուն հետ կը սիրաբանեն, և կամ Պարիզ կը վազեն, ուր իրենց երեկոները կանցնեն Օլիմպիա *), Ամբաստանտները: Ամեն չաբաթ agent voyer-ն հայր Ռիվօլիի տան առջև կանգ կ'առնէ.

—Է՛, ուր մնաց արտօնութիւնը.

—Տակաւին ոչ մէկ լուր.

—Յիշեցնելու համար՝ հարկաւոր է ուրիշ նամակ մը ուղարկել.

Յուշարար նամակները իրարու յետեւէ կերթան, գրասենեակներու գերեզմանին մէջ, անբռնարարելի փոշիներու մէջտեղ, պաշտօնական թղթի վրայ գրուած խնդրագրին միանալու: Ամէն օր, հայր Ռիվօլի՝ ճամբուն վրայ եղած՝ ցրուիչին անցքը կը դիտէ: Երուիչը երբեք իր դռան առաջ կանգ չառնէր: Ու պատին լացուածքները կը մեծնան. քարերը կը փրթեն ու կը դլտորեն ճամբուն եզերքին վրայ, չաղախը կը փշրուի, —հետզհետէ կուռի, այդ միջոցին հասած ուժով սառնամանիքէ մը. ու վերքերը կը տարածուին, իրենց բորով կը կրծեն՝ այս կիսակործան խղճուկ պատը:

Փոթորկալից գիշեր մը՝ պատը ամբողջապէս կործանեցաւ. հայր Ռիվօլի՝ առաւօտուն՝ լոյսը բացուած չը բացուած՝ աղէտքը նշմարեց: Իր անկուսին մէջ, պատը՝ իր վրայ յենող՝ ցանկապարտէզին espalier-ները տապալած էր, որ այնքան գեղեցիկ պտուղներ կուտային աշնան եղանակին: Ու ոչինչ այլ ևս չը պաշտպաներ խեղճին բնակարանը. գողերն ու թափառաչրջիկները, ամեն վայրկեան, կրնան ներս մտնել, հալածել հաւերը գողնալ հաւկիթները... Ու agent voyer-ն՝ ահռելի՝ եկաւ.

—Ա՛հ... տեսաք, ես ձեզի չըսի... փլեր է, parbleu!... Շատ լաւ. հիմա ձեզի դէմ տեղեկագիր պիտի պատրաստեմ... Հայր Ռիվօլի կուլայ.

*) Olympia, Ambassadeurs-ը՝ Պարիզի այն թատրոններն են, ուր միայն զբօսնելու հարուստ հրապուրով կիներ պշլալու կերթան:

— Ես ինչ յանցանք ունիմ Ե՞ս ինչ յանցանք ունիմ Գա-
նի որ դուք ինծի արդելեցիք զայն նորոգել:

— Allons, allons... Վերջապէս եղածն ի՞նչ է որ... Առա-
ջին տուգանքին յիսուն էկիւին հետ, հարիւր յիսուն էկիւ
միայն կրնէ նոյնպէս և ծախքերը... Տարակոյս չը կայ որ կա-
րող էք վճարել այս գումարը:

Բայց հայր Ռիվօլի անկարող է այդ գումարը վճարելու: Իր
ամբողջ հարստութիւնը իր ցանկապարտէզին մէջ է և իր եր-
կու բազուկներուն մէջ՝ որ իր մշտնջենական վաստակումով
կենդանի կը պահեն՝ իր պարտէզը: Խեղճ մարդը մտմտութիւն
կրնկնի... Երբէք դուրս չելլեր տունէն, ուր ամբողջ օրը՝ գլու-
խը ձեռքերուն մէջ առած՝ առանց կրակի օջախին առջև նրա-
տուկ կը մնայ: Բարապանը (huissier) երկու անգամ ներկայա-
ցաւ: Տունը, պարտէզը արգելքի տակ առաւ: Ութ օրէն բոլորն
ալ պիտի ծախեն... Ուստի, իրիկուն մը, հայր Ռիվօլի իր ա-
թոռէն և իր առանց կրակի օջախէն կը բաժնուի, լուս առանց
ճրագի մառան կիջնէ... Խարխալելով խնձորօղիի պարապ տա-
կառներու, աշխատանքի գործիքներու և սակառներու մէջ տե-
ղերը խոշոր չուան մը կը վնասէ... Յետոյ նորէն պարտէզ
կելլէ:

Պարտէզին մէջտեղ վիթխարի ընկուզենի մը կայ, որ իր
գալարուն և հաստատ ճիւղերը կը տարածէ, անտին վերեւ, եր-
կնքին մէջ, զոր լուսնի առաջին շողերը կ'արծաթագօծեն:
Չուանը՝ բարձր ճիւղերէն մէկին կը կապէ, որովհետեւ սան-
դուխի մը միջոցով ծառը կը մագլցի և ոտտէ ոտ կը բարձրա-
նայ. յետոյ չուանը կը ձգէ իր վզին շուրջը ու մէկէն ի մէկ
ինքզինքը կը նետէ պարապութեան մէջ... Չուանը՝ սահելով
ճիւղին վրայ՝ աղաղակեց, ճիւղը սուր ճարճատիւն մը արձա-
կեց...

Հետեւեալ օրը, ցրուիչը ոստիկանութեան տեսչին արտօ-
նութիւնը բերաւ... Կախուածը տեսաւ, որ կ'օրօրուէր, չուանին
ծայրը, ցանկապարտէզին մէջ, ընկուզենիին ճիւղերուն մէջ-
տեղ ուր երկու թռչուններ կը պոռպոռային:

Յետոյ չորրորդ մը կը պատմէ.

Իրիկուն մը, ուշ ժամանակ, ապարդիւն օրուրնէ մը յե-
տոյ, ժան կընիյ (Տնցոտաւոր ժան) որոշեց տուն դառնալ...
Տուն... Այս անունը կուտար նստարանի մը՝ զոր ընտրած էր
Անվէրի հրապարակին վրայ գտնուող վանդակապատ պարտէզի
(square) մը մէջ, և որուն վրայ ամիսէ մը ի վեր կը քնանար,
իբրեւ ամպհովանի ունենալով շագանակենիի մը կամարը...
Ճիշտ այդ պահուն, բուլվարին վրայ կը գտնուէր, Վօդվիլի

Թատրոնին առջեւ, ուր՝ իրիկունէ իրիկուն աւելի սաստկացող մրցումը, իր նուազ զիրաթեցութիւնը, ինչպէս նաեւ քամբադդութիւնը, իր իրիկուան շահը արգահատելի բան մը դարձուցած էին... երկու սու... այն ալ երկու օտար սու որ չէին անցներ...

— Ինծի պէս խեղճ թշուառ... միլիոնատէրի մը... երկու չբանուկ սու տալ... ըսէք ինչ խեղճ է...

Աչքին առջեւ կուգար նորէն պարոնը... հագուած չքուած, բարձր դասու պարոն մը... սպիտակ փողկապ... չլացուցիչ լանջապան (plastron)... ոսկեցուպ գաւազան... Ու Ժան Կլոդի՝ առանց յիշի՝ իր ուսերը կը ցնցէր:

Իրեն ամենէն աւելի տհաճութիւն պատճառողը մինչեւ Անվէրի հրապարակը երթալն էր... Շատ հեռու էր և սակայն իր «անէն», իր նստարանէն չէր ուզեր վազ անցնիլ: Եւ յետոյ այնտեղ բաւական լաւ էր իրեն համար, ապահով էր որ վրնքը անհանգիստ չը պիտի ընէին... որովհետեւ ծանօթ էր պահապան—ստիկաններուն, որ վերջ ի վերջոյ իր վրայ խղճալով, թոյլ տուած էին որ քէֆին համեմատ քնանայ...

— Sacristi!... ըսաւ... ահաւասիկ վատ օր մը... Երեք չաբաթէ ի վեր... ասկէց աւելի վատ օր չէի անցուցած... Ծըշմարիտ իրաւունք ունին գանգատելու, որ առուառւրը կանգ պոսած է... Եթէ յանցանքը անգլիացիներուն է... ինչպէս կը պնդեն... ահ անիծուած անգլիացիներ... գետինն անցնիք...

Դալել սկսաւ, յուսալով որ, հարկաւ ճամբուն՝ գլխաւորտ պարոնի մը, կամ վեհանձն հարբածի մը կը հանդիպի, որ կը հանէ իրեն երկու սու կուտայ... երկու բանուկ սու, որով հետեւեալ առտուն համար հաց պիտի գնէր...

— Երկու սու... երկու բանուկ սու... ce n'est pourtant pas le Pérou *)... Կը խորհէր նոյնպէս՝ յամբօրէն քալած միջոցին... որովհետեւ իր յոգնութենէն զատ, աղեթափութիւն (hernie) մըն ալ ունէր որ զինքը սովորականէն աւելի կը տառապեցնէր:—

Եւ, մինչդեռ, քառորդ ժամէ մը աւելի է որ կը քալէր նախախնամական պարոնին հանդիպած չըլլալուն համար յուսահատ, յանկարծ, իր ոտքերուն տակ կակուղ բան մը զգաց... Նախ՝ մտքէն անցաւ, որ թերեւս կղկղանք մըն է... Բայց յետոյ խորհեցաւ, որ կրնար ուտուելիւ բան մը ըլլալ... Ո՞վ գիտէ:

*) Առաջուածք մըն է, որուն հայերէն «աշխարհք մը չէ՛ հա՛» դարձուածքը կրնայ համապատասխանիլ:

Բաղդը խեղճերը չի սիրեր երբեք ու շատ յաճախ չէ որ անոնց ուրախ անակնկալներ կը վերապահէ... Այսու հանդերձ, կը յիշէր որ, իրիկուն մը, Պլանշ փողոցին մէջ ոչխարի ազգը (gigot) մը գտաւ, բոլորովին թարմ, հիանալի ու խոշոր ազգը մը, որ՝ անտարակոյս, մտավաճառի մը կառքէն ընկած էր... Այդ ժամուն, ոտերուն տակ գտնուածը, ապահովաբար gigot մը չէր... Թերեւս côtelette մը... Թոքի կտոր մը, հորթի սիրտ մըն էր... — Խաչոր... մտածեց... անգամ մը նայինք վատ չըլլար...

Ու կռայաւ, վերցնելու համար ոտքին տակ բռնած առարկան:

— Վայ, բացագանչեց... զայն շօշափելէ յետոյ... Ուտուելիք բան մը չէ... Je suis volé (խաբուեր եմ, je suis volé դարձուածքը սակայն շատ աւելի նկարագեղ է. որպէս թէ արդէն վստահապէս իր խորհած բաներէն գտած էր, բայց իր ձեռքէն գողցան)...

Փողոցն ամայի էր... իր սովորական պտոյտը ընող ոչ մէկ ոստիկան կար... Կազի կտուցի մը մօտ գնաց ձեռքի առարկային ինչ ըլլալը իմանալու համար...

— Ա՛յ անպիտան... ալ ասոր ըսելիք չը մնաց... մըմնջեց բարձրաձայն:

Սեւ մառօքէնէ դրամապանակ մըն էր՝ արծաթապատ անկիւններով... Ժան Կընիյ բացաւ զայն, մէջը նայեցաւ... Աչքերէն մէկուն մէջ թղթադրամի տրցակ մը գտաւ... հազար ֆրանքնոյ տասը հատ թղթադրամ, որ գնդաւանդով միացած էին...

— Ա՛յ, անպիտան... կը կրկնէր...

Ու գլուխը շարժելով, կ'աւելցնէր.

— Երբ կը խորհիմ թէ մարդիկ կան, որ այս տեսակ դրամապանակներ ունին իրենց գրպանին մէջ... ու իրենց դրամապանակին մէջ, տասը հազարնոյ թղթադրամներ... Ըսէք գուր թերնիդ չի՞ շարժիր...

Դրամապանակին միւս աչքերն ալ պրպտեց... Բան չկար... Ոչ այցետուս մը... ոչ լուսանկար մը... ոչ նամակ մը... ոչ մէկ նշան, որով կարելի ըլլար գտնել այդ հարստութեան տէրը... հարստութիւն՝ զոր... իր ձեռքերուն մէջ ունէր:

Ու դրամապանակը նորէն փակելով՝ ինքն իրեն ըսաւ.

— Շիտակը, չնորհակալ եմ!... Հիմա ելլելու ոստիկանապետին ալ տանելու է ասիկա: Զիս ճամբէս ըրաւ... չատ... չատ ալ յոգնած եմ արդէն... Չէ, չիտակը... բաղդ չունիմ, այս գիշեր...

Փողոցը հետզհետէ աւելի կ'ամայանար... Ո՛չ մէկ անցորդ

կանցնէր... ոչ մէկ պահապան իր պտոյտը կը կատարէր... Ժան Կընիյ կրունկին վրայ յետ դարձաւ ու ամենէն մօտակայ ոստիկանատունը գնաց...

Ժան Կընիյ՝ ահագին դժուարութեամբ կարողացաւ զատաւորին մօտ երթալ... Իր ծուէն-ծուէն հագուստները, իր դէմքին անդնդեր ու մոխրագոյն մորթը՝ զինքը չարագործ մը կարծել տուին նախ: Ու քիչ մնաց որ վրան յարձակէին... ու ծակը նետէին... Բայց անուշութեան, հանդարտ թախանձանքի ուժով՝ վերջապէս պ. ոստիկանապետին գրասենեակը մտնելու չնորհն ստացաւ...

— Պարոն ոստիկանապետ, բարեւելով ըսաւ Ժան Կընիյ, ձեզի կը բերեմ առարկայ մը զոր գտայ, ոտքերուս տակ, հիմա, փողոցին մէջ...

— Ի՞նչ է:

— Ահաւասիկ, պարոն ոստիկանապետ... պատասխանեց խեղճ ու կրակը, իր ոսկրուտ մատներուն ծայրովը դրամապանակը երկնցնելով...

— Լաւ... Լաւ... բնական է որ... բան մըն ալ չը կայ այդ դրամապանակին մէջ, չէ:

— Դուք ձեր աչքովը նայեցէք, պարոն ոստիկանապետ...

Այս վերջինը դրամապանակը բացաւ, թղթադրամի տրցակը դուրս հանեց... համբեց... Ու զարմանքէն աչուրները կըս կըր.

— Բայց չըսես... Բայց չըսես, աղաղակեց. տասը հազար ֆրանկ կայ մէջը... Mais sapristi!... Ահագին գումար մըն է... գումար մը... ահագին... Nom d'un chien!...

Ժան Կընիյ շատ հանդարտ մնաց... Արտասանեց.

— Երբ կը խորհիմ եթէ մարդիկ կան՝ որ տասը հազար ֆրանկներ ունին իրենց դրամապանակին մէջ!... ça fait pitié! (Գթալս կուգայ):

Ոստիկանապետը՝ թափափելը դիտելէ չէր դադրեր՝ աչքերուն մէջ արտայայտութեամբ մը... այլանդակ արտայայտութեամբ մը, ուր աւելի ապշութիւն կար քան հիացում:

— Ասիկա դուք գտաք չէ... mais sapristi... պարկեշտ մարդ մըն էք դուք... Պատուական մարդ մը... Հերոս մը... Ըսելիք չըկայ... հերոս մը:

— Օ՛հ, պարոն ոստիկանապետ...

— Հերոս մը, խօսքս յետ չեմ առներ... Որովհետեւ, վերջապէս... Կարող էիք... Վերջապէս, mon brave homme... Հերոս մըն էք, հապա լինչ... Փառաւոր գործ մըն է, որ կը կատարէք այսպէս... զիւցապնական գործ մը... Ուրիշ բառ չեմ գտներ...

դուք արժանի էք Մօնթիօն *) մրցանակին... Անուննիդ ինչ է:

— Ժան Կընիյ... պարոն ոստիկանապետ:

Ոստիկանապետը՝ դէպի իր գրասենեակին ծխաշունչ առատաաղը բարձրացուց երկու վկայող բազուկներ.

— Եւ Ժան Կընիյ ալ կը կոչուի... Հիանալի է... Գրքի մը մէջ անցնելու արժանի... Արհեստնիդ.

— Աւաղ, պատասխանեց մուրացիկը... ոչ մէկ արհեստ ունիմ.

— Ինչպէս, արհեստ չունիս... Ուրեմն ձեր հասոյթներով է, որ կ'ապրիք:

— Հասարակաց ոգորմութեամբ, պարոն ոստիկանապետ... Եւ չիտակը կարող եմ պարծենալ, որ կ'ապրիմ:

— Ա՛հ, չար սատանայ! Ա՛հ, չար սատանայ!... Վախնամ գործը աւրուի... Ա՛հ, չար սատանայ!

Այստեղ, ոստիկանապետը դէմքը ծամածռեց, ու նուազ ոգեւորուած ձայնով մը.

— Մէկ խօսքով... մուրացիկ մընէք.

— Արդարեւ!... պարոն, ոստիկանապետ.

— Այո... այո...

Ոստիկանապետը լուրջ դէմք մը առեր էր... Պզտիկ լռութենէ մը յետոյ.

— Ձեր բնակավայրը... Հարցուց նորէն.

Ժան Կընիյ վհատած պատասխանեց.

— Ինչպէս կուզէք որ բնակարան մը ունենամ.

— Բնակարան չունիք.

— Աւաղ, ոչ...

— Բնակարան չունիք... Կը ծաղրէք բարեկամս.

— Ճշմարիտ, չունիմ...

— Բայց պարտաւոր էք բնակարան մը ունենալու... պարտաւորուած օրէնքով:

— Ու թշուառութիւնն ալ... պարտաւորուած է զիս բնակարան չունենալ... Գործ չունիմ... Ապրելու ոչ մէկ միջոց ունիմ... Ու երբ ձեռքս կերկարեմ... ինծի օտար սուեր կուտան... Ասկէց զատ... Ծեր եմ և հիւանդ... Աղեթափութիւն ունիմ...

— Աղեթափութիւն մը... աղեթափութիւն մը... Շատ լաւ... Խնդիրն ատոր վրայ չէ... Աղեթափութիւն մը ունիք, բայց բնակարան չունիք... Թափառաչը կուտան վիճակին մէջ

*) Համանուն Ծրանստղի մըն է, որ հաստատուած է այդ մրցանակը, իրաքանչիւր տարուայ մէջ առաքինութեան ամենէն մեծ գործը կատարող ֆրանսացին վարձատրելու համար:

էք... Դուք պարզապէս թափառաշրջկութեան յանցանքով պատ-
ժելի էք... Հերոս մը... պարզ է որ... հերոս մըն էք դուք...
Եայտ թափառաշրջիկ մըն ալ էք... Ա՛հ, բայց!... Ա՛հ բայց...
եթէ հերոսները վարձատրելու համար օրէնք չը կայ... Թափա-
ռաշրջիկներուն դէմ կայ... Ես հարկադրուած եմ օրէնքը գոր-
ծադրելու... Կը ցաւիմ, չատ կը ցաւիմ... որովհետեւ դուք լաւ,
չափազանց լաւ գործ մը կատարեցիք... բայց... ձեռքէս ինչ
կուգայ... Օրէնքը օրէնք է... պէտք է որ օրէնքը յաղթանակէ...
Diable de sacré bon homme!... Quelle idée, aussi!...

Պատժ ժամանակ, դրամապանակը ձեռքին մէջ ոստոստել
կուտար... Ու կը շարունակէր.

—Ահա, դրամապանակը... Համաձայն եմ... Ձեր տեղը, և
ձեր դրութեան մէջ, չատեր չը կան դուցէ որ զայն յետ բե-
րէին... Կընդունիմ... Ես չեմ ուզեր ըսել որ այս դրամապա-
նակը յետ բերելնուդ համար տխմար մըն էք... Ո՛չ... ընդհակա-
ռակը... Ձեր ընթացքը շատ արժանաւոր է... Վարձատրու-
թեան մը արժանի է... Ու այդ վարձատրութիւնը... զոր ես
հարիւր սուէն (5 ֆր.) վար չեմ դատեր... անշուշտ պիտի ստա-
նաք, երբ գտնենք—եթէ երբէք գտնենք—այն անձը որուն կը
պատկանին այս դրամապանակն ու մէջը գտնուողը տաս հա-
զար ֆրանկնոց թղթադրամները... Այո, բայց ասիկա ըսել չէ
թէ դուք բնակարան մը ունիք... Ու էտիւան կէտը այս է, ժան
Կընիլ... Ձիս լաւ հասկըցէք... Օրինագրքին մէջ, և ո՛չ ալ ուրիշ
տեղ, օրէնքի յօդուած մը գոյութիւն չունի, որ ձեզ ստիպէ,
փողոցին մէջէ գտնելու, թղթադրամներով լեցուն դրամապա-
նակներ... Կայ, ընդհակառակը, օրէնք մը, որ ձեզ կը ստիպէ
բնակարան մը ունենալ... Ա՛հ, աւելի լաւ ըրած պիտի ըլլա-
յիք, կապահովցնեմ ձեզ, բնակարան մը գտնելով, քան թէ այս
դրամապանակը...

—Ո՛ւրեմն... հարցուց ժան Կընիլ.

—Ուրեմն, պատասխանեց ոստիկանապետը... անաւասիկ...
Այս գիշեր բանտ պիտի պառկիք... ու վաղը ձեզ Կենտրոնական
բանտատունը պիտի ուղարկեմ...

Ու զանգակը հնչեցուց... Երկու ոստիկան ներկայացան...
Դատաւորը շարժուած մը ըրաւ... Ու մինչդեռ ժան Կընիլ բանտ
կը տանէին, հեծեծեց.

—Այ անպիտան... Իրաւցնէ, բաղդ չունիմ այսօր... Սա
անիծուած բուրժուաները, ըսէք կաղաչեմ, իրենց դրամապա-
նակը իրենց գրպանին մէջ պահէին վատ կըլլար... Ça fait pi-
tié!...

Վերջապէս հինգերորդ մը ըսաւ.

—Ներողամիտ եղէք եթէ իմ պատմութիւնս նուազ զուարթ է... քիչ առաջ կատակերդական թշուառութեան խօսքն եղաւ... ահաւասիկ եղերական թշուառութիւն... Որ նոյնքան ցաւագին է... Թէպէտն ծիծաղ չը չարժէ...

Ու սկսեց.

Առաւօտ մը, յիսուն տարեկան, շատ խեղճօրէն հագուած, հիւանդագին և քայքայուած դէմքով, գրգռուած չարժ ու ձեւերով, անյարիր խօսքերով մարդ մը դուռս զարկաւ։ Քանի մը բացատրութիւններէ յետոյ, որ ահաբեկեցին սպասուհին և զորս ան երբէք չը հասկցաւ, մարդը զիս տեսնել ուզեց... Սպասաւորները խորհուրդին թափանցողութիւնը չունին. անոնք երբ էք չեն սիրեր խեղճ մարդիկը, ու կը սարսափին տառապող դէմքերէ, ամենի դէմքերէ... Մարդուն պատասխանեցին, որ տունը չէ... որ շատ ուշ միայն տուն պիտի դառնայի... և որ գնացէ... ապահովաբար... բնաւ տուն չը դառնայի...

Մարդը՝ պահ մը, շուարեցաւ, բայց չը պնդեց ու գնաց... առանց բան մը ըսելու...

Կէս ժամ յետոյ նորէն եկաւ դուռս զարկաւ... Կ'երեւի թէ իր դէմքին արտայայտութիւնը նոյնը չէր այլ ևս... Հանգարտ էր, գրեթէ զուարթ... Սպասուհին ժպտեցաւ ու իր ժպտը քաղցրութեամբ ու բարութեամբ լեցուն էր... Չափազանց քաղաքավար ձայնով մը, ըսաւ.

—Իրեն տուէք այս չորս էջը զոր, վարը, դռնապանին մօտ գրեցի... Տուն դարձածին պէս իրեն տուէք... Չը մոռնաք... չափազանց կարեւոր է...

Աւելի ցած, գրեթէ խորհրդաւոր կերպով՝ աւելցուց.

—Խնդիրը մարդկութեան երջանկութեան վրայ է... Կը տեսնէք թէ սրբան կարեւոր է... բայց ըստ... Այդ մասին խոհարարուհիին բան մի ըսէք... խոհարարուհիները, ce sont des fourneaux *)... Մարդկութեան երջանկութիւնը հոգեբանին անգամ չէ...

Միևնոյն ժամանակ, մէկիկ-մէկիկ կը յանձնէր, թուղթի այս չորս էջերը՝ որ լայն, անջատ, տենդոտ, երբեմն շատ սեղմ, երբեմն դողդոջուն գրութեամբ մը ծածկուած էին... առանց ոչ մէկ աւրուածքի... Թանաքը, տեղ-տեղ, տակաւին չորցած չէր.

—Ըստ... ըրաւ նորէն... Ձեզ տեսնեմ...

Ու շատ արագ, առանց ուրիշ մեկնութեան, սանդուղէն վար իջաւ։

*) Յիշոց մըն է, «իշու գլուխի պէս» խօսք մէ։

Հրաւիրեալը իր սմօքինկի գրպանէն թղթի պզտիկ պլան մը հանեց զոր բացաւ:

— Եթէ մեր մէջ նրբաճաշակ, առաքինի և վօղվիլ գրող մարդիկ կան, կը խնդրեմ որ մտիկ չընեն... Ահաւասիկ այս նամակը...

Ու կարդայ...

Պարոն.

Ա՛հ, ես չատ լաւ գիտեմ պատճառը... Պատճառը որ ձեզ կը մղէ զիս չը հասկնալ... պատճառը որով զիս չէք սիրեր... որով զիս չը պիտի սիրէք երբէք, և որ դուք ամենքդ, որքան ժամանակ որ կաք, զիս պիտի ձգէք որ կառափնատին վրայ մեռնիմ, կամ թիարամներու մէջ սատկիմ, անտարբերութեամբ, առանց գթութեան ակնարկի մը, առանց վրաս նետուած նոյն իսկ հետաքրքրութեան ակնարկի մը...

Դ՛ուք, պարոններդ, առողջ ու հուժկու լաճեր էք... կաշինիդ հաստատուն, աչուընիդ պայծառ, և թեւերնիդ երկար... և թանձրափոր. Ա՛հ, այո՛ թանձրափոր... Բայց վնաս չունի... ես ալ փոր ունիմ... Աստուած գիտէ սակայն թէ ինչպէս!

Դ՛ուք, պարոններ, դուք ազնուական ծնած էք... մեծցած էք պաշտելի գաւառներու մէջ, ուր ամէն կողմէ մնունդը կը բուսնի, ուր նոյնիսկ միայն մնունդ կը բուսնի... Ու դնդերնեւնիդ ուժով լեցուն, երակներնիդ տաքուկ արիւնով լեցուն, թոքերնիդ մաքուր օդով լեցուն, ձեր երկիրներու հողեղմայլանքէն ու առատութենէն բաժնուելով՝ Պարիզ եկաք, ձեզ հետ բերելով այն շատ գեղեցիկ իդէալը՝ որ մարգագետնի թարմ խոտին, աղբիւրներու բոյրին, խորունկ անտառներու անդորրութեան ու լուսութեան... գոմերու և չոր խոտի... օ՛հ, չոր խոտի, հոտն ունի իր մէջ: Պարիզ... այո՛, Պարիզ... զսպելու համար Պարիզը, զոր՝ թոյլ տուէք ըսել, այնքան քիչ կը ճանչնաք:

Պարիզցի, ա՛հ, ամէն բան պիտի տայի, ես (որ ոչինչ չունիմ)... Պարիզցի չըլլալու համար, երբէք եղած չըլլալու համար... Թերեւս քիչ մը նուազ մահաշունչ կերպարանք ունենայի... Թերեւս քիչ մը նուազ տառապէի և գլխու վրայ քիչ մը աւելի մազ ունենայի... Ու, Պարիզ ծնած չըլլալով՝ ո՞վ գիտէ, թերեւս ձեզ ամենքիդ պէս՝ տեղ մը ազնուական ծնած ըլլայի!... Տարբեր բան, եթէ տեղ մըն ալ չը ծնէի՝ ինչ որ ինձի համար նշանաւոր բաղդաւորութիւն մը պիտի ըլլար...

Որովհետեւ ես, Պարիզի զաւակն եմ... աշխարհ եկած՝ թշուառութեան կողերէ... ու այլասեռուած ցեղերէ... Հայրս ոճիւրն եղաւ, ու մայրս թշուառութիւնը... Իմ մանկութեան ընկերներս կը կոչուէին Bi Bi Sapeur, La Gousse, Titi և Trom-

pe-la-Mort... Այս խեղճ gueux-երէն (մաւրացիկ) շատերը թիա-
րաններու մէջ մեռան, ուրիշներ կառավարատի վրայ... ու
ես որ նմանօրինակ մահ մըն ալ ինծի վերապահուած է,
թերեւս... Մինչեւ պատնըմէկ տարեկան հասակս, ցորենի
արտ մը... պղտիկ աղբիւրակ մը... գեղեցիկ անտառ մը չը տե-
սայ... Տեսայ միայն դանակներ, կատաղի աչքեր... կարմիր ձեռ-
քեր... հէգ ձեռքերը... սպանած ըլլալուն համար կարմիր...
դժգոյն ձեռքեր... խեղճ ձեռքերը... գողցած ըլլալուն համար
դժգոյն... Ուրիշ ոչինչ բան կրնային ընել:

Իմ աչքերս, ցատումի, բարկութեան և անօթութեան մէջ...
ու ասես սիրոյ մէջ... Իմ մանկութեանս այդ դանակներուն ցոլքն
ունին ու կառավարատին վրայ խորհիլ կուտան... Ու իմ ձեռ-
քերս... ան իմ ձեռքերս... ամէն բան տեսան... ու այնքան
հարկու, տխուր կամ ցաւագին բաներ տեսած ըլլալուն հա-
մար... պրկուած ձեռքեր մնային... դաժան ձեռքեր... որ ան-
կարող են այլ ես աշխատելու:

Ես Պարիզի գործարաններուն և արհեստանոցներուն ա-
մենքէն անցայ... ու բռնէր վերցուցի... ու ծուխի մէջ խեղ-
դուեցայ... ու հորեր իջայ... ու անօթի մնայի, ու ընկերնե-
րուս մէջ զիս սիրող մէկը չը գտայ... ով ազատ ժամանակ ու-
նի... աշխատանքը սիրտ կը կարծրայնէ... ու այնպէս կընէ որ
մէկըմէկ ատեն...

Աւելի յետոյ, երեսուն տարեկան հասակիս, տան մը մէջ
ծառայութեան մտայ, ուր իրերը այս ընթացքով չէին ընթա-
նար... Բուրժուայի տուն մըն էր... հոտ պէտք էր ձգել ձեռք
(voyouter) ընել... Հոտ մէկ տէր մը կար... փոխանակ երկու
հարիւրի... Հոտ պէտք էր հնազանդիլ... Ու համակերպեցայ...
Ջղերս զսպեցի... մնացածն ալ ժամանակը կատարեց... Որով-
հետեւ գիւղի մէջ էինք, դաշտերս մէջ և անտառներու մէջ
երկաւ պտոյտներ ըրի, խանդաղատեցայ... ու պղտիկ աղբիւր-
ներն... ճամբաներու եզերքի մարդերու ծաղիկներուն խօսե-
ցայ... Ու թշուառութենէ ծերացած արդէն, աշխատանքէ յոգ-
նած, երիտասարդ երազներ, տասնըվեց տարեկան հասակի
երազներ ունեցայ...

Յետոյ Պարիզ դարձայ նորէն... ու փողոցներու մէջ յա-
ծեցայ, գիշերը՝ գինետան մէջ... մուր խղիկներու մէջ անցու-
ցի... ու վերջապէս ընկերներ գտայ... Պարիզիս ու պատուա-
կան մարդիկ էին, կիսով չափ հարբածներ, լոյիկ եղած գինով-
ներ... կէս-մակկերներ, կատարեալ մակկերներ... տրտում և
զուարթախոհ... գթոտ և վայրագ... զորս կը սիրէի որովհետեւ
գէթ իրենք... սիրտ մը ունէին:

Այ՛ո, բայց այս ամենը ապրիլ չէ...

Իրերն զգալ ու իր թշուառութիւնը պտըտցնել մէկ տեղէն միւս տեղ, գիշերէն մինչեւ ցորեկ, գինեկամառէն՝ բանտ, ասիկա ապրիլ չէ...

Ու ահա ինչ որ կուզեմ ընել հիմա։ Տարբեր բան եթէ զիս այն աստիճան առնն որ յիմարատան մը մէջ... Թիարանի մը մէջ... կամ հիւանդանոցի մը մէջ արգելափակեն...

Վերջապէս, հասարակական վտանգ մը կուզեմ դառնալ...

Ես պիտի երթամ, Պարիզի ժողովուրդին սիրոյն և գիւղացիներուն համար զոր կը սիրեմ, ես պիտի երթամ... այ՛ո... պիտի երթամ այցելութիւն տալու՝ նոյն իսկ եթէ հարիւր միլիոն ըլլան՝ բոլոր պատգամաւորներուն, բոլոր ընտրողներուն, և իրենց պիտի հարցնեմ թէ վերջապէս ալ հերիք չը պիտի սեպին այնքան ժամանակ մեր ամենուս քթին խնդալը (ils n'ont pas enfin fini de se foutre de notre gueule à tous ?)

Պարիզի ժողովուրդի սիրոյն և գիւղացիներուն համար, զոր կը սիրեմ, պիտի երթամ... այ՛ո... պիտի երթամ Լուքէն գտնեմ, պիտի ստիպեմ զինքը՝ ինծի հետեւիլ՝ Ռօքէթ փողոցի, Շառօն փողոցի, Ֆօպուս Անթուանի բոլոր զինեալներուն մէջ, բանուորավարձի վճարման օր մը... Ու զինքը պիտի տանիմ՝ բոլոր քաղաքատները ուր փակցուած են զօրծ ճարելու ինչորանքները ու զինքը պիտի մտցնեմ ամէն խեղճ ու ազտոտ բնակարանները, ուր քսութիւնները իրենց հէգ հիւանդ գլուխը կը չարժեւորկին...

Պարիզի ժողովուրդեան սիրոյն և գիւղացիներուն համար զոր կը սիրեմ... Պիտի երթամ... այ՛ո... պիտի երթամ հրաւիրելու Պելճիգայի թագաւորը, Կալլէսի իշխանը *) ու ամէն թագաւորները ու ամէն հարուստները ու ամէն երջանիկները որ գան ինծի հետ Մօնմարթրի պոռնկատները, բանտերը, կենտրոնական բանտը... որպէս զի ամէնան իրենց հարստութենէն և իրենց երջանկութենէն... և որպէս զի սորվին սիրել բոգերը և գուրգուրալ մակլէրներուն, և այն բոլոր պատուական սրտերուն վրայ որոնց դէմ օրէնքներ, ճարպիկ ոստիկաններ, կառավարատներ ցցած են, մինչդեռ պէտք էին պալատներ, արձաններ բարձրացնել։

Պարիզի ժողովուրդին սիրոյն և գիւղացիներուն համար զոր կը սիրեմ, պիտի երթամ... այ՛ո... պիտի երթամ կնահածօրէն հրաւիրեմ Պ. Ժօռօ Լէլը և Պ. Ռուժօնը որպէս զի ինծի

*) Պելճիգայի ներկայ թագաւորը, Կալլէսի իշխանը որ Անգլիոյ ներկայ թագաւորն է՝ հռչակաւոր վայելողներ են մանաւանդ երբ Պարիզ գան.

հետևին Պարիզի թատրոններուն, Լուվրի թանգարանին... ու Ակադեմիաներուն, և Սօրբոններուն մէջ... Ça fait pitié!

Ու Հռոմ պիտի երթամ Պապին ըսելու՝ որ Պարիզի ժողովուրդը և գիւղացիները զոր կը սիրեմ, իր Եկեղեցիին, իր քահանաներուն, իր աղօթքներուն երեսն անգամ տեսնել չեն ուզեր... Ու պիտի երթամ թագաւորներուն, կայսրերուն, Հանրապետութիւններուն ըսեմ, որ ժամանակն անցած, բանը բուսած է ալ իրենց բանակներուն, իրենց կատարածներուն... այնքան արիւնին, այնքան արյունքին՝ որով՝ առանց պատճառի, կը ծածկեն տիեզերքը...

Ու իմ դանակս ու կարմիր ձեռքերս պիտի անցկայնեմ այդ բոլոր զէնքերուն, այդ բոլոր փորերուն վրայէ:

Ու այսպէս կատարուած պիտի ըլլայ իմ հասարակաց վտանգի օրերս...

Հաստատ յոյսն ունիմ ձեզ շուտով տեսնելու, օր մը՝ երբ դուք գործերով ծանրաբեռնուած չէք ըլլար, երբ կանուխ տուն կը դառնաք, և երբ չափազանց փութկոտութիւն ցոյց չէք տար...

Չափազանց փութկոտ մարդիկը ես չատ չեմ սիրեր: Պատմողը նամակը ծալլեց գրպանը դրաւ... Ամենքը լռեցին ու ես ծոծրակիս վրայէ պզտիկ ցուրտ հովի մը անցնելն զգացի...

ՏԻԳՐԱՆ

Մ Օ Ն Ն Ա Վ Ա Ն Ն Ա

ԴՐԱՄԱ ԵՐԵՔ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Մօրիս Մէսէնիկի

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն

Պրինցիվալէյի վրանը ձոխ անկարգութիւն։ Մետաքոէ և ոսկեկար
զորգեղէններ։ Ձէնք ու զրահ. կոլտ-կոլտ թանկագին մուշտակեղէններ.
մեծ արկղեր, կիսաբաց, գլխէգլուխ լի գոհարեղէններով և փողփողուն
պատառներով։ Խորքում՝ վրանի կապերտածածկ մուտքը։

Առաջին հետաւում

Պրինցիվալէյն, սեղանի մօտ կանգնած, դասաւորում է մագաղաթ-
ները, յատակագիծները և ղէնքերը։ Մտնում է Վէդիօն։

Վէ՛ի՛0. Այս նամակը Հանրապետութեան պատուիրակը
տուեց ձեզ յանձնելու համար։

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ՛. Տրիվուլչիօն։

Վէ՛ի՛0. Այո՛, երկրորդ պատուիրակը, մէսսէր Մալա-
դուրան, դեռ չի վերադարձել։

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ՛. Ինչպէս երեւում է, կարծուածի չափ
հեշտ չի եղել յաղթել Վենետիկի զօրքին, որ սպառնում է Ֆլօ-
րէնցիային Կաղէնտինի կողմից... Տուր ինձ նամակը։ (Առնում
է նամակը ու կարդում)։ Վերջին անգամ, անյապաղ ձերբակա-
լելու սպառնալիքով, հաղորդում է ինձ բացարձակ հրաման՝
Քոյսը բացուելուն պէս յարձակում գործել քաղաքի վրայ...
Շատ լաւ, բայց գիշերը դեռ ինձ է պատկանում... Անյապաղ
ձերբակալումն... Ի՛նչ հեշտ են կարծում ամեն բան... Երևակա-
յում են, թէ այդ հնադար խօսքերով կարող են երկիւղ ազդել
մի մարդու, որ սպասում է իր կեանքի եղակի ժամին... Սպառ-
նալիք, ձերբակալումն, ամբաստանութիւն, դատ և քլ ինչ... Ես
գիտեմ, թէ ինչ է նշանակում այդ բոլորը... Շատ վաղուց նրանք

կալանաւորած կը լինէին ինձ, եթէ կարողանային, եթէ համար-
ձակուէին...

ՎԷԴԻՍ. Մէսսէր Տրիվուլչիօն, նամակը տալիս, ասաց, որ
ինձնից անմիջապէս յետոյ գալու է ձեզ հետ խօսելու:

ՊՐԻՆԶԻՎԱԼԼԷ. Վերջապէս սիրտ արեց գալ, հա... Վճռա-
կան րոպէ է լինելու, և այդ աղուէսը, այդ ճիւղք թանաքալէզը,
որ ներկայացնում է այստեղ Խլօրէնցիայի ամբողջ գաղտնի
ոյժը և չի համարձակուում նայել երեսիս, այդ դեղնած մար-
դուկը, որ մահից աւելի է ատում ինձ, այնպիսի գիշեր անց
կը կացնի այստեղ, որ երբէք չէր կարող սպասել... Շատ կա-
րեւոր հրամաններ է ստացել ուրեմն, որ գալիս է տեսնելու
հրէշին իր վանդակում... Ո՞վքեր են պահապան կանգնած դռան
մօտ:

ՎԷԴԻՍ. Երկու ծեր զինուոր ձեր գալիցիական վաշտից:
Աչքիս այնպէս երեւաց, թէ մէկը Հէռնանդօն է. միւսն էլ, կար-
ծեմ, Դիէզօն պէտք է լինի...

ՊՐԻՆԶԻՎԱԼԼԷ. Հիանալի է. նրանք ինձ կը լսեն, եթէ
նոյն իսկ հրամայեմ չղթայել Հայր Աստուծուն... Մուկն ընկ-
նում է: Ծրագները վառել տուր: Ժամի քանիսն է:

ՎԷԴԻՍ. Իննից անց է:

ՊՐԻՆԶԻՎԱԼԼԷ. Մարկօ Կօլօննան դեռ չի վերադարձել...

ՎԷԴԻՍ. Պահապաններին պատուիրեցի ձեզ մօտ բերել
նրան՝ հէնց որ անցնի խրամի այս կողմը:

ՊՐԻՆԶԻՎԱԼԼԷ. Նա պէտք է իննից առաջ լինէր այստեղ,
եթէ մերժէին առաջարկս... Վճռական ժամն է այժմ... և իմ կեանքս
այդ ժամի մէջն է ամփոփուած, ինչպէս այն թնտարած առա-
գաստներով խոշոր նաւերը, որ բանտարկեալները իրանց անուրջ-
ների հետ մտցնում են ապակիէ գնդի մէջ... Որքան տարօրինակ
բան է, որ մարդ կարողանում է իր ամբողջ բախտը, իր խելքն
ու սիրտը, երջանկութիւնն ու թշուառութիւնը պարփակել
այնպիսի անկայուն բանի մէջ, ինչպէս է կանացի սէրը... Ես
ինքս կը ծիծաղէի դրա վրայ, եթէ ծիծաղիցս զօրեղ չի լինէր
այդ... Մարկօն չի վերադառնում... Ուրեմն հարսը գալու է...
Գնա տես՝ վառել են արդեօք այն լապտերը, որ ինձ յայտնելու
է. թէ ընդունուած է առաջարկս, զնա տես՝ երևում է արդեօք
բարձունքում լապտերի յոլքը, նախակարապետը այն կնոջ դող-
դողուն քայլերի, որ անձնատուր է լինում բոլորի փոխարէն և
որ գալիս է փրկելու ոչ միայն իր ժողովուրդը, այլ և ինձ...
Բայց չէ, ես ինքս կերթամ տեսնելու... Թող ոչ մէկի աչքերը,
նոյն իսկ մտերիմ աչքեր, չը տեսնեն իմ աչքերիցս առաջ, չու-
շայնեն թէկուզ մի րոպէով, այն երջանկութիւնը, որին ես

սպասում եմ մատաղ մանկութեանս առաջին օրերից... (Գնում ե դեպի վրանի մուտքը, բարձրացնում ե կապեքսը եւ նայում ե դեպի խաւար տարածութիւնը)։ Լոյս է երևում, Վէդիօ... Տես, ինչպէս փողփողում է, ինչպիսի շլացուցիչ շողք է գցում խաւարի մէջ... Այդպէս էլ պէտք է լինէր. միմիայն այդ աշտարակն էր արժանի կրելու այդպիսի լուսատու մի կանթեղ... Տես՝ ինչպէս թեքուած է ստուերի վրայ*)... Միակ լոյսն է այդ, որ փայլում է քաղաքի վերեւում... Օ՛, երբէք Պիզան չի բարձրացրել դէպի երկինք աւելի չքեղ, աւելի երկար սպասուած և աւելի անակնկալ մի ծաղիկ... Օ՛, իմ սիրասուն պիղաղջիներ, այս երեկոյ դուք կ'ունենաք մի անմոռանալի տօն, և ես աւելի կը հրճուեմ, քան եթէ փրկած լինէի իմ մայրենի քաղաքը...

Վէ՛րիօ. (Բռնելով նրա կոնից)։ Մտնենք վրանը։ Մէսսէր Տրիվուլչիօն մօտենում է այն կողմից...

ՊրիՆՉԻՎԱԼԼԷ. (Ներս մտնելով)։ Ճիշտ ես ասում, դեռ պէտք է... Խօսակցութիւնը կարճ կը կտրեմ։ (Գնալով դեպի սեղանը եւ սնցելով վրայի քղթերը)։ Մօտդ են նրա երեք նամակները...

Վէ՛րիօ. Երկու նամակ կայ միայն։

ՊրիՆՉԻՎԱԼԼԷ. Երկուսը, որ ես բռնեցի, մէկն էլ այսօրուայ հրամանագիրը...

Վէ՛րիօ. Ահա ձեր բռնած նամակները. այս էլ այսօրուայ հրամանագիրը, որ դուք ձմրտեցիք...

ՊրիՆՉԻՎԱԼԼԷ. Ոտնաձայնը լսում եմ...

(Պահապաններից մէկը բարձրացնում է դռան կապերտը, Տրիվուլչիօն ներս է մտնում)։

Երկրորդ տեսարան

Նայն անձիք եւ Տրիվուլչիօն

Տրիվուլչիօ. Նկատել էք այն արտասովոր լոյսը, որ նշաններ է ուղարկում աշտարակի գլխից...

ՊրիՆՉԻՎԱԼԼԷ. Ձեր կարծիքով՝ նշաններ են այդ...

Տրիվուլչիօ. Անկասկած... Խօսելու բան ունեմ հետներդ, Պրինչիվալլէ...

ՊրիՆՉԻՎԱԼԼԷ. Խօսեցէք։ Մենակ թող մեզ, Վէդիօ. բայց չատ մի հեռանալ։ Դու ինձ պէտք ես...

(Վէդիօն դուրս է գնում)։

*) Պիզայի թեք աշտարակը, որ XII դարումն է շինուած և աշխարհի հրաշալիքներից մէկն է համարում։

Յ. Թարգմ.

ՏՐԻՎՈՒԼՁԻՍ. Դուք լաւ գիտէք, Պրինչիվալլէ, թէ որքան յարգում եմ ես ձեզ: Ես շատ անգամ ապացուցել եմ այդ՝ այնպիսի փաստերով, որոնք պէտք է յայտնի լինեն ձեզ, բայց շատերն էլ անյայտ են մնացել ձեզանից, որովհետեւ Յլօրէնցիայի քաղաքականութիւնը, որ ուրիշները նենգաւոր են անուանում և որ խոհեմ է միմիայն, պահանջում է, որ շատ բաներ երկար ժամանակ թաքուն մնան նոյն իսկ նրանց համար, որոնց նա յայտնում է իր ամենախորին գաղտնիքները: Մենք ամենքս հպատակում ենք նրա խորիմաստ հրամաններին և պէտք է ամեն մէկս արիութեամբ տանենք նրա գաղտնի խորհուրդների ծանրութիւնը, որոնք մեր հայրենիքի բանական ոյժն են կազմում: Բաւականացէք իմանալով, որ ես երբէք անմասն չեմ եղել այն վճիռներից, որոնք հետզհետէ, չը նայած ձեր երիտասարդ հասակին և աննշան ծագումին, ձեզ հրամանատար դարձրին Հանրապետութեան լաւագոյն զօրքերի: Ասենք, դուք երբէք առիթ չը տուեցիք զղջալու այդ բանի համար: Բայց մի ժամանակից ի վեր մի կուսակցութիւն է կազմուել ձեր դէմ: Չը դիտեմ, դուցէ ես զանցառու եմ գտնուում իմ խիստ պարտականութեան դէմ, այսպէս տեղի տալով իմ ջերմ բարեկամութեանը և յայտնելով ձեզ այն, ինչ որ նիւթւում է ձեր դէմ, բայց բծախնդիր պարտաճանաչութիւնը աւելի աղետարեր է յաճախ, քան ամենայանդուրն վեհանձնութիւնը: Ուստի և յայտնում եմ ձեզ, որ ձեզ սաստիկ մեղադրում են ձեր դանդաղ կոտորեան և վարանումների համար: Կան և այնպիսիները, որոնք նոյն իսկ կասկած են յայտնում ձեր հաւատարմութեան մասին: Վերջերս էլ ստացուել են որոշ ամբաստանութիւններ, որոնք հաստատում են նրանց կասկածները: Այդ ամբաստանութիւնները շատ վատ տպաւորութիւն են գործել ժողովի այն մասի վրայ, որ արդէն հակառակ էր ձեզ: Բանն այնտեղ է հասել, որ քննութեան առարկայ են դարձրել՝ ձեզ ձերբակալելու և դատի ենթարկելու հարցը: Բարեբախտաբար, ինձ չուտ իմաց տուին: Ես իսկոյն գնացի Յլօրէնցիա և, ի հարկէ, հեշտութեամբ հերքեցի նրանց փաստերը ուրիշ փաստերով: Ես երաշխաւորեցի ձեր մասին: Եւ ձեզ մնում է արդարացնել իմ վստահութիւնը, որին չի խառնուել երբէք կասկածի մի նշոյլ: որովհետեւ մենք կորած ենք, եթէ դուք իսկոյն չը սկսէք գործել: Վենետիկի նահանգապետի զօրքերը Բիբբիէնայում նեղն են գցել իմ պաշտօնակից մէսսէր Մալադուրային: Մի ուրիշ զօրք էլ հիւսիսից է առաջ խաղում Յլօրէնցիայի վրայ: Մեր քաղաքի փրկութեան հարցն է վճռուելու այժմ: Ամեն ինչ կարելի է չիտկել, եթէ դուք վաղն և եթ յարձակում գործէք ու առնէք

Թշնամու քաղաքը, ինչպէս սպասուած են մերոնք: Այն ժամանակ Հանրապետութիւնը հնար կունենայ ուրիշ գործի դնել իր լաւագոյն զօրքը և միակ զօրապետին, որին միշտ պատկուած է յաղթանակը, և մենք կը կարողանանք մուտք գործել Ֆլորէնցիա դուիններս բարձր և յաղթական հանգէսով, որ տեսնելով՝ ձեր երեկուայ թշնամիները կը դառնան ձեր ամենաջերմ երկրպագուները և կուսակիցները...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Ասացի՛ք բոլորը, ինչ որ ունէիք ասելու...

ՏՐԻՎՈՒԼՉԻՕ. Գրեթէ բոլորը, թէպէտև լռութեան տուեցի դէպի ձեզ տաճած անկեղծ սէրս, որ մեր ծանօթութեան ընթացքում հետզհետէ սաստկացել է միայն... Եւ սաստկացել է այդպէս, չը նայելով այն դժուարին դրութեանը, որի մէջ մեզ գցում են յաճախ մեր գրեթէ հակասական օրէնքները, որոնք պահանջում են, որ գլխաւոր հրամանատարի իշխանութիւնը վտանգաւոր բոլէշներում հաւասարակշռուի Ֆլորէնցիայի գաղտնի ոյժով, որի նուաստ ներկայացուցիչն եմ ես այսօր, զէնքերի այս փայլի մէջ...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Ձեր գրածն է այս հրամանաթուղթը, որ մի քիչ առաջ ստացայ...

ՏՐԻՎՈՒԼՉԻՕ. Այո:

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Ձեր գիրն է, հաստատ:

ՏՐԻՎՈՒԼՉԻՕ. Անպայման. ինչու էք կասկածում:

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Իսկ այս երկու նամակների գիրը՝ չէք ճանաչում:

ՏՐԻՎՈՒԼՉԻՕ. Շատ կարելի է... Ձը գիտեմ... Ի՞նչ է գրած մէջները... Կուգէի իմանալ...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Ձուր է, ես գիտեմ:

ՏՐԻՎՈՒԼՉԻՕ. Ախ, ուրեմն այդ այն նամակներն են, որ դուք բռնել էք, ինչպէս որ ես ուզում էի... Ինչպէս տեսնում եմ, զուր չէ անցել փորձս:

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Այստեղ երեխայ չը կայ, որ խաբէք: Թողէք այդ ողորմելի խորամանկութիւնները, և կարճ կապենք այս խօսակցութիւնը, որին շտապում եմ վերջ տալ, որպէս զի ստանամ վերջապէս այն վարձատրութիւնը, որին չի հաւասարուիլ երբէք ոչ մի յաղթական հանգէս Ֆլորէնցիայում... Այս նամակներում դուք մատնում էք ինձ, ստորաբար կեղծելով իմ բոլոր արածները, առանց մի յարգելի պատճառի, լոկ նրա համար, որ հաճոյք էք զգում մարդկանց վնասելով և նախապէս անհրաժեշտ արդարացումն էք ուզում պատրաստել Ֆլորէնցիայի ապերախտ ազահութեան համար, որ վախենում է, ինչպէս միշտ, թէ մի գուցէ շատ թանկ նստի իրան այն երախտիքը,

որ պարտական է յաղթական վարձկանին... Ամեն ինչ յեղաշըրջուած է ձեր գրածում այնքան նենդ հմտութեամբ, որ լինում են բոպէներ, երբ քիչ է մնում ինքս կասկածեմ իմ անմեղութեան մասին... Ձեր գծուծ, աչքածակ նախանձը, ձեր ժանտ ատելութիւնը ամեն ինչ աղաւաղել է, ցեխոտել ու թունաւորել այստեղ, սկսած պաշարման առաջին շաբաթից մինչև այս երանելի ժամը, երբ աչքերս բացուեցին և երբ ես ուզում եմ արդարայնել վերջապէս ձեր ստոր կասկածները: Ես իսկութեամբ արտագրել տուեցի այս նամակները և ուղարկեցի Ֆլորէնցիա: Ես բռնեցի այնտեղից ստացուած պատասխանները: Հալած իւղի տեղ են դնում ձեր բոլոր գրածները: Ի՞նչպէս չը հաւատան ձեզ, երբ հէնց իրանք են տուել ձեզ մեղադրանքների նիւթը: Ինձ զատում են սոսանց ինձ լսելու և ի հարկէ մահուան են դատապարտում... Ես գիտեմ, որ այսուհետեւ, թէկուզ երկինք վերանամ ու հրեշտակ դառնամ, չեմ կարող արգարանալ ինձ վրայ բարդուած մեղադրանքներից... Ուստի և յատկում եմ վերս, փչում եմ ձեր անգոր շղթաները և ձեզնից առաջ եմ ընկնում... Մինչև այժմ ես չեմ դաւաճանել ձեզ, բայց այդ նամակները կարգալուց ի վեր խորխորատ եմ փորում ձեր ոտների տակ... Այս երեկոյ ես ծախելու եմ ձեզ, ձեզ և ձեր թշուառական տէրերին, այնքան դաժանօրէն, այնքան անգթօրէն, որքան ձեռքիցս կը գայ... Եւ իմ կարծիքով, երբէք կեանքումս ես արած չեմ լինիլ աւելի օգտաւէտ գործ, քան այն, որ այդպէս կը ստորացնեմ, որքան ոյժս ների, միակ քաղաքը, որ նենգութիւնը քաղաքացիական առաքինութիւնների շարքն է դասում և ուղում է, որ ամբողջ աշխարհը կառավարեն խորամանկութիւնը, կեղծաւորութիւնը, ապերախտութիւնը, քսութիւնը և ստութիւնը... Հէնց այս երեկոյ, իմ շնորհիւ, ձեր դարաւոր թշնամին, այն քաղաքը, որ ձեզ արգելում է և պիտի արգելի, քանի որ կանգուն մնայ, դուրս գալ ձեր պարիսպներից և անբարոյականացնել ամբողջ աշխարհը, հէնց այս երեկոյ, իմ շնորհիւ, Պիզան կը փրկուի ու նորից ոտքի կը կանգնի ձեզ դարձեալ դիմադրաւելու համար... Օ՛, զուր էք վեր կենում, զուր են ձեր շարժումները... Բոլոր պատրաստութիւնները տեսնուած են, ասածս անխուսափելի է. դուք իմ տրամադրութեան տակ էք, և ինձ թւում է, թէ Ֆլորէնցիայի բախտն էլ ձեզ պէս իմ ձեռքումն է գտնուում...

ՏՐԻՎՈՒԼՁԻՕ. (Հանելով դաշոյնը եւ արագ հարուած հասցնելով Պիեյիվալլեյին) Ոչ տակաւին... Քանի դեռ ազատ են ձեռքերս...

ՊԻԵՅԻՎԱԼԼԷ. (Հարուածից բնագոյաբար պաշտպանուե-

լով կռովը՝ բարձրացնում է դառնի շելը, որ դիպչում է երեսին: Նա բռնում է Տրիվուլչիոյի դասակը: Ախ, այդպէս... Ես չէի սպասում, որ այդպէս կը յնչուէր սարսափից... Դէ այժմ դուք իմ ձեռքումն էք և զգում էք ի հարկէ, որ ամեն մի ձեռքս արժէ ձեր ամբողջ անձին... Ահա և ձեր դաշոյնը... Բաւական է, որ մի քիչ ցածայնեմ... Կարծես ինքն իրան փնտռում է ձեր կողորդը... Չէք էլ թարթում աչքերդ... Միթէ չէք վախենում...

ՏՐԻՎՈՒԼԶԻՑԻՍ. Ոչ, խրէք դաշոյնը մարմնիս մէջ, Իրաւունք ունէք: Ես կեանքս զոհում էի...

ՊՐԻՆԶԻՎԱԼԼԷ. (Բաց բողբոջով ձեռքը): Օ՛, միթէ... Բայց այն ժամանակ՝ զարմանալի բան է ձեր արածը... Նոյն-իսկ շատ հազուադէպ... Մեր զօրականների մէջ քչերը կը գտնուեն, որոնք ընդունակ լինէին այդպէս դիմադրաւել մահուան, և ես չէի կարող կարծել, որ այդ փոքրիկ մարմնի մէջ...

ՏՐԻՎՈՒԼԶԻՑԻՍ. Դուք ամէնքդ, որ սովոր էք շարունակ մերկացնել սրերդ, կարծում էք միշտ, թէ չը կայ ուրիշ քաջութիւն, բայց այն քաջութիւնից, որ փայլում է սուսերի ծայրին...

ՊՐԻՆԶԻՎԱԼԼԷ. Շատ կարելի է՝ ճիշտ է ձեր ասածը... Շատ լաւ... Դուք ազատ չէք, բայց ձեզ ոչ ոք մատ չի դիպցնիլ... Ես և դուք զանազան աստուածների ենք ծառայում... (Մտքով երեսից ծորով արիւնը): Օ՛, արիւն է գալիս... Վարժ ձեռք էք ունեցել... Մի քիչ շտապ էր հարուածը, բայց բաւական ուժգին... Այսպէս թէ այնպէս մի մազ էր պակաս... Այժմ ասացէք, խնդրեմ, ինչ կանէիք դուք, եթէ այսպէս ձեռքերիդ լինէր այն մարդը, որ քիչ էր մնում ձեզ մի ոստիւնով ուղարկէր այն աշխարհը, ուր ոչ ոք չի ուզում գնալ...

ՏՐԻՎՈՒԼԶԻՑԻՍ. Ես չէի խնայիլ նրան:

ՊՐԻՆԶԻՎԱԼԼԷ. Ես ձեզ չեմ հասկանում... Շատ տարօրինակ մարդ էք... Խոստովանեցէք, որ ձեր նամակները անարգ բաներ են... Ես թափել էի արիւնս երկը մեծ ճակատամարտերում. ես անում էի, ինչ որ կարող էի, ամին ինչ ձեզ էր պատկանում, ես արիաբար ծառայում էի նրանց, որոնք զօրավար էին կարգել ինձ, և ոչ մի նենգ խորհուրդ չէր ծագել սրտումս... Այդ ձեզ պէտք է յայտնի լինի, որովհետեւ դուք լրտեսի պէս հսկում էիք ինձ վրայ... Եւ սակայն, ձեր նամակներում, չը գիտեմ ինչից զրդուած, ատելութիւնից, նախանձից թէ խնայողութիւնից, դուք յեղաշրջում էք իմ բոլոր արածները, որոնց

մի միակ նպատակն էր ձեր փրկութիւնը, դուք խաբոււմ էք գիտակցաբար, կուտակոււմ էք սուտ ստի վրայ...

ՏՐԻՎՈՒԼՁԻՕ. Գրածներս սուտ էին. բայց ինչ փոյթ է միակ նպատակն էր ձեռքից բաց չը թողնել այն վտանգաւոր բոլէն. երբ զինուորականը՝ փրկելով երկու կամ երեք յաղթանակներից—մի յաղթանակ աւել, մի յաղթանակ պակաս՝ այդպէս է լինում միշտ—այլ եւ չի ուզելու հպատակուել իր տէրերին, որոնց զործիքն է նա և որոնք աւելի բարձր նպատակ ունեն, քան նա: Այդ ժամը հասել էր, և այն, ինչ որ պատահեց այժմ, հաստատում է այդ: Ֆլորէնցիայի ժողովուրդը ձեզ սիրում էր արդէն աւելի, քան պէտք է: Մեր պարտքն է չքաջնել այն կուռքերը, որ նա ստեղծում է իր համար: Սկզբում նա մի քիչ նեղանում է մեզնից, բայց նա մեզ ստեղծել է հէնց նրա համար, որ մենք արգելք լինենք իր վտանգաւոր քմահաճոյքներին: Նա իր դերն ու կոչումը աւելի լաւ է հասկանում, քան կարծում են շատերը, և երբ մենք խորտակում ենք այն, ինչ որ նա պաշտում է աւելի, քան պէտք է, նա զգում է, որ մենք՝ հակառակելով իրան՝ հէնց իր կամքն ենք կատարում: Ահա թէ ինչու եւ վճռեցի, որ եկել էր ժամը, երբ պէտք էր մատնացոյց անել կուռքը: Եւ նախազգուշացնում էի Ֆլորէնցիային: Նա առաջուց գիտէր, թէ ինչ միտք ունէին իմ ստերը...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Ժամը չէր հասել, և երբէք չէր հասնիլ, եթէ ձեր սոսկալի նամակները...

ՏՐԻՎՈՒԼՁԻՕ. Բայց կարող էր հասնել, և այդ բաւական էր...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Ի՞նչ, Լոկ կասկածի հիման վրայ հանգիստ արտով զոհել մի անմեղ մարդու՝ այնպիսի մի վտանգի առաջն առնելու համար, որ թերեւս կարող էր սպառնալ...

ՏՐԻՎՈՒԼՁԻՕ. Անհատը ոչինչ է Ֆլորէնցիայի դիմաց:

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Բայց ուրեմն դուք հաւատում էք Ֆլորէնցիայի բախտին, նրա անելիք գործին, նրա կեանքի խորհրդողին... Ուրեմն Ֆլորէնցիան մի ինքնուրոյն բան է, որ եւ չեմ կարողանում հասկանալ...

ՏՐԻՎՈՒԼՁԻՕ. Այո, Ֆլորէնցիան մի էութիւն է, և եւ մի միայն նրան եմ հաւատում: Մնացածը ոչինչ է ինձ համար...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Ո՛վ գիտէ, գուցէ հէնց այդպէս է... Եւ դուք իրաւացի էք, որովհետեւ հաւատում էք զրան... Եւ հայրենիք չունեմ... Եւ չը գիտեմ... Ինձ թւում է երբեմն, որ պէտք էր ինձ հայրենիք ունենալ... Բայց եւ ունեմ մի ուրիշ բան, որ դուք չէք ունենալ երբէք, և որ ոչ մի մարդ չի ունե-

ցել այն աստիճան, որ աստիճան ես ունեմ ես կունենամ այդ բանը իսկոյն և եթ, հէնց այս ըոպէին, հէնց այստեղ... Այդ արժէ ամէն լան... Դէ այժմ անջատուենք իրարից, մենք ժամանակ չունենք կշռադատելու այս հանելուկները... Մենք հետու ենք իրարից և դրեթէ հպում ենք միմեանց... Ամէն մարդ իր ճակատագիրն ունի... Մէկի ղեկավարը մի գաղափար է լինում, մէկինը՝ մի բաղձանք... Եւ ձեզ համար նոյնքան ծանր կը լինէր փոխել ձեր գաղափարը, որքան ինձ համար՝ իմ բաղձանքը... Ով իր մէջ աւելի կրակ ունի, քան միջակ մարդիկ, չի կարող մինչեւ վերջ չը գնալ այդ գաղափարի կամ բաղձանքի յետեւից... Եւ արդար է այդ անելիս, որովհետեւ ստիպուած է անել, չի կարող չանել... Մնաք բարեւ, Տրիվուլչիօ. մեր ճանապարհները զատուում են իրարից... Տուէք ինձ ձեր ձեռքը:

ՏՐԻՎՈՒԼՉԻՕ. Դեռ ոչ... Ես կը մեկնեմ ձեզ իմ ձեռքը, երբ պատիժը...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Թող այդպէս լինի: Դուք տարւում էք այսօր, դուք կը տանէք վաղը... (Կանչելով): Վէդիօ...

(Մտնում է Վէդիօ)

ՎԷԴԻՕ. Տէր իմ... Այդ բնչ է... Դուք վիրաւորուած էք... Արիւն է դալիս...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Ոչինչ... Կանչիր դոսն մօտ կանգնած պահապաններին: Թող այս մարդուն տանեն, բայց լաւ վարուեն հետը, վնաս չը հասցնեն... Սա իմ թշնամին է, բայց այնպիսիներին, որոնց ես սիրում եմ... Թող ապահով տեղ փակեն, այնպէս որ ոչ ոք չը տեսնի... Նրանք պատասխանատու են իմ առաջ սրա համար: Նրանք ազատ կը թողնեն սրան, երբ ես հրամայեմ...

(Վէդիօն դուրս է անում Տրիվուլչիօյին: Պրինչիվալլէն հայելու մէջ դիտում է երեսի վերքը):

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Իրաւ, այնպէս է հոսում արիւնը, կարծես չնչեքակա կտրուած լինի... Վէրքը խոր չէ, բայց ճեղքել է դէմքիս կէտը... Ո՞վ կարող էր կարծել, որ այդ ճլեքը ու դեղնած մարդը... (Վէդիօն ցնցում է անում). Կատարեցիր հրամանս...

ՎԷԴԻՕ. Այո, տէր: Բայց դուք կորուստի էք մատնում ձեզ...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Կորուստի եմ մատնում ինձ... Ախ, ես կուզէի այսպէս կորուստի մատնել ինձ մինչի մահ... Կորուստի եմ մատնում ինձ, Վէդիօ... Բայց երբէք և ոչ մի մարդ աշխարհում չի կարողանալ այսպէս, արդար վրէժ հանելով հանդերձ, ձեռք բերել միակ երջանկութիւնը, որի մասին երազել է

այն օրից ի վեր, երբ սովորել է երազել... Ես կը սպասէի այդ ժամին աչքս ջուր կտրած, ես հետամուտ կը լինէի նրան առնանասական յանցանքների միջով, որովհետեւ ինձ անհրաժեշտ էր այդ ժամը, որովհետեւ ինձ էր պատկանում նա. և ահա այժմ, երբ իմ բարի աստղը առաջարկում է ինձ այդ պարզեւր իւր արծաթէ շողերի վրայ, յանուն արդարութեան, յանուն գթութեան, դուք ասում էք ձեզ ու ձեզ՝ նա կորուստի է մատնում իրան... Խեղճ մարդիկ՝ զուրկ ներքին կրակից... Խեղճ մարդիկ՝ զուրկ սէրից... Բայց միթէ չես զգում, որ իմ բախտը կշռում են այժմ երկնքում, և որ նա գերակշռում է բիւր բախտեր, բիւր սիրահարների վիճակ... Օ՛հ, ես լաւ գիտեմ այդ, հասնում է ինձ համար այն րոպէն, երբ այն մարդիկ, որոնց վիճակուած է մի վսեմ յաղթանակ կամ ահռելի աղէտ, բարձրանում են յանկարծ իրանց կեանքի գագաթը, երբ ամեն ինչ մղում է նրանց դէպի վեր, ամեն ինչ ձօճում է նրանց այնտեղ, ամէն ինչ տրւում է նրանց... Իսկ ի՞նչ փոյթ մնացեալը և բոլոր գալիքը... Մենք հաստատ դիտենք, որ մարդս ստեղծուած չէ այդ բաների համար, և որ նրանք, որոնք կրում են այդ բաները, ընկճւում են նրանց ծանրութեան տակ...

ՎԷՒԻՕ. (Մօտեցալով՝ ձեռքին բռնած սպիտակ՝ լաթի կտորներ): Արիւնը չի կտրւում... Թոյլ տուէք կապեմ վէրքը...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Ի՞նչ արած, կապէք... Բայց տեսէք, վիրակապը չը ծածկի աչքերս, չը բռնի բերանս... (Նայելով հայելուն): Օ՛հ, կարծես վիրարոյժից փախչող հիւանդ լինեմ, մինչդեռ մի սիրահար եմ, որ շուտով թռչելու է իր սէրին ընդ առաջ... Այդպէս չէ, այդպէս չէ... Իսկ դու, իմ Վէդիօ, իմ խեղճ Վէդիօ, ի՞նչ ես անելու...

ՎԷՒԻՕ. Ես կը հետեւեմ ձեզ, տէր իմ...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Ոչ, թող տուր ինձ... Ես չը գիտեմ ուր կերթամ, ինչ կանեմ... Դու փախիր միայնակ. այն ժամանակ ոչ ոք հետամուտ չի լինիլ քեզ, մինչդեռ եթէ տիրոջ հետ... Բաւական ոսկի ունեմ այս արկղերի մէջ. վերցրու. քոնն է բոլորը. ինձ պէտք չեն այլ եւս... Լծել են սայլերը, հաւաքել են տաւարն ու ոչխարը...

ՎԷՒԻՕ. Վրանի առջեւն են:

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Շատ լաւ. ուրեմն հէ՛նց որ նշան տամ, կանես ինչ որ պէտքն է... (Հեռուից լսում է հրացանի ճայթիւն): Այդ ի՞նչ է...

ՎԷՒԻՕ. Հրացան են արձակում առաջապահատում...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Բայց ում հրամանով... Սխալուած կը լի-

նեն անշուշտ... Իսկ եթէ նրա վրայ են արձակում... Զգուշացրել ես արդեօք...

ՎԷԴԻՍ. Այո... Այդ անկարելի է... Մի քանի պահապաններ եմ կանգնեցրել, որ երեւալուն պէս բերեն ձեզ մօտ...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Գնա տես...

(Վէդիօն դուրս է գնում):

Մ Ի Ր Ո Ր Դ Ե Խ Ս Ա Ր Ա Ն

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ ԵՆ ՎԱՆՆԱ

Մի րոպէ Պրինչիվալլէն մենակ է մնում: Վէդիօն վերադառնում է, բարձրացնում է մուտքի կապերուը, դաժ ձայնով ասում է՝ «Տէր իմ» ու հեռանում, և Մօննա Վաննան, փաթաթուած մի երկար վերարկուի մէջ, երևում է դռան մէջ ու կանգնում շեմքում: Պրինչիվալլէն ցնցում է և մի քայլ է անում նրան ընդ առաջ:

ՎԱՆՆԱ. (Խեղդուած ձայնով): Դուք ուզել էիք, որ գամ եկայ...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Արիւն եմ տեսնում ձեր ձեռքի վրայ: Վիրաւորուած էք...

ՎԱՆՆԱ. Գնդակը քերծեց ուսս...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Ե՞րբ և որտեղ... Սոսկալի է այդ...

ՎԱՆՆԱ. Երբ մօտենում էի բանակին:

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Բայց ո՞վ արձակեց գնդակը...

ՎԱՆՆԱ. Զը գիտեմ: Արձակեց ու փախաւ:

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Յոյց տուէք ինձ լէրբք:

ՎԱՆՆԱ. (Մի քիչ բանալով վերաբերի վերին մասը): Ահա այստեղս է...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Զախ ստինքից վերև... Բայց խոր չէ... կաշին է միայն քերծուել... Ցաւում է...

ՎԱՆՆԱ. Ոչ:

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Ուզում էք ասեմ, որ վիրակապ դնեն:

ՎԱՆՆԱ. Ոչ:

(Լռութիւն):

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Հաստատ վճռել էք...

ՎԱՆՆԱ. Այո:

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Պէտք է արդեօք ձեզ յիշեցնել այն պայմանները, որ...

ՎԱՆՆԱ. Աւելորդ է. գիտեմ:

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Զէք զղջում արդեօք...

ՎԱՆՆԱ. Միթէ անհրաժեշտ էր զալ առանց զղջալու...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Զեր ամուսինը համաձայն է...

ՎԱՆՆԱ. Այո:

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Ես կարող եմ ձեզ ազատութիւն տալ... Դեռ ժամանակ ունէք. եթէ ուզում էք, կարող էք հրաժարուել... Ուզում էք...

ՎԱՆՆԱ. Ոչ:

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Ինչու չէք ուզում...

ՎԱՆՆԱ. Որովհետեւ ժողովուրդը սովամահ է լինում, իսկ վաղը կը կոտորուի...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Այդ է ձեր վճռի միակ պատճառը...

ՎԱՆՆԱ. Ուրիշ ինչ պատճառ կարող էր լինել...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Հասկանում եմ, որ մի առաքինի կի՛ն...

ՎԱՆՆԱ. Այո:

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Որ սիրում է իր ամուսնուն:

ՎԱՆՆԱ. Այո:

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Խորագին սիրով...

ՎԱՆՆԱ. Այո:

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Դուք ոչինչ չունէք հագած այդ վերարկուի տակ...

ՎԱՆՆԱ. Ոչինչ: (Վաննան մի շարժում է անում, ուզելով վերցնել վերարկուն վրայից: Պրինչիվալլեն ձեռքի շարժումով կանգնեցնում է նրան):

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Տեսաք վրանի առաջ խմբուած սայլերն և արջառ ու ոչխարը:

ՎԱՆՆԱ. Այո:

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Այնտեղ երկու հարիւր սայլ կայ գլխէ գլուխ լի Տօսկանայի ամենաընտիր ցորենով: Երկու հարիւր սայլ էլ՝ բարձած Սիէննայի չրջակայքից՝ բերած մրգերով, գինիով և խոտով. բացի այդ՝ երեսուն սայլ վառօդ կայ, որ Գերմանիայից է ստացուած, և տասնուհինգ սայլակ՝ կապար: Այդ սայլերի շուրջը կիտուած են վեց հարիւր ապուլիական եզներ և հազար երկու հարիւր ոչխար: Այդ բոլորը ձեր հրամանին են սպասում Պիզա գնալու համար: Ուզում էք, որ գնան...

ՎԱՆՆԱ. Այո:

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Եկէք վրանի զուռը: (Բարձրացնում է դռան կապերը. հրաման է փոխ եւ ձեռնով նշան է անում: Բարձրանում է լայնատարած ու խուլ ժխո: Կերոնները վառում են: Նրելում է, որ կերոնները իրար են գալիս. լսում է խաղաղանքի ճալիւն: Սայլեր տեղերիցը շարժում են: Լսում է եզների բառաչ, ոչխարների մայոց եւ ոտների դոփիւն: Վաննան եւ Պրինչիվալլեն, վրանի շեմքին կանգնած, մի բոպէ նայում են, քի ինչպէս աստղագառդ երկնքի տակ այդ անագին կարաւանը

նեռանում է կեռոնների լոյսով)։ Այս երեկոյից ի վեր Պիզան, ձեր չնորհիւ, այլ եւս չի քաղցիւ նա անյաղթելի կը դառնայ այսուհետեւ ու վաղը, հրճուանքից հարբած, նա ցնծութեան երգ կերգի և կը փառաբանի իր յաղթանակը, որին այլ եւս յոյս չունէր ոչ որ... Հէրիք է ձեզ այդ...

ՎԱՆՆԱ. Այո։

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Փակենք վրանի դուռը, և տուէք ինձ ձեր ձեռքը։ Օգը դեռ չի սառել, բայց գիշերը ցուրտ կը լինի։ Զէնք չունէք վրաներդ, թոյն չէք վերցրել հետներդ...

ՎԱՆՆԱ. Ոչինչ չը կայ վրաս՝ բացի այս վերարկուից ու սոսնամաններից։ Այդ էլ հանեցէք վրայիցս, եթէ վախում էք, թէ որոգայթ եմ լարում ձեր դէմ։

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Վախս իմ մասին չէ, այլ ձեր...

ՎԱՆՆԱ. Ժողովրդի կեանքը այդ բաններից բարձր է իմ աչքում...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Շատ լաւ, շատ ճիշտ էք ասում...—Եկէք, հանգստացէք այստեղ...—Զօրականի անկողին է այս՝ կոշտ ու կոպիտ, նեղ ինչպէս մի դերեզման և քիչ արժանի ձեզ։—Հանգըստացէք այստեղ, այս գեղմերի և վայրի ցուլերի մորթիների վրայ, որոնք չը գիտեն դեռ եւս, թէ որքան քնքոյշ ու պատուական է կնոջ մարմինը... Գլխատակներդ դրէք այս մորթին, որ աւելի փափուկ է... Լուսանի մորթի է այս, որ մի երեկոյ յաղթութիւնից յետոյ ինձ ընծայեց մի աֆրիկական թագաւոր... (Վաննան, վերահկուի մէջ պինդ փաթաթուած, նստում է անկողնի վրայ)։—Ճրագի լոյսը ընկնում է աչքներիդ... Ուզում էք փոխեմ տեղը։

ՎԱՆՆԱ. Ինչպէս ուզում էք...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. (Մոռնկ է չոքում անկողնի առաջ ու բռնում շարժումով բռնում է Վաննայի ձեռքը)։ Զիւզաննա... (Վաննան ձգում է նստած տեղը և զարմացմամբ նայում նրան)։—Օհ, Վաննա, իմ Վաննա...—Զէ որ ես էլ սովոր էի այդպէս անուանել ձեզ... Իսկ այժմ քիչ է մնում ուշաթափուեմ այդ անունը արտասանելիս... Այնքան երկար ժամանակ նա փափուկած մնացել է սրտումս, որ այլ եւս չի կարողանում դուրս գալ ափսոսանքից առանց խորտակելու իր բանտը... Նա հէնց ինքը իմ սիրտն է և ես չունեմ ուրիշ սիրտ... Նրա վանկերից իւրաքանչիւրը ամփոփում է իր մէջ իմ ամբողջ կեանքը, և երբ ես արտասանում եմ այդ վանկերը, կեանքս է՝ որ փչում եմ բերանիցս... Ես ընտելացել էի նրան, նա ինձ ծանօթ էր թւում. ես այլ եւս չէի վախենում նրանից, որովհետեւ վարժուել էի արտասանել, և ահա երկար տարիներ, ամեն օր, ամեն

Ժամ ես կրկնում էի այդ անունն՝ իբրեւ սիրոյ վեհ խօսք, որ պէտք էր քաջութիւն ունենալ արտասանելու վերջապէս, թէկուզ միայն մի անգամ, այն անձի ներկայութեամբ, որին ուզողում էի այդ ապարդիւն կոչը... Կարծում էի, թէ չրթունքներս ստացել են այդ անուան ձեւը, կարծում էի, թէ ակնկալած բուպէիս նրանք կարտասանեն այդ անունը այնքան քաղցրութեամբ, այնքան պատկառանքով, այնքան խորին ու խոնարհ ապաւինութեամբ, որ լսողը կը հասկանար նրա մէջ ամփոփուած ամբողջ կսկիծը և անհուն սէրը... Բայց ահա այսօր, երբ վերջապէս չրթունքներս ուղղում են այդ կոչը ոչ թէ մի ուրուականի, այլ այդ անուան տիրոջը, կարծես թէ այլ եւս այն անունը չէ այդ... Ես դժուարանում եմ այլ եւս ճանաչել այդ անունը, երբ նա դուրս է գալիս չրթունքներիցս այսպէս ընդհատուած հեծեմանքներից և ճնշուած երկխօսից... Ա՛խ, չափազանց շատ բան եմ ամփոփել այդ անուան մէջ. և ահա նրա մէջ ամփոփուած ամբողջ գործիս և անհուն սէրս խորտակում են ոյժերս և խեղդում ձայնս...

ՎԱՆՆԱ. Ո՞վ էք դուք:

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Ձէք ճանաչում ինձ... Ուրեմն, ոչինչ չէք նկատում.—Օ՛խ, ինչ հրաշալիքների հետքեր է ջնջում անցնող ժամանակը... Բայց չէ, այդ հրաշալիքները գոյութիւն ունէին միայն իմ աչքում... Եւ իրօք, աւելի լաւ է գուցէ, որ մոռացուած լինէին նրանք... Այլ եւս յոյսեր չեմ տածիլ և պակաս կ'ափսոսամ... Ձէ, ես ոչինչ եմ ձեզ համար... Ես մի խեղճ մարդ եմ միայն, որ մի բոպէ, մի վայրկեան տեսնում է իր կեանքի նպատակը... Մի թշուառական եմ ես, որ ոչինչ չի խնդրում, որ նոյն-իսկ չը գիտէ այլ եւս, թէ ինչ պէտք է խնդրել, բայց որ կուզէր, եթէ այդ կարելի է, ասել ձեզ նախ քան ձեր հեռանալը, թէ ինչ էք եղել դուք նրա կեանքում և ինչ էք լինելու մինչ ի մահ...

ՎԱՆՆԱ. Դուք ինձ ճանաչում էք ուրեմն... Բայց ո՞վ էք դուք...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Դուք չէք տեսել երբեք այն մարդուն, որ այժմ նայում է ձեզ, ինչպէս մարդ կարող էր նայել գիւթական աշխարհում իր բերկրութեան և գոյութեան աղբիւրին... և ինչպէս ես յոյս չունէի երբ և իցէ նայել ձեզ...

ՎԱՆՆԱ. Ձէ, չեմ տեսել... Գոնէ չեմ յիշում...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Այո, դուք չը գիտէիք... և ես հաւատացած էի, աւանդ, որ դուք չը գիտէիք այլ հա...—Դուք ութ տարեկան էիք, իսկ ես տասներկու՝ այն ժամանակ, երբ ես աշաղին անգամ հանդիպեցի ձեզ...

ՎԱՆՆԱ. Ո՞րտեղ...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Վենետիկում, յունիս ամսի մէջ, մի կիրակի օր—Հայրս, որ մի ձեր ոսկերիչ էր, մի մարգարտէ վըզնոց էր բերել ձեր մօրը... Ձեր մայրը հիացած դիտում էր մանեակի մարգարտները... Ես թափառում էի ձեր պարտէզում... Եւ ահա այդ ժամանակ ես ձեզ տեսայ յանկարծ մրտենիների պուրակում, մի մարմարէ աւազանի մօտ... Ձեր ոսկէ նրբաչէն մատանին ընկել էր ջուրը... Դուք լալիս էիք աւազանի ասիին... Ես մտայ ջուրը—Քիչ էր մնում խեղդուէի, բայց հանեցի մատանին և դրեցի ձեր մատին...—Դուք համբուրեցիք ինձ և երջանիկ էիք զգում ձեզ...

ՎԱՆՆԱ. Մի չիկահեր տղայ էր այդ, Զիանէլլօ անունով...—Զիանէլլօն ես դու...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Այո...

ՎԱՆՆԱ. Ո՞վ կարող էր ձեզ ճանաչել...—Բացի այդ՝ ձեր դէմքը փաթաթուած է լաթերով... Ձեր աչքերն եմ միայն տեսնում...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. (Փոքր ինչ յետ փաշտով վիճակապը). Այժմ կարողանում էք ճանաչել...

ՎԱՆՆԱ. Այո... Թերեւս... Ինձ թւում է... Որովհետեւ դեռ ես մանկական ժպիտ կայ ձեր երեսին... Բայց դուք վիրաւորուած էք և արիւն է գալիս վերքիցը...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Օ՛հ, այդ դատարկ բան է ինձ համար... Բայց այ ձեզ՝ իրաւունք չունէին վիրաւորելու...

ՎԱՆՆԱ. Բայց արիւնը անցնում է լաթերի միջով... Թոյլ տուէք ուղղեմ վիրակապը... Լաւ չի կապուած... (Շիտկում է լաթերը). Շատ վիրաւորներ եմ ինամել այս պատերազմի ընթացքում... Այո, այո, յիշում եմ այժմ... Կարծէք տեսնում եմ մեր պարտէզի նոսնենիները, դալիներները և վարդի թփերը... Ո՞րքան անգամ խաղ ենք արել միասին այդ պարտէզում կէսօրից յետոյ, երբ աւազը տաքանում էր ու փայլիլում արեւի առաջ...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Ես հաշուել եմ. տասներկու անգամ... Ես յիշում եմ մեր խաղացած բոլոր խաղերը և ձեր ասած բոլոր խօսքերը...

ՎԱՆՆԱ. Յետոյ, մի օր ես սպասում էի ձեզ, որովհետեւ ես ձեզ շատ էի սիրում. դուք լուրջ էիք ու քաղցրաբարոյ, ինչպէս մի փոքրիկ աղջիկ և վարւում էիք ինձ հետ ինչպէս մի ջահիլ թագուհու հետ... Դուք չեկաք...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Հայրս ինձ տարաւ Վենետիկ... Նա գնում էր Աֆրիկա—Այնտեղ մենք մոլորուեցիք անապատներում...

Յետոյ ես գերի ընկայ արաբների ձեռքը, այնուհետև թիւրքերի, սպանիացիների և ես իմ էլ ում ձեռքը... Երբ վերջապէս վերադարձայ Վենետիկ, ձեր մայրը մեռած էր արդէն ու պարտէզը աւերուած... Ես կորցրի ձեր հետքը, յետոյ նորից գտայ՝ չնորհիւ ձեր գեղեցկութեան, որ անջնջելի նշան էր թողնում ամէն տեղ...

ՎԱՆՆԱ. Դուք իսկոյն ճանաչեցիք ինձ, հէնց որ մտայ վրանը...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Եթէ վրանս մտնէիք տաս հազար հոգի, բոլորդ էլ միակերպ հագնուած ու միանման գեղեցիկ, ինչպէս տաս հազար քոյրեր, որոնց կարող էր չփոթել նոյն-իսկ հարազատ մայրը, ես վեր կը կենայի, ձեր ձեռքից կը բռնէի ու կ'սէի՝ «Ահա նա...» Զարմանալի է, այնպէս չէ, որ սիրասուն մի պատկեր կարողանում է այդպէս ապրել մարդու սրտում... Այո, ձեր պատկերը ապրում էր իմ սրտում, և ապրում էր այնքան կատարեալ կերպով, որ փոփոխուում էր այնտեղ, ինչպէս փոփոխուում է մարդու պատկերը իրական կեանքում։ Եւ այսօրուայ պատկերը փոխարինում էր այնտեղ երէկուայ պատկերին... Նա բացում էր հետզհետէ իբրև մի ծաղիկ, նա գեղեցկանում էր օր օրի վրայ, և տարիներն անցնելով զարգարում էին նրան այն բոլոր շնորհներով, որով հասակը օժտում է մեծացող մանուկին... Բայց երբ նորից տեսայ ձեզ, ինձ սկզբում թուաց, թէ աչքերս խաբում են ինձ... Շատ չքննող և շատ ճիշտ էին իմ յիշողութիւնները... Բայց նրանք դանդաղ էին զարգացել և յետ էին ընկել իրականութիւնից... Նրանք անհամարձակ էին եղել և սիրտ չէին արել յատկացնել ձեզ այն սքանչելի փայլը, որ այդ բոլոր շնորհից ինձ յանկարծ... Ես նման էի այդ ժամանակ այնպիսի մի մարդու, որ յիշում է մի ծաղիկ, որ նա տեսել է երբեմն մի ամպամած օր պարտէզով անցնելիս, և որ տեսնում է յանկարծ նոյնպիսի բերաւոր ծաղիկներ՝ արեւի շողքերում փայլփլող դաշտում... Ես կրկին տեսնում էի այդ ճակատը, այդ մազերը և այդ աչքերը, և կըրկին գտնում էի պաշտելի դէմքում՝ նրան կեանք տուող հողին, բայց որովհետև տեսածս գեղեցկութեան առաջ՝ ամօթապարտ էին մնում այն բոլոր հրապոյրները, որ ես մթերում էի երեւակայութեանս մէջ երկար օրեր, անվերջ ամիսներ և ձիգ տարիներ, որոնց լուսատուն միմիայն մի յիշողութիւն էր, որ շատ երկար ճանապարհ էր ընտրել և այդ պատճառով յետ էր ընկնում իրականութիւնից...

ՎԱՆՆԱ. Այո, դուք սիրում էիք ինձ, ինչպէս մարդիկ

առհասարակ սիրում են այդ հասակում. բայց ժամանակը և անջատումը զեղազարդում են սէրը...

ՊՐԻՆԶԻՎԱԼԼԷ. Մարդիկ ասում են յաճախ, թէ ունեն կամ ունեցել են միայն մի հատիկ սէր իրանց ամբողջ կեանքում, և շատ քիչ է պատահում, որ այդ ճիշտ լինի... Իրանց կիրքը կամ իրանց անտարբերութիւնը նրանք զարդարում են՝ մի հատիկ սիրոյ համար ստեղծուած մարդկանց չնաչխարհիկ թշուառութեամբ, և երբ այդ վերջին տեսակ մարդկանցից մէկը, գործ ածելով մի և նոյն խօսքերը, որոնք լոկ քաղցրահնչիւն խաբէութիւն են եղել ուրիշների բերանում, յայտնում է միայն զուտ իսկութիւնը, իր կեանքը մաշող վշտալի ճշմարտութիւնը, դուրս է գալիս, որ բախտաւոր սիրահարների բերնում ծամծամուած խօսքերը կորցրել են իրանց ամբողջ ոյժը, ամբողջ կարեորութիւնը, և նա, ով որ լսում է, ակամայ վերագրում է այդ խեղճ խօսքերին, այդ նուիրական խօսքերին, որոնք այնքան վշտալի են յաճախ, այն գունդիկ արժէքը և այն ծաղրելի իմաստը, որ ունեն նրանք մարդկանց բերանում...

ՎԱՆԵԱ. Ես այդպէս չեմ անիլ. Ես հասկանում եմ այդ սէրը, որին մենք բոլորս սպասում ենք մեր կեանքի արշալոյսին, և որից հրաժարւում ենք վերջում, որովհետեւ տարիները, — թէպէտ ես շատ տարիքով չեմ, — հանգցնում են մեր սրտում շատ ու շատ բաներ... — Բայց երբ դուք՝ գերութիւնից ազատուելուց ու վենետիկից անցնելուց յետոյ գտաք իմ հետքը, ինչ իմացաք իմ մասին, ինչ էր պատահել ինձ հետ... Չաշխատեցի՞ք արդեօք նորից հանդիպել նրա հետ, որին սիրում էիք այդպէս...

ՊՐԻՆԶԻՎԱԼԼԷ. Վենետիկում իմացայ, որ ձեր մայրը մեռել էր անանկացած և որ դուք ամուսնանում էիք մի տոսկանացի իշխանի հետ, որ ամենահզօր և ամենահարուստ մարդն էր Պիզայում և որ դարձնելու էր ձեզ մի տեսակ պաշտելի ու երջանիկ թագուհի... Իսկ ես կարող էի առաջարկել ձեզ միայն թափառաշրջիկ խեղճութիւնը մի հայրենազուրկ ու անտուն արկածախնդրի... Ինձ թուաց, թէ ինքը ճակատագիրը պահանջում էր, որ սէրս յանձն առնի այն զոհաբերութիւնը, որ ես արեցի... Ես շատ անգամ եմ պտոյտ-պտոյտ եկել այս քաղաքի շուրջը, բռնել նրա պարիսպներից, կպել նրա քաղաքադռների շղթաներիցը, որպէս զի տեղի չը տայի ձեզ տեսնելու փափագիս, որպէս զի չը վրդովէի այն սէրն ու երջանկութիւնը, որ դուք վայելում էիք... Ես սկսեցի վարձով տալ սուրս ու բազուկս. երկու-երեք պատերազմ մղեցի. անունս հռչակուեց վարձկանների մէջ... Ես սպասում էի ուրիշ օրերի, առանց այլ

ևս ոչինչ յուսալու, մինչև որ Ծլօրէնցիան ինձ ուղարկեց Պիզայի դէմ...

ՎԱՆՆԱ. Ո՛րքան փոքրոգի ու թոյլ են տղամարդիկ, երբ սիրում են մէկին... Ձը սխալուէք բնաւ, ես ձեզ չեմ սիրում, և չեմ կարող ասել՝ սիրել եմ արդեօք երբ և իցէ... Բայց ինքը՝ սիրոյ էութիւնը, սիրոյ հոգին՝ զայրագին գոչում է սրտումս, երբ այն մարդը, որ իր կարծիքով ինձ սիրելիս է եղել այնպէս. ինչպէ՞տ՝ կարող էր պատահել՝ որ ես ինքս սիրէի, քաջութիւն չի ունեցել այլ ևս սիրոյ դիմաց...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Քաջութիւն ունէի... Ձեր կարծածից շատ աւելի քաջութիւն էր հարկաւոր ինձ, որպէս զի կարողանայի վերադառնալ... Բայց երբ վերադարձայ, շատ ուշ էր արդէն:

ՎԱՆՆԱ. Շատ ուշ չէր այն ժամանակ, երբ դուք հեռացաք Վենետիկից: Երբէք շատ ուշ չէ, երբ մարդ գտնում է այնպիսի սէր, որ ընդունակ է լցնել մի ամբողջ կեանք... Նա յետ չի քաշուիլ: Երբ սպասելիք չունի այլ եւս, նա դեռ յոյս է տածում... Երբ նա յոյս չունի այլ եւս, նա դեռ ճիգ է թափում... Եթէ ես սիրէի ձեզ պէս, ես... է՛հ, չեմ կարող ասել, թէ ինչ կանէի այն ժամանակ... Բայց հաստատ գիտեմ, որ բախտի բերմունքը չէր կարողանալ այդպէս հեշտ ու հանգիստ, առանց մաքառման խլել իմ ձեռքից իմ միակ յոյսը... Ես հետամուտ կը լինէի նրան օր և գիշեր... Ես կասէի ճակատագրին, «Ճանապարհ տուր, անցնում եմ»... Ես կը ստիպէի քարերին իմ կողմնակիցը դառնալ, և անհրաժեշտ կը լինէր, որ իմ սիրած մարդը իմանալը այդ ու ինքը յայտնէր վճիռը և այն՝ ոչ մի անգամ, այլ մի քանի անգամ...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. (Փնտելով վանեայի ձեռքը): Դու նրան չեմ սիրում, Վաննա:

ՎԱՆՆԱ. Ո՛ւմ:

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Գուրդօյին...

ՎԱՆՆԱ. (Յետ քաշելով ձեռքը): Մի որոնէք ձեռքս, ես չեմ տալ ձեզ ձեռքս: Ինչպէս տեսնում եմ, աւելի պարզ պէտք է խօսեմ: Երբ Գուրդօն առաւ ինձ, ես միայնակ էի ու զրկեթէ չքաւոր: Դուք լաւ գիտէք, որ միայնակ ու չքաւոր կանայք, մահաւանդ՝ երբ նրանք սիրուն են ու անընդունակ յարմարութիւն ճարպիկ ստախօսութեան, շատ շուտով զոհ են դառնում անթիւ բամբասանքների... Գուրդօն ուշք չը դարձրեց այդ բամբասանքներին. նա հաւատով վերաբերուեց ինձ, և այդ հաւատը դուր եկաւ ինձ: Նա ինձ երջանիկ դարձրեց, որքան մարդ կարող է երջանիկ լինել, երբ ստիպւում է հրաժարուել այն՝ մասամբ ցնորամիտ երազներից, որոնք կարծես մարդկա-

լին կեանքի համար չեն ստեղծուած... Եւ դուք կը տեսնէք նոյնպէս,—որովհետեւ ես գրեթէ յոյս ունեւմ այդ բանին,—որ մարդ կարող է բախտաւոր լինել առանց շարունակ ապասելու այնպիսի երջանկութեան, որ ոչ մի մարդ չի ճաշակել աշխարհումս... Ես սիրում եմ այժմ Գուրգոյին այնպիսի սիրով, որ նուազ օտարոտի է, քան այն սէրը, որ դուք կարծում էք թէ զգում էք, բայց անկասկած աւելի անսիրտի, աւելի հաւատարիմ և աւելի կայուն... Այդ սէրն է ինձ վիճակել բախտը. աչքերս կայր չէին, երբ ես ընդունում էի այդ վիճակը. ոչ մի ուրիշ սէր տեղ չի գտնիլ սրտումս, և եթէ խորտակուելու է այդ սէրը, ես չեմ լինիլ խորտակողը... Դուք սխալ էք ընկել թէ ասածներս մէջ կային խօսքեր, որոնք առիթ տուեցին ձեզ սխալուելու, պէտք է յայտնեմ ձեզ, որ խօսքս մեր մասին չէր. ես խօսում էի յանուն այնպիսի սիրոյ, որ մեր սիրտը նշմարում է մեր կեանքի արշալոյսին, որ գոյութիւն ունի թերեւս, բայց որ իմ սէրը չէ, ոչ էլ ձեր սէրը, որովհետեւ դուք չէք արել այն, ինչ որ անել կը տար անշուշտ այդպիսի մի սէր...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Դուք շատ խիստ էք դատում իմ սէրս, Վաննա, և առանց լաւ իմանալու այն բոլորը, ինչ որ նա կրել է, ինչ որ նա արել է, որ կարողացել է վերջապէս արժանանալ այս երջանիկ բոլորին, որի առաջ կը յուսահատուէին բոլոր ուրիշ սէրերը... Բայց եթէ նոյն-իսկ ոչինչ արած չը լինէր, ես հաստատ գիտեմ, որ գոյութիւն ունի նա, ես, որ նրա զոհն եմ, ես, որ կրում եմ նրան այստեղ, ես, որի կեանքը առշուրտում է նա և որի մէջ մեռցրել է նա այն ամենը, որով հրճուում ու ցնծում են մարդիկ... Այն օրից, երբ նա գերել է սիրտս, ես ոչ մի քայլ չեմ արել, ոչ մի շարժում չեմ գործել, որի միակ նպատակը չը լինէր մօտենալ այդ սէրին, թէկուզ մի բոլորով, որպէս զի քննէի ճակատագիրս առանց ձեզ վնասելու... Ա՛խ, հաւատապէք ինձ, Վաննա, և դուք պէտք է ինձ հաւատաք, որովհետեւ մարդ հեշտ է հաւատում նրանց, որոնք յոյս չունեն այլ եւս և ոչինչ չեն խնդրում... Ահա դուք իմ վրանումն էք և իմ տրամադրութեան տակ... Հէրիք է մի խօսք ասեմ, հէրիք է ձեռքս մեկնեմ, և ես կունենամ այն ամենը, ինչ որ կարող է ունենալ մի սովորական սէր... Բայց կարծեմ դուք էլ ինձ պէս լաւ գիտէք, որ իմ ասած սէրը ուրիշ պահանջ ունի. ուստի և խնդրում եմ, որ այլ եւս կասկածով չը վերաբերուէք նրան... Այդ ձեռքը, որ ես բռնում էի, որովհետեւ կարծում էի, թէ հաւատալու էք ինձ, ես այլ եւս չեմ հպիլ նրան ոչ մատներովս, ոչ շրթունքներովս, բայց կուզէի գոնէ, Վաննա, որ այն բոլորին, երբ անշատուելու ենք ընդմիջաւ, դուք համոզուած լի-

նէք, որ այդպիսի սիրով եւս ես այնքան սիրել ձեզ և որ իմ սէրս կանգ է առել միայն անհնարի առաջ...

ՎԱՆՆԱ. Հէնց այն պատճառով, որ որեւէ բան անհնար է թուացել նրան, ես դեռ յոյս ունեմ կասկածով վերաբերուել նրան... Մի կարծէք, թէ ես կուրախանայի, եթէ տեսնէի, որ նա յաղթահարում է զարհուրելի արգելքներ, մի կարծէք նմանապէս, թէ ես ծարաւի եմ գերմարդկային փորձութիւնների... Պատմում են, թէ Պիզայում մի օր մի կին իր ձեռնոցներից մէկը գցել է աշտարակի յետևը, առիւծների փոսը և խնդրել իր սիրականից, որ դնայ, այնտեղից բերի Սիրականի ձեռքին ուրիշ զէնք չի եղել, բացի մտրակից: Բայց և այնպէս նա իջել է գուրը, ճանապարհ է բացել առիւծների արանքով, վերցրել ձեռնոցը, յետ առել տիկնոջը՝ ծունկ չոքած առաջին, և այնուհետև հեռացել է անխօս ու այլ եւս չի վերադարձել երբէք... Իմ կարծիքով, նա շատ մեղմ է վարուել. և քանի որ ձեռքին ունէր մտրակը, պէտք է օգտուէր այդ մտրակից ու մտցնէր այն կնոջ գլուխը, որ այդպէս խուզում էր աստուածային զգացմունքի հետ, աւելի ճիշտ և աւելի պարզ զաղափար ճշմարիտ սիրոյ իրաւունքների և պարտականութիւնների մասին... Ուրեմն ես չեմ պահանջում, որ դուք այդպիսի ապացոյցներ տաք ինձ. ընդհակառակը՝ ես պատրաստ եմ հաւատալ ձեզ... Եւ եթէ ուզում եմ կասկածով վերաբերուել ձեր սիրոյ զգացմունքին, դրա միակ պատճառը ձեր երջանկութիւնն է և նմանապէս իմ երջանկութիւնը... Ձեր սիրոյ նման բացառիկ սիրոյ մէջ ինչ որ սուրբ բան կայ, որից չի կարող չը յուզուել նոյնիակ ամենից սառը և ամենից առաքինի կինը... Այդ է ահա պատճառը, որ ես այնպէս քննում եմ ձեր արածները և որ գրեթէ բախտաւոր կը լինեմ, եթէ ոչ մի բան չը գտնեմ նրանց մէջ, որ կրէր դրոշմը այդ մահացու կրքի, որ այնքան հազիւ դէպքերում է երանելալ լինում... Ես գրեթէ վստահ կը լինէի, որ ոչինչ չեմ գտնիլ նրանց մէջ, եթէ ձեր այս վերջին արածը, որով դուք խելագարօրէն անդունդն էք նետել ձեր ամբողջ անցեալը, ձեր ամբողջ ապագան, ձեր փառքն ու կեանքը և այն ամենը, ինչ ունէք—չունէք, որպէս զի մի ժամով ինձ բերել տայիք ձեր վրանը,—չը ստիպէր ինձ ասել, որ թերեւս չէք սխալուում...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Այս վերջին արածս միակն է, որ ոչինչ չի ապացուցանում...

ՎԱՆՆԱ. Ի՞նչպէս...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Ես գերադասում եմ խոստովանել ձեզ

ճշմարտութիւնը... Ձեզ այստեղ բերել տալով և վճռելով փրկել Պիղան յանուն ձեր, ես ոչինչ չեմ գոհել...

ՎԱՆՆԱ. Լաւ չեմ հասկանում... Միթէ դուք զրանով չէք դաւաճանել ձեր հայրենիքին, չէք խորտակել ձեր անցեալը, չէք փչացրել ձեր ապագան, ինքներդ ձեր ձեռքով չէք ստորագրել ձեր աքսորման և թերեւս մահուան դատաւճիռը...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Նախ և առաջ՝ ես հայրենիք չունեմ... Եթէ հայրենիք ունենայի, որքան էլ սաստիկ լինէր սէրս, կարծում եմ, ես չէի ծախիլ հայրենիքս այդ սիրոյ համար... Բայց ես ոչ այլ ինչ եմ, եթէ ոչ մի վարձկան, որ հաւատարիմ է, երբ նրան հաւատարիմ են, և դաւաճանում է, երբ դաւաճանուած է զգում իրան... Յլօրէնցիայի պատուիրակները սուտ մեղադրանքներ էին բարդել ինձ վրայ, և Յլօրէնցիան, այդ՝ վաճառականների հանրապետութիւնը, որոնց սովորութիւնները դուք ինձ չափ լաւ գիտէք, առանց դատի մահուան էր դատապարտել ինձ։ Ես գիտէի արդէն, որ ես կորած եմ։ Այս երեկոյեան արածս ոչ միայն չի կարող աւելի նպաստել կորուստիս, այլ և գուցէ փրկի ինձ, եթէ դեռ եւս որեւէ պատահմունք կարող է փրկել ինձ...

ՎԱՆՆԱ. Ուրեմն դուք շատ քիչ բան էք գոհել ինձ համար։

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Ոչինչ, իմ պարտքն էր ձեզ ասել այդ... Ես չէի ուզենալ սուտի միջոցով գնել թէկուզ մի հատիկ ժպիտ ձեր երեսից...

ՎԱՆՆԱ. Շատ լաւ է այդ, Զիանէլլօ, և այդ աւելի արժէ, քան սէրը և նրա ամենաքանկելի ապացոյցները... Դու այլ ես կարիք չունես երկար որոնելու այն ձեռքը, որ խուսափում էր քեզանից։ Ահա նա...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Ա՛խ, ես կը գերադասէի, որ սէրս նուաճած լինէր նրան... Բայց այդ էլ մեծ բան է... Նա իմն է, Վաննա, նա իմ ձեռների մէջն է, ես գիտում եմ նրա մարմարէ պոյնը, ես չնչում եմ նրա կենսական բուրմունքը, ես զմայլում եմ մի բոպէ քաղցրագոյն պատրանքով, ես սղմում եմ նրա ջերմ թարմութիւնը, ես վերցնում եմ նրան, բայց եմ անում, փակում եմ, կարծես թէ նա պատրաստ լինի ինձ պատասխանելու սիրահարների խորհրդաւոր, գիւթական լեզուով, և ես համբոյրներ եմ դրոյմում նրա վրայ ու դու յետ չես քաշում նրան... Ուրեմն դու չես բարկանում ինձ վրայ այն դաժան փորձութեան համար, որին ենթարկեցի քեզ...

ՎԱՆՆԱ. Եթէ քո տեղը լինէի, ես էլ նորնը կանէի, թերեւ մի քիչ աւելի լաւ կամ աւելի եւս վատ...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Բայց երբ դու համաձայնեցիր գալ վրանըս, գիտէիր՝ ով եմ ես...

ՎԱՆՆԱ. Ոչ ոք չը գիտէր: Թշնամի բանակի զօրապետի մասին պտտում էին օտարոտի լուրեր... Ոմանց ասելով, ահռելի ծերունի էիր, ոմանց ասելով, երիտասարդ արքայազն և չըքնաղ գեղեցկութեան տէր...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Իսկ Գուրգոյի հայրը, որ տեսել էր ինձ, ոչինչ չասաց քեզ...

ՎԱՆՆԱ. Ոչ:

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Չը հարցրիր նրանից...

ՎԱՆՆԱ. Ոչ:

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Բայց որ այդպէս է, երբ դու գիշերով ու անպաշտպան գալիս էիր այստեղ անձնատուր լինելու անյայտ մի բարբարոսի, միթէ չը սարսեց մարմինդ, դող չընկաւ սիրտդ...

ՎԱՆՆԱ. Ոչ. պէտք էր անպատճառ գալ...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Իսկ երբ ինձ տեսար, չը սկսեցիր տատանուել...

ՎԱՆՆԱ. Միթէ չես յիշում... Սկզբում ոչինչ չէի տեսնում այդ լաթերի տակին...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Այո, բայց յետոյ, Վաննա, երբ յետ քաշեցի լաթերը...

ՎԱՆՆԱ. Այն ժամանակը ուրիշ, և ես գիտէի արդէն... Բայց դու, երբ տեսար ինձ վրանդ մտնելիս, ինչ էիր ուզում անել... Միթէ մտադիր էիր մինչեւ վերջը շահագործել մեր սարսափելի թշուառութիւնը...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Ա՛խ, չը գիտեմ, թէ ինչ էի մտադիր անել... Ես զգում էի, որ կորած եմ, և ուզում էի ամեն ինչ կորուստի մատնել... Ես ատում էի քեզ սիրոյս պատճառով... Եւ իրօք այդպէս կը վարուէի, եթէ այդ դու չը լինէիր... Բայց ուրիշ ով որ էլ լինէր՝ ինձ զաղրելի կը թուէր... Պէտք էր, որ դու ինքդ այլ եւս նման չը լինէիր նրան, ինչ որ էիր առաջ... Գլուխս կորցնում եմ, երբ մտածում եմ այդ մասին... Բաւական էր մի հատիկ խօսք, որ տարբեր լինէր քո խօսքերից, բաւական էր մի շարժում, որ քո շարժումը չը լինէր. բաւական էր մի չնչին բան, որպէս զի բոլորքուէր ատելութիւնս և արձակուէր հրէշիս սանձը... Բայց քեզ տեսնելու պէս՝ տեսայ և այն, որ այդ անհնար է...

ՎԱՆՆԱ. Ես էլ տեսայ այդ և երկիւղս իսկոյն փարատուեց, որովհետեւ մենք միմեանց հասկանում էինք անխօս... Պէտք է ասած, շատ զարմանալի բան է... Ինձ թւում է, թէ

ևս էլ կ'անէի քո բոլոր արածները, եթէ քեզ պէս սիրէի... Ինձ թւում է երբեմն, թէ ես քո տեղն եմ, թէ դու ես ականջ դնողը և ես եմ ասում այն բոլորը, ինչ որ դու ասում ես ինձ...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Ես էլ, Վաննա, հէնց առաջին րոպէից զգացի, թէ այն պատը, որ, աւանդ, բաժանում է մեզ բոլոր միւս մարդերից, թափանցիկ է դառնում, և ես խորասուզում եմ նրա մէջ ձեռքերս ու հայեացքներս, ինչպէս սառնորակ ալիքների մէջ, և երբ հանում եմ այնտեղից, լուսաթաթախ փայլում են և հաւատ ու անկեղծութիւն է ծորում նրանց վրայից... Ինձ թւում էր նոյնպէս, թէ մարդիկ փոխւում են, թէ ես սխալ կարծիք ունէի մինչ այժմ նրանց մասին... Ինձ թւում էր, մանաւանդ, թէ ես ինքս փոխւում եմ, թէ ես դուրս եմ գալիս վերջապէս երկար բանտարկութիւնից, թէ դռները բացւում են, թէ ծաղիկներ ու տերեւներ յետ են մղում վանդակները, թէ հորիզոնը գալիս տանում է բոլոր քարերը, թէ առաւօտեան ջինջ օդը թափանցում է հոգուս մէջ և ողողում է սէրս...

ՎԱՆՆԱ. Ես էլ փոխւում էի... Ես սաստիկ զարմանում էի, որ կարողանում էի խօսել քեզ հետ այնպէս, ինչպէս սկզբների խօսել հէնց առաջին րոպէից... Ես չատ լռակեաց եմ... Ես ոչ ոքի հետ երբեք խօսած չեմ այդպէս, բացի Գուրգոյի հօր՝ Մարկոյի հետ... Բայց նրա հետ էլ բոլորովին այն չէ, ինչ որ այժմ... Բացի այդ՝ նա ունի հազար ու մի երազներ, որոնք գրաւում են նրա ամբողջ ուշք ու միտքը, ուստի և հազիւ հազ երեք կամ չորս անգամ խօսած լինենք իրար հետ... Միւսների աչքում միշտ լինում է այնպիսի մի բաղձանք, որ թոյլ չէր տալ ասել նրանց, թէ մարդ սիրում է նրանց և ուզում է իմանալ, թէ ինչ կայ նրանց սրտում: Քո աչքերումդ էլ բաղձանք կայ, բայց նրանցի պէս չէ. նա չի խորշեցնում և երկիւղ չի ազդում... Ես իսկոյնս եթէ զգացի, որ քեզ ճանաչում էի, թէեւ չէի յիշում, թէ երբեւիցէ տեսած էի քեզ...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. Կարող էիր ինձ սիրել, եթէ սեւ բախտս ինձ վերադարձրած չը լինէր այն ժամանակ, երբ արդէն շատ ուշ էր:

ՎԱՆՆԱ. Եթէ կարողանայի քեզ ասել, թէ կը սիրէի քեզ, չէ որ այդ կը նշանակէր այն, թէ արդէն սիրում եմ քեզ, Զիանէլլօ, իսկ դու նոյնչափ լաւ գիտես, որքան և ես, որ այդ անհնար է: Բայց մենք այնպէս ենք խօսում այստեղ, կարծես անբնական կզդու մէջ լինենք... Եթէ ես միայնակ լինէի աշխարհում, հարկ չէր լինի խօսելու: Բայց մենք մոռանում ենք, որ

Հոկտեմբեր, 1902.

մի ուրիշը տանջւում է չարաչար, մինչդեռ մենք այստեղ ժըպտեղեա յիշում ենք անցեալը... Նրբ ես հեռանում էի Պիզայից, Գուիդոյի վիշտը, նրա տոչորուած ձայնը, նրա գունատ դէմքը... Չէ, ես չեմ կարող այլ ես սպասել... Շատ չի մնացել երեւի մինչեւ լուսաբաց, և ես շտապում եմ իմանալ... Բայց ոտնածայն եմ լսում... Ով որ շօշափում է վրանը, և նոյն-իսկ պատահմունքը աւելի գթասիրտ է երեւում, քան մենք... Փըսփըսում են դռան մօտ... Լսիր, լսիր... Ի՞նչ է այդ...

ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆԻ

Նոյն անձինք եւ ՎէրիՒՅ

(Լսում է շտապ քայլերի ձայն վրանի շուրջը և փըսփըսոցներ. լետոջ՝ Վէրիոյի ձայնը, որ կանչում է դռեւից)

ՎէրիՒՅ. (Դռեւից) Տէր իմ...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Վէրիոյի ձայնն է... Ներս մտիր... Ի՞նչ կայ...

ՎէրիՒՅ. (Վրանի դռանը). Վազէվազ եկայ... Փախէք, տէր իմ... Ժամանակն է... Յլօրէնցիայի երկրորդ պատուիրակ մէստէր Մալադուրան...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Չէ նա Բիբրիէնայումն էր...

ՎէրիՒՅ. Վերադարձել է... Վեց հարիւր մարդ ունի հետը... Յլօրէնցիայիք են... Տեսայ, որ անցան... Իրարանցումն է ընկել բանակում... Հրամաններ է բերել... Ձեզ զաւաճան է յայտարարում... Տրիվուլչիոյին փնտռում է... Վախենում եմ աւելի շուտ գտնի նրան, քան դուք կարողանաք...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Եկ գնա, Վաննա...

ՎԱՆՆԱ. Ո՛ւր գնամ...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Վէրի՞ն երկու վստահելի տղաների հետ քեզ ի՞նչ տանի Պիզա...

ՎԱՆՆԱ. Իսկ դ՞ու ուր կ'երթաս...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Չը գիտեմ. միեւնոյնն է, աշխարհս շատ ընդարձակ է, անշուշտ մի ապաստարան ի՞նչ գտնուի ինձ համար...

ՎէրիՒՅ. Օ՛, զգոյշ եղէք, տէր իմ... Քաղաքի չորս կողմը բռնել են և Տօսկանան լիքն է լրտեսներով...

ՎԱՆՆԱ. Եկ Պիզա...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Քեզ հետ...

ՎԱՆՆԱ. Այո...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Չեմ կարող...

ՎԱՆՆԱ. Գէթ մի քանի օրով... Այդպիսով կազատուես
սկզբի որոնումներից...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Իսկ ինչ կանի ամուսինդ...

ՎԱՆՆԱ. Նա էլ քեզ պէս լաւ գիտէ, թէ ինչ պարտաւո-
րութիւններ ունի հիւրի նկատմամբ...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Նա քեզ կը հաւատայ, երբ ասես իրան...

ՎԱՆՆԱ. Այո:—Եթէ նա ինձ չը հաւատայ... Բայց այդ
անկարելի է... Եկ զնանք...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Ոչ:

ՎԱՆՆԱ. Ինչո՞ւ:—Ինչիցն եւ վախենում...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Քեզ համար եմ վախենում...

ՎԱՆՆԱ. Գաս չը գաս՝ միեւնոյն վտանգն է սպառնում
ինձ:—Քեզ համար պէտք է վախենալ:—Դու փրկեցիր Պիզան.
արդարութիւնը պահանջում է, որ նա էլ քեզ փրկի... Դու կը
լինես իմ պաշտպանութեան տակ եւ ես երաշխաւոր եմ քո
առաջ...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Լաւ, կը գամ հետդ...

ՎԱՆՆԱ. Այդ ամենալաւ ապացոյցն է, որ քո սէրը տա-
լիս է ինձ... Եկ...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Իսկ Վէրքդ...

ՎԱՆՆԱ. Քոնդ չատ աւելի սաստիկ է...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Ուշք մի դարձնիլ իմիս վրայ... Առաջինը
չէ... Բայց քոնը... Կարծես արիւնը... (Ձեռքը մեկնում է, որ
վաննայի վերարկուն բանայ):

ՎԱՆՆԱ. (Յետ Է մղում Պրինչիվալլեյի ձեռքը եւ աւելի
պիւնդ Է սեղմում վերարկուի օձիքը) Ձէ... չէ, Ջիանէլլօ... Մենք
թշնամիներ չենք այլ իս...—Մըտում եմ...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Ախ, քիչ էր մնում մոռանայի, որ դու
գրեթէ մերկ ես այս ցուրտ գիշերով, եւ իմ՝ բարձարոսիս ա-
րածն է այդ...—Բայց ահա այս ահագին արկղերում ես զիղել
եմ քեզ համար պատերազմների աւարը... Ահա ոսկեկար զգեստ-
ներ, զիպակեայ վերարկուներ...

ՎԱՆՆԱ. (Առանց ջոկելու վերցնում է մի փանի շղարօ
եւ փութաբւում մէջը) Ձէ. այս շղարչները հէրիք են... Ես չտա-
պում եմ քեզ փրկել... Եկ բաց արա վրանի դուռը...

Պրինչիվալլէն Է նրա լեռնից Վաննան՝ գնում են դէպի դու-
ռը. Պրինչիվալլէն բարձրացնում է կասկերտը եւ լալն բաց է ա-
նում դուռը: Քիչերային խաղաղութեան մէջ լանկարժ գրոհ է տա-
լիս խառն ժխոր, որի մէջից բարձր լսւում է հեռաւոր զանգերի
ուժգին զօղանջին: Հորիզոնում, վրանի երկրուն բացուածքի մի-
ջով, տեսնւում է Պիզան, որ ամբողջապէս լուսաւորւած է ճրագնե-
րով ու տեղ տեղ տօնօրեայ խարոյկներով եւ դեռ եւս մութ եր-
կընքում ցոլացնում է լոյսի ահագին ճաճանչներ):

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Վաննա, Վաննա... Նայիր...

ՎԱՆՆԱ. Այդ ինչ է, Ջիանելլո... Ախ, հասկացայ... Ճըն-
ծութեան խարոյկներ են, որ վառել են քո արածը տօնելու հա-
մար... Պարիսպները ծածկուած են նրանցով, պատնէշները
բոյի պէս փայլում են, զանգակատունը վառում է հարսանե-
կան կերոնի նման... Բոլոր աշտարակները շողշողում են և
կարծես մրցում աստղերի հետ... Փողոցների ցուքերը լուսա-
ճաճանչ չաւիղներ են գոյացնում երկնքում... Ես որոշում եմ
նրանց հետքը. ես աչքով անցնում եմ նրանց վրայով երկնքում,
ինչպէս այս առաւօտ անցնում էի նրանց սալայատակի վրայով...
Ահա Պիաչչան և իր հրափայլ մայր տաճարը, ահա և Կամպո-
Սանտոն *), որ ստուերի կղզի է կազմում... Կարծես թէ կեանքը,
որ մարած էր զգում ինքն իրան, շտապով վերազառնում է
փայլատակում է սլաքների ծայրին, շողշողում է քարերի վրայ,
դուրս է թափում պարիսպների վրայից, հեղեղում է դաշտը,
գալիս է մեր հանդէպ և մեզ էլ կանչում է... Ականջ դիր...
Միթէ չես լսում, որ այնպիսի բուռն ու յարուռն աղաղակներ
են բարձրացնում, կարծես թէ ծովը հեղեղած լինի Պիզան. մի-
թէ չես լսում զանգերի ձայնը, որոնք գեղգեղում են այնպէս,
ինչպէս հարսանիքիս օրը... Օ՛հ, ես անչափ երջանիկ եմ, և
կրկնակի ու գերիվեր երջանիկ, տեսնելով այս բախտաւորու-
թիւնը, որի պատճառը նա է, որ ամենից լաւ է սիրել ինձ...
Եկ, իմ Ջիանելլո... (Համբուրում է ճակատը)։—Ահա միակ համ-
բոյրը, որ ես կարող եմ տալ քեզ...

ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷ. Օ՛հ, իմ Ջիովաննա... Այդ համբոյրը ա-
ւելի քաղցր է, քան ամենաքաղցր համբոյրները, որոնց ակնկա-
լում էր սէրը...—Բայց ինչ է պատահել քեզ... Ինչու ես օրօր-
ւում, ինչու եմ ծնկներդ ծալում... Մօտեցիր ինձ, յենուիր իմ
վրայ, կուռդ գցիր վզովս...

ՎԱՆՆԱ. Ոչինչ... Գալիս եմ յետեւից... Գլուխս պը-
տոյտ է գալիս... Շատ բան պահանջների կանայցի ոյժերից...
Նեցուկ եղիր ինձ, բռնած տար, որպէս ղի ոչ մի բան չուշացնի
իմ առաջին երջանիկ քայլերս...—Օ՛հ, որքան գեղեցիկ է գի-
շերը՝ արշալոյսը բացուելիս... Շտապենք, ժամանակ է գնալու...
Աշխատենք տեղ հասնել նախ քան ցնծութիւնը վերջանայ։

(Գլուխ են գնում իրար փաթաթուած)։

Երկրորդ գործողութեան վերջ։

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

*) Դերեզմանատունը։

Ա Ղ Զ Ի Կ^{*)}

(Առողջապահական եւ բարոյագիտական եփուղ):

VII

Հիւանդ ծնողների սերունդը.—Յղի կնոջ առողջապահութիւնը.—
Նրա քնահաճոյքները.—Նրա հագեկան դուրեան ազգեցութիւնը
սաղմի վրայ:

«Մանկան փիղիկական կրթութիւնը պիտի սկսուի
դեռ մօր արգանդից», ասում է Օվար:

Թող ծիծաղելի չը թուի այս միտքը: Նա բոլորու-
վին համապատասխան է արդի գիտութեան ցուցմունք-
ներին, որոնց հիման վրայ մօր առողջական դրութիւնը,
նրա յոյզերը, նրա տանջանքները, մի խօսքով նրա փիղի-
կական ու բարոյական աշխարհում կատարուած գորդիւն-
ները արձագանք պիտի գտնեն արգանդի սաղմի վրայ,
քանի որ այդ սաղմը ինքնուրոյն կեանք չունի, այլ ապ-
րում է մօր կեանքով:

Հիւանդ ծնողները միայն հիւանդոտ սերունդ կա-
րող են արտադրել:

Ամենասարսափելի ախտերը ժառանգականութեան
վերաբերմամբ հետեւեալներն են. սիճիլիս, արբեցո-
դութիւն (ալկօհօլիզմ), քոֆալիս եւ ներվախտութիւն:

Սիճիլիսոս ծնողների բեղմնաւորութիւն որոշ չքը-
ջանում կամ բնաւին տեղի չի ունենում, կամ վերջա-
նում է վիժուածով^{*)}: Կենդանի ծնուածներն էլ կարճ

^{*)} Տեա „Մուրճ“ № 5.

^{*)} Սակայն եթէ հիւանդ ծնողը լաւ բժշկուած է և եթէ հիւանդու-

ժամանակում մեռնում են 99⁰/₀ ըստ Տարնովսկու, իսկ մնացածներից էլ մի մասը արատաւոր, հիւանդոտ, կեանքի կռուի մէջ ապրիկար են լինում: Թոֆախսաւոր ծնողների զաւակները նոյնպէս ենթակայ են հարիւր տեսակ հիւանդութիւնների, մանաւանդ թոքախտի. արքեցոյները ծնում են նոյնպէս արատաւոր զաւակներ, տրամադրուած դէպի հիւանդութիւններ, նոյնը պէտք է ասել նաեւ ներվային ծնողների սերնդի մասին:

Մարդկութեան այս չորս գլխանի ճիւղը (թոքախտ, ալկոհոլիզմ, սիֆիլիս և ներվայնութիւն) արտադրում է վատոյժ, վատասերուած սերունդներ, որոնց կեանքը ջախջախում է, տրորում, օրովհետեւ նրանք թոյլ են ֆիզիկապէս և անտոկուն հոգեպէս:

Մենք չենք կարող այստեղ խօսել հիւանդ կամ արատաւոր ծնուած երեխաների մասին, այդ չափազանց հեռու կը տանէր մեզ:

Սակայն միայն խոշոր հիւանդական ժառանգականութիւնը չէ, որ անցնում է զաւակներին: Այսչափ տարածուած ներվայնային դրութիւնները եւս առանց հետքի չեն մնում արգանդի զաւակի վրայ: Հասարակական աղմկալից կեանքը իր ամենօրեայ հոգեկան յուզմունքներով, կեանքի կռուի դժուարանալն ու բարդըւումն, որոնք ուժասպառում են ծնողների ներվային ոյժերը, այս բոլորը անդրադառնում են սաղմի վրայ: Յղի կինը մեր հասարակութեան մէջ, — մանաւանդ քաղաքային գասակարդի մէջ, — չարունակում է օրիորդական կեանքը իր պարերով, իր անքուն կամ կիսաքուն գիշերներով: Եւ տուժում են զաւակները իրանց մօր անփոյթութեան համար:

Բժ. Պավօնէ ասում է հետեւեալը:

«Այժմ նորածինը այնպէս չէ, ինչպէս առաջուայ ժամանակները:

Նայեցէք նրան: Հազիւ ծնուած, նա արդէն բա-

թեան բժշկուելուց մի քանի տարի անցել է, զաւակները կարող են կենդանի ծնուել: (Յէս իմ «Մանուկութիւն», «Սիֆիլիս» և «Ատա ցաւ» գրքերէն)

ցում է իր աչքերն ու կարծես դիտում է իր շուրջը, մի քանի ժամ շարունակ անքուն մնում է օրօրոցի մէջ կամ մօր թեւերի վրայ, չի ճշում, այլ կանոնաւոր կերպով լալիս է, շուռըմուռ է գալիս ու չափազանց զգայուն է դէպի լոյսը:

Որքան մեծ է տարբերութիւնը Առաջուայ ժամանակները երեխան աչքերը խուփ էր ծնւում, նա քնոտ էր, օրերով և շաբաթներով անտարբեր էր մնում դէպի իր շրջապատը, կարծես խոր և բաղցր լեթարգիական քնի մէջ ընկած, որից զգաստացնում էր նրան քաղցը միայն: Տարբերութիւնը զարմանալի է, բայց ամենից շատ այդ զանազանութիւնը զարմացնում է պառաւ տատերին և ազգականներին, որոնք դիտելով արդի թոռնուկներին, ցաւով յիշում են հին գեղեցիկ ժամանակը»:

Յղի կինը պէտք է գիտակցօրէն վերաբերուի դէպի իր դրութիւնը:

Նա ոչ մի օր չը պէտք է մոռանայ, որ կրում է իր արգանդի մէջ մի ամբողջ սերնդի ապագան:

Այո, մի պատասխանատու գործ է յղանալ և մայր դառնալ: Յղութիւնը մի սրբազան ակտ է, որը պահանջում է աշալուրջ վերաբերումն, և ամեն բոլոր զգուշութիւն: Մեղապարտ է այն մայրը, որն իր անզգուշութեամբ կամ մեղապարտ անհոգութեամբ վտանգի է ենթարկում իր արգանդի պտուղը:

Մենք անկարող ենք այստեղ մանրամասն ուսումնասիրել յղութեան առողջապահութիւնը.—այդ մեզ չափազանց հեռու կը տանէր:

Մենք կը յիշատակենք մի քանի գլխաւոր կէտերը միայն:

Նորատի կանայք ընդհանրապէս վախի մէջ են ընկնում, երբ զգում են, որ յղի են: Միշտ անհանգիստ են, սարսափով սպասում են ազատուելու սարսափելի կարծած օրուան:

Այդ ահը նրանից է, որ յղութիւնը մի անբնական,

նոյն-իսկ հիւանդական դրութիւն են կարծում, այն ինչ որ մի բնական, ֆիզիօլօգիական ակտ է, որ իր բնական ընթացքն ունի և շատ հազուադիւտ դէպքերում միայն նա բարդութիւններ ունի, այն էլ երբ կինը որ և է հիւանդութեան տէր է կամ անկանոն կոնք ունի:

Յղի կինը պէտք է հասկանայ այդ և հանգիստ ու անհոգ ապրի. նա ոչ թէ ահ ու դողով, այլ հրճուանքով ու անհամբերութեամբ պիտի սպասի մայր դառնալու երանութեան:

Յղութիւնից առաջացած ցաւերն ու տանջանքները միայն ժամանակաւոր են և ընդհանրապէս փաստակար կերպով չեն ազդում կնոջ վրայ, այլ անցնում են առանց հետեւանքի:

Այս հիման վրայ յղութեան միջոցին չը պէտք է փոխել առօրեայ աշխատանքն և կենցաղը, այլ աւելի զգոյշ լինել թէ ուտելիք-խմելիքի և թէ աշխատանքի մէջ: Պէտք է խուսափել այնպիսի աշխատանքներից, որոնք ոյժերի լարումն են պահանջում, ուտել այնպիսի կերակուրներ, որոնք հեշտ են մարսւում, խմել ջուր, լիմոնադ, զանազան սիրուպներ, իսկ սովորածներին միայն թոյլ է տրւում՝ օրը մի բաժակ գինի կամ գարեջուր խմել: Նա պէտք է աշխատի մաքուր օդում ապրել և յաճախ զբոսանքներ անի, առանց յոգնածութեան հասցնելու իրան: Շատ նորատի կանայք յղութեան միջոցին տարօրինակ և փաստակար յակումներ են ցոյց տալիս. պահանջում են հազուադիւտ մրգեր ու խմելիքներ, ուտում են անմարս բաներ, օր., հոգ, կիր, ապակի և այլն: Շատերի քմահաճութեանը սահման չը կայ, և բոլոր ազգերի մէջ մերժելը կամ հակառակելը փաստակար է համարւում արգանդի զաւակի համար:

Ժողովուրդը կարծում է, որ եթէ յղի կնոջ ուղածը մերժուի, երեխայի դէմքի կամ մարմնի վրայ զանազան նշաններ կը մնան: Այս ամենը նախապաշարմունք է, և ոչինչ փնաս չի հասնի սաղմին, եթէ մօր անհիմն ու

իրանց հետեւանքով վտանգաւոր պահանջները անխտիր կերպով կատարուեն:

Պէտք է ընդհակառակը դիմադրել, և ամենից առաջ ինքը կինը պիտի զսպի իրան, սահմանափակէ իր անտեղի պահանջները, հասկանալով, որ նրանք կենսական չեն: Շրջապատողներն եւս պէտք է թէ համոզելով և թէ մի քիչ սաստելով յետ կանգնեցնեն կնոջ իր ուղածից:

Սաստիկ յոյգերը, բարկութիւն, սարսափ, վիշտ և ուրիշ կրքեր, ազդում են զաւակի վրայ, երբեմն վիժումի, երբեմն էլ նոյն-խակ մահ առաջացնում, հետեւաբար չըրջապատողները պիտի կրկնապատկեն իրանց զգուշութիւնը, չը հաղորդեն նրան յուզիչ նորութիւններ, չը գրգռեն նրան ոչ մի կերպ. նրանց վարմունքը առհասարակ պիտի շատ մեղմ ու քնքոյշ լինի, պէտք է հասկանան, որ յղութիւնը չափազանց դիւրագրգիռ ու չափազանց ներվային է դարձնում կանանց:

Պիտք է աշխատել նորատի կնոջ հեռու պահել ամեն տեսակ անախորժ տպաւորութիւններից, տխուր տեսարաններից, տխրեցնող ընթերցանութիւններից, այլ ընդհակառակը միշտ զուարթ դէմք ցոյց տալ, զուարճալի ու հաճելի տեսարանների ներկայ անել: Ամենահին գրողները խորհուրդ են տալիս յղի կնոջ «զուարճութեան» մէջ պահել: Հնդկաստանցիք և չինացիք արգելում են կնոջ յուզարկաւորութիւնների մասնակից լինել և գերեզմանատուն գալ: Մինչեւ հիմա էլ մարդիկ հաւատում են, որ եթէ յղի կինը գեղեցիկ դէմք տեսնի երեխան սիրուն կը լինի:

Մենք այդքան հեռու չենք գնայ, բայց դիտութիւնն և դիտումները թելադրում են մեզ զգուշութիւն և խնամք դէպի յղի կանայք:

Արգանդի սաղմը իր զարգացման համար պահանջում է ազատութիւն: Այն ամենը, ինչ սեղմում է մօր օրովայնը, սեղմում է նաեւ նրա արգանդը և կարող է ճնշել սաղմի ազատ ու կանոնաւոր աճումն:

Այս հիման վրայ նորատի կինը երբեք չը պիտի սեղմի իր իրանը և փորը. պէտք է գէն գցի կորսեալը, որը սեղմում է և իջեցնում փորը և կարող է նոյն-իսկ վիժումն առաջ բերել:

Փորկապներ գործ են ածում ամեն տեղ, մանաւանդ բաղմածին կանայք իրանց թուլացած ու ընկած որովայնը բարձր պահելու համար: Փորկապը կարելի է գործածել յղութեան 7-երորդ ամսից սկսած, միայն նա պէտք է լաւ լինի և կարած փափուկ կտորից ու կոճկուի յետեւից: Պառկած ժամանակ պէտք է քակել:

Ամեն տեսակ շտապ շարժում, արագ քայլ, մանաւանդ պար պէտք է արգելուի նոյն-իսկ հինգերորդ ամսից. սարեր բարձրանալը և իջնելը նոյնպէս վնաս են:

Ընդհանուր կենցաղի մասին մենք այստեղ անկարող ենք այլ եւս կանգ առնել *):

VIII

ԵՐԵՒԱՅ-ԱՂՋԿԱՅ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Նորածին աղջիկը.—Աղջկայ կոնքը եւ նրա ծուռմները.—Ողնաւորը եւ նրա կորուքիւնների պաշտումները.—Յտիւային գրկելու ձեւը.—Ողնաւորի ծուռմները դպրոցական օրջանում.—Աղջկայ անկանոն նիստը պարապելու միջոցին եւ նրանից սուսացած վնասները ամբողջ կազմուածքի համար:

Աղջկայ վրայ նրա ծնունդու րոպէից պէտք է նայել իբրեւ ապագայ մօր վրայ, և հէնց այդ ժամանակից նրա ֆիզիկական կրթութիւնը այդ ուղղութիւնով տանել:

Այս նորածին մանկիկի մէջ արդէն դրուած են այն գործարանները, որոնք զարգանալով հասունացած հասակում պիտի դառնան նրա օրգանիզմի կարեւորագոյնները. դրանք են՝ զաւակատունը և ձուարանները:

Այդ գործարանները ժամանակի ընթացքում պիտի

*) Մտադիր ենք «Մուրճում» մի ուրիշ էտիդ տալ կնոջ մասին:

գերակշիռ դեր խաղան օրիորդի և կնոջ ամբողջ օրգանիզմի կեանքի մէջ:

Նրանք մատաղ հասակում դրուած են աղջկայ որովայնի մէջ, բայց սեռական հասութեան միջոցին իջնում են կոնքի մէջ և այնտեղ զարգանում:

Հասկանալի է, որ աղջկայ կոնքը աւելի լայն և աւելի մեծ պիտի լինի բան տղայինը, որը յիշած օրգաններէից զուրկ է:

Կոնքը կազմւում է երկու կըշտոսկրներից, որոնք առջեւից միանում են անմիջապէս, իսկ յետեւում կըպչում են սրբանոսկրին կամ կեղծ ողմներին:

Եթէ դիտելու լինէք կմախքը կը տեսնէք, որ կոնքը կըրում է իր վրայ ահագին ծանրութիւն.— ողնաշարը, որի վրայ ծանրանում են գլուխը, բազուկները, կուրծքը իր միջի գործարաններով և որովայնը նոյնպէս իր միջի օրգաններով ծանրանում են կոնքի վրայ, որը յենւում է ոտերի ոսկրերին:

Հասկանալի է, որ կոնքը պիտի ազատ զարգանայ, որպէս զի իր մատաղ հասակում, երբ ոսկրները գեռ ճկուն են, երբ կապերը թոյլ և նուրբ, նա չը ծռմուռի, չը նեղանայ, այլապէս կը ճնշուեն պարունակուող գործարանները:

Յիրաւի, երեւակայեցէք, որ ծուռել են կոնքը կազմող ոսկրները, անկիւնաւորուել ու ներս, դէպի կոնքը, ցցուել ներքեւի ողները, ինչ կը լինի գործարանների դիրքը, ինչպէս կարող է այդպիսի մի նեղացած ու կորացած խոռոչի մէջ աճել և զարգանալ սաղմը: Վիժումների, դժուարածնութիւնների, մեռած երեխայ ծնունդների, մինչեւ անգամ մօր մահուան պատճառ են դառնում աղաւաղուած կոնքերը:

Ահա թէ ինչ պիտի զբաղեցնի առանձնապէս մայրերին և ինչի վրայ պիտի անդադար լարուած լինի նրանց ուշադրութիւնը:

Ինչից կարող է առաջանալ այս փաստումը:

Կոնքի ծռմռելու մէջ, մեծ դեր են խաղում ողնաշարի կորութիւնները:

Ծծկեր մանկան ողնաշարը գանգից մինչեւ պոչիկը միանգամայն ուղղագիծ է: Բայց նստեցրէք երեխային ու կը տեսնէք որ նրա ողնաշարը սաստիկ կը կորանայ ու կը կազմի մի կամար, որի մի ծայրը ծոծրակին է կպած, միւսը կոնքի ոսկրներին: Երբ որ երեխան ոտի է լինում ու սկսում է վազվզել, նրա ողնաշարը մի քանի տեղ գոգանում է և ընդունում է կամաց-կամաց հասունացածի ողնաշարի չորս գոգութիւնները. պարանոցային—դէպի առաջ, կրծքային—դէպի յետ, կոնակային—դարձեալ դէպ առաջ և պոչիկային—նոյնպէս դէպի յետ: Այս չորս գոգութիւնները աեղի ունին բոլորն էլ յետ ու առաջ:

Անբնական կամ հիւանդական ծռումները լինում են ընդհակառակը կողմնակի, այսինքն աջից—ձախ և ձախից—աջ, այնպէս որ յետեւից ողնաշարը փոխանակ ուղիղ գծի կազմում է Տ նման մի գիծ:

Ինչից են առաջանում այս կորութիւնները:

Պատճառներից մէկը երեխային վաս գրկելն է:

Մայրը կամ դաեակը երեխային առհասարակ նստեցնում են թեւերից մէկի վրայ, աջ կամ ձախ: Ցաւն այն է, որ սովորութեամբ հէնց բոլոր ժամանակ միեւնոյն թեւի վրայ են դնում երեխային:

Եթէ տկլորացնէք գրկած երեխային ահա թէ ինչ կը տեսնէք:

Եթէ երեխան աջ թեւի վրայ է դրած, նրա ձախ կողմը կպած է դրկողի ուսին կամ կրծքին, նստատեղի ձախ կողմը աւելի ցած է՝ քան աջը, և սրանից էլ ողնաշարը գոգացած է դէպի ձախ:

Այս գոգութիւնը աւելի եւս սաստկանում է երբ երեխան, յոգնած այս անյարմար դիրքից, թեւիկը դէմ է տալիս մօր կրծքին, իբրեւ նեցուկ: Այսպիսով առաջ է գալիս ողնաշարի կողմնակի կորութիւններ:

Ողնաշարի կորութիւնների միւս պատճառը աւելի

կարեւոր է.—այդ դպրոցական կեանքում առաջ եկածներն են:

Ամենից առաջ Շվէյցարիայում ուշ դարձրին այն հանգամանքի վրայ, որ դպրոցական պատանիների մէջ շատ յաճախ են պատահում ողնաշարի կորուսիւններ, և այդ իրողութիւնը բացատրեցին անկանոն նիստով պարապմունքների միջոցին: Այսպէս Պարովը հետադատեց 282 երեխայ, որոնք ծնունդով ողնաշար ունէին, և եկաւ այն եզրակացութեանը, որ նրանցից 218-ը ուղղակի նստելու անկանոնութիւնից է առաջացել:

Եւ, ճշմարիտ, որ ողնաշարի ծռումները ընդհանրապէս յայտնւում են դպրոցական կեանքում, երբ երեխան երկար ժամանակ անկանոն դիրքեր է բռնում կարգալիս կամ (աւելի եւս) գրելիս:

Գրութիւնը երեխայից ոյժի մեծ լարումն է պահանջում, այս պատճառով էլ մի քիչ ուղիղ նստելուց յետոյ, նա թեքւում է այս ու այն կողմը, որպէս զի դադար տայ լարուած մկաններին ու դործի կանչի մի ուրիշ խումբ մկանների: Իսկ երբ ողնաշարի բոլոր մկաններն էլ յոգնում են, այն ժամանակ երեխան նեցուկ է որոնում ու յենւում է սեղանին, համարեա պառկում է վրան, սարսափելի ծռումներ առաջ բերելով:

Ինչ կասկած, որ ամիսների ու տարիների ընթացքում այսպիսի արատաւոր դիրքերից կը մնան ողնաշարի ու կողերի (հետեւաբար եւ գաւակի) անուղղելի կորութիւններ, իրանց վսանգաւոր հետեւանքներով:

Սակայն այս երեխաները դեռ էլի մի կերպ նստած են սեղանի հանդէպ և սեղանի վրայ են դնում իրանց տետրակները: Ինչպէս պէտք է ծռումների դիւզական աղջիկների կազմուածքը, քանի որ դրանք ստիպուած են ժամերով ծալապատիկ նստած մնալու, գլուխները փորները կոխած գրել կամ կարել...

Իբրեւ կորութիւնների պատճառ բժ. Վիրենիուսը յիշում է նաև երեխաների պայուսակների ծանրու-

թիւնը: Մի բանի աշակերտութիւններ 8—10 ֆունտ գիրք են տանում, բերում դպրոց: Եթէ մի ձեռով են բռնում, հասկանալի է, որ մի ուսը կը ցածանայ և մէջքը իր կողմը կը ծռի. այդ պատճառով աշակերտութիւնները պէտք է մէջքներին կապած պայուսակ ունենան: Նոյնն է անում ի հարկէ և ուսին կուժ, սափոր կամ մի որ և է ծանրութիւն կրելը:

Բացի ողնաշարի (հետևաբար և կոնքի) կորութիւններ առաջացնելը, արատաւոր դրութիւնները ահագին վնասներ են հասցնում երեխային և ուրիշ տեսակէտներին:

Ամեն անկանոն նիստի միջոցին (առաջ թեքուելը, կուրծքը սեղանին դէմ անելը) պարանոցի մկանները շուտով յոգնում են գլխի ծանրութիւնը պահելուց, և գլուխը կորանում է. դրանից վզի երակները սեղմում են, արեան շրջանառութիւնը գլխի երակների և ուղեղի մէջ խանգարւում է, իսկ այս խանգարումից առաջանում է գլխացաւ, գլխի պտոյտ գալ, աչքացաւ (արին է լցւում աչքերը), կրծքացաւ, մի և նոյն ժամանակ փորը ծալւում է, աղիքերը ճնշւում են, փորի մէջն էլ արեան շրջանը խանգարւում է, որտեղից առաջ են գալիս մարսողութեան խանգարումներ, ծանրամարտութիւն, յետոյ մէջքացաւ. մասամբ մէջքի մկանների սաստիկ լարումից սեռական գործարանները արինով լցւում են ու գրգռւում: Գոյանում է նաև թուլթք (реморфон), օտքերը դմբում են և այլն: Եւ, իբրև այս ամենի ծայրայեղ արտայայտութիւն, առաջ է դալիս սակաւարինութիւն:

Մենք թուուցիկ կերպով յիշատակեցինք այն պատճառները, որոնք աղջկայ կմախքի ծռմուռելու պատճառ են դառնում:

Հասկանալի է, որ այս աննպատակ պայմանները աւելի եւս խորապէս կազդեն նուազ ծնուած, ժառանգականապէս արատաւորուած, թուլակազմ աղջիկների

վրայ, քան առողջակազմների: Քանի թոյլ է աղջկայ կազմուածքը, այնքան աւելի տրամադրուած է նա կորուծիւններ ստանալու:

Պէտք է կռուել արատաւորման և նրա հիւանդական տրամադրութեան դէմ, պէտք է աղջկան այնպիսի խնամքներ ցոյց տալ, որ ազատ մնայ նրա մատաղ հասակին սպառնացող վտանգներէն:

Պրա համար գիտութիւնը միջոցներ է տալիս մեր ձեռքը: Խօսենք ուրեմն այդ միջոցների մասին:

IX

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԱՂՋԿԱՆ ԾՌՈՒՄՆԵՐԻՑ

Մանր աղջիկներին օալիք խնամքը.— Զգուշութիւններ աղջկայ ոտի կանգնելու ու բալլելու ժամանակ.— Մեր աղջիկների արատաւոր դիրքերը.— Սնունդ, ի՛նչպէս կռուել անախորժութեան դէմ.— Քնի կարաւորութիւնը, իբրեւ կազդուրիչ միջոցի.— Լողացումներ ու շփումներ:

Մենքեան հէնց առաջին շարաթներէն մանուկ աղջկան պիտի դնել այնպիսի պայմանների մէջ որ նրա կազմուածքը ամրանայ ու զարգանայ ապագայ մայրութեան համար: Ահա բժ. Վիրենիուսի տուած խորհուրդները այդ մասին:

«Քանի դեռ երեխայի գանգը չի ոսկրացել, հարկաւոր է գլխի տակը բմբուլէ բարձ դնել, բայց հէնց որ գլուխը պնդուեց բարձը պէտք է մազով, բրդով կամ ծովային ու հնդկական կոշուած խոտով լցնել: Վերմակիկը նոյնպէս բրդից կամ բամբակից պիտի գործած լինի (բամբակով լցրած հաստ վերմակները քնաս են): Երեխայի տակը երկու դոշակ պիտի գցել, վրայինը պէտք է ձիան մազով, կամ յիշած խոտերով լցուած լինի, իսկ տակինը կարելի է աւելի կոշտ անել. նորածնին պիտի պառկեցնել մի լայն անկողնիկի մէջ, կամ թախտի վրայ, որպէս զի նա ազատ լինի իր շարժումների մէջ, և երբէք չը փակել նրան

զանազան զամբիւղների ու երկու թզանոց անկողնիկների մէջ, որտեղ խեղճ երեխան ստիպուած է կռացնել իր անդամները: Նրան պիտի պառկած դրութեան մէջ պահել մինչեւ որ ինքը փորձեր չանի նըստելու, սակայն այն ժամանակն էլ չը պէտք է առանց նեցուկի թողնել երեխային, այլ քամակին բարձ դնել, որի վրայ նա թիք կընկնի»:

Գրկելիս երեխային պիտի փոփոխակի երկու թեւերի վրայ էլ դնել և այն թեւը, որի վրայ նստեցրած է նա, պիտի հորիզոնական ուղղութեամբ (ուղիղ) բռնել: Եթէ երեխան արգէն նստել գիտէ, նրան կարելի է աթոռի վրայ դնել, միայն աթոռի թիկունքը պիտի քիչ թեք լինի, որպէս զի երեխան յենուի նրա վրայ:

Շատ ծնողներ աշխատում են զօռով երեխային ոտի կանգնեցնել: Այդ մի վերին աստիճանի վտանգաւոր զուարճութիւնն է, որի համար տուժում է երեխան:

Ծնողները չը պէտք է մոռանան, որ մանուկը այն ժամանակ միայն կարող է կանգնել, երբ նրա մկանները ուժեղացած են և ոտկրների կապերը ամուր են. հակառակ դէպքում՝ մկանները անկարող են պահպանել ողնաշարը և սա կըծռմուռի ու իբրեւ հետեւանք կըծռմուռի և կոները: Նոյն ձեւով ծուռում են և ոտերը, և, եթէ մէկ ոտն աւելի է ծուռւմ քան միւսը, երեխան կազ է դուրս գալիս, իսկ կոները թերւում է նոյն կողմը:

Առհասարակ մէկ տարեկանից վաղ չը պէտք է աշխատել աղջկան ոտի կանգնեցնել ու քայլել տալ, այլ սպասել մինչև 18 ամսական հասակը և եթէ այդ հասակումն էլ չի քայլում, այն ժամանակ պէտք է խորհրդակցել բժշկի հետ:

Երբ աղջիկն արգէն կարող է ոտի կանգնել պէտք է հետեւել, որ չը ծուռի ոտերից մէկի վրայ, այլ բոլորովին ուղիղ կանգնի և ուղիղ պահի մէջքը: Նստելիս էլ պէտք է երկու գաւակների վրայ ծանրանայ մարմինը և ոչ թէ միայն մէկի: Աղջիկները երբեմն

իրանց հագուստը մի կողմն են հաւաքում՝ և նստում վրան. այդպիսով մի կողմը բարձր է լինում:

Մեր աղջիկների կանգնած, նոյն իսկ նստած դիրքերը միանգամայն անկանոն են ու տգեղ: Ես երկար տարիների ընթացքում դիտել եմ դպրոցների մէջ հազարաւոր աղջիկ-երեխաներ և գտել եմ որ նրանցից շատ քչերը ուղիղ կանգնում են ու նստում: Մեծ մասը յենւում են մի ոտի վրայ, թեքւում են մի կողմ, կամ մի ուսը կախ են քցում: Մէջքները կորացնում են: Յաւախին այն է, որ այս արատաւոր դրութիւնները այնքան արմատացած են լինում նրանց մէջ, որ յաճախ անկարելի է լինում ուղղել:

Հիւանդոտ ծնողները, նա մանաւանդ թոքախտ ունեցողները, աւելի ևս պիտի խնամեն իրանց զաւակներին, որովհետեւ թոյլ են ծնւում սրանք և երկարակեաց չեն լինում:

Ծննդեան հէնց առաջին օրից պիտի ուշ դարձնուի աղջկան ամեն կերպ կազդուրելու վրայ, իսկ կազդուրել կարելի է լաւ սնունդով, մաքուր բացօդեայ կեանքով և մարզութիւններով:

Սնունդ.

Մայրը պարտաւոր է ինքը կերակրել իր զաւակին, եթէ ի հարկէ, առողջ է. հակառակ դէպքում պէտք է ծծմայր վարձել: Ես չեմ կարող այստեղ մանրամասն թուել երեխայի սննդին վերաբերեալ գիտելիքները^{*)}:

Աղջկան կերակրելու գործը դժուարանում է աւելի հասունացած հասակում: մանաւանդ զաչտանի մօտենալու և սկսուելու միջոցներին, երբ աղջիկը նրբազգաց ու քմահաճոյ է դառնում, երբ նրա օրգանիզմի բոլոր ֆունկցիաները փոփոխման են ենթարկւում, երբ ճաշակը աղաւաղւում է և ախորժակը կորչում:

Այս միջոցներին աղջիկը ախորժակի շատ տարօ-

*) Մանրամասն տես իմ «Ենամատարութիւն առողջ երեխաների», Հոկտեմբեր, 1902.

եթէ ցուրտ է, մի վարտիկ ևս և կոֆտայ—ահա քնած երեխայի բոլոր հագուստը:

Իբրև լաւ կազդուրիչ միջոց պէտք է յիշենք և լողացնելը ու շփումները: Այժմ բժիշկները պահանջում են, որ լողարանի ջուրը մանր երեխաների համար գոլ լինի և ոչ թէ տաք: Ըստ Վիրենիուսի կազդուրելու համար լողարանների ջուրը, սկզբում պիտի 28⁰ լինի, երկու ամսականին—27⁰, չորս ամսականին—26⁰, վեց ամսից յետոյ—25⁰, տարուց յետոյ—22⁰: Լողարանից հանելուն պէս պիտի փաթաթել երեխային սաւանի մէջ և լաւ չորացնել, տրորելով ամբողջ մարմինը: Երեկոյեան քնից առաջ լաւ պէտք է շփել մարմինը, առաջին երեք ամիսը գոլիկ ջրով, իսկ յետոյ սառը (սենեակում պահած) ջրով:

Մեր գիւղերում ամառը երեխաները լողանում են գետերում: այդ մի վերին աստիճանի կազդուրիչ միջոց է և ծնողները պիտի խրախուսեն աղջիկներին լողանալու:

Ցաւում ենք, որ յօդուածիս ծաւալը թոյլ չի տալիս մեզ աւելի մանրամասն գրելու նաև ուրիշ առողջապահական անհրաժեշտ պայմանների մասին:

Սակայն չենք կարող չը խոսել մարմնամարզութիւնների մասին, որոնք այնքան արհամարհուած են մեր մէջ, որոնք սակայն մեծ կազդուրիչ ազդեցութիւն ունեն աղջկայ վրայ, որովհետև ամրացնում են մկանները, արագացնում շնչառութիւնը, լաւացնում են մարտողութիւնը, սնունդը և այլն, և այսպիսով արգելում են ոսկրների ծուռումները և սակաւարիւնութիւնը:

X

Մ Ա Ր Զ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Օրորոցի աղջկան օալիք խնամքը.—Արուեստական վարժութիւններ իսկական մարմնամարզութիւն կամ գիմնաստիկա եւ բնական մարզութիւններ կամ խաղեր —Շարժական խաղեր գործիքներով եւ առանց գործիքների (ազատ խաղեր). Ի՞նչ է պահանջում խաղից.—Ազատ խաղերի առաւելութիւնները գիմնաստիկայից.—Նրանց կրթական ու բարոյական նշանակութիւնը.—Բժ. Լվովի կարծիքը.—Ի՞նչ տեսակ մարզումներ են հարկաւոր պատանուիւն.—Կրթական կոչում մարզութիւնները:

Պէտք է դէն գցել վերջապէս ամեն տեսակ կապեր, բարուրներ, բինտեր և այլն, որոնք սեղմում են խեղճ մանկան կուրծքը, կաշկանդում են թեւիկներն ու ոտիկները: Պառկեցրէք փոքրիկին մի ընդարձակ թափաթի կամ անկողնու վրայ կամ, եթէ օրօրոցի մէջ էք բնեցնում, մեծ օրօրոց վերցրէք ու երեխային ազատ մէջը պառկեցրէք, թոյլ տուէք, որ նա զարթնելիս ազատ շարժի իր անդամները, շուռմուռ գայ անկողնիկի մէջ: Լաւ սովորութիւն է օրօրոցի վրայից կախ տալ զանազան գդգիկներ, որոնց հետ երեխան պառկած տեղը խաղում է: Առհասարակ թոյլ տուէք երեխային ինչ գիրք ուզում է բռնի, ինչպէս ուզում է խաղայ: Երբէք չը պիտի աշխատել զօռով ձեռք բռնած վազեցնել և ոչ անվերջ միեւնոյն խաղալիքներ տալ ձեռք: Երեխան ինքը լսւ կը գտնի իր համար խաղալու միջոցներ, որովհետեւ նրա մէջ «պահանջը դէպի շարժողութիւնը նոյնչափ ծանր ու ստիպողական մի զգացմունք է, որքան քաղցն ու ծարաւը», ինչպէս ասում է Լադրանժը: Միլլընն ասում է. «երեխան մի շարժուն էակ է»: Հին դարերում ֆիզիկական մարզութիւնները մանկան կրթութեան ամենակարեւոր մասն էին կազմում, միջին դարերում մարզումները յետ մղուեցին և տեղ տուին մտաւոր կրթութեանը, և վերջին ժամանակներս միայն հասկացուեց, որ պատանու ֆիզիկական ու մտա-

ւոր կրթութիւնը պիտի զուգահեռաբար ու ներդաշնակօրէն ընթանան: Անգլիան առաջին երկիրն էր, որտեղ սկսուեց աղջկայ ֆիզիկական կրթութեան զարգացումն և այնտեղից անցաւ Եւրոպա:

Մենք անկարող ենք այստեղ կանգ առնել ֆիզիկական մարզութիւնների բազմաթիւ ձեւերի վրայ, որ ընթերցողը կը գտնի իմ՝ ուրիշ աշխատութեան մէջ *) սակայն մի քանի հատուած պիտի առաջ բերենք:

Կան երկու տեսակ մարզութիւններ. 1) արուեստական մարմնամարզութիւն (իսկական գիմնաստիկան) և 2) բնական վարժութիւններ, որոնք կոչւում են նոյնպէս և բնական մարզումներ կամ խաղեր անունով:

Մանուկներին, մանաւանդ աղջիկներին, օգտաւէտ են խաղերը. սրանք կատարւում են կամ գործիքների միջոցով կամ ազատօրէն (առանց սրանց): Գործիքներից ամենագործածականը դնդակն է: Շատ լաւ են նոյնպէս և կրօկետը, կրիկետը, ֆուտբալը, լաուն-տենիսը, մեր լեփուկ և ճանը:

Աւելի կարեւոր են ազատ շարժական խաղերը, որոնց մասին մի քանի խօսք պէտք է ասել:

Մանկան մարմնակազմութեան (ոսկրների, մկանների, թորքերի, սրտի) ու նրա հոգեբանութեան մասին մեր ունեցած ծանօթութիւնը, ասում եմ ես յիշած հեղինակութեանս մէջ, որոշ պահանջներ է անում մարզումներից.

1) Մարզումներից այնպիսիներն են միայն օգտակար աճող սերնդին, որոնք պահանջում են մարմնի բոլոր մկանների գործունէութիւնը և ոչ թէ միայն մի գրուպի (օրինակ, միայն թորքերին) ինչպէս այդ տեղի ունի արուեստական վարժութիւնների մէջ. 2) Նրանք պէտք է հեշտ հասկանալի և հեշտ կատարելի լինեն, այսինքն առանց ուղեղի ու մկանների յոգնեցուցիչ լարման, որպէս զի մի նոր դաս չի դառնան մանկան համար. 3) Նրանք

*) Տես իմ «Դպրոցական առողջապահութիւն» գլ. չորրորդ, նոյնպէս և բժ. Բուդուլեանի «Մարմնամարզութիւն»:

պիտի զուարճալի լինեն, որպէս զի երեխան յափշտակումով խաղայ. 4) Վարժութիւններից ամենայարմարները նրանք են, որոնք կատարուում են խմբովին, երգով, գոռալով, երաժշտութիւնով. 5) Վարժութիւնները երբեք չը պէտք է յարմարուեն նրա հասակին. 6) Որքան մանր լինեն երեխաները՝ այնքան յաճախ պիտի փոփոխել խաղերը և այնքան ազատ պիտի լինեն նրանք իրանց ցանկացած խաղը որոշելու համար:

Փիզիկական կրթութեան ձևը, որը համապատասխան է վերոյիշեալ պահանջներին—այդ բարձական վարժութիւններն են, այսինքն խաղը:

Խաղը գլխաւորական մանկան համար միակ ցանկալի և միակ կարելի փիզիկական կրթութիւնն է: Խաղի միջի շարժումները բոլորը բնական են և հեշտ կատարելի: Խաղը պահանջում է մարմնի մկանների բոլորի մասնակցութիւնը.—նրա ամենագլխաւոր մասը վազն է, որը ընդունուած է իբրև ամենալաւ վարժութիւն արեան հոսանքը արագացնելու և, հետեաբար, թէ սրտի և թէ թոքերի գործունէութիւնը զարգացնելու համար: Վերջապէս խաղն է միակ փիզիկական վարժութիւնը, որը մանկան իսկական հրճուանք է պատճառում իր հաւաքական կազմութիւնով, իր ազմուելով, իր մրցումով, իր երբեմն անսպասելի բարդումներով և ծիծաղելի պատահումներով: Մանուկը խաղի մէջ իր բնազդումին է հետևում, թէ շարժումների, թէ իր զուարճանալու ձևի մէջ: Խաղը, կատարուելով առհասարակ բացօդեայ, մեծ բակերում կամ ընդարձակ տեղերում, մի առանձին լայնութիւն և ազատութիւն է տալիս նրա մարզութիւններին, և մանկան սիրտը, կարծես, նոյնպէս լայնանում է: Երեխան խաղերի մէջ նմանում է մի թռչնակի, որը ազատ ճեղքում է օդը և թարմ ու զուարթ սաւառնում է, պտոյտները տալով օդի մէջ, իր ուղղութիւնը փոխելով, բարձրանալով և իջնելով գետին, միշտ թռքերը լայն բացած, ազատ շնչելով: Այն ինչ ապագարտների վրայ ճգնող երեխան (գիմնաստիկա) յիշեցնում է նոյն թռչնա-

կին, որին պինդ փակել են նեղ վանդակի մէջ, որտեղ խեղճը անկարող է թւերն անգամ պարզել, և դուր մթնոլորտում, ամեն շարժուկութեան միջոցին վանդակի պատերին դիպչելով, մնում է թւերը ծալած, կուրծքը սեղմած, տաղտկալի անշարժութեան մէջ... Խաղը բացի ֆիզիկապէս կրթելուց մանկան, նրա բարոյական կրթութեանը նոյնպէս շատ նպաստում է.—նա սովորեցնում է երեխային հաւաքական աշխատանքի, որոշեալ նպատակին հասնելու համար, մշակում է նրա մէջ ընկերական ոգի, բաշխութիւն, կամք, արագ որոշումն, ազատ և ազնիւ մրցման ցանկութիւն, յարգանք դէպի իր սեփական ոյժերը: Գոնէ այս հանգամանքը պէտք է ի նկատի ունենան մեր մանկավարժները, և ուսումնարանական մասնաժողովները, եթէ նրանք դպրոցական առողջապահութիւնը մի աւելորդ բան չեն համարում: Նրանք պէտք է նոյնպէս չը մոռանան, որ ֆիզիկական կրթութիւնը զուգընթաց է գնում մտաւոր կրթութեան հետ, և որքան լաւ է դրած մի դպրոցում՝ առաջինը, նոյնքան և աւել է ընթանում երկրորդը: Այսօր դա ստատիստիկայով հաստատուած մի փաստ է, որը ակներև է անգլիական, ֆրանսիական և բելգիական դպրոցներում, ուր մտցրած են շարժական վարժութիւններ:

«Բոլոր մարմնական վարժութիւններից միայն կազդուրիչ խաղը պարունակում է իր մէջ հոգու և մարմնի կրթութեան հիմնական սկզբունքները, ասում էր Բուդապեշտի կօնգրէսին Բերրեվիցը: Մկանների աշխատանքի հետ միասին նա զարգացնում է մանկան մէջ կամք, սովորեցնելով նրան լինել տոկուն, համբերող, ուշադիր և իր գլխի տէրը:

Փոխադարձ հպատակութիւնը սովորեցնում է անկողմնապահ լինել և զարգացնում է զոհաբերութեան ոգին: Միւս կողմից խաղը պահանջում է արիութիւն, վստահութիւն, ճիշտ սահմանուած գործողութիւն, հաստատ կամք.—նա կարող է սակաւացնել բնական պա-

կասութիւնները և վերջապէս նա աւելի սերտ կապերով մտերմացնում է աշակերտներին ղեկավարների հետ»:

Պրոֆ. Լվովը շատ իրաւացի նկատում է, թէ խաղը միանգամայն բաւականութիւն է տալիս այն բոլոր պահանջներին, ինչ որ առողջապահութիւնը անում է ֆիզիկական վարժութիւններից: Խաղերը միեւնոյն չափով յարմարում են մանկան ֆիզիկական կազմութեանը և նրա բարոյական պահանջներին: Միեւնոյն ժամանակ նրանք զուարճութեան միջոց են: Ֆիզիկական տեսակէտից, նրանք չեն պահանջում ո՛չ չափազանց ճգնումն և ո՛չ այս ինչ կամ այն ինչ մկանների մարզութեան սահմանափակումն: Ամենաբարդ խաղերն անգամ միշտ պահանջում են միմիայն հասարակ ու բնական շարժումներ: Խաղի համար հարկաւոր է վազ, թռիչք, սողալ, հրումն, ծեծ և այլն, այսինքն այն, ինչ որ ամեն երեխայ անում է բնականաբար, համարեա ծննդից: «Խաղը, ասում է Լվովը ընդգրկում է մարդկանց գործողութիւնների մի ընդարձակ շրջան, որոնք մի կողմից չեն պահանջում ծանր աշխատանք, իսկ միւս կողմից հըրճուանք ու զուարճութիւն են տալիս»: Նոյնը ասում է և Լաբրանժը. «Բացի զուարճութիւնը, որը առողջապահական տեսակէտից անհրաժեշտ է մանկանը, այս խաղերի մէջ կատարուող մարզումներն էլ միանգամայն բաւարար են նրա համար: Համոզուելու համար բաւական է նայել խաղից յետոյ այն կենդանացած դէմքերին, այն փայլուն աչքերին, որոնք ապացոյց են, որ արիւնը ոյժով շրջում է բոլոր երակներում,—նայել կրծքի ուժեղ բարձրանալուն ու իջնելուն, որը ցոյց է տալիս, թէ մկանների գործողութիւնը բաւական է եղել օդի ծարաւ յարուցանելու համար և ստիպել է երեխային մեծ քանակութիւնով թթուածին բարչել իր թոքերը:

Փոքր հասակում տարբերութիւն չը կայ աղայ և աղջկայ մէջ ֆիզիկական կրթութեան տեսակէտից: Մանկական խաղերը, քայլը, վազը, թռիչքները, գնդակախա-

ղը և այլն հաւասարաչափ օգտակար են: Բայց շուտով զանազանութիւնը որոշուում է: Աղջկայ շարժումները շուտով դառնում են աւելի մեղմ և աւելի կըշռուած: Եւ, ճշմարիտ որ, աղջկայ ֆիզիկան բոլորովին տարբեր է,— նրա կոնքը աւելի կարօտ է զարգանալու, քան թեւերը: Հետեւաբար թեւերի մարզութիւնները փնասակար են աղջկան, և բնագոյումով սա չէ սիրում թեւերի ծանր ու դժուար վարժումներ, այն ինչ վաղը, թռիչքները, պարը և այլն շատ ախորժելի են նրան:

Այս դիտողութիւնների և անատոմիական տեղեկութիւնների վրայ հիմնուելով, աղջիկների առողջապահութիւնը պահանջում է նրանց համար, բացի մանկական հաւաքական խաղերից, նոյնպէս և պար, պարանի վրայ թռիչքներ, վօլան, շրջանակ, զբոսանք: Այս ամենը զարգացնում են աղջկայ փորի ու մէջքի մկանունները, այսինքն տալիս են նրանց գեղեցիկ իրան և լայն աւազան, որը անհրաժեշտ է առողջ ծնունդի համար:

Քննած լինելով չորս հազարից աւելի երեխաներ թիֆլիսի ծխական դպրոցներում, մենք եկել ենք այն եզրակացութեան, որ միայն լաւ դրուած ֆիզիկական կրթութիւնը կարող է ուղղել այս խեղճերի աղաւաղուած, ծըռմուռած մարմինը: Մեր դպրոցական աղջիկներից շատ քչերը իրանց «դրուստ են պահում»: Մեծ մասը անպատճառ մէկ կողքի վրայ են կանգնած, ողնաշարը ծռած, մի ուսը ցած, գլուխը մի կողմ թեքած,—նոյնը նկատուում է և նստած տեղը: Դրա պատճառն այն է, որ նրանք մինչև անգամ երկու ոտի վրայ կանգնել չը գիտեն և ոչ երկու գաւակի վրայ նստել... Դա մի վերին աստիճանի ցաւալի իրողութիւն է, որի վրայ մենք հրաւիրում ենք մեր մանկավարժների ուշադրութիւնը: Այս «արատաւոր դիրքերը» (attitudes vicieuses) մեծամեծ փնասների պատճառ են դառնում, և ամեն ջանք պէտք է գործ դնել ուղղելու նրանց: Իսկ

այդ հնարաւոր է միայն համապատասխան վարժումների միջոցով»:

Բայց քանի որ մեր աղջիկները ոչ միայն խաղալ չը գիտեն, այլ և կանոնաւոր շարժումներ չունեն, ուստի սկզբից պէտք է սովորեցնել երեխային մարմնի մասերը, աջն ու ձախը և հասարակ շարժումները (թեւերի, ոտերի, գլխի, ողնաշարի): Այս մարզութիւնները մենք կանուանենք կրթական մարզումներ*) նրանք պիտի կատարուեն այնպէս, որ ձանձրոյթ չը պատճառեն երեխաներին.—երբէք չը պէտք է ստիպողական դարձնել նրանց:

ՆՍՏԱՐԱՆ-ՍԵՂԱՆՆԵՐԸ

XI

Ողնաւորի կորուրիւնները դպրոցներում անկտրոն նստարանների պատճառով.—Յարմարագոյն եւ ունվնաս նստարան-սեղանը: Դիւսանցիայի նշանակութիւնը.—Աղիւսակ նստարանի չափերի: Անվնաս դուրսիւնը.—Տան պարսպմունքները:

Մատաղ հասակից սկսւում է մանկան համար մտաւոր աշխատութիւնը: Երբեմն շտապող ծնողները 5-6 տարեկան հասակից սկսած արդէն երեխային նստեցնում

*) Բժ. Շրեյբերը (Schreiber) հետեւեալ պրոգրամն է տալիս.

1) Թեւերով շրջանական պտույտ անել—20 անգամ:

2) Թեւն առաջ պարզել (30),—մի կողմը (30),—բարձրացնել (12),—8 մինչեւ 10 խոր շնչառութիւն անել:

3) Մէջքը պատել (30) անգ.)—Տրորել ձեռները (80),—Ուղղել մէջքը (72),—Ոտը բարձրացնել և պարզել կողքանց: Խոր շնչառութիւն:

4) Մօտեցնել ոտերը (8),—Պարզել և ծալել ոտերը (40),—Սղոցելու շարժումներ անել (30),—Ծունկը առաջ բարձրացնել (12),—8 մինչեւ 10 շնչառութիւն:

5) Թեւերը առաջ ու յետ դցել (10),—Պարզել (24),—Երկու թեւերը կողքանց դուրս ու ներս դցել (100): 8—10 շնչառութիւն:

6) Փայտ ջարդելու շարժում անել (20), քաղ անելու—(24),—Վաղվել տեղն ու տեղը: 8—10 շնչառութիւն:

7) Ոտը յետ ու առաջ (24) և կողքանց դցել (24): Ըստ Շրեյբերի այս շարք շարժումները հաւասար են 4—5 ժամ քայլելուն:

Հետեւաբար պէտք է շատ մեղմ կերպով և աստիճանաբար վարժեցնել մանուկներին:

Տես նոյնպէս Բժ. Բուդուդեանի «Մարմնամարզութիւնը»:

են սեղանի դէմ և գրել ու կարգալ սովորեցնում: Մի քիչ յետոյ երեխան տրւում է դպրոց, որտեղ նա անց է կացնում օրուայ մի որոշ մաս:

Այս ժամանակից սկսւում է մի վտանգալից շրջան երեխայի կազմուածքի համար, որովհետեւ անկանոն նստելը պարապելու ժամանակ և անկանոն գրութիւնը կարող է առաջացնել ողնաշարի և կոնքի ծռումներ:

Դեռ 50-60 տարի առաջ շվէյցարական առողջապահները Ֆինչ, Ֆարներ և Դիւյօմ, ցոյց տուեցին, որ դպրոցական կեանքում, նստարանների անյարմարութիւններից առաջանում են ողնաշարի ծռումներ: Դիւյօմի ասելով, աշակերտների 1/3-ը կորութիւններ են ստանում, Բեմբօլդը աւելի եւս մեծ թիւ է տալիս, համարեա 50%, իսկ Պարովը մինչ և 77% սովորող երեխաների:

Դպրոցական առողջապահութիւնը զբաղուեց այս խնդրով և առանձին խնամքով սկսեցին ուսումնասիրել նստաւանդների խնդիրը:

Ամենից առաջ որոշուեց, որ սեղանն ու նստարանը պիտի կառւ լինեն, կամ այնքան ծանր, որպէս զի երեխան չը կարողանայ նրանց իրարից հեռացնել կամ մօտեցնել միմեանց, և երկրորդ, որ սեղանի և նստարանների չափերը պիտի համապատասխանեն աշակերտի հասակին: Շատ կարեւոր են հետեւեալ չափերը:

1. Նստաւանդի բարձրութիւնը պիտի այնքան լինի, որ նստողի ոտերը հանգիստ դետնին հանգչեն: Առհասարակ նա պիտի հաւասար լինի մանկան հասակի 2/7-ին:

2. Նստաւանդի լայնութիւնը կամ խորութիւնը այնքան պիտի լինի, որ սրունքները ազատ կախ ընկնեն և նստարանի եզրը չսեղմի ծնկան խողովը: Նա հաւասար է մանկան 1/5 բարձրութեան:

3. Դիֆֆերենցիան (սարբերութիւն) սեղանի տախտակի եզրի բարձրութիւնն է նստարանից, Տղաների համար նա հաւասար է հասակի 1/6-ին, իսկ աղջիկներ-

րի համար պէտք է այս չափին աւելացնել 2 սանտիմետր հագուստի հաստութեան պատճառով:

4. Դիսանցիա (հեռաւորութիւն) կոչուում է նստարանի հորիզոնական հեռաւորութիւնը սեղանից: Նա պէտք է բացասական լինի, այսինքն. նստարանի եզրը պէտք է մի քիչ սեղանի տակը մտնի, այնպէս որ, եթէ մի գիծ իջեցնենք սեղանի եզրից, այդ գիծը կընկնի նստարանի վրայ և կը կտրի նրանից մի մասն, որը սեղանի տակն է մնում: Այս մասը պիտի ունենայ 5 սանտիմետր երկարութիւն: Երբ որ աթոռը հեռու է սեղանից, դիստանցիան դրական է, այսինքն յիշած գիծը չի ընկնում նստարանի վրայ, այլ նրանից առաջ: Դիստանցիան ահագին նշանակութիւն ունի աշակերտի ուղիղ թէ արատաւոր նստելու վրայ: Երբ նստարանը սեղանից հեռու է, նստողը պիտի թեքուի դէպ առաջ, որից շուտով յոգնում է, կուրծքը դիպչում է սեղանի եզրին և այլն:

Սակայն բացասական դիստանցիայով դասասեղանները մի անյարմարութիւն ունեն, — այն որ երեխան անկարող է կանգնել ու դաս պատասխանել: Այդ դժուարութիւնը զանազան կերպով է հեռացնում: — կամ սեղանի տախտակի մի մասը ծալում է միւս մասի վրայ (Պարովի սիստեմ) կամ ամբողջ տախտակը յետ ու առաջ է բաշտում (Կանցէի սիստեմ), կամ թէ չէ նստարանն է յետ գցւում, երբ երեխան վեր է կենում:

Միայն այս ձեւի նստարանների վրայ մանուկը կարող է ուղիղ նստել եւ ուրեմն չը վնասել իրան:

Ինչպէս վերեւն ասել ենք, մանկան հասակին (բարձրութեանը) պիտի համապատասխանեն դասասեղանների չափերը:

Բերում ենք այստեղ պրոֆ. Էրիսմանի մի մանրամասն աղիւսակ, որի մէջ մանկան հասակի հանդէպ դրուած են նստարանների չափերը:

ԱՂՋԻՍԱՆ ԷՐԻՄՈՐԱՆԻ

8 դասներ չափաբ

մեղվի թիվը	15	15	20	20	25
նվերում տող	12	14	16	18	20
նվերում տող	10	10	10	12	12
նվերում տող	20	20	22	24	24
նվերում տող	7	7	8	8	7
նվերում տող	20	22	24	26	30
նվերում տող	20	22	24	26	30
նվերում տող	5	5	5	5	5
նվերում տող	18	20	22	24	26
նվերում տող	25	27	29	31	35
նվերում տող	28	32	36	40	48
նվերում տող	110	110	120	120	130
նվերում տող	10	10	10	10	10
նվերում տող	40	40	40	40	45
նվերում տող	46	52	58	64	76
նվերում տող	52	58	64	70	82
նվերում տող	109	120	130	142	153
նվերում տող	120	130	142	153	164
նվերում տող	131	142	153	164	175
նվերում տող	142	153	164	175	186
նվերում տող	153	164	175	186	197
նվերում տող	164	175	186	197	208
նվերում տող	175	186	197	208	219
նվերում տող	186	197	208	219	230
նվերում տող	197	208	219	230	241
նվերում տող	208	219	230	241	252
նվերում տող	219	230	241	252	263
նվերում տող	230	241	252	263	274
նվերում տող	241	252	263	274	285
նվերում տող	252	263	274	285	296
նվերում տող	263	274	285	296	307
նվերում տող	274	285	296	307	318
նվերում տող	285	296	307	318	329
նվերում տող	296	307	318	329	340
նվերում տող	307	318	329	340	351
նվերում տող	318	329	340	351	362
նվերում տող	329	340	351	362	373
նվերում տող	340	351	362	373	384
նվերում տող	351	362	373	384	395
նվերում տող	362	373	384	395	406
նվերում տող	373	384	395	406	417
նվերում տող	384	395	406	417	428
նվերում տող	395	406	417	428	439
նվերում տող	406	417	428	439	450
նվերում տող	417	428	439	450	461
նվերում տող	428	439	450	461	472
նվերում տող	439	450	461	472	483
նվերում տող	450	461	472	483	494
նվերում տող	461	472	483	494	505
նվերում տող	472	483	494	505	516
նվերում տող	483	494	505	516	527
նվերում տող	494	505	516	527	538
նվերում տող	505	516	527	538	549
նվերում տող	516	527	538	549	560
նվերում տող	527	538	549	560	571
նվերում տող	538	549	560	571	582
նվերում տող	549	560	571	582	593
նվերում տող	560	571	582	593	604
նվերում տող	571	582	593	604	615
նվերում տող	582	593	604	615	626
նվերում տող	593	604	615	626	637
նվերում տող	604	615	626	637	648
նվերում տող	615	626	637	648	659
նվերում տող	626	637	648	659	670
նվերում տող	637	648	659	670	681
նվերում տող	648	659	670	681	692
նվերում տող	659	670	681	692	703
նվերում տող	670	681	692	703	714
նվերում տող	681	692	703	714	725
նվերում տող	692	703	714	725	736
նվերում տող	703	714	725	736	747
նվերում տող	714	725	736	747	758
նվերում տող	725	736	747	758	769
նվերում տող	736	747	758	769	780
նվերում տող	747	758	769	780	791
նվերում տող	758	769	780	791	802
նվերում տող	769	780	791	802	813
նվերում տող	780	791	802	813	824
նվերում տող	791	802	813	824	835
նվերում տող	802	813	824	835	846
նվերում տող	813	824	835	846	857
նվերում տող	824	835	846	857	868
նվերում տող	835	846	857	868	879
նվերում տող	846	857	868	879	890
նվերում տող	857	868	879	890	901
նվերում տող	868	879	890	901	912
նվերում տող	879	890	901	912	923
նվերում տող	890	901	912	923	934
նվերում տող	901	912	923	934	945
նվերում տող	912	923	934	945	956
նվերում տող	923	934	945	956	967
նվերում տող	934	945	956	967	978
նվերում տող	945	956	967	978	989
նվերում տող	956	967	978	989	1000

ԱՂՋԻԿ ԵՐԻՄՈՐԱՆԻ

մեղվի թիվը	15	15	20	20	25
նվերում տող	12	14	16	18	20
նվերում տող	10	10	10	12	12
նվերում տող	20	20	22	24	24
նվերում տող	7	7	8	8	7
նվերում տող	20	22	24	26	30
նվերում տող	20	22	24	26	30
նվերում տող	5	5	5	5	5
նվերում տող	18	20	22	24	26
նվերում տող	25	27	29	31	35
նվերում տող	28	32	36	40	48
նվերում տող	110	110	120	120	130
նվերում տող	10	10	10	10	10
նվերում տող	40	40	40	40	45
նվերում տող	46	52	58	64	76
նվերում տող	52	58	64	70	82
նվերում տող	109	120	130	142	153
նվերում տող	120	130	142	153	164
նվերում տող	131	142	153	164	175
նվերում տող	142	153	164	175	186
նվերում տող	153	164	175	186	197
նվերում տող	164	175	186	197	208
նվերում տող	175	186	197	208	219
նվերում տող	186	197	208	219	230
նվերում տող	197	208	219	230	241
նվերում տող	208	219	230	241	252
նվերում տող	219	230	241	252	263
նվերում տող	230	241	252	263	274
նվերում տող	241	252	263	274	285
նվերում տող	252	263	274	285	296
նվերում տող	263	274	285	296	307
նվերում տող	274	285	296	307	318
նվերում տող	285	296	307	318	329
նվերում տող	296	307	318	329	340
նվերում տող	307	318	329	340	351
նվերում տող	318	329	340	351	362
նվերում տող	329	340	351	362	373
նվերում տող	340	351	362	373	384
նվերում տող	351	362	373	384	395
նվերում տող	362	373	384	395	406
նվերում տող	373	384	395	406	417
նվերում տող	384	395	406	417	428
նվերում տող	395	406	417	428	439
նվերում տող	406	417	428	439	450
նվերում տող	417	428	439	450	461
նվերում տող	428	439	450	461	472
նվերում տող	439	450	461	472	483
նվերում տող	450	461	472	483	494
նվերում տող	461	472	483	494	505
նվերում տող	472	483	494	505	516
նվերում տող	483	494	505	516	527
նվերում տող	494	505	516	527	538
նվերում տող	505	516	527	538	549
նվերում տող	516	527	538	549	560
նվերում տող	527	538	549	560	571
նվերում տող	538	549	560	571	582
նվերում տող	549	560	571	582	593
նվերում տող	560	571	582	593	604
նվերում տող	571	582	593	604	615
նվերում տող	582	593	604	615	626
նվերում տող	593	604	615	626	637
նվերում տող	604	615	626	637	648
նվերում տող	615	626	637	648	659
նվերում տող	626	637	648	659	670
նվերում տող	637	648	659	670	681
նվերում տող	648	659	670	681	692
նվերում տող	659	670	681	692	703
նվերում տող	670	681	692	703	714
նվերում տող	681	692	703	714	725
նվերում տող	692	703	714	725	736
նվերում տող	703	714	725	736	747
նվերում տող	714	725	736	747	758
նվերում տող	725	736	747	758	769
նվերում տող	736	747	758	769	780
նվերում տող	747	758	769	780	791
նվերում տող	758	769	780	791	802
նվերում տող	769	780	791	802	813
նվերում տող	780	791	802	813	824
նվերում տող	791	802	813	824	835
նվերում տող	802	813	824	835	846
նվերում տող	813	824	835	846	857
նվերում տող	824	835	846	857	868
նվերում տող	835	846	857	868	879
նվերում տող	846	857	868	879	890
նվերում տող	857	868	879	890	901
նվերում տող	868	879	890	901	912
նվերում տող	879	890	901	912	923
նվերում տող	890	901	912	923	934
նվերում տող	901	912	923	934	945
նվերում տող	912	923	934	945	956
նվերում տող	923	934	945	956	967
նվերում տող	934	945	956	967	978
նվերում տող	945	956	967	978	989
նվերում տող	956	967	978	989	1000

Սակայն ամենայարմար նստարանների վրայ էլ նըստած, երեխան կարող է ծռել իր ողնաշարն ու կոնքը, եթե գրութիւնը անկանոն է:

Ֆիզիոլոգիան կանոնաւոր ու անփնաս է համարում այնպիսի գրութիւնը, երբ տառերի հիմնական շտրիխները ուղղահայեաց են երկու աչքերի միջով անցնող գծին, իսկ երբ երեխան ուղիղ է նստած, այս գիծը զուգահեռական է սեղանի եզրին:

Այստեղից գուրս է գալիս, որ ընդունելու է ու-

զիղ (և ոչ թէ թեք) գրութիւնը, ուրիշ խօսքերով. երեխան այնպէս պիտի գրի, որ տառերը թեք չը լինին, այլ ուղիղ:

Գրութեան միջոցին հարկաւոր է պահպանել հետեւեալ պայմանները:

1) Տետրակը պէտք է գրուի ուղղակի գրողի կրծքի առաջ, ոչ աջ և ոչ ձախ. 2) Երեխան պիտի ուղիղ նստի նստարանի վրայ կռնակը թիկունքին և երկու ձեռները մինչև արմունկները սեղանի վրայ, այնպէս որ արմունկները սեղանի վրայ չըլինեն, այլ կախ մնան. 3) Ոտերը պէտք է կամ յատակին հասնեն կամ առանձին պատուանդանին. 4) Գլուխը պիտի միշտ բարձր ու ուղիղ պահուի, տետրից 25—30 և աւելի սանտիմետր հեռու. 5) Աչակերտը երբէք չըպիտի կուրծքը սեղանին դիպցնի, այլ գոնէ 8—4 ս. նրանից հեռու պահի. 6) Տառերի հիմնական գծերը պիտի ուղղահայեաց լինեն սեղանի եզրին:

Այս են առողջապահութեան արած պահանջները, և այս պահանջներին լիովին բաւարարութիւն պիտի տայ դպրոցը *):

Սակայն երեխան տանն էլ պիտի ժամերով նստած գրի ու կարդայ: Հետեւաբար տանն էլ պէտք է նստարանի ու սեղանի չափերը գոնէ մօտաւորապէս այն լինեն, ինչ որ մեր առաջ բերածները:

Ամենից յարմարը ի հարկէ կը լինէր այսպիսի սեղան ձեռք բերել: Բայց քանի որ աղջիկը մեծանում է, այժմ շինում են նաեւ այնպիսի նստարաններ ու սեղաններ, որի բոլոր չափերը փոփոխելի են—այսինքն. նրանց կարելի է բարձրացնել ցածրացնել, դիֆֆերենցիան փոփոխել, միայն դիտարանցիան է, որ պիտի միշտ բացասական մնայ: Ցաւակցաբար այսպիսի սեղաններ թանգ արժեն և մատչելի են ունեւորներին միայն:

*) Մանրամասնութիւնների համար տ. իմ «Դպրոցական առողջապահութեան», Քիֆիւզ, 1895.

Աղբատ ընտանիքներում պէտք է աշխատել ունեցած սեղանով ու աթոռներով այնպէս յարմարուել, որ մատաղահաս աղջիկը ուղիղ պահի իրան, առանց ծըռմը-ռուելու:

Դրա համար աթոռը կամ տարուրետը (նստարանիկ) այնպէս գրէք, որ եզրը սեղանի տակը մտնի: Եթէ երեխան փոքր է աթոռի վրայ կոշտ բաներ դարսէք, օրինակ գրքեր կամ տախտակներ, և որպէս զի դռերը կախ չընկնեն, տակը մի ցած տարուրետ գրէք:

Ա Ղ Զ Կ Ա Յ Հ Ա Գ Ո Ւ Ս Տ Ը

XII

Յայն եւ Հռովմայեցի կնոջ հագուստը.—Այժմեան հագուստի զիստւոր մասերը.—Կորսեթի ծագումը.—Կորսեթ իբրեւ մի վնասակար ապագրաս.—Նրա սեղմումից առաջացած վնասները աղջկայ կագմուածքի համար.—Շնչառութեան եւ արեան օրջանառութեան խանգարումները, սրովայնի գործարանների ձեւումն ու սեղանանումն եւ այլն.—Կորսեթի ազդեցութիւնը աղջկայ ստիմքների վրայ.—Ջանազան կապերի վնասները եւ այժմեան իւրկաների անյարմարութիւններ.—Շլէյքների առաջացած վնասները.—Այժմեան սպիտակեղէնը ու ոսկամանները.—Բողոք կանացի կոստիւմի դէմ զանազան երկրներում.—Առաքարկած բեճորմները: Ինչ պէ՞տ է դառնայ կնոջ կոստիւմը անվնաս լինելու համար.—Մեր գաւառական կանացի եռագուստը առողջապահական տեսակէտից: Լ ի Ք ր եւ նրա գանազան ձեւերն ուր ձեւի իւրկան եւ կօշիկները:

Աղջիկ-երեխայի հագուստը չը պէտք է տարբերուի տղայի հագուստից մինչեւ որոշ հասակ:

Հին աշխարհում երկու սեռի պատանիներն միեւնոյն տեսակ էին հագնուում:

Հագուստը բաղկացած էր մէկ կամ երկու լայն կտորներից, որոնք ազատօրէն և որոշ ճաշակով փաթաթում էին մարմինը ուսերից մինչեւ օրունքները, քնքշութեամբ ուրուադժելով կանացի ձեւերը: Տակի կտորը (տունիկա), սերտ կաշում էր մարմնին, խոկ վրայինը բոլորովին ազատ փոնթերով իջնում էր ուսերից: Կլասսիկ կլինը չը գիտէր ճնշել իրան զանազան

կապանքներով, տեսմաներով, կորստներով և այլն: Մի գօտի միայն երբեմն գրկում էր իրանը խիտոնի վրայով, և նպատակ ունէր միայն հագուստը բիփ պահելու:

Ֆրանկների կանայք սկսեցին աւելի սեղմել տունիկայի վերին մասը այն աստիճան, որ կպաւ մարմնին և պարզ յայտնագծեց կնոջ իրանը ու կուրծքը:

Այնուհետեւ կանացի կոստիւմը զարմանալի փոփոխութիւնների է ենթարկուում, և տարազը իր երկար պատմութիւնն ունի:

Գլխաւոր յեղափոխութիւնը կայանում է նրանում, որ հին տունիկան կարծես կիսում է, և կանացի հագուստը երկու մասի է բաժանւում, վերեւի մասը—լիֆ, կամ կորսաժ ու ներքեւի մասը—իւրկան: Յետոյ վերեւի մասը սկսում է ճեղքել առաջուց, կամ յետեւից կամ կողքերին, որպէս զի հնար լինի ձգձգել նրան ու աւելի եւս ընդիւնդ կերպով տեսանելի անել կնոջ կրքերի անյարթութիւնը: Յետոյ մէջ տեղ են գալիս կէտի բխերը կամ պողպատէ ձուլերը, որ հագցնում էին կորսաժի մէջ, որպէս զի աւելի ձիգ պահեն բիւստը, այսպիսով իրանը աւելի եւս սեղմուեց ու բարակեց: Այս է կորսեթի ծագումը:

Հուպ տուած ու բարակացրած իրանը աւելի ընդիւնդ կերպով ընդգծում է կուրծքը, ու ազդրերը, կանացի այդ ֆիզիկական հրապոյրները, և կնոջ հանճարը դառաւ կորսեթ, որը մի հեղինակ ոչ թէ հագուստեղէն, այլ ապալարաւ է անուանում:

Օրիորդը և կինը տանջւում են կորսեթից, զգում են նրա ահագին փնասները, բայց և այնպէս երբեք չեն կամենում ձեռ վերցնել նրանից, հետևելով մի ֆրանսուհու սրախօսութեանը, թէ «եթէ ուզում ես գեղեցիկ երևալ, պիտի տանջուես»:

Կորսեթը դառաւ կնոջ հագուստի անհրաժեշտ և գուցէ ամենակարևոր մասը. այն աստիճան, որ առանց նրան փողոցը դուրս գալը և հիւր ընդունելն անգամ անպարկեշտութիւն է համարւում:

Այն ինչ նա մեծամեծ փրամներ է հասցնում մանաւանդ աղջկան։

Կորսետի դերը կայանում է նրանում, որ սեղմելով իրանը (տալիան) ու բարձրացնելով կուրծքը (ստինքները) ճոխացնում է բիւստը։

Գուցէ և շատ տղամարդիկ յափշտակուեն այդ կիսաշինծու հրապոյրներով, բայց որքան թանգ է նստում այդ աղջկան!

Նորատի աղջկայ մատաղ, նազուկ կուրծքը, որի կողերը դեռ գուցէ ոսկրացած էլ չեն, որի մկանները դեռ թոյլ են, սեղմում են կոշտ ու կոպիտ ապալարաւի մէջ, որը իր երկաթէ ձողերով դիք է պահում՝ ամբողջ իրանը և մէջքը, սեղմում է կրծքի վանդակի ներքևի մասը, և այսպիսով կողերի ազատ ելևէջներին անյաղթելի խոչընդոտ դառնում։

Բնական ազատ շնչառութիւնը անկարելի է դառնում կորսետի մէջ, որովհետև սա սեղմելով կրծքի վանդակի ներքևի մասը, մօտեցնում է իրար կողերը և հուպ է տալիս ու կռկեցնում է թոքերի ներքևի (ամենամեծ) մասերը։

Սրանից հետևում է այն, որ կորսետ հագնող աղջկայ շնչառութիւնը չափազանց մակերեւոյթային է դառնում, ուրիշ խօսքերով, օդը չի տարածւում թոքերի բոլոր անկիւնները, ինչպէս ջուրը չի լցուի սպունդի բոլոր ծակերը, եթէ հուպ տուած սպունդը ջրի մէջ դնենք։

Այստեղից պարզ է, որ այդ շնչառութիւնը անբաւարար պիտի լինի, իսկ սրա հետևանքն այն է, որ արիւնը լաւ չի մաքրւում և դրանից առաջ է գալիս սրտի բաբախումն, գլխացաւ, գլխապտոյտ, ուշագնացութիւն և... մինչև անգամ մահ!

Այո, եղել են մահուան դէպքեր... կորսետից.— մօդայի զոհեր!

Այդ դեռ բոլորը չէ։

Հոկտեմբեր. 1902.

Կորսետի երկար գործածութիւնից առաջ են գալիս ընդհանուր առողջութեան խանգարումներ, — սակաւարիւնութիւն, ընդհանուր թուլութիւն, նուազումն, և որ աւելի ևս վտանգաւոր է — ներվային զանազան խանգարումներ!

Բացի այդ, կորսետը համարեա անշարժ դարձնելով մէջքը ու խիստ սահմանափակելով կողերի ելևէջները, գրեթէ անշարժութեան է մատնում (գոնէ նոյնպէս խիստ սահմանափակում է) մէջքի ու կողերի մկանները, և հետեւաբար արգելում է նրանց ամրանալուն ու զարգանալուն: Եւ այս կիսազարգացած մկանները պիտի մեծ ճիգ գործ դնեն, որպէս զի կորսետի տակից կարողանան կատարել շնչառութեան ակտը: Հասկանալի է, որ նրանք շուտով պիտի յոգնեն, և այս է պատճառը, որ կորսետի մէջ սեղմուած կանայք մի քանի ժամից յետոյ սաստիկ յոգնածութիւն են զգում և տուն վերադառնալիս կիսաուշաթափ մի կերպ դէն են գցում այս ինկուիզիցիայի ապարատը ու վայր ընկնում անկողնու վրայ:

Կորսետը սաստիկ խանգարում է նոյնպէս արեան կանոնաւոր շրջանառութեանը:

Սեղմելով կուրծքը կորսետը սեղմում է նոյնպէս և անհամար մեծ ու փոքր երակներ, ու զարկերակներ, որոնց մէջ արիւնը մեծ դժուարութիւնով է հոսում, իսկ այնտեղից դուրս քշուած արիւնը լցւում է գլուխը, ոտերը: Արեան այս անհաւասար շարժողութիւնը սաստիկ դժուարացնում է սրտի գործը, որը պիտի ճիգ թափի այս բոլորը կանոնաւորելու համար:

Հասկանալի է, որ եթէ կորսետը հազցնուեն աղջկան մատաղ հասակից, նրա սիրտը կը շեղուի կանոնաւոր զարգացումից, կ'արատաւորուի և կը հիւանդանայ:

Տեսէք, ինչպէս սեղմուած են որովայնի գործարանները, ինչպէս ճնշուած են նրանք: Ամենից շատ տուժում են ստամոքսը և լեարդը, — ստամոքսը անկա-

րող է լինում բաւականաչափ լայնանալ ուտելու ժամանակ (դրանից առաջ է գալիս սրտնեղութիւն, սրբութեանութիւն և փսխումն), իսկ լեարդը ուղղակի տեղահան է լինում, դուրս է գալիս կողերի տակից, ու ընկնում է ուղղակի հէնց կորստի ճշման տակ: Դրանից առաջանում է լեղիի անկանոն գոյանալն ու արտադրումն (որից մարսողութիւնը սաստիկ խանգարում է), լեղիի պարկի մէջ գոյանում են քարեր և այլն:

Տեղից հանած լեարդը իր ամբողջ ծանրութեամբ սեղմում է փորի միւս գործարանների վրայ, իջեցնում է նրանց, ծանրանում է երակների ու ներվերի վրայ, ու հարկւր տեսակ ցաւեր ու խանգարումներ առաջացնում:

Մի քանիսների կարծիքով կորստը տեղահան է անում նոյնպէս և երիկամները:

Պրոֆ. Իվանովսկին, կանանց դիակներ հատելիս, շատ յաճախ գտնում էր լեարդի վրայ մի խոր ակոս, որը կապերից էր առաջացել: Ինքը լեարդը այդ տեղում յարատեւ բորբոքման մէջ էր, իսկ ակոսից ցած մասը երկարացած և իջած էր:

Արեան չրջանառութիւնը ճշուած աղիքների մէջ դժուարանում է, նոյնպէս և նրանց բնական շարժողութիւնները, որոնք անհրաժեշտ են լաւ մարսողութեան համար:

Այս բոլոր խանգարումների վրայ պէտք է աւելացնել նաև սեռական գործարանների ճշման վատ հետեանքները: Պէտք է գիտենալ, որ մատաղահաս աղջկայ զաւակատունը կոնքի գաւակի մէջ չէ պարունակւում, այլ աւելի բարձր է դրուած: Հասկանալի է ուրեմն, որ կորստը պիտի նրան ճնշի էլ, ու նրա մէջ ևս խանգարի արեան կանոնաւոր շրջանը, որից կարող են առաջանալ սեռական գործարանների դրգուումն, գուցէ և դաշտանի վաղաժամ բացուելը:

Մի երկու խօսք եւս կորստի աղգեցութեան մասին աղջկայ ստինքների զարգացման վրայ:

Աղջկայ ստիճանները վերին աստիճանի կարեւոր օրգաններ են, և նրանց կանոնաւոր զարգացմանը ոչ մի արգելք չը պէտք է գրուի: Այն ինչ կորսետը բարձրացնում է նրանց ու սեղմում է կրծքին: Մատաղ հասակից կորսետ հագնող աղջիկների կուրծքը ազատ չի զարգանում և փոքր է մնում, երբեմն այնքան փոքր (տափակ կուրծք) որ, մայր դառնալիս, այդ աղջիկը անկարող է ծիծ տալ իր զաւակին: Հետազօտութիւնները ցոյց են տուել, որ շատ նորատի աղջիկներ, ամաչելով հասունութեան այս նշանից — կրծքի զարգանալուց —, ամուր սեղմում են կուրծքը լիֆով ու կորսետով, և մինչեւ անգամ կրծքի վրայ են պառկում, որպէս զի արգելեն ստիճաններին մեծանալ: Բժ. Կիանովսկին նկատել է այդ բանը աղջկերանց փակ ուսումնարաններում (ինստիտուտներում): Կորսետը բացի այդ գրգռում է նրա պտուկները (որոնք շատ զգայուն են), որով վաղաժամ կերպով տուփական զգացողութիւն է յարուցանում աղջկայ մէջ:

Կորսետի գործածութիւնից առաջանում են մի շարք ուրիշ խանգարումներ, ինչպէս են. կողացաւեր, մէջքացաւեր, աչքերի հիւանդութիւններ, նոյն իսկ տեսողութեան պակասումն, և այլն:

Կորսետի նման (ի հարկէ ոչ այն աստիճան բարդ կերպով) ազդում են և զանազան կապերը, (վարտիկի և իւրկաների), որոնք նոյնպէս սեղմում են փորը և նոյնպէս սաստիկ ճնշում են որովայնի գործարանները: Եւ յիշուի, իւրկաների ահագին ծանրութիւնը կախում է այդ կապերից և ձգում է նրանց, որով կապերը աւելի եւս խրում են մսի մէջ: Առաջուայ ժամանակները իւրկաների մէջ երկաթէ չըջանակներ էին հագցնում (կրկնօլին), իսկ այժմ հասարակ գէյրաներին երկար պոչեր են թողնում. — այս բոլորը սաստիկ ծանրացնում է ներքեւի հագուստը, և այդ ամբողջ ծանրութիւն ընկնում է կապերի վրայ: Իւրկաները, որ կինը այսբան զոհաբերութիւններով է կրում, մինչեւ անգամ տաք էլ

չեն պահում նրա ներքեւի մասերը: Միշտ իւրկայի և ոտերի մէջ օդը ազատ խաղում է, իսկ երբ մի քանի տաք իւրկաներ են հագնում, այն ժամանակ փորը, յետին մասերը և առհասարակ գաւակային մասը և սեռական գործարանները սաստիկ տաքանում են. մի բան, որ շատ վնասակար է:

«Մեզնից ամեն մէկը տեսած կը լինի, ինչպէս կինը փողոցով գնալիս, մի ձեռով բարձրացնում է իր հագուստի փեշերը, ասում է տիկին Ադամս, բայց շատ քշերը գիտեն, որքան ոյժ է ապարդիւն կերպով կորցնում այդ կինը, ինչպէս յոգնում է և որ աստիճան վատանում է նրա տրամագրութիւնը,—այն աստիճան, որ յաճախ նա մերժում է դուրս գալ ցեխոտ և թողոտ օրերը որպէս զի ստիպուած չը լինի այդ ծանրութիւնը ձեռով բարձրացնելու:

Աւելացրէք սրա վրայ և այն, նոյնպէս ապարդիւն աշխատանքը, որը ընկնում է ամեն քայլափոխին կնոջ ոտերի վրայ փաթաթուած իւրկաների ծանրութիւնը առաջ գցելուց, և դուք կը ստանաք, ճիշտ որ, մի գրութիւն, որը կարող է ուղղակի տանջալից համարուել:

Աւելացնենք, որ շէյֆները և առհասարակ երկար հագուստը ու իւրկաները գետինն աւելելով փոշի են բարձրացնում, փոշի, որ կինը իր տունն է տանում և կուլ է տալիս թէ ինքը և թէ երեխանները, իսկ այդ փոշու մէջ կարող են լինել նաեւ վարակիչ միկրոբներ:

Բայց այս բոլորը չէ:

Աղջկայ սպիտակեղէնը նոյնպէս սաստիկ տարբերուել է տղամարդինից: Շապկի օձիքը խոր կտրուել է և մերկացրել է կրծքի ու մէջքի վերին մասերը, թեքերը բոլորովին անհետացել են և ամբողջովին բացել կոնները և ուսերը: Յետոյ շապիկը չափազանց երկարել է, փոնթեր է անում ոտերի վրայ և խանգարում է ազատ քայլուածքը: Վարտիկի գործածութիւնը համարեա վերացել է, գոնէ տաք եղանակներին, և սրունքները և

առհասարակ մարմնի ներքևի մասը բացուել են թողի ու քամու առջև իսկ հագած վարտիկներն էլ այնքան լայն ու կարճ են լինում, որ չեն պահպանում սրունքները ցրտից ու փոշուց։ Մինչև անգամ գուլպաների (չուլկի) հագնելու եղանակը փնտրակար է, որովհետև ամրացնում են ծնկներից վեր ընտրնի սեղմող օղերով, որոնք խանգարում են արեան ազատ շրջառութիւնը ոտերի մէջ, իսկ յայտնի է որ արիւնը առանց այն էլ շատ դժուար է շրջում, շնորհիւ ոտերի հեռաւորութեանը սրտից։

Ոտամանները նոյնպէս իրանց բնական ձևից չեղուել են։ Հները—թէ կին թէ տղամարդ—սանդալներ էին կապում ոտերին։ Այդ—այժմեան չարուխներն են։ Նրանք կրունկ չունէին, չէին սեղմում մատերը և չէին աղաւաղում ոտերը։ Նրանք չէին պահում ոտերը անթափանցիկ պարկի մէջ ու չէին խաշում նրանք իրանց սեփական քրտինքում, այլ ազատ էին թողնում նրանց և ընտելացնում էին նրանց եղանակի փոփոխութիւններին։

Այսօր ևս մեր գիւղական տղամարդ ազգաբնակչութիւնը բրդէ գուլպա է հագնում ու վրայից չարուխ է կապում, և ամառ-ձմեռ այս է նրա ոտամանը։ Կանայք ևս դեռ շատ տեղեր մասերով ու չուստերով կամ քոշերով են ման գալիս, բայց բազմաթիւ ազգաբնակչութիւնը վաղուց արդէն նրբացրել է իր ոտերը կօշիկների հագնելով, և ամենաթեթեւ խոնաւութիւնն ու ցուրտը սաստիկ մրսեցնում են նրան և հիւանդացնում։

Եւ մենք ստիպուած ենք աւելի և աւելի տաք կոշիկներ ու տաք գուլպաներ հագնել։

Այդ դեռ ոչինչ։ Կինը տղամարդուն հաճոյանալու համար փոքրացրել է կօշիկները, որպէս զի ոտերը ևս փոքրանան, և ահագին կրունկներ է կպցնում, որ հասակը երկարի... Այստեղից մի շարք աղաւաղումներ, որոնց մասին չենք կարող երկար կանգ առնել։

Կանացի հագուստը այսպիսով քանի զնաց աւելի հակառողջական դառնաւ: Առողջութիւնը զո՛հ զնաց մօզային սւ տղամարդուն հաճոյանալու ձգտմանը, և սերունդները տուժեցին:

Առաջին ձայնը կնոջ կոստիւմի (հագուստի) աննպատակայարմարութեան դէմ բարձրացաւ Ամերիկայում, լուրջ ու գործնական նորաձեւութիւնների այս երկրում, որտեղ տիկին Քինգի ջանքերով հիմնուեց «նպատակայարմար հագուստի ընկ.»։ Ընկերութեանը վիճակուած էր նոյն իսկ այնպիսի առաջադէմ երկրում, ինչպիսին է Ամերիկան, մաքառել մօզայի դէմ, բայց նա չընկճուեց և ութսունական թուականներին այդ գաղափարը տարածուեց Ամերիկայում:

Ամերիկայից շարժումն դէպի կանացի կոստիւմի բեֆօրմը անցնում է Անգլիա, որտեղ մենք գտնում ենք Լէդի Հարբերտընին, յետոյ Ադամս ու Նանկօքին. այնտեղից Շվէդիա և Դանիա, և այժմ Եւրոպայում, նոյն իսկ Ռուսաստանում գոյութիւն ունեն նոյնանման ընկերութիւններ:

Հագուստի բեֆօրմի գաղափարը կանգ չի առնում, առողջապահութեան պահանջները տարէջ տարի աւելի և աւելի հասկանալի են դառնում ժողովրդին, և այժմ մեծ բեֆօրմը սկսուել է ամեն տեղ, որովհետև կանայք իրանք զգացել են ժամանակակից հագուստի փնտաւարութիւնը թէ իրանց և թէ սերունդների համար:

Կնոջ իդէալական հագուստը պիտի շատ մօտենայ տղամարդու կոստիւմին, որը համապատասխան է առողջապահութեան ցուցմունքներին: Կորսեաներն ու իւրեկաները պիտի դուրս վռնդուեն կնոջ հագուստից, և պիտի վերականգնուի կրծքի, փորի և ոտերի ազատութիւնը: Վելօսիպեդը մասամբ իրագործել է այս իդէալը: Սակայն, ի հարկէ, մենք դեռ ևս հեռու ենք մի հիմնական բեֆօրմից և պէտք է բաւականանանք ըջով:

Այս քիչը պահանջում է, որ հագուստը հեշտ հագ-

նուրի ու հեշտ հանուրի, որ նա չը սեղմի ոչ կուրծքը, ոչ փորը և ոչ էլ մկանները, որ փափուկ կտորներից կարած լինի, շատ փոնթեր չանի մարմնի վրայ, թեթև լինի և գրկի անդամները (որով տաք կը պահի նրանց):

Այս պայմանները նամանաւանդ անհրաժեշտ են մատաղահաս աղջկանց համար:

Ի հարկէ, հարկ չը կայ որոշ տարազ տալ աղջիկներին և կանանց: Իւրաքանչիւր կին իր ճաշակն ունի, և որոշ ինքնուրոյնութիւն պէտք է լինի հագուստների մէջ, որպէս զի նրանք յարմարուեն իւրաքանչիւրի կազմուածքին: Առողջապահութեան պահանջն այն է, որ կինը զեկավարուի յիշած սկզբունքներով:

Գաւառական և գիւղական հայ աղջկայ զգեստը շատ աւելի նպատակայարմար է առողջական տեսակէտից, իր լայն վարտիկներով, իր կարծ անթարիով ու գոգնոցով և, որ գլխաւորն է, կորսետի բացակայութիւնով: Առողջապահական կանոնների դէմ այդ տարազը մեղանշում է կապերի առատութեամբ, և եւրոպական ճաշակին մի քանի անդուրալի յատկութիւններով, երբեմն ոտերի և սրունքների մերկացումով, իրանի և կրծքի ծածկուածութիւնով *):

Ճուլալի, շատ ցաւալի է, տեսնել կնոջ աւանդական տարազի չքանալն, և նրա փոխարինումն եւրոպական հագուստով:

Սակայն հոսանքը այնքան զօրեղ է, որ նա սրբում է ստանում ամեն ինչ և հայ ժողովուրդը իր լեզուի, իր պաշտամունքների հետ միասին ելեկտրական արագութեամբ բարձի թողի է անում նաեւ իր տարազը:

Դոնէ փրկենք մատաղ սերունդը կորսետների աղաւաղումից:

Այժմ ամեն տեղ ընդունուած է մանուկների համար լիճ կոչուած բաճկոնիկը, որը հագցւում է չապիկի

*) Մի բան, որ միանգամայն հակառողջական և տգեղ է, այդ զբոսի կապերն են, որոնք բոլորը տաքացնում են գլուխը, արգելելով կաշուի գոլորշիացումն:

վրայից: Լիֆի վրայ պիտի կոճկուին իւրակաները և վարտիկը.—այդպիսով փորն ու կուրծքը չեն ճնշուում և ծանրութիւնը ուսերի ու գոտիկի վրայ է ընկնում:

Շվեդական լիճը կարւում է բրդէ կտորից, նոյնպէս և մետաքսից: Նա այնպէս պիտի կարուի, որ գրկի իրանը ու կուրծքը, բայց չը սեղմի:

Դանիական լիճը խիստ նման է առաջինին և տարբերւում է նրանից միայն առաձգականութեամբ, որովհետեւ կարւում է ձգուող կտորից, այն է բրդէ գործուածքից: Շատ գեր աղջիկների համար յետեւից մի բանի կէտի-բեխեր են հագցնում մէջը (БИТОВЫЙ УСЪ) այնպէս որ միջերին երկու վերջով տարածութիւն մնայ:

Առհասարակ բոլոր լիճերը պիտի փոսեր ունենան ծծերի համար, որպէս զի սրանք չը սեղմուին:

ԲԺ. Ֆիլատովը գտնում է, որ բոլոր լիճերը սեղմում են ու մօտեցնում իրար ուսերը և դրանից առաջ է գալիս կողգիկութիւն (թիակները դուրս են ցցւում): Եւ նա առաջարկում է փոքրերի համար լայն գոտի, որը կոճկուում է յետեւից և որի վրայ ամրանում է ներքեւի հագուստը: Գոտին կախ է երկու զոլերից, որոնք ուսի վրայով անցնում են ու մէջքի վրայ խաչուելով կոճկւում են գոտիկին,

Դեռահաս աղջիկների համար ամենից յարմար հագուստն է լիֆ-վարտիկը, որը մի կտորից է կարւում և փոխարինում է չապիկը, վարտիկն ու լիճը միասին. Կարելի է վիզը բաց թողնել և թեւերը կարճ անել: Բայց աւելի լաւ է (մանաւանդ ձմեռը), որ ծածկուած լինի: Կարում են նուրբ, սպիտակ բրդէ կտորից կամ սպիտակ ֆլանելից, նոյնպէս եւ բաթանից: Եղանակին յարմարուելով, կարելի է և կանափի ու բամբակ է գործուածքներից կարել: Այս լիֆ-վարտիկը միանգամից հագցնւում է ու հանւում և նրա վրայ ամրացնւում է իւրական:

Իւրական այն ձեւով պիտի կարուի, որպէս զի պաշտպանի ներքի մասերը ցրտից ու փոշուց:

Իւրեկայի փէշերը միանում են միմեանց չէնքերի արանքով և միեւնոյն ժամանակ չեն կորցնում իրանց ձեւը:

Աղջկայ երկար գուլպաները երբէք չը պէտք է սեղմուին սրունքներին ըէտինէ օղակներով, այլ կապուին վարտիկի փէշից կամ (աւելի լաւ) լիֆից:

Կօշիկները պիտի արձակ լինեն և շատ ցած կրունգով, տակը միայն կաշի, իսկ երեսը մահուդ, որովհետեւ մահուդը աւելի թափանցիկ է:

ԲՅՈՒ Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս Ո Ի Թ Ի Ի Ն

32) Ն. Ա. Դօրրօլիւբով. Աղէփանդոյ Գավազցի Բախանուն եւ իր Բարոզները. Թարգմ. Գէորգ քահ. Մկրտումեանց. 73 էր. գ. 25 կող., Ս. Պետերբուրգ, 1902 թ.:

Իտալիայի ազատութեան գաղափարին մարմնացումն տուող եռանձնութիւնը—Գարիբալդի, Կալվուր և Վիկտօր Էմմանուէլ —մի առաքեալ ունէր, որ քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ շրջելով վառում էր իտալացիներին սրտերը ազատութեան սիրով, պատկերացնում էր նրանց երևակայութեան առաջ ապագայ միացեալ Իտալիայի վեհութիւնը, ողբում էր Իտալիայի խեղճութիւնը ներկայում և երգում նրա մեծութիւնը անցեալում ու ապագայում:

Այդ առաքեալը հայր Գավազցին էր, որ մեր Ներսէս Աշտարակեցու նման, հայրենասէր հոգեւորական էր, երբ քարոզ էր ասում, և անվեհեր զինուոր, երբ պէտք էր կռուել:

Ռուս յայտնի քննադատ Դօրրօլիւբովի յօդուածը, որ այժմ Գ. քահ. Մկրտումեանը թարգմանել է հայերէն, նուիրուած է այդ համակրելի հայրենասէրի քարոզներին:

Բերում ենք այստեղ մի հատուած այդ յօդուածից, որից ընթերցողները կարող են որոշ գաղափար կազմել հայր Գավազցիի անձնաւորութեան և նրա քարոզների գործած ազդեցութեան մասին:

Մի անգամ Սան-Վարլօի թատրոնում մի ինչ որ բալետ էին խաղում: Առաջին գործողութիւնը վերջացել էր, երբ լանկարծ օթեակներից մէկում լայտնուեցաւ մի կարճահասակ ու թիկնեղ վանական՝ կարմրագոյն միւրուքով, կէս զինուորի և կէս վանականի հագուատով.—գա Գավազցին էր: Նա ինչ որ մի լուր հաղորդեց հանդիսականներին Գարիբալդիականների մասին և սկսեց խօսել Իտալիայի, նրա պահանջների և իւրաքանչիւրի պարտականութեան մասին գէպի հայրենիքը և այլն: Բոլորն սկսեցին լսել նրան, մինչև անգամ պարողները և դերասանները խնդրեցին բարձրացնել վարագոյլը ու խմբուեցին բեմի եզրում, հետաքրքիր քարոզը լսե-

լու։ Մի այլ անգամ Գավազցին յայտնուեցաւ Նէապօլի ֆրանսիական թատրոնում։ Նա հէնց նոր վերագառնում էր Վապուսայի մօտ կռուող զօրագնդից։ Լօղկի տակից կարմիր շապիկը, վանականի վեղարի տեղ «կէպի»-ն, կողքին սուր, ասորճանակը զօտկում, այդ բոլորը մի արտակարգ բան չէր այն ժամանակ Նէապօլում։ Բայց Գավազցու երևալը թատրոնում ընդհանուր ուշադրութիւն գրաւեց նրա համար, որ հէնց ուղղակի կուի դաշտիցն էր գալիս։ Այդպէս՝ հազիւ էր վերջացել այդ գիշերը տրուող Սկրիբի ու Լըգուվէյի «Bataille de dames» պիէսի առաջին գործողութիւնը, որ Գավազցին բարձրացաւ իր օթեակում, և քարոզչի հնչուն, զօրեղ ու յափշտակուած խօսքը սնունդէտեւ փոխարինեց դերասանների ղեկավարեցիկին։ Խօսում էր Վապուսայի ճակատամարտների մասին, Գարիբալդու գործողութիւնների և դիտաւորութիւնների մասին, զօրքի դրութեան, հայրենիքի և ազատութեան մասին։ Երկար էր խօսում, և Նէապօլի անհամբեր հասարակութիւնը այն աստիճան համբերութեամբ, աղահօրէն և յափշտակուած էր լսում նրան, որ մոռացաւ պիէսան... Երբ Գավազցին վերջացրեց, իմպրեսարիօն (թատրոնի կառավարիչ) բնմ դուրս եկաւ և առաջարկեց հասարակութեանը, որովհետեւ կոմեդիան վերջացնելու համար քիչ ժամանակ էր մնում, արդեօ՞ք հասարակութիւնը չէ՞ր ցանկանայ այս անգամ պիէսան փոխարինել Գարիբալդեան օրհներգով։ Լսուեցան խլացնող ծափահարութիւններ և eviva! Երգուեցաւ օրհներգը, որի ժամանակ հասարակութիւնը իր յափշտակուած ոգևորութիւնն էր արտայայտում։

Ինչ վերաբերում է հայր Գավազցիի քարոզների բովանդակութեանը, այստեղ կը բերենք միայն հետեւեալ փոքրիկ նմուշը, խորհուրդ տալով ընթերցողներին անձամբ կարդալ հ. Գավազցիի քարոզները։

Ահա թէ ինչպէս է բացատրում հայր Գավազցին ազատութեան առաւելութիւնները։

Տուէ՛ք ինձ այդ Վեզուվը, տուէ՛ք ինձ այդ ծոցը, տուէ՛ք ինձ բնութեան այդ բոլոր գեղեցկութիւնները, որոնք Նէապօլը երկրային դրախտ են դարձնում—տուէ՛ք ինձ այդ բոլորը, բայց ազատութիւնից զուրկ,—և դուք ինձ կտաք մի անապատ, մի մութ գիշեր, մի դժոխք (ամբոխի մէջ—հիանալի է, հիանալի է)։ Եւ ընդհակառակը՝ տուէ՛ք ինձ մի անապատ, մի լերկ ժայռ, տուէ՛ք ամենախոսքան, անպտղաբեր, ամայի հողի մի պատառ—այդ բոլորը տուէ՛ք ինձ ազատ և ես կարող եմ դրանցից դրախտ ստեղծել (ծափահարութիւններ)։ Ազատութիւնից զուրկ ազգը խաւարի մէջ է շրջում, ազատութիւն վայելողը՝ լոյսի մէջ։ Թող օրհնուի ուրեմն լոյսը և թող օրհնուի նա, ով այդ լոյսը բերեց մեզ (այսինքն Գարիբալդին)։

Ինչպէս տեսնում էք արժէ ծանօթանալ հայր Գավազցու անձնաւորութեան և քարոզների հետ, և Գ. քահ. Մկրտումեանը, իրր թարգմանիչ, արժանի է ամենայն գովասանքի իր արած յաջող ընտրութեան համար։

Դժբախտաբար միայն դրանով էլ պէտք է սահմանա-

փակուի մեր գովասանքը Գ. ք. Մկրտումեանի վերաբերմամբ, որովհետև թարգմանութիւնը չառ անյաջող է:

Վերև բերուած հատուածներից թող չը խաբուեն ընթերցողները: Այդ հատուածները ամենայնջողներից են և բացի այդ մենք ուղղեցինք այդ հատուածները՝ արտատպելուց առաջ, «անտարբեր»-ը փոխելով «անհամբեր»-ի, «վերադարձաւ»-ը «բարձրացաւ»-ի և այլն և այլն, իսկ թէ ինչ է ներկայացնում Գ. ք. Մկրտումեանի թարգմանութիւնը ինքն ըստ ինքեան՝ ընթերցողը կարող է գուշակել հետևեալից:

Գ. ք. Մկրտումեանը չառ տեղ լաւ չի հասկացել բնագիրը: Совершенно невзначительнымъ образомъ թարգմանել է «ամենափոքր բացառութեամբ»: Рѣшительно никто не намѣренъ трогать пазу՝ «Ոչ ոք համարեա մտադիր չէ պապին դիպելու»: Одни кричали по глупости, потому что дѣйствительно ожидали мгновеннаго, чудеснаго исчезновенія всего вѣковаго зла, едва только Гарибальди явится въ Неаполь, другіе же пользовались людскою наивностію для своихъ цѣлей՝ «Մի մասը յիմարութեան պատճառով էր աղաղակ բարձրացնում, որովհետև նրանք սպասում էին դարաւոր ամբողջ չարիքը մի ակընթարթում. մի հրաշքով ոչնչացած տեսնել, մինչդեռ Գարիբալդին դեռ դեռ նոր էր նէպոլում երևացել, իսկ միւսները իրանց նպատակների համար օգտուում էին այդ մարդու պարզամտութիւնից»: (Թարգմանել Գալիպպիի քարոզները և Գարիբալդիին պարզամիտ դարձնել, — առանձին բնգունակութիւն է հարկաւոր դրա համար): Всѣ выходки его противъ ложныхъ либераловъ՝ «Այն բոլոր վարմունքները, որ գործ դրեց կեղծաւոր աղատամիտների դէմ»: Прилагая къ нему слова патмоскаго старца՝ «Յարակցելով պատմական ծերունու խօսքերը»: Я очень льщу себя тѣмъ... «Ինքնախաբէութեամբս կարծում եմ»: Тономъ Газацци нечего соблазняться (զայթակղուել)՝ «Գալիպպու խօսակցական ոճով դրաւուել պէտք էր»: Что терпѣть народъ (ինչէր է կրում ժողովուրդը)՝ «Ժողովուրդը սրբան է համբերում»: Прѣшель человекъ Варезе и Калатафими и поднялъ шлюзы (այսինքն՝ Վարէզէյի և Կալատաֆիմիի մարզը, հերոսը), եկան մարդիկ — Վարէզէ և Կալատաֆիմին և բաց արին սահանափակները: Кто принесъ торжество Сидилійскому возстанію? «Ո՞վ հանդիսաւոր արեց Սիցիլիայի ապստամբութիւնը»: Надо устроить ее (Италію) самимъ намъ, ужѣ не по-виллафранкски (ակնարկ այն դաշնադրութեան մասին, որ կայացաւ Ֆրանսիայի և Աւստրիայի մէջ 1859 թուին Իտալիայի Վիլլաֆրանկա քաղաքում), а по итальянски, друзья мои՝ «Մենք ինքնեւս պիտի վերա-

Ազատ Եւրոպայում ամեն օր հազարաւոր մարդիկ մեռնում են սովից և մտնում են անառակների ու յանցաւորների շարքը կամ կախում ու ծխախոզի են լինում դառն աղքատութիւնից: Առանց ազատութեան չը կայ դրախտ, բայց դրախտ ստեղծելու համար բացի ազատութիւնից անհրաժեշտ են նաև ուրիշ հասարակական պայմաններ, որոնց սաղմերն ենք միայն տեսնում այժմ Եւրոպայում:

Քանի գոյութիւն ունի աշխարհումս հարստութեան և աշխատութեան հակապատկերը, տրագեդիան չի պակասի երբէք մարդկային կեանքից:

Այդ հետաքրքրական հարցն է շօշափում իր «Կեանքի գնով» վերնագրով պատմուածքում Ա. Խիրամը (և ոչ Խերամը, ինչպէս տպուած է հայերէն թարգմանութեան ճակատին):

Ահա այդ պատմուածքի հէնքը (КАНВА): Մի աշխատազուրկ ու քաղցած մարդ գիշերով մտնում է բուրժուա Դիւվալի տունը, ուզում է նրան սպանել ու յետոյ գողանալ փողերը զրամարկղից, բայց խղճում է նրան և փորձում է զրամարկղը չուռ տալ, փողերը վերցնել ու փախչել: Սակայն քնած տանտիրոջը զարթեցնելու վախից նա չի կարողանում ազատ գործել, ոտը սայթաքում է, վայր է ընկնում և զրամարկղ—պահարանը չըջւում է վրան: Արմունկը ջարդւում է, ուսը տեղահան է լինում: Աղմուկը զարթեցնում է տանտիրոջը: Նա, ոչվօրվերը ձեռքին, գալիս տեսնում է գողին պահարանի տակը ճզմուած: Ուզում է սպանել, բայց չի սպանում: Ոստիկանութեան էլ չի դիմում, այլ խոստանում է ազատութիւն տալ, եթէ նա խօսք տայ այնուհետև աղնիւ կեանք վարել:

Գողը յայտնում է, որ ինքը առաջին անգամն է այդ յանցանքը գործում, որ ինքն՝ իրան և իր նմաններին մեղաւոր չի համարում, այլ նոյն-իսկ աւելի բարձր է դասում այն բուրժուաներից, որոնք զրազուած են դիմակաւորուած գողութեամբ:

«Մենք նման ենք հալածական չնեթի, ասում է նա: Ինչու ես էլ հարուստ չեմ ծնուել, ես այդ չը գիտեմ, չը գիտէք և դուք: Բայց այդ ձեզ համար միևնոյնն է: Իսկ ես,—ես տանջւում եմ դրանից: Ուստի և վճռեցի գողութիւն անել... Ուղղակի, անմիջական գողութիւնը, այն գողութիւնը, որ մարդուս ենթարկում է ձերբակալուելու վտանգին, աւելի աղնիւ բան է, քան սովորական, քողարկուած գողութիւնը, որից տառապում են ինձ պէս հազարաւորները»:

Երբ Դիւվալը յայտնում է, որ ուզում է ազատ թողնել նրան, ու հարցնում է՝ «Մի՞թէ չէք ուրախանալ, եթէ ազատութիւն ստանաք», նա պատասխանում է. «Ամենևին: Ինչիւ

պէտքն է ազատութիւնը: Միթէ հիւանդանոցից դուրս գալուց յետոյ ստիպուած չեմ լինելու զողութեամբ պարտպել: Շատ էլ նախանձելի բան չէ սովամահ լինելու ազատութիւնը:

Իիւվալը ազատում է նրան առանց որ և է պայմանի, բայց հնարաւորութիւն է տալիս նրան ապրել ազնիւ աշխատանքով: Եւ այդ «գողը» դառնում է նրա անձնուէր բարեկամը և զոհում է կեանքը հրգեհից փրկելու համար մի պատկեր, որ թանկագին էր Դիւվալի համար:

Ինչպէս տեսնում էք, Խիրամի պատմութեամբը մէլօգրամատիկական բնաւորութիւն է կրում և մի քիչ միամիտ լուծումով է վերջանում, բայց նա զուրկ չէ գրական արժանաւորութիւններից: Դժբախտաբար թարգմանութիւնը անաջող է: Յ. Փ. և Մ. Շ. «ազատ» են անուանել իրանց թարգմանութիւնը, կարծելով, թէ այդ բանը իրաւունք է տալիս իրանց աղաւաղելու հեղինակի գրածը և կրճատելու իրանց չը հասկացած կամ դժուար թարգմանի տեղերը (օրինակ, վերի բերած կտորից մի բնորոշ պարբերութիւն է կրճատուած):

Երբ որ ОНЪ говорилъ безъ малѣйшаго озлобленія թարգմանում են «նա խօսում էր առանց քաշուելու»,—այդ կը նշանակի ոչ թէ այն, որ «ազատ» են թարգմանում, այլ որ աղաւաղում են գրութեանը: Իսկ երբ ОНЪ откинулся на спяку, закрывъ глаза, съ висѣвшей плетью сломанной рукою թարգմանում են՝ «նա մէջքը թեք տուեց աստիճան, ծածկելով աչքերը մտրակի նման կախ ընկած ձեռքով»,—այդ կը նշանակի թարգմանել՝ առանց հասկանալու:

Տ. Յ.

Willam Watson. «Ծիրանի արեւելք». թարգմ. անգլ. Խոսրով, 30 էր. գինը 50 սան. Պարիզ, 1903.

Ծիրանի Արեւելքին, արիւնաներկ թիւրքահայաստանին են նուիրուած Ուիլիամ Ուատսոնի այն ոտանավորները, որ պ. Խոսրով թարգմանել է անգլիերէնից:

Չը կան անարատ, իդէալական մարդիկ, — եւ առաւել չը կան անարատ, իդէալական ազգեր, քանի որ միջազգային բարոյականութիւնը աւելի ստոր է քան անհատական բարոյականութիւնը, բայց չը կայ մի ազգ, որի զաւակները այնքան համարձակութեամբ, այնքան արիւրար նշաւակէին իրանց ազգի գործած յանցանքները, որքան անգլիական ազգը: Անգլիական ազգի մեծութեան ամենախոշոր ապացոյցներից մէկն է այդ:

Ուիլլիամ Ուատսընի ոտանաւորները, որոնց մէջ նա ողորում է հայկական կոտորածները և պաշտօնական Անգլիայի անտարբերութիւնը դէպի այդ չը տեսնուած աղէտները, անգլիական մեծահոգի և ազատասէր ժողովրդի խղճմտանքի արձագանքներն են, որոնք ոչ ոքի համար այնքան հետաքրքիր չեն կարող լինել, որքան մեզ համար:

Դժբախտաբար, թարգմանութիւնը անաջող է: Թարգմանիչը, ինչպէս երևում է, կուրօրէն պահպանել է բնագրի նախադասութիւնների կազմը, նոյն-իսկ բառերի հետևողութիւնը, և դրա չնորհիւ ոտանաւորը դարձել է ոչ միայն անբանաստեղծական, այլ և գրեթէ անհասկանալի:

Տ. Յ.

Ն Ո Ր Ս Տ Ա Յ Ո Ւ Ա Մ Գ Ր Ք Ե Ր

- 1) ԲԺ. Ն. Տէր-Իսահակեան «Դիֆտերիա», Ալեքսանդրօպօլ, 1902, գինն է 5 կոպ.:
- 2) Գ. Սունդուկեանց՝ «Էլի մէկ զոհ», Կոմիդիա հինգ արարուածով, երկր. տպագր., Թիֆլիս, 1902 թ., գինն է 1 ռ.:
- 3) «Հանդէս Հայագիտութեան», խմբագրութեամբ Ֆրանց Ֆրնկի, I հատոր, երրորդ տետր., Մարբուրգ:
- 4) Կ. Մէլիք-Շահնազարեանց՝ «Վազի մշակութիւնը», պատկերազարդ, հրատարակութիւն Մ. Արամեանցի, Թիֆլիս, 1902 թ., գինն է 1 ռ.:
- 5) Գեօթէ՝ «Ստիլլա», ողբերգութիւն հինգ գործողութեամբ, գերմ. Գէորգ Ալթունեան, Վաղարշապատ, 1902 թ., գինն է 20 կոպ.:

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ

Հայոց դրամասիկական ընկերութեան խմբի ներկայա-
ցումները Թիֆլիսում

Թիֆլիսի հայ հասարակութեան կեանքում այս ներկայա-
ցումները կազմում են սակաւաթիւ լուսաւոր երեւոյթներից
մէկը: Շնորհիւ ընկերութեան վարչութեան և թատրոնական
կոմիտէի եռանդին, բարեխղճութեանը և գիտակցական վե-
րաբերմունքին, ներկայացումների գործը առ այժմ յուսալու
իրաւունք է տալիս, եթէ ի հարկէ հայ հասարակութեան սառցէ
անտաքներութիւնը չը դայ իր ծլի մէջ խեղդելու այնքան գե-
ղեցիկ յոյսը:

Սումբն այս տարուայ համար կազմուած է հայ բնմի լու-
սագոյն ոյժերից, որոնց մէջ աչքի են ընկնում հայ հասարակու-
թեան վաղածանօթ և սիրելի անուններ:

Անդեալ սեպտեմբերի կէսից բացուած է թատրոնական
սեզոնը և մինչեւ այժմ տեղի են ունեցել արգէն ութ ներկա-
յացումներ, խաղացել են՝ «Կատիւ», Զուգերմանի «Բարեկամ-
ներ», «Կրիչինսկու հարսանիքը» Սուխով-Կօբիլինայի, «Վանիւ-
չինի զաւակները» Նայդենովի (երկու անգամ), «Արքայ Լիր»
Շէքսպիրի, «Ունէր իրաւունք» Շիրովանզադէի և «Անմեղ մեղա-
ւորներ» Օստրովսկու:

Այս անգամ մենք կանգ կ'առնենք վերջին չորսի վրայ,
որոնք մի քանի տեսակէտով աւելի հետաքրքրութիւն են ներ-
կայացնում թէ գերաւատարների խաղը բնորոշելու և թէ չօ-
շափած հասարակական—բարոյական գաղափարների կարեւո-
րութեան համար: «Վանիւչինի զաւակները» այն գրական գոր-
ծերից մէկն է, որ անյայտութեան մէջ ծածկուած մի հե-
ղինակի անուն կարող է մէկէն յայտնի դարձնել Նայդենով իր

պիեսայի համար իրեւել չիւթ ընտրել է կենսական ամենասու-
վորական, ամենաբանալ երեւոյթների մի չրջան, հարուստ վա-
ճառականի ընտանեկան կեանքն իր առօրեայ արտայայտու-
թիւններով և հոգեբանական մանրակրկիտ և հմուտ վերլու-
ծութեամբ, այդ արտաքուստ սովորական, աննշան երեւոյթների
տակ բացել է կեանքի խոշոր վէրքեր, խորին դրամատիզմ:

Դուք տեսնում էք հարուստ վաճառական Վանիւշինին,
վաթսուն տարեկան մի ծերունի, որ քառասուն տարի աշխա-
տել է, տքնել է «կոպէկ կոպէկի հետ արիւնով է կապել» իր
զաւակների ապագայի, նրանց կրջանկութեան համար: Եւ նրա
զաւակները բազմաթիւ են, ահա մեծ որդին, որ գիմնազիան
աւարտել է և օգնում է հօրը խանութում, ահա նրանից փոքրը,
որ դեռ սովորում է, երկու աղջիկները, որոնք ամուսնացել են,
երկու ուրիշները, որոնք դեռ սովորում են: Ինքն իր կնոջ հետ
ապրում է տան առաջին յարկում, իսկ երեխաները վերելում՝ դաս-
տիարակչուհիների հսկողութեան ներքոյ: Երկար ժամանակ
նրան թւում է, թէ ամեն բան լաւ է ընթանում, թէ ինքը եր-
ջանիկ է, գործ ունի, հարստութիւն ունի, լալն կերպով ծախ-
սում է իր զաւակների կրթութեան համար: չէ որ նրանք բո-
լորն էլ զանազան դպրոցներում են, չէ որ նրանց վրայ հսկում
են դաստիարակներն ու դաստիարակչուհիներն, ուրիշ էլ ինչ:
Ամեն բան լաւ է. նա իր պարտքը կատարած է համարում դէ-
պի իր զաւակները, սովորում են նրանք արգիօք, ինչ են անում
դաստիարակները, ծառաները: Ինչ է կատարւում վերելում,
երեխաների հետ, այդ նա չը գիտէ, նա չի էլ ուզում իմանալ,
բաւական չէ միթէ, որ նա նրանց բոլոր պէտքերը հոգում է,
որ բոլորին էլ ուսում է տալիս, մնալածն ինքն իրան կը լինի:

Եւ մնալածն ինք իրան է լինում: Մեծ որդին հէնց հայ-
րական յարկի տակ ապրում է իր ազգականուհու հետ, փոքր
որդին գիշերները փախչում է ով գիտէ ուր և անց է կացնում
կասկածելի կանանց հետ, ծախսելով տնից գողացած փողերը:
մի աղջիկը խաբւում է և իր անմեղութիւնը զոհ է բերում մի
խարդախ շարլատանի, որ միևնոյն ժամանակ մեծ քրոջ ամուսինն
է. երկու փոքր աղջիկները առաւօտից երեկոյ ականջները զըռ-
ների ձևըներին դրած աշխատում են իմանալ, թէ ինչ են ա-
սում, ինչ են անում իրանցից մեծերը: Եւ ամբողջ քաղաքում
յայտնի, պատուաւոր ու բարեկիրթ համարւած Վանիւշինի ըն-
տանիքը ներքուստ ներկայանում է, որպէս զանգրկենով բռնուած
մի մարմին, որ օր աւուր քայքայւում, նեխւում է և դիմում է
դէպի անխուսափելի կատաստրոֆը:

Եւ մի օր Վանիւշինն իմանում է, թէ ինչ սարսափելի

ցաւ է ծածկուած իր բարեկիրթ, պատւաւոր համարուած ընտանիքում: Երկրորդ աղջիկը մի շարթուայ ամուսնացած՝ յետ է գալիս հօր տուն, որովհետեւ ամուսինը նրան ծեծում է և փող է պահանջում մի մութ խայտառակութիւն ծածկելու համար: Յետոյ յայտնում է, որ իր տանն ապաստանած որբ աղգականուհին զոհ է իր մեծ որդու դուստրին, փոքր որդին զուրս է վռնդւում գիմնազիայից, վատ վարքի համար և այլն և այլն:

Հարուած հարուածի յետեւից ընկնում են ծեր Վանիւշի-նի գլխին, նա բայց աչքերով տեսնում է իր օջախի և իր ոտքերի տակ բացուած նիւթական և բարոյական անդունդը, տեսնում է այն, ինչ այնքան ժամանակ թաղնուած էր իրանից չնորհիւ իր եսասէր, նիւթապաշտ անհոգութեան, այս ու այն կողմն է ընկնում, ճար, հնար է փնտռում ընտանիքի բարոյական շէնքը փրկելու, որ ճարճատում է ամեն կողմից: Սորհրդի է կանչում իր միամիտ, պարզ կնոջը, ի զուր, ցնցումն այնքան զօրեղ է, կատարուածներն այնքան անսպասելի, որ նա իսպառ կորցնում է գլուխը, չչկում է յուսահատուած, և նետում է նոյն անդունդի, նոյն ընդհանուր կոտորածօփի մէջ վերջ տալով իր կեանքին:

Այս պիեսայի նիւթը թէեւ վերջրած է ուսու կեանքից, գործող ածինք կրում են ուսու անուններ, բայց համարձակ կարելի է ասել, որ տաղանդաւոր հեղինակը իր այս գործով բացել է մի ցաւ, որ ընդհանուր է նոյն պայմաններում ապրող բոլոր աղգբերի ընտանիքների համար: Սա մի անողորմ ապտակ է բոլոր նրանց, որոնք փողի ամենակարողութեան կուլտի քրմեր են, որոնք կարծում են թէ կեանքի մէջ անգամ բարոյականութիւնը կատարեալ է, երբ նա բազմում է ոսկու գահի վրայ, թէ զաւակների դաստիարակութիւնը վարձով գնուելիք ապրանք է շուկայում և կարելի է հնչուն դրամով ձեռք բերել: Սա մի յախուռն ու կսկծեցուցիչ մեղադրական ակտ է ուղղուած կեանքի միակողմանիութեան, չոր նիւթապաշտութեան դէմ, մի դառն դաս բոլոր նրանց, որոնք յիմարաբար կամ գիտակցօրէն աշխատում են իղէալը, բարոյականութիւնը՝ կեանքին գեղեցկութիւն, փայլ, տուող վսեմ հոգեկան պահանջները՝ ստորադասել իրանց դարձելի նիւթապաշտ էգօիզմին և իրանց ցեխոտ ոտների տակ տորել այն ամենը ինչ մարմնի, ստամոքսի համար անպէտք է:

Կեանքն իր ամբողջութեամբ մի վսեմ ներգաշնակութիւն է, ուր բնական օրէնքների տրամաբանութիւնը որպէս գերազոյն իշխող՝ մարդկային նիւթական և բարոյական պահանջներին համապատասխան տեղ ու կարգ է սահմանել: Անհնարին է անպատիւ կերպով խախտել այդ ներգաշնակութիւնը, անհնարին է

աղաւաղել, խեղաթիւրել ընտելիւնը առանց որ այդ յանցաւոր փորձի հակահարուածը նոյն փորձի հեղինակի գլխին ընկնէր: Վանիւշիններով լիքն է և մեր կեանքը, ներքուստ նեխուած, քայքայուած, իսկ արտաքուստ փայլուն ընտանիքների նմուշներով լիքն է և մեր միջավայրը ու իրականութիւնը, վատ հասկացուած և այլանդակուած քաղաքակրթութիւնը միացած բիրդ աւիականութեան և մի շարք այլ բացասական ֆակտորներին հետ կրծում է շատ ընտանիքների գոյութեան հիմքերը, հիւծախտի պէս քամում է նրանց ներքը, կրքերն ու ախտերը եռում են արտաքին վայելչութեան քողի տակ, բայց դրամը, սնունդը իրանց արտաքին փայլի շողերով չարունակում են ոսկեզօծել այդ բոլորը: Շրջապատը խօսում է փափսուկով, գլուխը թափ է տալիս խորհրդաւոր ձեւով, բայց շարունակում է գլխարկ հանել և մինչեւ զետիւն խոնարհուել, երբ անցնում է ոսկու ոյժը ներկայացնող այդ ցեխոտուած կուռքը, որի տունը հրէշաւոր երեւոյթներով լի մի դժոխք է ներկայացնում: Փարիսեցի մի հասարակութեան մէջ, ուր բարոյական շանտաժը գերիշխող է, ուր մէջքերը ճկուն են և ժպիտներն աժան՝ ընտանիք, ընտանեկան սրբութիւն, օջախի պատիւ միշտ ֆիկցիաներ են, դատարկ հընչիւններ, որոնք չինուած են ծածկելու համար բարոյական հրէշաւոր այլանդակութիւններ, հասարակական կազմը քայքայող, կրծոտող զաւեր:

Եւ այս գեղեցիկ պիեսան ունեցաւ իր յաջող դերակատարները: Ես առանձին սիրով եմ կանգ առնում պ. Պետրոսեանի (Վանիւշին հայրը) խաղի վրայ: Խոյս եմ տալիս արդէն խիստ բանալ դարձած Ֆրազներից, որոնցով պիտի ասէի թէ պ. Պետրոսեան սկզբից մինչեւ վերջը լաւ տարաւ խաղը, իր գերունմն էր, թէ նա լաւ ուսումնասիրել էր իր դերը: Ըստ իս գերը մեռնակ գրքի մէջ կամ ուրիշի խաղերը դիտելով ուսումնասիրել անկարելի է: Որեւ է դեր կեանքի մի կտորն է և նրա նմուշներով, նրա անալոգիաներով լիքն է յայտնի իրականութիւնը: Եւ այն պատկերացնելու, կենդանի, կատարեալ զտրճնելու համար լաւ դերասանն ստիպուած է ինդիւկցիայով սինտեզ կազմել կեանքի տուած լազմաթիւ հոգեբանական փաստերից և նրա արդիւնքը դնել բեմի վրայ հասարակութեան առաջ: Պ. Պետրոսեանի խաղը հէնց դրանով էր հետաքրքիր, ինձ թւում է որ նա իր կեանքի ճանապարհին տեսել է և ուսումնասիրել է բազմաթիւ ծեր, զժբաղտ հայրեր, աւելին կասեմ ապրել է նրանց հոգին այրող հաւերով: Այլապէս ինչպէս բացատրել նրա այն սիրուն ժեստը, որով ծանր մտահոգութեան և ներքին կակճի վայրկեաններին նա քաշքշում է իր ծեր ալիքները մեղմով, ա-

սես չլիւած խաղում է նրանց հետ։ Որքան գեղեցիկ, որքան նշանակալից է նրան գլխի օրօրելը և նրանից յետոյ մի կետին յառած նրա մոայլ հայեացքը։ Նրա շարժումներից իւրաքանչիւրը հոգեկան ներքին աշխարհի մի պերճախօս արտայայտութիւն էր։ Մի քանի տեղ պ. Պետրոսեան տուեց իսկապէս պատկերներ, որոնք կ'ապրեն յիշողութեան մէջ, ինչպէս բնութեան մի գեղեցիկ տեսարան, որ մնում է տպւեւորուած մեր գլխում և խաղում է մեր երեւկայութեան հետ։ Այդ պատկերներից ամենայնցոյդ այն տեսարանն է, ուր նա լսում է փոքր որդու խոստովանութիւնը և գրկում ու համբարում է նրան։ Գանձ աչքեր թացացան հասարակութեան մէջ, այդ վայրկենին պ. Պետրոսեան մի լաւ վարպետ էր, որ իր ձեռքի մէջ բռնել էր այնքան սրտեր և քամում էր, քամում իր ուղածի պէս ինչպէս զոյգ ափի մէջ փոքրիկ թրպրտաբող թռչուն պահող մի չարածճի մանուկ։

Պ. Աբէլեան Վանիւշինի մեծ որդու համեմատաբար երկրորդական և բնաւորութեան տեսակէտից չ'ամբողջացրած մի փոքր անորոշ դերում իրան յատուկ տաղանդով կարողացաւ հասարակութեանը ներկայացնել մի յաջող տիպ հարուստ ջահիլ bon vivant-ի, որ աշխատանքի, կրթիչ նուիրական բովից չի անցել, որ սակայն լաւ գիտէ չ'ապլել ուրիշների վաստակն իր եսասէր պէտքերի համար։ Որքան մի դեր լաւ կադապարուած է, որքան նա իբրեւ հոգեբանական ամբողջութիւն լաւ չեւտուած սահմաններ չունի, այնքան աւելի դժուար է դերակատարի ինքիւրը Մի փոքր անփորձ, կամ պակաս չնորհալի դերասանն այդ դէպքում գլուխը կորցնում է, ասես խճճում է, հոգեբանական ցանցառ հիւսուածքի մէջ։ Դերասանի իսկական տաղանդը, նրա խաղի ոյժը հէնց նրանում է կայանում, որ նա կարողանում է շատ անգամ ուղղել հեղինակին, նրա տուած պատկերի վրայ իր վրձինը մի քանի անգամ տանել, բերել, այսպէս ասած շարունակել, լրացնել նրա գործը ծիշտ մի այդպիսի լրացուցիչ և հմուտ աշխատանք կատարեց պ. Աբէլեան. մի քիչ յեղեղած ու ձգձգուած դերից նա կարողացաւ ստեղծել մի կենդանի տիպ, և գրական ստեղծագործութեան ֆիլիցիան հաւանականութեան և իրականութեան ճշգրիտ պատկերն ստացաւ։ Պ. Մամիկոնեան Վանիւշինի կրտսեր որդու գիմնադիստ Ալեօշայի դերում՝ հոգեկան յոյզերի նուրբ դիտողութիւն ցոյց տուեց, ինչպէս և անպայման արտիստական չնորբ։ Ամենից աւելի նրա խաղի մէջ մարդու գրաւում են այդ անարուեստ, չը ճնշուած, ազատ շարժումները։ Նրա դէմքը երբեք պարապ չէ, նա խօսի թէ չը խօսի, մի բան անի կամ չանի,

այդ միւսնոյն է, պ. Մամիկոնեանի դէմքը շարունակ խօսում է նրա նա բեմի վրայ է, նրա գրաւած անկիւնը միշտ հետաքրքիր է: Ժամանակից առաջ հասունացած, չը հասկացուած և իր բաղդին ձգուած այդ գիմնապիտը չնորհիւ պ. Մամիկոնեանի գրաւիչ էր ինչպէս իր վշտի, նոյնպէս և իր խենթութիւնների ժամանակ:

Երկու անգամ նրա զօրեղ միմիկան իր դէմքից կախաց բոլոր հայեացքները. նախ երբ նա յափշտակուած դիտում էր իր սրտի ընտրածի պատկերը, և երկրորդ՝ երբ պատրաստուում էր մօր թազցրած փողերը զողանալ: Բոլոր նշաններից երեւում է, որ պ. Մամիկոնեան պէտք է կարողանայ հայ բեմի վրայ աչքի ընկնող տեղ գրաւել, եթէ (և այդ «եթէ»ն փոքրերից չէ), եթէ աւելի մշակի իր հայերէնը, մանաւանդ արտասանութիւնը: Երբեմն հնչիւններն ու չեղտերն այնքան խորթ են, որ մարդ կարծում է լսել հայերէն խօսող մի օտարականի: Մնացած դերակատարները համարեա առանց բացառութեան լաւ տարան իրանց դերերը մինչև վերջը: Բայց անկարելի է մի քանի խօսք չասել օր. Խիթարեանի մասին, որ կատարում էր Վանիւշինի փոքր աղջիկներից մէկի դերը: Օրիորդն այդ օրը բեմի վրայ մի կենդանի, կայտառ թռչնակ էր, և նրա տխրութիւնն ու ցնծութիւնն էլ թռչնակի էր, վարակիչ ու գրաւիչ: Երրորդ գործողութեան վերջում նա էր, որ իր վերին աստիճանի անկեղծ յուզմունքով, իր բնական ու յախուռն վշտի և դայրոյթի արդունքով առաջ բերեց այն խորապէս ազդող դրամատիզմով լի տեսարանը: Մնացածները շարունակեցին նրա գեղեցիկ կերպով սկսածը:

Վանիւշինի զաւակների ներկայացումից երկու անգամին էլ հասարակութիւնը գոհ հեռացաւ, չափազանց չի լինի ենթադրել, որ նրա երրորդ ներկայացումը դարձեալ կը գրաւի հասարակութեան մի ստուար թիւ:

Ի՞նչ ասենք, «Արքայ Լիրի» մասին, որի ներկայացումը տեղի ունեցաւ Հոկտեմբերի 4-ին: Այն՝ որ Շեքսպիրի ստեղծագործութիւնները մի փոքր անհամապատասխան բեմի վրայ անհամապատասխան ոյժերով ներկայացնելու բազմաթիւ և այն խոշոր դժուարութիւններ կան: Չափաւոր ոյժերով, թէկուզ միայն մի քանի թերութիւններով անկարելի է պատկերացնել այն հանճարեղ խօսական ստեղծագործութիւնները, որոնց մէջ համարեա գերմարդկային բան կայ: Տէն իրաւացի կերպով ասում է, որ «Շեքսպիրը նկարագրում է երկու արձան և թողնում է ընթերցողին երեւկայել մի ամբողջ սիտէ»: Իսկ այդ

սիտէն պատկերացնելու համար մի, երկու գերասանի յաջող խաղը բաւական չէ, անհրաժեշտ է բոլորի, առանց բացառութեան բոլորի միահամուռ և կենդանի աջակցութիւնը, այլապէս մէկի-երկսի թէկուզ լաւ խաղը կը մնայ առանց որոշ տպաւորութեան, ինչպէս մի նկար առանց շրջանակի։ Պ. Պետրոսեան Արքայ Լիւրի գերում մի բաւականին լաւ նկար էր, բայց համարեա առանց շրջանակի, լաւ մտածուած և գեղեցիկ էր մանաւանդ նրա արտաքինը։ Տեղ-տեղ նա իրօք մի ծեր ու վշտացած արքայ էր, շատ անգամ նրա խաղը բարձրանում էր մինչեւ յաջողութեան աստիճանը, բայց այնտեղ մնալու համար ինչքան շատ բան էր հարկաւոր, որ հայ բեմը առ այժմ տալ չի կարող։ Պ. Արէլեան շատ լաւ կատարեց խեղճ Տոմի գերը, որ մեր կարծիքով նրա տաղանդին համապատասխան գերերից մէկն է։ Այդ երեկոյ ամենացնցող տեսարաններից մէկը եղաւ ցրտից դողդողացող կիսամերկ, կիսախեղագար այն ողորմելին, որ մեզ տուեց պ. Արէլեան։ Շէքսպիրի պիէսաների ներկայացման դժուարութիւնները միայն մեր բեմի վրայ են, ոչ պակաս դժուարութիւն կայ նաեւ հասարակութեան մտաւոր զարգացման, աստիճանի մէջ։ Շէքսպիրը հասկանալու համար բաւական չէ յուզուել, երբ Արքայ Լիւրը գրկած բերում է իր մեռած աղջկայ դիակը, կամ երբ Համլէտ մեռնում է այնքան արագիկ պայմաններում. սրանք տեսարաններ են, որոնք կարող են յուզել ամենասովորական մարդկանց անգամ։ Շէքսպիրը բեմում արտասանուած իւրաքանչիւր խօսքի մէջն է, իւրաքանչիւր ժեստի, իւրաքանչիւր ծիծաղի ու արցունքի մէջն է։ Նա այն հանճարներից է, որոնց շրթունքից ոչ մի բան չի ընկել, որ խորին կենսական փիլիսոփայութիւն չը պարունակէր։ Հասկանում է այդ բոլորը հասարակութիւնը ահա՛ թէ որտեղ է գլխաւոր դժուարութիւնը։ Շէքսպիրը ծիծաղ ունի, որի համար լաւ պէտք է, իսկ անցեալ օրուայ հասարակութիւնը ծիծաղներ ունեցաւ, որի համար ինքը՝ հանճարեղ գեղարուեստագէտը լայ կը լինէր, եթէ լսել կարողանար։ Այսպիսի հասարակութիւն չի կարող վերապրել մի քանի դարով հեռու օտար և այն խորին փիլիսոփայութեամբ գեղուն մի կեանք, կարծում ենք, որ առ այժմ Շէքսպիրին կարելի է հանգիստ թողնել։

Հոկտեմբերի 7-ին տեղի ունեցաւ ու. Շիրվանզադէի «Ունէր իրաւունք» նոր գրամայի ներկայացումը։ Հասարակութեան բաւական խոշոր թիւ այդ օրը լցրել էր թատրոնը։ Մարդիկ եկել էին բեմի վրայ տեսնելու հայ հեղինակի նոր աշխատութիւնը, որ ինչպէս հաւատացնում էին կախօրէն պատուով

չուկները չօչափել է մի թէեւ չափազանց հին, բայց միշտ կենսական հարց՝ ամուսինների յարաբերութիւնը, ընտանիքի հիմնական պրինցիպները: Ընդհանուր հետաքրքրութիւնը հասկանալի էր, արդեօք այդ հետաքրքրութիւնը գէթ մասամբ բաւականութիւն ստացան: Ահա այդ հարցին է, որ մենք կ'աշխատենք պատասխանել պ. Շիրվանզադէի դրամայի մանրամասն վերլուծութեամբ:

Նախ ասենք, որ դրամայի նիւթն աւելի քան պարզ է: Վաճառական Անտոն Բեգմուրեան, իր առաջին երիտասարդութիւնն անցրած մի մարդ, ամուսնանում է Սօդոմոն Սուբաթեանի մանկամարդ աղջկայ՝ Հերսիլիայի հետ: Կեանքի չար ու բարուն գեռ բոլորովին անծանօթ 18 տարեկան Հերսիլիայ, ինչպէս իմանում ենք իր խոստովանութիւնից, տալիս է իր համաձայնութիւնը մօտ քառասուն տարեկան մարդուն առանց մտածելու, առանց կշռադատելու իր վճռական քայլը, միմիայն, նրա համար, որ իր մայրը այդ գտնում է լաւ, խորհուրդ է տալիս և Բեգմուրեան նրան սիրում է:

Ամուսնութեան հետեւող վեց տարիների ընթացքում Հերսիլիան իրան կամայականայ գտնում է դժբաղդ: Բեգմուրեան իր գործով զբաղուող, բարեբարոյ, տուն, ընտանիք, երեխաներ սիրող մարդ է, մեղմ բնավորութեան տէր, բայց նա իր շատ սովորական հասկացողութիւններն ունի կնոջ կողման մասին, նա գտնում է, որ կինը մայր է և տնտեսուհի, ուրիշ ոչինչ: Եւ ահա ամուսնու այս հասկացողութիւններն են զառնում Հերսիլիայի դժբաղդութեան պատճառը, հեղինակի ասելով՝ խելօք, զարգացած, զեղասէր, հոգեկան լափն պահանջներով մի կին է, որին իր ամուսինը թւում է չափազանց terre-à-terre: Կինը, օրինակ, սիրում է երաժշտութիւն, հաւատացած է, որ ինքը մեծ տաղանդ ունի, և պէտք է որ գնաց կատարելագործուի, գուցէ մի աշխարհահռչակ տաղանդ է դառնալու, բայց ամուսինն աշխատում է իր պրօզայիկ դատողութիւններով սառը ջուր ածել նրա հոգու տաք թռիչքների վրայ, աշխատում է նրան կապել իր երեխաների, իր տան, ամուսնական իր անմիջական պարտաւորութիւնների հետ:

Երկու ամուսինների մէջ ծագած այս անհամաձայնութիւնն է, որ աւուր մեծացող այս անտաղօնիլմն է, որ հեղինակը վերցրել է իբրեւ իր դրամայի անջատման կետ: Վրայ է հասնում Ռուբէն Ալիմբարեան, մի ջահիլ, գեղեցիկ երիտասարդ, որ Պարիզում ուսել է ճարտարապետութիւն, թափառել է արտասահմանի շատ քաղաքներ, բայց որ չի պարապում իր մասնագիտութեամբ, այլ ղիլեւտանտօրէն

սիրում է գեղարուեստը, գեղեցիկը: Նա տիկին Բեգմուրեանի մանկութեան ընկերն է, հին յիշողութիւնները վերանորոգում են, որպէս անհրաժեշտ չաղախ նոր կապերի: Նա գեղեցիկ խօսել զիտէ, նա տեսել է շատ կանայք, հասկանում և բացատրում է կնոջ դերը Անտոն Բեգմուրեանից բոլորովին տարբեր եղանակով, նա տեսում է Հերսիլիային, թէ նա անօգուտ տեղը տանջուող մի դժբաղտ էակ է, թէ նա տաղանդ է, քաջալերում է նրա անորոշ տենչերը, հաւատացնում է թէ իր թափառական կեանքի ընթացքում նա այդպիսի կատարելութիւն իբրեւ կին տեսած չէ, և թէ նա արժանի է մի այլ վիճակի, այլ միջավայրի: Այս բոլոր ճառերը վերջանում են նրանով, որ Ռուբէնը և Հերսիլիան փոխադարձաբար սիրահարւում են: Բեգմուրեան այդ նկատում է, նա մի լեռնական է, որի արտաքին մեղմութեան, քաղցրութեան տակ ծածկուած է մի խիստ բնաւորութիւն բռնկուող զայրոյթ, նրա կացութիւնը դառնում է անտանելի, իր խանդոտութեան բռնկումների վայրկեաններին նա նոյն-խակ ձեռք է բարձրացնում կնոջ վրայ, թէեւ չարունակում է նրան սիրել և իր արածի վրայ իսկոյն փոշմանում: Բայց Հերսիլիան էլ իր ընթացքով նրան մղում է դէպի նոյն ծայրայեղութիւնը, աւելի և ևս մեծացնում է իրանց մէջ բացուած վիճը և մի օր իր սիրած երիտասարդի՝ Ռուբէնի հետ փախչում է, թողնելով իր երեխաներին, որոնց նա չի էլ սիրում, ինչպէս ինքն է ասում, որովհետեւ նրանք՝ այդ երեխաներն իր չը սիրած մարդուցն են: Դրամայի այս երեք գլխաւոր գործողներից դուրս կան նաեւ, Հերսիլիայի ծնողները Սուրաթեան ամուսինները, որոշ տեսակէտից հետաքրքիր դէմքեր, Բեգմուրեանի մտերիմ ազգականը Իլիա Մարմարեան մի պարալիտիկ, որ ըստ երեւոյթին ներկայացնում է սառն բանականութիւնը նա էլ համակրում է Հերսիլիային, կայ նաեւ Ռուբէն Ալիմբարեանի քոյրը, որ բժշկութիւն է սովորել և մտադիր է գնալ Պարսկաստան Շահի կանանոցի բժշկուհի դառնալու համար:

Դրամայի հիմնական գաղափարը և հեղինակին առաջնորդող բարոյական սկզբունքները պարզելու համար մի փոքր խորը նայենք այս գործողներին: Սկսենք գլխաւորից, դրամայի հերոսուհուց, որի շուրջն է դառնում ամբողջ գործողութիւնը, որ իբրեւ կեդրոնական անձնաւորութիւն, անհրաժեշտ օղակ է հանդիսանում պիեսայի զանազան մասերին, և իր ընթացքով տալիս է մեզ կատարուող կենսական երեւոյթների բարոյական փիլիսոփայութիւնը: Իւրաքանչիւր վէպի կամ դրամայի մէջ ընթերցողը փնտռում է ամենից առաջ կամ մի երազած դանկալի զրութիւնից դուրս բերած մի հերոս,

կամ իրականութիւնից վերցրած մի կենդանի տիպ, արդիւնք իշխող երևոյթների, պայմանների անխուսափելի տրամաբանութեան, որ ներկայացնում, կամ աւելի ճիշտ մարմնացնում է իր տառապանքների կամ պայքարի մէջ յայտնի միջավայրին յայտնի հասարակութեան պատկանող բազմաթիւ անյայտների նման յոյզերը, նման իղձերն ու ցաւերը, որ դիտակցական թարգման է հանդիսանում բազմաթիւ կորած մոլորած մարտիկների, անզօր, կամ տգէտ հոգիների մէջ ապրող անորոշ, բայց տիրող ընդհանուր զգացմունքներին: Ներկայ դէպքում հեղինակը կամեցել է տալ մեզ մէկն այն բնաւորութիւններից, որոնք հրապարակ են գալիս որպէս հասարակաց փրկութեան զոհեր, և իրանց ընթացքով, իրանց պայքարով ու տառապանքներով գնում են տիրապետող խեղդող հոսանքի դէմ, և յաղթանակող կամ յաղթուած, տանում են իրանց հետ բիւրաւոր բաղդակիցների, միջութեան մէջ լայող հոգիների անհուն սէրն ու երախտագիտութիւնը: Հեղինակը կամեցել է, այո՛, բայց նրա փորձը տարաբաղաւոր վերջացել է մի կատարեալ անյաջողութեամբ: Մշակուած, տրամաբանական հիմունքների վրայ կանգնած կենդանի տիպի փոխարէն, պ. Շիրվանզադէն մեզ տուել է հոգեբանական մի արտուրտ, հերոսուհու մի կարրիկատուրա, որ գործում ասում, խօսում է ոչ այն, ինչ պիտի բղխէր որոշ մօմենտի, որոշ իրականութեան մէջ ապրող հոգուց, այլ այն ինչ որ հեղինակը կամենում է, առաջնորդուած որոշ բարոյական հետեւողութիւններ, որոշ մօրալ տալու սխալ տրամաբանութեամբ: Հերսիլիան կենդանի աւուղջ րանականութեամբ մի էակ չէ, այլ մի ֆիկցիա է:

Ամենից առաջ այդ ամուսնութիւնը, որքան արուեստականութիւն, որքան մտածածին և իրականութիւնից խուսափող մի կացութիւն: Բարեկիրթ, խելացի աղջիկ գեղասէր, կենսասէր ու գեղեցիկ, որ անծանօթ չէ իր շրջապատին, որ լաւ գիտէ թէ իրան հետեւում են շատ ջանիլ երիտասարդներ, իր ընտրութեան մէջ ազատ է, հայրը, ինչպէս յետոյ կը տեսնենք դէպի իր աղջիկն ունեցած իր վերաբերմունքի մէջ հասնում է նոյն-իսկ ծայրահեղ ազատամտութեան, մայրը միայն ցանկութիւն է յայտնում Բեգմուրեանին փեսայ տեսնել և այդ «խելացի» «կրթուած» «ճաշակով» ջանիլ աղջիկը այնուամենայնիւ տալիս է իր ձեռքը մի մօտ քառասուն տարեկան մարդու, առանց նրա բնաւորութիւնն ու հասկացողութիւնները գէթ մի փոքր մօտիկից ճանաչելու: Ինչու: Տրամաբան ու հասկանալի լինէր զուգէ, եթէ պ. Շիրվանզադէն մեզ ասէր, որ այդ աղջիկը պարզապէս զրաւուել է Բեգմուրեանի հարստութեամբ, որով պիտի կարողա-

նայ իր բազմապիսի կապրիզներին բաւականութիւն տալու Բայց ոչ, հեղինակին հարկաւոր է, անհրաժեշտ է, որ Հերսիլիան իդէալական կին համարուի, նա կարծէք ուզում է ասել հասարակութեան. ահա նա, իմ երեւեկյաժ կինը, զգուշացնում եմ ձեզ, որ նա կարող է հակասութիւնների մէջ ընկնել, կարող է յիմարութիւններ ասել, դատարկ և ունայնասէր լինել, կարող է նոյն-իսկ demi-monde-ի զարդերից մէկը լինել, բայց դուք մի բռնալէ չը մոռանաք, որ նա իսկօք, զարգացած, իդէալական կին է, նման այն անվորձ նկարչին, որ խնձորի ծառէ նկարում ուռնի է գորս գալիս, բայց թիւրիմացութեան տակիք չըտալու համար նկարի ներքեւում գրում է, «աա խնձորի ծառ է»:

Եւ ինչո՞ւն է արտայայտւում այ. Շիրվանզադէի իդէալական կնոջ լայն ձգտումները, նրա հոգեկան այն ազնիւ պահանջները, որոնք իրանց անօրինակութեամբ և նորութեամբ այնպէս անողորմ կերպով իբր թէ ընդհարւում են իր միջավայրում իշխող հասկացողութիւններին և առաջ են բերում երկու ամուսինների մէջ տրագիկական անտագոնիզմը: Նրանում, որ Հերսիլիան երաժշտութիւն է սիրում, որ նա ամենաանբնական պայմաններում մի թեթեւօրէիկ փութկոտութեամբ սկըսում է դիկլամացիա անել լեռների նայելով և հառաչել, ինքն էլ ջիմանալով թէ ինչու:

Վեց տարի է, ինչ նա ամուսնացել է, արդէն մայր է, դուստներ ունի, և մեր հերոսուհին զժգոհ է իր կացութիւնից կարծէք նրա համար, որ ամուսինը նրա հետ լեռները չի գնում չըջելու, որ նա էլ երաժիշտ չի, որ նա էլ լեռներին նայելիս զեկլամացիաներ չի անում գեղեցիկ մասին, որ նա էլ չի հառաչում թռչնի երգը լսելիս: Գեղեցիկը լերան վրայ և երաժշտութեան մէջ, այդ գիտէ Հերսիլիան, բայց գեղեցիկը կեանքի մէջ, անձնօրէնութեան մէջ, այս մեր տառապանքներով լի գոյութեան խորհուրդ տուող իդէալի իրական պաշտամունքի մէջ, ցաւած հոգիների սանձանքի վեհութեան մէջ, այդ խուսափում է նրանից, այդ նա չի ճանաչում, այդ նա չի հասկանում, անկարող է հասկանալ: Չը կայ այն կսկծեղութիւն, այն աղիքները զայրող ներքին պայքարը, որ ընտրեալ անհատներին, մարտիրոսներ է զարձնում, չը կայ կեանքի տղեղութիւնների, միլիոնների ծառած մէջքերին ծանրացած չարիքի հետ ընդհարումը, նրա հոսանքին դէմ ընթացող այն ուժեղ հոգին, որ գալարւում է արտաքին պայմանների ոյժի տակ և որ իր անզօրութեան մէջ անդամ գեղեցիկ է և որի տառապող գլուխը ասես լուսապսակ ունի իր շուրջը:

Այս բոլորը գեղեցիկ չեն Հերսիլիայի համար, մասսայի

յաւերը կարող են վերաւորել նրա էստէտիկական ճաշակը, նա երաժշտութիւն և լեռներ է սիրում և այնպիսի ուժով, որ պատ-
րաստ է ձգել իր տունը, ամուսնուն, երեխաներին, միայն թէ
կարողանայ իր դատարկ զեղումները, իր շաղակրատութիւննե-
րը դուրս թափել մի իր նման բեղեճների առաջ: Նա գեղա-
պաշտ է մինչև այն աստիճան, որ ինչպէս ինքն է ասում, «սի-
րում է գեղեցկութիւնը մինչև անգամ յանցանքի մէջ»: Ահա ձեզ
դարձեալ մի ֆրազ, որ ոչինչ չի նշանակում, որ մի տրամաբա-
նական ու բարոյական արտուրդ է: «Գեղեցիկը յանցանքի մէջ»,
բայց յանցանքն ինքն ըստ ինքեան կեանքի գարշ կողմն է, նա
գեղեցկութիւն չի պարունակում, նա նոյն ինքը տգեղութիւնն է
— ինչպէս վնասելի տգեղութեան մէջ գեղեցկութիւն: Այո, կան
տիպեր, որոնք հմայք են ճաշակում անգամ արիւնոտ ոճիրների
պատկերի առաջ, որոնք երջանկութեամբ հեւում են իրանց
դանակի տակ զոհի ոսկորների ճարճատիւնը լսելիս, որոնց հա-
ճոյք են զգում իրանց նմանների տանջանքի առաջ, որոնք գե-
րազոյն էքստազի մէջ են ընկնում կեանքի զարշուժիւնները
տեսնելիս, բայց դրանք բոլորն էլ հիւանդ հոգիներ են, դրանք
այլասեռութիւն են, դրանք Լոմբրոզոյի գրչին արժանի հետա-
քրքիր սիւժետներ են և ոչ հասարակաց մօրալն առաջնորդելու
կոչուած անհատներ:

Հերսիլիային բեմի վրայ տեսնելիս ես ակամայ յիշեցի
Ֆլօբերի «Madame Bovary»-ն, որ չնորհիւ իր ստացած վստա-
կան դաստիարակութեան, չարունակ դժգոհ է մի բանից, շա-
րունակ մի ինչ որ վնասում է ամուսնական կեանքից դուրս և
վերջ ի վերջոյ առաջին պատահած երիտասարդի գիրկն ընկնե-
լուց յետոյ իր միայնութեան ժամին կրկնում է երջանկութեամբ՝
«Վերջապէս ես էլ սիրական ունիմ»: Դուրս է գալիս, որ նա
սիրական էր վնասում ճիշտ այնպէս, ինչպէս կը կամենար մի
լաւ մատանի ունենալուց յետոյ, պարանոցին կախել նաև մի
լաւ ոսկէ մանեակ: Սիրականը նրա համար մի լիւքս է, էրօ-
տիկ զգացմունքներին բաւականութիւն տուող մի զարդ: Բայց
ֆրանսիացի հեղինակն այդ տիպն ստեղծելով չի կամեցել տալ
հասարակութեան կատարեալ կնոջ մի պատկեր, ընդհակառա-
կը, նա ներկայացնում է մեզ ապականած, նեխած միջավայ-
րում առաջ եկած մի հիւանդ բնաւորութիւն, մի տգեղութիւն,
պ. Շիրվանզադէն տալիս է մեզ Madame Bovary-ի մի ողորմե-
լի կարրիկատուրան, այն էլ իբր օրինակելի տիպ, իբրև «կրթուած,
խելացի կին»:

Բարոյական այս գլխիվայր հասկացողութիւնների կողքին
հեղինակը թոյլ է տուել նաև մի հոգեբանական կոպիտ սը-

խալ: Կամենայով ցոյց տալ, թէ մինչև որ աստիճան Հերսի-
լիան տտում է իր ամուսնուն, նա նրան ասել է տալիս թէ՝
«ես ատում եմ իմ զաւակներին, որովհետև նրանք իրանց հօրն
են նման»: Ե՞րբ և որտեղ է պատահել պ. Շերվանդադէին մի
կին, որ իր զաւակներին տտելիս լինէր իր ամուսնու պատճա-
ռով, ծնողական զգայմունքը մայրերի մէջ այնքան զօրեղ է,
որ նրանք ոչ մի պայմանում դէպի իրանց ամուսինը տաժաժ
ատելութիւնը նրանց վրայ տարածել չեն կարող: Ատելի ա-
մուսնութիւնից ազատուելուց յետոյ էլ յայտնի է, թէ կանայք
ինչ միջոցների են դիմում իրանց զաւակներից չը զրկուելու
համար, աւելին կ'ասեմ, որքան անգամ առօրեայ կեանքում հա-
կառակ իր կամքին ամուսնալիք կիներ շատ անգամ առաջին
զաւակը ծնելուց յետոյ, սկսում է եթէ չը սիրել, գոնէ մեղմա-
նալ դէպի ամուսինը, կարծէք դէպի զաւակը տաժաժ սիրոյ
ցայտումներն ընկնում են և այն էակի վրայ, որ պատճառն է
նրա մայրական երջանկութեան: Ասել թէ կիներ ատում է իր
զաւակներին, որովհետև նրանք նման են իր ատելի ամուսնուն,
կը նշանակի բոլորովին ծանօթ չը լինել նրա մայրական զգայ-
մունքի խորութեան:

Փախուստից յետոյ իր ամուսնուն թողած նամակում
Հերսիլիան ասում է թէ՝ «ես չեմ կարող մնալ, որովհետև պատ-
կանում եմ նրան և իմ կոչմանը»^{*)}: Կնոջ կոչումը ներկայումս
ամբողջ աշխարհի սօցիալական բարդ խնդիրներից մէկն է, է-
մանսիպացիան իր եռանդուն մարտիկներն, ինչպէս և իր կա-
տաղի հակառակորդներն ունի, բազմաթիւ նշանաւոր մտածող-
ներ զբաղուել են և զբաղւում են այդ կնճռոտ խնդրով, որ սերտ
առնչութիւն ունի ժամանակակից հասարակական կեանքը յու-
զող բազմաթիւ այլ խոշոր պրօբլեմների հետ: Յամենայն դէպս
այդ հարցի մասին երկու նշանաւոր տիրապետող մտաւոր հո-
սանքներ կան, ումանց համար կիներ իբրև ընտանիքի, օջաղի սիւն,
մայր է, ամուսին և տնտես, ուրիշների համար նա տղամարդին
հաւասար բոլոր իրաւունքներն ունի կեանքի բոլոր ասպարէզնե-
րում: Մենք նոր և այն էլ հայ բնմի վրայից լսեցինք, որ կնոջ
վերաբերեալ կայ և երրորդ մտաւոր հոսանք. այդ այն է, թէ
նա պիտի «ապրի» այդ բառի խիստ սահմանափակ, չեմ քաշ-
ւում առել սեռական մոլորութիւնը պիտի «ապրի»՝ սա գեղե-
ցիկ է. իսկ այն երեխաները, որ նրա արգանդի ծնունդ են, չը
պիտի ապրեն, նրանց կարելի է չպրտել փողոց, կիներ պիտի
ապրի ուրիշների, անգամ իր սեփական զաւակների երջանկու-

*) Պիէսայից մէջ բերուած խօսքերը միշտ մօտաւորապէս են:

թեան վրայ հաստատելով իր եսասէր, զգայական կեանքի պատուանդանը: Սա էլ գեղեցիկ է. բայց այդ գեղեցիկութիւնը ճաշակել, հասկանալ չեն կարող անգամ էմանսիպացիայի ամենատաք, ամենածայրայեղ պաշտպանները, որոնց համար կանանց հարցի մէջ ամենակոնկրետ կողմերից մէկը և երեխաների ապահովութեան, խնամքի հարցն է: Առնուազն չափազանց միամիտ պիտի լինել այս աստիճան խոշոր կենսական պրօբլեմներին այս աստիճան թեթեւութեամբ մօտենալու համար, ինչպէս անում է ներկայ դրամայի հեղինակը:

Նրանի թէ այսքան հեշտ լինէր այդ ցաւոտ ինդրի լուծումը: Տարաբաբաղդութեամբ տպագրան իր հասարակական կազմով բազմաթիւ սիւրպրիզներ է պահում միշտ անգամ մօտաւոր անցեալի համար. թւում է թէ պ. Շիրվանզադէն անգիտանում է տնտեսական-սոցիալական այն բարդ խնդիրները, որոնց շուրջն է դառնում այսօր դասակարգային կատաղի պայքարը, որի այսպէս թէ այնպէս լուծումից է կախուած և կանանց հարցի արմատական լուծումը:

Նրկու ամուսինների մէջ այդ իբր թէ իդէալական հողի վրայ առաջ եկած դժգոհութիւնը նկատելով, մարդ սպասում էր տեսնել նրան հետևող մի դրութիւն, ուր դադարաւորական մօտիվների մի բարդ հիւսուածքում հերոսուհին կ'ընդհատուի իր քականութեան անողորմ պահանջներին և այսպիսով հնար կը լինի պատճառաբանուած, հիմնաւորուած մի փիլիսոփայական մօրալ դուրս բերել, բայց այդ բոլորի փոխարէն ասպարէզ եկաւ երկրորդ գլխաւոր անձնաւորութիւնը, երիտասարդ Ռուբէն Ալիմբարեան, մի դատարկամիտ bon vivant, մի լօկալաս, որ կատարեալ դարձրեց պիեսայի անկումը:

Ի՞նչ է ներկայացնում իրանից Ալիմբարեանը, ինչով նա կարողացաւ գրաւել «խելօք, կրթուած, զարգացած» Հերսիլիայի սիրտը: Նրանով, որ նա սովորել է ճարտարապետութիւն, բայց իր մասնագիտութեամբ չի զբաղւում, սիրում է գեղարուեստը, թափառել է եւրոպական շատ քաղաքներ, տեսել է շատ կանայք, երեսուն տարեկան է արդէն, բայց կոյս հոգի ունի, խօսում է լաւ, անդիր ֆրազներ գիտէ կանանց կոշման և նրանց դերի կարեւորութեան մասին: Եւ այսքանը բաւական է, որ Հերսիլիան նետուի նրա գիրկը, որ նրան համարի մի իդէալական անձնաւորութիւն:

Ցանկանում էր պ. Շիրվանզադէն, որ հասարակութիւնն էլ այդ երիտասարդի մէջ մի իդէալական տիպ տեսնէր, եթէ այն, այն ժամանակ նա կարող է հաստատ հաւատաշատ լինել, որ ամեն մի փոքր իշատ է հասկացող, որոշ բարո-

յական սկզբունք ունեցող անձնաւորութեան համար իր թը-
խած հերոսը միայն նողկանք կարող է պատճառել որպէս մի
ցինիկ Ողբալի է այն հասարակութիւնը, ուր Ալիմբարեանի
պէս տիպեր կարող են հերոսանալ, արտասուելի է այն գրա-
կանութիւնը, ուր նրանք պիտի հանդիսանան իրրեւ կրթիչ
տիպեր: Ուրեմն քաղաքացիական, անհատական, հասարակական
պարտաւորութիւններ չը կան կրթութեամբ երիտասարդի համար,
ուրեմն կարելի է դնալ, թափառել եւրոպական քաղաքներ, վե-
րագաճնալ մտնել հայ նահապետական ընտանիքների մէջ և այն-
տեղ գեղեցիկ տիկիւններին ճառեր ասել, հառաչել, ցինիկարար
սեփական կուսութիւնից խօսել և ամենացած վայելքների, տըռ-
փանքի, աղտեղութեան մէջ հերոսանալ: Ի՞նչ փոյթ, որ կեանքը,
մեր դաճն, արտասուելի իրականութիւնը բազմաթիւ կնճռոտ
խնդիրներ է հանել մեր առաջ, ինչ փոյթ, որ թշուառութեան,
աղիւթութեան, խեղճութեան ճիրաններում թրպրտում են այն-
քան թշուառներ, ինչ փոյթ արցունքն ու հառաչանքը, որ ա-
մեն օր թափուում և լսւում է մեր շուրջը: Ալիմբարեանը գե-
ղեցիկն է սիրում, Ալիմբարեանը ճապրել է՝ ուզում, ուստի
նա ազատ է ամեն պարտաւորութիւններից և նա... հերոս է,
մինք նրան հիացմունք, սքանչալումն ենք պարտական:

Հերսիլիան տխուր է, որ չի կարողացել բարձրագոյն
կրթութիւն ստանալ, որով, ով գիտէ, թէ ինչ հրաշքներ պիտի
դորձէր. բայց հեղինակը մեզ տուել է բարձրագոյն կրթութիւն
ստացած մի հայ օրիորդի նմուշ՝ օրիորդ Ալիմբարեան: Նա
բժշկութիւն է սովորել, նա պատրաստուել է հասարակական
գործունէութիւն սկսել, և նա ընտրել է... Շահի հարեմը: Մենք
գիտենք, որ եւրոպացի օրիորդներ կան, որոնք իրանց երկ-
րում տեղ չը գտնելով՝ մասամբ էլ արկածախնդիր և զօրեղ զըն-
ցունների հետամուտ բնաւորութիւնից մղուած գնում են հե-
ռաւոր արեւելք, հազար ու մէկ գիշերները երազելու մի իշ-
խանի պալատում կամ պարզասլէս դրամ վաստակելու իրրեւ
բժշկունի կամ դաստիարակչուհի: Բայց միթէ ճշմարիտ մեզա-
նում էլ հայ կրթութեամբ կնոջ համար ուրիշ ասպարէզ չը կայ,
բայց եթէ Շահի հարեմը: Ո՞րտեղից է վերցրել պ. Շիրվան-
դադէն այս տարօրինակ նմուշները, և արժէր միթէ մի բար-
ձրագոյն կրթութիւն ստացած հայ օրիորդ ներկայայնել բեմի
վրայ նրան Պարսկաստանի մի հարեմն առաջնորդելու համար:

Սիւրպրիզները սակայն սրանով չեն վերջանում, ահա և
Հերսիլիայի հայրը՝ Սուրաթեան, յիսունին մօտ մի մարդ, որ
բաղականչում է, թէ իր աղջիկն իրաւունք ունի իր ընթացքի
մէջ, թէ նա պիտի սուրբի, թէ նա ազատ է իր վայելքների, իր

զգայական խենթութիւնների մէջ, Անշուշա, հեղինակն այնքան միամիտ չի լինի պնդելու, թէ մի հատ այդպիսի մարդ կարող է ցոյց տալ ամբողջ հայ ժողովրդի մէջ, այդ տիպը նրա ստեղծածն է. ճաշակի բան է, որի առաջ մեզ կը մնայ լռել:

Դրամայի մնացած երկրորդական անձնաւորութիւնների մասին կարելի է և չը խօսել: Ընդհանրապէս կարելի է ասել, որ հեղինակի հիմնական գաղափարը, նրան առաջնորդող սկզբունքը մնաց օդի մէջ կախուած, առանց իրականութեան վրայ հոգ գտնելու:

Եւ ճշմարիտ, եթէ նիւթը վերցրած է մեր կեանքից, հայ միջավայրից, ապա պիտի զարմանալ հեղինակի այս ծայրայեղ և դատապարտելի անծանօթութեան վրայ, որովհետեւ նրա երեսակայած, արուեստական ձեւով յերկրած տիպերը ոչ մի առնչութիւն չունին հայ կեանքի հետ, նրանց հայ անունները հեղինակին են միայն: Գուցէ նա կամեցել է տալ հայ հասարակութեանը նրա միջավայրից անկախ մի իդէալական, ցանկալի դրութեան պատկեր, որին պիտի ձգտել, որի համար պիտի աքնել, այդ զէպքում նրա փորձը մի տխուր գրական կատաստրօֆ է միայն, որովհետեւ այդ պիեսայի մէջ, ինչպէս տեսանք, մոռացութեան են մատնուած բարոյական ամենատարրական հասկացողութիւնները մարդկային պարտաւորութիւնների մասին, մարդկային հոգին իր տրամաբանական արտայայտութիւնների մէջ ցաւալի կերպով խեղաթիւրուած է, գործող անձինք մի մի մանեքեններ, մի մի մեքենաներ են, որոնք ոչինչ չեն ասում ոչ զլիսին և ոչ սրտին:

Դերասանները կատարեցին իրանց պարտքը բարեխղճութեամբ, բայց նրանց բոլոր տաղանդն ու ջանքերն անկարող եղան կենդանութիւն տալ մի դիակի. պ. Շիրվանզադէի պիեսան մի մեռած ծնունդ է:

Հոկտեմբերի 18-ին ներկայացուած Օստրովսկու «Անմեղ մեղաւորները» այն պիեսաներից մէկն է, որի մասին կարելի է ասել տիպեր ունի, բայց գործողութեան ամբողջութիւն և տեխնիկա չունի: Եւ այդ յաջող ընտրած և տաղանդաւոր կերպով պատկերացրած տիպերը իբրեւ գործող անձինք իրար հետ շատ քիչ կապ ունին, նրանց յարաբերութիւնները, նրանց ընդհարումները խիստ արուեստական են, իրերի ընական ընթացքի տրամաբանութիւնը խիստ թույլ է: Թւում է, թէ սկզբից մինչև վերջը գործող անձինք պատահաբար, զիպուածով են երես առ

երես գալիս, կամ աւելի ճիշտ հեղինակը գորով է նրանց հրապարակ բերում, որ այս կամ այն բանն ասեն, այս կամ այն բանն անեն:

Նայեցէք այս նեղնամովին, այս ապօրինի զաւակին, բազդի և հասարակութեան խորթ որդուն, որ մանկութիւնից սկըսեալ տառապում է հասարակական անարդարութիւնից, որ հաւածւում է ամեն կողմից իբրեւ ապօրինի ծնունդ, որի գըլխին ծնած օրից ծանրանում է ընթացիկ բարոյականութեան ողորմելի լուրջական: Եւ այդ մենակ, աղքատ ու պատառոտուած, հալածականը, որ իր կայութեան բոլոր գիտակցութիւնն ունի, արհամարհում է հզօրներին, արհամարհում է ամբողջ հասարակական կազմը և վեհօրէն հրաժարւում է զթուծիւն մուրալ: Նա մի ըմբոստ է, և հպարտ է իր ըմբոստութեամբ:

Այս միւսը, այս ողորմելի Շմագան, այս գզգուած, դրոնեւում ապրող թափառական դերասանը, որ կեանքի պաշտարի մէջ ունի միայն իր հիւմորը և խորամանկութիւնը, փոքրիկ խորամանկութիւն, որ հազիւ հնար է տալիս նրան կրքեմն կերակրուել, ինչպէս ասում է ժողովուրդը իր կեանքի ընթացքում մի քանի անգամ «ձեռքը կուշտ փորի վրայ դնել»: Հրաշալի մի տիպ է այն, հասարակական ստորին խաւաւում սողացող ողորմելի այն մութ գոյութիւններից մէկը, որոնք իրանց շահատակութիւնների, խաւար արարքների մէջ անգամ երբեք գարշելի չեն, միշտ արդահետելի: Որոնք իրանց կեանքի ամենայնպէս մանրամասնութեան մէջ անգամ դէմ առ դէմ են հանում աշխարհի հզօրների և խեղճերի յարաբերութեան բոլոր անարդարութիւնը:

Այս պիեսայի տրիօն կազմող երրորդ անձնաւորութիւնը՝ Լիւբովը, աղքատ ու աղնիւ աղջիկը, լքուած մի անսիրտ երիտասարդից, կեանքի անթիւ դրամաների անմեղ զոհերից մէկը, որչափ բեալականութիւն, որքան կիզիչ ցաւ կայ նրա կրած յուստխաբութեան, նրա կրած տանջանքների մէջ:

Սրանք բոլորն էլ տիպեր են, և լաւ մտածուած տիպեր, ափսոս, որ հեղինակը տեղ-տեղ մեյօդրամայի ձև է տուել իր այսքան իրական, այսքան յուզիչ խնդիրներ շօշափող պիեսային և տեխնիկական բազմաթիւ անյարմարութիւններ ըստեղծել դերակատարների համար:

Պ. Աբէլեան առանց այն էլ բեմի վրայ լայնարձակ շարժումներ, բնական, չը ճնշուած ժեստեր ունի, այս անգամ իբրեւ կեանքի գարշութիւնների, նրա ախտեղի կողմերի դէմ բողոքող, իբրի մի յամառ, անընկճելի, ըմբոստ իրօք սուելի գե-

գեյրիկ էր քան երբէք. նրա իւրաքանչիւր շարժումը, իւրաքանչիւր մոմենտին բռնած դիրքը մի կենդանի հպարտութիւն, մի պատկերաւոր բողոք էր:

Առաջին անգամ տեսայ պ. Արաքսեանին բեմի վրայ և այն Շմազայի վերին աստիճանի դժուար դերում: Եւ կուզեմ նրան էլի տեսնել, շարունակ տեսնել այս աստիճան համապատասխան դերում: Կօմիկի, մի քիչ խեղկատակի դերում ամեն մի դերասանի համար ամենավտանգաւոր թակարդը չափազանցութիւնն է, որի մէջ շատ հեշտութեամբ կարելի է ընկնել: Ողորմելի Շմազայի փափուկ դերը նա ինչ հմտութեամբ տարաւ. ներքնայարկերի, աժան ճաշարանների, ուրախ, անհոգ կեանքի փրլիսօփայութիւնն իր հմուտ բացատրողն ունեցաւ այդ օրը: Պ. Արաքսեան մի շնորհալի դերասան է, դրաւիչ խաղով:

Օրիորդ Ֆէլեկեան (Վարդիթեր) Լիւբով—Կրուչինայի դերը կարողացաւ գոհացուցիչ կերպով տանել: Այդ դերը իսկապէս դժուար է ոչ միայն այն պատճառով, որ հոգեբանական բարդութիւններ, բազմապիսի ու նուրբ յոյզեր է պարունակում, այլ որովհետեւ շատ տեղ խիստ արուեստական է և դերակատարին զնուծ է տեխնիկական անյարմարութիւնների մէջ:

Պ. Պետրոսեան հարուստ ու բարեմիտ կալուածատէր Մուրօփի երկրորդական դերը կատարեց իրան յատուկ մշտական յաջողութեամբ:

Այս ցանկը չերկարացնելու համար ասեմք, որ միւս դերակատարները բարեխղճօրէն կատարեցին իրանց պարտքը:

Մի փոքրիկ հասարակութեան փոքրիկ թատերական խմբից շատ պահանջող չը պիտի լինել, այդ հասկանալի է, բայց մի բան, որի համար ոչ մի գլխոգութիւն տեղի ունենալ չի կարող, դա բեմական լեզուի խնդիրն է: Բոլոր քաղաքակիրթ երկրներում մարդիկ թատրոն են գնում մաքուր, անխառն մայրենի բարբառը լսելու և բեմը մի անփոխարինելի զօրավիգ է լեզուի հարըստութիւնները, կիրթ ձևերը, սիրուն, ականջին հաճելի հնչիւնները երեւան հանելու համար: Ցաւալի է, որ մեր բեմի մասին այդ տակաւին ասել չի կարելի. թէ թարգմանութիւնների անյաջող լեզուն և թէ մի քանի դերասանների խորթ արտասանութիւնը խոչընդոտ են հանդիսանում այդ բանին: Մի կոշտ անհարազատ հնչիւն, մի սխալ ֆրազայ, մի ծիծաղելի դարձուածք որ և է պատուտիկ վայրկեանում բաւական է ամբողջ տպաւորութիւնը փչացնելու համար: Հաւատադրած եմք սակայն, որ հայ դերասանները, որոնք այնքան դժուարութիւն-

ների յաղթում են՝ կը խուսափեն այդ թերութիւնից և մեզ կը տան վերջապէս բեմից մաքուր հայերէն։ Նրանց միայն խրախուսել է պէտք, նիւթական և բարոյական խրախուսանք։ Հարկաւոր է բեմը դնել հաստատ հիմքերի վրայ, նրան ազատել անախորժ պատահականութիւններից, հարկաւոր է աջակցել լայն կերպով այն մի բուռն անձանց, որոնք ամեն ինչ անում են այդ օգտակար գործը վարելու համար։ Իսկ թիւ է անում հայ հասարակութեան ունեւոր այն մասը, որ իրան կրթուած, առաջաւոր համարելու յաւակնութիւնն ունի։ Այդ հարցի պատասխանը ամեն ներկայացման ժամանակ մենք գտնում ենք այն դատարկ օթեակների մէջ, որոնք սպասում են հանդիսատեսի, բայց իրանք են դառնում դիտողութեան և տխուր խորհրդածութիւնների նիւթ։

Ա.

ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Քաղաքային ընտրութիւնները Երեւանում

Այն հանգամանքը, որ քաղաքային կանոնադրութեան համաձայն ընտրութիւնների մէջ ձայն ունենալու համար անհրաժեշտ է ունենալ որոշ չափով քաղաքին տուրք տուող կալուածք կամ առևտրական ձեռնարկութիւն, շատ շատերին զրկել է ձայնի իրաւունքից: Ժողովուրդի ահադին մեծամասնութիւնը միանգամայն զուրկ է թէ սեփականութիւնից և թէ առևտրական ձեռնարկութիւնից, այդ պատճառով նա չունի յենդ, չունի նաև ձայնի իրաւունք, այն ինչ նրա կարիքները, նրա պահանջը դէպի քաղաքի բարեկարգ վիճակը աւելի մեծ են: Նա, զուրկ լինելով ընտանեկան կամ ասպրուստի յարմարութիւններից, աւելի պահանջներ ունի քաղաքի այս կամ այն հարցում այդ պահանջներին այսպէս կամ այնպէս գոհացում տալու մէջ, մինչդեռ այդ յենդի շնորհիւ քաղաքային ինքնավարութեան մէջ ձայնի իրաւունք ունենում է միայն հարուստ, արտօնեալ դասակարգը, որն ունենալով մեծամասնութեան շահերից միանգամայն տարբեր սեփական շահեր, հէնց այդ կողմն էլ ծռում է ամբողջ ինդիւրը, անտես առնելով մեծամասնութեան պահանջներն ու կարիքները:

Երեւանը ունի մօտ 30,000 բնակիչ կամ ոչ պակաս 5000 տնից, հետևապէս, եթէ չը լինէր ցենզական սահմանափակումն, քաղաքային ընտրութիւնների մէջ ձայն կունենային 5000 ընտրողներ: Մինչդեռ յենդ ունեցողների թիւը ընդամենը հաշոււմ է 1030: Այդ 1030-ից քաղաքային տուրքը չը վճարելու պատճառով ձայնից զրկուել են 280 հոգի, մնացել է 780: Ի նկատի առնելով, որ այս 780-ից մի որոշ թիւ անձինք էլ ունեն ընկերովի կալուածք կամ ձեռնարկութիւն, ուստի մասնակցութեան համար պահանջոււմ է ծախքերի և այլն դժուալութիւնների հետ կապուած ընկերական հաւատարմագիր, մի որոշ թիւ էլ բացակայոււմ է քաղաքից և այլ նման պատճառներով Երեւանի ընտրու-

Թիւներին մասնակցում էին առաջին անգամ ընդամենը 340 և երկրորդ անգամ 300 ընտրողներ, եւ ինչ է դուրս գալիս, 5000 ընտանիք ունեցող քաղաքը ընտրութիւններին մասնակցում է ընդամենը մի 300 ձայնով կամ 3%, 4% կազմող մասով:

Երեւանի քաղաքային ընտրութիւնները նշանակուած էին սեպտեմբերի 22-ին և հոկտեմբերի 6-ին:

Սեպտեմբերի 22-ի ընտրութեանը մասնակցում էին 343 ընտրողներ, որոնցից 213 հայեր և 130 թուրքեր: Դրուած էին 120 տուփեր, պիտի ընտրուէին 60 իրաւասուներ և 12 կանգիդատներ, ընդամենը 72: Ամենքի համար պարզ էր այն հանգամանքը, որ եթէ առաջին ընտրութեամբ չը կարողանային պահանջուած թիւը լրացնել, պիտի զփուարութիւնների հանդիպէին. չը նայած սրան 120 քուէարկուողներից ընտրուեցին միմիայն 26, որոնցից 16 հայեր և 10 թուրքեր: 94-ը ստացան կէսից պակաս ձայներ, սրանց թւում ըփչկներ, փաստաբաններ, ճարտարապետ և ինտելիգենտ մարդիկ: Ընտրութիւնների այսպիսի հետեւանքը յաւալի էր մանաւանդ այն տեսակէտից, որ մի անգամ պակաս քուէ ստացողը երկրորդ անգամ քուէարկուել չէր կարող: Եւ այդպէս էլ եղաւ. չը նայած հրապարակի վրայ դրուեց սենատի այն բաղատրութիւնը, որով մի անգամ կէսից պակաս ձայներ ստացողը իրաւունք էր ստանում երկրորդ անգամ քուէարկուել և որով առաջնորդուեցին Թիֆլիսի քաղաքային երեք ընտրողական շրջանները: Այդպիսով հոկտեմբերի 6-ի լրացուցիչ ընտրութեան ժամանակ չը դրուեց առաջին անգամ պակաս քուէ ստացողների և ոչ մի տուփը: Այսպէս լինելուց յետոյ հասկանալի է թէ որպիսի անուշներ երկրորդ անգամ պիտի մէջ գային: Այնքան արժանաւոր թեկնածուների դուրս մնալուց յետոյ շատ պարզ է պիտի հարցը կանգ առնէր արհեստական կերպով առաջ քաշած մարդկանց վրայ, ինչպէս և եղաւ:

Հոկտեմբերի 6-ի ընտրութեան ժամանակ դրուեցին մեծ մասամբ պատահական մարդկանց 38 տուփեր, մինչդեռ պէտք էր ընտրել դեռ ևս 46 հոգի: Այս անգամ մասնակցում էին 299 ընտրողներ, որոնցից 202 հայեր և 97 թուրքեր. չը նայած այդ պերճախօս թուերին՝ հայերից չընտրուեց և ոչ մէկ հոգի, իսկ թուրքեր 4-ը և ուսս՝ 1-ը, 33 թէկնածուներ սեւապան: Այսպիսով երկու անգամուայ ընտրողների թիւը հասաւ ընդամենը 31-ի: Չը խօսելով մի քանի արժանաւոր հայ և թուրք ընտրուածների մասին, պէտք է կրկնենք, որ նրանցից մեծ մասը, թէ հայ և թէ թուրք, ընտրուեցին ոչ թէ իրանց անհատական ար-

ժանաւորութիւնների շնորհիւ, այլ յայտնի նպատակներ առաջ տանելու համար: Եւ զուր չէին այն մի կարգ մարդկանց ջանքերը, որոնք, միջոցի մէջ խարութիւն չը դնելով, միմիայն մի հարցով էին հետաքրքրուում, թէ ով է ներկայ քաղաքացիներն կողմնակից: Եւ զարմանալի չէ, որ քաղաքային կազմի մէջ անհրաժեշտ մարդիկ սեւանալով, նրանց տեղ ընտրւում էին ազաներ և հաջիներ:

Երեւանի քաղաքային ինքնավարութեան 20-25 տարուայ պատմութեան մէջ վերջին 1898-1902 քառամեայ շրջանը կը մնայ որպէս մի վայելուն շրջան, որի օրօք լուծում են ստանում մի քանի կարեւոր խնդիրներ և սկիզբ է դրւում մի երկու խոշոր ձեռնարկութիւններին:

1898 թւի ընտրութիւնները տուեցին մի բաւականին լուր կազմ, որի մէջ առաջին անգամ տեղ էին գտնում բարձրագոյն կրթութիւն ստացած մարդիկ, ինտելիգենտ, երիտասարդ ուժեր քաղաքի չահերին նուիրուած անձնաւորութիւններից: Քաղաքային նոր կազմի միահամուռ դիմումներին ղիջելով քաղաքացիներ պաշտօնը ստանձնեց այժմեան քաղաքացիութիւն, իրաւաբան Խաչատուր Մէլիք-Աղամալեանը:

Այդ օրուանից քաղաքային կազմը իր զարթեցրած հարցերով, իր չօչափած խնդիրներով, իր կենդանի ժողովներով ընդհանուր հետաքրքրութիւն առաջ բերեց ժողովրդի մէջ. խորհրդի նիստերը սկսեցին գրաւել ահադին թւով կողմնակի հետաքրքրուողներ, շատ խնդիրներ քաղաքային խորհրդում քննուելուց յետոյ անցնում էին հասարակութեան մէջ և նրա խօսակցութեան և դատողութիւնների նիւթ դառնում:

Ահա այդ օրինակելի կազմի օրօք առաջ տարուեցին մի շարք հարցեր, որոնց հետ մենք ծանօթեցրել ենք ընթերցողին մեր յօդուածներից մէկում:

Այդ կազմի գործունէութիւնը, համակրութիւն գտնելով ժողովրդի, մի որոշ մասի մէջ միեւնոյն ժամանակ վաստակեց մի մեծ թշնամի բանակ, իր դէմ դրդուելով որոշ կարգի մարդկանց:

Բազմաթիւ մարդիկ, գլխաւորապէս թուրքեր, յափշտակւած հողաբաժինների դատավարութեան պատճառով, թշնամական դիրք բռնեցին իրանց կողմնակիցներով, որոնց մէջ քիչ չէին նաեւ ազգայնիկ մարդիկ: Զրի հարցին անպայման դէմ էր մեր քաղաքի թուրք հասարակութիւնը, մինչև անգամ հարցի տաք ժամանակ նրանցից զրաւոր բողոքներ մտան խորհրդի մէջ ջրի մասին: Զրի հարցի պատճառով լարուեցին նաեւ մի շարք, նոյն-իսկ իրաւասու հայեր, որոնք ոչ մի ջանք չէին խնայում

ջուրը բերել քաղաքի հաշվով, որպէս զի իրանք որպէս «փող-
րաթշիկներ» իրենց ձեռքը ձգէին այս կամ այն աշխատանքը:

Հասաւ ընտրութեան օրը. կարծէք ընտրողները վրայ գըր-
ուած չը լինէր մի մեծ պարտականութիւն: Թուրք ընտրողները
վճռել էին ոչ մի հայի սպիտակ քուէ չը տալ, լինէին արժա-
նաւոր թէ անարժան: Թուրքերի այս մտապրութեանը շատ հա-
մամիտ 50-60 հայ ընտրողներ, ձեռք ձեռքի տուած թուրք ընտ-
րողներին, մօտեցան տուփերին: Երկու կողմից զլորուած էին
սեւ քուէներ, մէկ կողմը քաղաքի, իսկ միւսը իր սեփական շա-
հի համար. սեւացներ, ջնջել, տապալել էին աշխատում մի-
մեանց և հետեւանքը եղաւ ուղղակի ինքնասպանութիւն: Նոյն
երեւոյթը տեղի ունեցաւ նաեւ լրացուցիչ ընտրութեան ժա-
մանակ, ընտրուեցին 4 թուրքեր և մէկ ռուս: Ահա սոյն գծուծ և
անմիտ ջանքերը, որոնց շնորհիւ երկու ընտրութիւններում 72-ի
տեղ ընտրուեցին ընգամներ 31, 14 թուրքեր, 1 ռուս և 16
հայեր:

Այս բոլորից յետոյ միայն ժողովուրդը տեսաւ այդ մի
չարք մարդկանց տգեղ ընթացքը, ստոր ճանապարհը և թուր-
քերի հետ միասին բռնած դիրքը, հասկացաւ բանի էութիւնը,
սկսեց իր նախատինքը և վրդովմունքը չարտել այդ մարդկանց
երեսին, իր ամբողջ զգուսնքը տրտայայտել, բայց արդէն ուշ էր:

Այժմ բոլորը մի հարցական դառած, զղջման ամբողջ թա-
փով մի գլուխ բացականչում են.

— Ի՞նչ արինք մենք...

Ներկայ բոլորում ընտրութիւնները բեկանելու համար
դրուած են մի քանի բողոքներ:

Ն Ե Ր Ք Ի Ն Տ Ե Ս ՈՒ Թ Ի Ի Ն

Կրիմինալիստների միջազգային ժողովը Պետերբուրգում.— Ոճրագիտութեան մէջ նոր հոսանք.— Պրոֆէսոր Լիստի կարծիքը.— Ընչաքաղցութիւնը իրրե յանցաւորութեան շարժառիթ.— Փողամու հայ ինտելիգէնտների նմուշներ.— Ազնուական կալուածատիրութեան պահպանութիւն.— Ազգարեան ճեմարանի Լիցէօնի 30-ամեակը:

Սեպտեմբերի սկզբներում Պետերբուրգում գումարուեց ոճրագէտների կամ կրիմինալիստների միջազգային համաժողովը մօտ 400 անդամների մասնակցութեամբ: Առաջին անգամ էր Ռուսաստանում տեղի ունենում այդ միջազգային ժողովի գումարումը: Կրիմինալիստների IX համաժողովը բացեց ինքը արդարադատութեան միներսուրդ ֆրանսերէն արտասանած մի բաւական երկար ճառով: Մինիստր Մուրաւեօվը իրան համակիր յայտնեց այն նոր ուղղութեան, որ սկսում է տիրապետող հոսանք ստեղծել ոճրագիտութեան մէջ, աւելի մարդասէր վերաբերմունք դրոյց տալով դէպի յանցագործի անձնաւորութիւնը և չարիքի արմատները որոնելով հասարակական կարգերի մէջ: Այդ նոր ուղղութեամբ զատաւորը պէտք է ի նկատի ունենայ աւելի ոճրագործի հոգեբանական շարժառիթները քան նրա գործած յանցանքի նիւթական հետեւանքները, այնպէս որ դատաւորից առաւել պահանջւում է հմտութիւն հոգեբանութիւնից, քան պատմական օրէնքների խիստ հետեւողութիւն: «Ոճրագէտները, ասում է պրոֆէսոր ֆօն Լիստ, պէտք է նախ և առաջ ուսումնասիրեն ոճիրների պատճառները, որովհետեւ յանցաւորութիւնը բուն է դրել հէնց հասարակական կեանքի և սօցիալական խմբերի նօրմալ փոփոխութեան մէջ: Մեր ժամանակուայ յանցաւորութիւնը տարբերւում է նախընթաց ժամանակաշրջանների յանցաւորութիւնից երկու խիստ բնորոշ գծերով.

ա) սեփականազուրկների (պրօլետարիատ) յանցաւորութեամբ և ջղագարների (սեփրաստենիկ) յանցաւորութեամբ: Արդիւնազործութեան զարգացման հետ մեծ քաղաքներում աւելանում է թէ սեփականազուրկ դասի և թէ ջղագարների թիւը: Արդիւնազործութեան հետ քանի գնում է աւելի ու աւելի սուր կերպարանք է ստանում գոյութեան կռիւը. արդիւնազործութեան և առևտրի այդ վիթխարի զարգացման արգելք չի կարող լինել օրէնսդրութեան միայն կարող է մի բան անել. օգնել նրանց, որոնց գոյութեան անողորմ կռիւը սպառնում է ոչնչացումով:

Բայց մենք գիտենք որ ոճրագործութիւնները պակաս չեն և խոշոր սեփականատէրերի և բուրժուա դասակարգի մէջ. մենք յիշել էինք, օրինակի համար, Էմբերների և Մօնիէների, ինչպէս և Պանամայի հերոսների մասին (№ 6): Այդ տեսակ օրինակներ կարելի է շատ բերել զանազան երկրների բանկիրների և կապիտալիստ սպեկուլեանտների կեանքից:

Ի՞նչն է ստիպում որ այդ ապահով մարդիկ ոճրագործութեան դիմեն, եթէ ոչ անկշտում տենչը—ձեռք բերել որքան կարելի է շատ այն բանից, ինչից կախուած են փարթամ կեանքի բոլոր վայելքներն ու հրապոյրները, ունենալ ձեռքում այն թալիսմանը, որ նրա տիրոջ տալիս է ոյժ, իշխանութիւն իր նմանների վրայ, յարգանք ամբողջի և որոշ ինտելիգէնտների կողմից:

Ժամանակակից պայմաններում փողատէրն է վայելում քաղաքակրթութեան բոլոր բարիքները, կեանքի բոլոր վայելքները. այն, պէտք է փիլիսոփայ լինել Մամոնայից չը դալթալզուելու համար:

Սակայն այդ «փիլիսոփայութիւնից» դժուար է դտնել մեր ինտելիգենցիայի մէջ: Թէ ընչաքաղցութիւնը ինչ սոսկալի աւերումներ է անում մեր ինտելիգէնցիայի իդէալների մէջ՝ այդ գիտենք բոլորս, մանաւանդ վերջին տարիներում տեղի ունեցած մի քանի փաստերից յետոյ: Նմուշներ.

Ահա ձեզ մի աղքատ գիւղացու զաւակ, որ մինչև ինժեների դիպլոմ ձեռք բերելը աւելի քան համեստ աղքատուտի էր սովոր. բայց ձեռք բերելով դիպլոմ և տալս ամուսնանալով մի «կրթուած» տիկնիկի հետ նա յանկարծ պահանջ է զգում ունենալ տարեկան դէթ 8—9 հազարի եկամուտ: Ի՞նչպէս ձեռք բերել այդպիսի խոշոր հասոյթներ: Բաղում այդ հեշտ է. կազմակերպիր ընկերութիւն, հաւաքիր միամիտներից գումարներ, հիմնիր մի փքուն ու սնամէջ գործ և դարձիր լիպօր կառավարիչ: Թող քեզ վրայ վստահացած միամիտները հա՛ սպասեն թէ դու նրանց դիվիդենտ կը տաս. ծուղակներիդ մէջ ընկնելով թող նրանք քանդուեն. քո ի՞նչ հոգան է. նրանք յիմար են

եղել, իսկ դու ճարպիկ, ուստի և վայելիր քո հանճարի պըտուղները...

Ահա ձեզ մի այլ օրինակ. երբ նա չքաւոր ուսանող էր, սիրում էր ոգևորուել իդէալներով, սիրում էր գիշերները դիտել երկինքը, տիեզերքի անհունութեան մէջ անթիւ աստղերի յուրով զմայել: Գիտութեան տաճարից ահա ընկաւ մեր աստղագէտը Բագու, նրա սիրած աստղերի փայլն իսկոյն նսեմացաւ ոսկու գէզերի փայլի առաջ: Այդ չքաւոր իդէալիստը մի քանի տարի չանցած դառաւ նաւթային աշխարհում յայտնի գործիչ. բայց տարեկան 7—8 հազար հասոյթը սկսեց նրա գրգռուած ախորժակին գոհացում չը տալ, և նա մի գեղեցիկ օր վերցրեց իրան վստահացած գործի ամբողջ գրամապուխը և ծլկուեց արտասահման...:

Մի երրորդ օրինակ հաւ բայց այս անգամ առաջ բերենք գործը այնպէս, ինչպէս պարզուել է դատաւարութեան ժամանակ:

Ահա գործի էութիւնը:

Բագուի նաւթագործ պ. Մ. Շահգիզանօվը, հանդիպելով իր նախկին կառավարիչ երգուեալ հաւատարմատար պ. Գ. Ենգիբարօվին կլուբում, ասաց նրան բոլորի ներկայութեամբ.

—Վաղը եկ գրասենեակս և վերադարձրու ինձնից գողացած փողերս:

Փաստաբան Ենգիբարօվը պատասխանատուութեան կանչեց հրապարակապէս իրան գող անուանողին պատժ. օրէնքն. 131 յօդ. հիման վրայ: Ենգիբարօվը, ուրեմն, մեղադրում էր Շահգիզանօվին իրան անպատուելու և ոչ զրպարտելու համար. այս վերջին գէպքում Շահգիզանօվը պարտաւոր կը լինէր փաստերով ապացուցել իր խօսքերը, իսկ առաջին գէպքում՝ ոչ: Հաշտարար դատաւորը Շահգիզանօվին մեղաւոր համարեց Ենգիբարօվին խօսքերով վիրաւորելու մէջ և դատապարտեց նրան 10 օրուայ բանտարկութեան: Այդ վճռի դէմ բողոք է տրուում երկու կողմից հաւ Պ. Ենգիբարօվը գտնում էր որ պատիժը թեթիւ է, իսկ Շահգիզանօվի հաւատարմատար Սմիրնօվը խընդրում էր ներկայ գէպքում Շահգիզանօվի ասածները զրպարտութիւն համարել և ոչ վիրաւորանք, վստահ որ կապացուցի Ենգիբարօվի երեսին չպրտած մեղադրանքը: Նա խնդրում էր հարց ու փորձի ենթարկել հետեւեալ վկաներին. երգ. հաւատ. Մ. Պապաջանեանին, Շահգիզանօվի գանձապահ Ա. Նազարէթեանին և Բ. Շխեանին:

Բագուի չըջանային դատարանում հոկտ. 3-ին քննուեց այդ գործը: Յիշած վկաները հարց ու փորձի ենթարկուեցին դատարանի

կողմից և հաստատեցին որ Ենգիրարովը, երեք տարի առաջ Շահգիրդանովի համար Ղուբայի գաւառում գնելով մի կալուածք, հաստատագիրը (կուպչին) գրել էր տուել իր անուան և միայն անցեալ տարուայ վերջում, Շահգիրդանովի բաղմաթիւ պահանջներից յետոյ, կրտսեր նոտարի մօտ կալուածքը գրել է տուել Շահգիրդանովի անուան, վկաները ցոյց տուին որ Ենգիրարովը գնելով Շահգիրդանովի փողով Бақ. О—во Рүс. Нефт. ընկերութեան ակցիաները՝ գրել է տուել իր անունով, որ Ենգիրարովը լինելով լիակատար կառավարիչ Շահգիրդանովի գործերի $3\frac{1}{2}$ տարուայ ընթացքում, չը նայած Շահգիրդանովի կողմից մի քանի անգամ կրկնուած պահանջներին, չէր տալիս իր կառավարութեան ժամանակամիջոցի հաշիւը, իսկ, երբ Ենգիրարովը հեռացաւ պաշտօնից, երկայ որ հաշուեմատեանները չառ անփոյթ կերպով էին պահուած, ոչ մէկը դրանցից վերջացրուած չէր, Ենգիրարովի կառավարութեան ժամանակամիջոցում Շահգիրդանովի պարտքը աւելացաւ մօտ մի միլիօն ուսուրով: Շահգիրդանովի հետ կապած պայմանով Ենգիրարովը պէտք է ստանար տարեկան 9000 ոսուրի, մինչդեռ նա վերցրել է 12 հազար իսկ երբ Շահգիրդանովը բողոքել է այդ բանի դէմ, Ենգիրարովը յայտնել է որ ինքը ստանձնելով Շահգիրդանովի գործերը զրկուել է մի այլ պաշտօնից, որից ստանում էր 3000, եւ թէ ոռճկի յաւելումը կատարուել է տիկին Շահգիրդանեանի թոյլտուութեամբ: Դատաստանում պարզուեց նաեւ այն, որ Ենգիրարովը Շահգիրդանովի փողերով գնել էր «Սամուր» անունով գործարանը, իսկ հաստատագիրը կատարել էր իր անուան, որ նա սպառնացել է Շահգիրդանովին՝ կրեդիտօրների կողմից բողոքել նրա պարտամուրհակները, որ թողնելով իր պաշտօնը նա քաղաքի մէջ տարածում էր լուրեր Շահգիրդանովի մօտալուտ անանկութեան մասին և այլն:

Պ. Ենգիրարովը ինքը անձամբ չէր եկել դատարան, իսկ նրա հաւատարմատար պ. Բայկովը, վկաների ցուցմունքների դէմ ոչինչ չասելով, պնդում էր, որ ներկայ դէպքում տեղի է ունեցել վիրաւորանք և ոչ զրպարտութիւն: Շրջանային դատարանը փոխեց հաշտարար դատարանի վճիռը և աւելի ևս թեթիւ պատիժ սահմանեց Շահգիրդանովի համար, այն է 50 ոսուրի տուգանք:

Պ. Ենգիրարովը այժմ մտադիր է Շահգիրդանովին մեղադրել արդէն զրպարտութեան մէջ: Դատարանը, ի հարկէ, կը պարզէ հարցը, իսկ առ այժմ սոսկալի ծանր տպաւորութիւն են թողնում մարդուս վրայ այն բոլոր փաստերը, որ լոյս են հանել վկաները:

Այդպէս է նաև կեանքը կերպարանափոխում է հաստատ համոզմունքներից և իդէալներից զուրկ ինտելիգենտներին: Գիտութեան մարդը, պրոֆէսորը, գոհանում է որ և է 3 հազարով մանկութիւնից փարթամ կեանքի սովոր մի Գրիգոր Արծրունի կարողանում է որ և է 2 հազարով ապրել, իսկ երեկուայ աղքատ գիւղացին, թշուառ սովաքարի կամ տէրտէրի տղան, դիպումը գրպանում դնելով, դառնում է արխատօկրատ-բուրժուա և պահանջում է սինեկուրաներ, մսխում է տասնեակ հազարներ, և չը բաւականանալով գրանցով էլ, դիմում է ստոր միջոցների՝ փողատէր դառնալու համար: Ահա ժամանակակից մեր ինտելիգենցիայի ձգտումները: Բազդաւորութիւնը փողի մէջ են տեսնում, և այդ բազդի ուրուականի յետևից վազելով՝ տրորում են իրանց ոտների տակ ագնութիւն, պատիւ, իգէալ և մերձաւորի բարօրութիւն...

Լ. Ս.

25 հոկտ.

Յունիսի 3-ին հրատարակուած է ազնուականների փոխադարձ օգնութեան դրամարկդերի մասին օրէնքը, որի նպատակն է տոնմային ազնուականների կալուածների պահպանութիւնը Այդ դրամարկդները ազատում են ամեն տեսակ պետական տուրքերից, պետական գանձարանից տրուելու է միանուագ օժանդակութիւն և, բացի այդ, տասը տարի չարունակ նոյն գանձարանից յատկացնուելու նպատակ Այդ միջոցներով ազնուականութիւնը դիւրութիւններ և արտօնութիւններ է ստանում իր ձեռքում պահպանելու իրանց գրաւ դրած կալուածները, որոնք այլապէս պէտք է հրապարակային վաճառքի հանուէին և ծախուելով անցնէին միւս դասակարգերի ձեռքը:

Հոկտեմբերի 24-ին Մոսկուայի Լազարեան ձեմարանը տօնեց իր մասնագիտական դասարանների կամ լիցէօնի գոյութեան երեսնամեակը: Լազարեան ձեմարանի լիցէօնը վայելում է համալսարանների իրաւունքները, բացի գիտական աստիճանների արժանացնելու իրաւունքը և արտօնութիւններ: Լազարեան Լիցէօնի եռամեայ դասընթացքում աւանդում են. 1) հայոց գրականութիւն, 2) արաբական գրականութիւն, 3) պարսկական գրականութիւն,

4) թիւք-թաթարական լեզու, 5) Արեւելի պատմութիւն,
 6) ուսաց գրականութիւն, 7) վրաց լեզու 8) պարսից և
 թիւրքաց լեզուների գործնական վարժութիւն և արեւելեան
 գեղագրութիւն: Վերջին տարիներս մտորուել են և մի
 քանի հասարակական-իրաւարանական առարկաներ և ֆրան-
 սերէն լեզու: Լիցէօնը ունի արեւելագիտութեան բաւական
 հարուստ գրադարան: Տարաբախտաբար հայկական բաժինը հե-
 առ է լիակատար լինելուց:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պարլամենտական նիստերի վերաբացումը Անգլիայում և Ֆրանսիայում.—
Մակեդոնական հարցը.—Լըրուա Բօրիէի յօդուածը.—Նիլիկիայի կաթողիկո-
սական ընտրութիւնը.—Հայոց եկեղեցի Պարիզում:

Ամառային արձակուրդներից յետոյ բացուեցին պարլամեն-
տական նիստերը ևւրոպական զանազան երկրներում:

Համայնքների առաջին նիստը Անգլիայում բաւական ազ-
մըկալի անցաւ իրլանդական պատգամաւորները չվճոյներով
հանդիպեցին առաջին մինիստր Բալփուրին և իրլանդական գոր-
ծերի մինիստր Ուինդզէմին: Իրլանդական պատգամաւոր Օ' Բը-
րայէնը պահանջեց, որ կառավարութիւնը նշանակի օր՝ իրլան-
դիայի գործերի գրութիւնը պարզելու համար: Բալփուրը մեր-
ժեց այդ անել, յայտնելով որ համայնքների ժողովը ունի ան-
յետաձգելի շատ խնդիրներ: Գլխաւոր օրինակիւք, Լոնդօնին
ջուր մատակարարելու հարցը, չաքարի դաշնագիրը, Տրանսվա-
լին անելիք ֆինանսական զիջումները, և, վերջապէս, Ուզան-
դեան երկաթուղին կառուցանելու հարցը: Բալփուրի այդ տար-
օրինակ խօսքերը բողոք յարուցին ոչ միայն իրլանդացիների
կողմից, այլ և ազատական կուսակցութեան, որ գտաւ իրլան-
դացիների պահանջները արդարացի և զարմանք յայտնեց, որ
կառավարութիւնը աւելի կարեւոր է համարում մի որ և է եր-
կաթուղային գծի կառուցման խնդիր իրլանդական հարցից:
Իրլանդական պատգամաւոր Օ' Դօննէլը, որ նոր էր աւատուել
վեցամսեայ բանտարկութիւնից, խօսք պահանջեց և, չը ստանա-
լով պահանջածը, մօտեցաւ Բալփուրին և ասաց. «Ես ձեզ
արհամարհում եմ»: Համայնքների ժողովում ահագին ազմուշ
բարձրացաւ: Նախագահը առաջարկեց ժամանակաւորապէս հե-
ռացնել նիստերից Օ' Դօննէլին: 341 ձայնով ընդգէմ 51-ի այդ
առաջարկութիւնը ընդունուեց: Ապա ձայների մեծամասնու-
թեամբ համայնքների ժողովը ընդունեց Բալփուրի առաջարկը
և սկսեց զբաղուել գլխաւորական իրլի քննութեամբ:

Սակայն իրլանդացիներին դժուար էր վհատեցնել: Միւս նիստերից մէկում Օ' Բրայէնը կրկին դիմեց Բալֆուրին հարցով, համաձայն է արդեօք նա նշանակել որոշ օր իրերի դրութիւնը Իրլանդիայում պարզելու նպատակով: Ազատական կուսակցութեան պարագլուխ Կէմպբէլլ-Բաննէրմանը յայտնեց, որ նա միանում է իրլանդացիների պահանջին: Այնուամենայնիւ Բալֆուրը չը համաձայնուեց նշանակել պահանջուած օրը: Եւ միայն մի քանի նիստերից յետոյ սպիկերը թոյլ տուեց Օ' Բրայէնին խօսել գործերի դրութեան մասին Իրլանդիայում: սակայն անհետեւանք մնաց նրա պերճախօսութիւնը, համայնքների ժողովը մեծամասնութեամբ (215 ընդդէմ 121) մերժեց նրա բոլոր առաջարկները:

Դպրոցական բիլլի էական կողմը այն է, որ մի կողմից վերացւում է հարկ վճարողների իրաւունքը՝ անմիջական հասարակական կօնտրօլ ունենալ սկզբնական դպրոցների վրայ, ինչպէս այդ անուում է այժմ տեղական ընտրուած հոգաբարձութիւնների միջոցով, և, երկրորդ՝ ամեն կերպ նպաստուում է այն դպրոցների աճման, որոնք հոգեւորականութեան հակոդութեան տակ են գտնուում: Այդ է պատճառը, որ ժողովուրդը այդ բիլլը անուանում է «տէրտէրական»: Իրլանդացիները, իբրի կաթօլիկներ, գուցէ պաշտպանէին պահպանողական կուսակցութեան այդ կղերական տեսակէտը, եթէ այնքան գրգռուած չը լինէին վերջին դէպքերից յետոյ: Ի միջի այլոց, նոր դպրոցական օրէնքը վերացնում է նաև կանանց ներգործական մասնակցութիւնը սկզբնական դպրոցների կօնտրօլի մէջ, թէև երեսնամեայ փորձը ցոյց տուեց, թէ ինչ ահագին օգուտ կարող են տալ կանայք այդ ասպարիզում: Բացի իրլանդացիներից և ազատականներից նաև ունիօնիստներից շատերը տրամադրուած էին այդ «տէրտէրական բիլլի» դէմ, սակայն վերջիններս ենթարկուեցին Չեմբերլէնի հմայքին և յետ կայան իրանց մտադրութիւնից:

Չեմբերլէնը այժմ ահագին ժողովրդականութիւն ունի: Անգլիայում և՛ չնորհիւ իր շատ որոշ, կտրուկ ուղղութեան և տաղանդին՝ ղեկավարող դեր է կատարում երկրի թէ՛ ներքին և թէ՛ արտաքին քաղաքականութեան մէջ: Հարաւային Աֆրիկայում իր ստեղծած քաօսի հետ անմիջապէս անձամբ ծանօթանալու և գործերը կարգի դնելու համար Չեմբերլէնը ինքը մտադիր է այցելել այդ նոր գրաւած երկիրները:

Հոկտեմբերի 23-ին ներկայ լինելով հարաւաֆրիկական պատերազմի յաջող վախճանի առիթով կառուցած արձանի բացման (Լօնդօնում), երբ իրան, Չեմբերլէնին, ուղերձ մատուցին, նա, ի միջի այլոց, ասաց, Հարաւային Աֆրիկայի մասին հետեւալը.

«Մենք դանկանում ենք մոռանալ անցեալը և տեսնել մեր առաջ միմիայն ապագան, եթէ մեզ կը հանդիպեն այդ ոգով, ինչի մէջ ես չեմ կասկածում, ես համոզուած եմ, որ թագաւորի նոր երկրներին Հարաւային Աֆրիկայում սպասում է մի այնպիսի ապագայ, որ չեն դուշակում ամենատաքաղութի մարգարէներն անգամ»:

Ֆրանսիական պարլամենտի աշնանային նիստերը վերսկսուեցին. բացի միաբանութիւնների փակած դպրոցների հարցից, կառավարութիւնը պէտք է սպասէր հարցապնդումներ նաև հանքերում աշխատող բանուորների ընդհանուր գործադուլի առիթով: Այդ բանուորները պահանջում են՝ ոչ աւելի քան ութ ժամեայ աշխատանք հանքահորերում, պահանջում են զստամեայ բանուորների համար կենսաթոշակ հիմնել, պահանջում են որոշել վարձի նուազական չափ, որից պակաս գործատէրները իրաւունք չունենան վճարել: Կառավարութեան հակառակորդները սպասում էին որ այդ հարցում Կոմբը կը յարուցանի իր դաշնակից սօցիալիստների դժգոհութիւնը, սակայն մինիստր-նախագահը յայտնեց որ «կառավարութիւնը կը գործ դնի իր ամբողջ ազդեցութիւնը, որպէս զի արագացնի լուծումը այն հարցերի, որոնք արդարօրէն յուզում են հանքերում աշխատող բանուորներին»:

Եւ Կոմբին յաջողուեց համոզել թէ բանուորներին և թէ գործատէրերին՝ վէճը յանձնելու միջնորդ դատարանի քննութեան:

Երրորդ հարցը որ պէտք է զբաղեցնի կառավարութիւնը այդ էմբերների փախուստն է: Զարմանալի է թւում թէ ինչպէս ամենագէտ ոստիկանութեան ձեռքից կարողայան անվտանգ դուրս պրծնել այդ խոշոր խարդախների ընտանիքը: Արդեօք կաշառքը չի թմրեցրել Ֆրանսիական արգումների աշտըրջութիւնը...

Հարցը դեռ պարզուած չէ:

Մեր տեսութիւնների մէջ մի քանի անգամ խօսել ենք մակեդոնական հարցի մասին, մատնանիչ անելով այն անտարբերութիւնը, որով մեծ պետութիւններն են վերաբերում դէպի Բերլինի դաշնագրութեան որոշ յօդուածները: 61-րդ յօդուածը ջնջուեց մի քանի հարիւր հազար անմեղ զօհերի արիւնով: Այժմ Թիւրքիան ուզում է նոյն փորձը կատարել 23-րդ յօդուածի վերաբերութեամբ: Սակայն մակեդոնացիք մտադիր չեն թոյլ տալ որ ոչխարների պէս մորթօտեն իրանց. ապստամբու-

թեան գրոշակը պարզուած է և Թիւրքիան ստիպուած է գործ ունենալ լաւ զինուած ու վարժուած խմբերի հետ, որոնց ղեկավարում են զինեալ Յօնչեվի և գնդապետ Եանկօվի նման հերոսներ։ Իսկ հարեան Բուլղարիան ինքն ըստ ինքեան հասկանալի է որ չի կարող անտարբեր հանդիսատես լինել։ Մնում է որ եւրոպական հասարակական կարծիքը ստիպի իր կառավարութիւններին վերջապէս մի կողմ նետել մերկանտիլ հաշիւները և գործադրել միջազգային արդարադատութիւնը։ Յանկալի է որ Անատոլ Լըրուա Բօլիէի հետեւեալ յօդուածը, որ լոյս է տեսել «Européen» թերթում, ձայն բարբառոյ յանապատի չը մնար, ինչպէս մնացել են 25 տարուայ ընթացքում դրած և արտասանուած շատ պեղեցիկ խօսքեր։ Ահա այդ յօդուածը, որի վերնագիրն է «Եւրօպական կօնֆեդերացիայի անհրաժեշտութիւնը Արեւելի գործերի համար»։

«Իւրաքանչիւրը, ով կարող է կատարելապէս անաչառ վերաբերուել Բալկանեան թերակղզու վրայ տեղի ունեցած անցքերին եւ ներքին անկարգութիւններին Թիւրքաց կայսրութեամ մէջ—ասում է հեղինակը—անկասկած չափազանց լուրջ կը համարէ զրուծիւնը Արեւելքում։ Եթէ արեւելեան ժողովուրդների տանջանքները, եթէ Մակեդոնիայի քրիստոնեաների կրած վիրաւորանքները և ճնշումները և հայ ժողովրդի աստիճանաբար ջնջումը չեն կարող խախտել մեր եսասիրութիւնը, գոնէ զգուշութիւնը եւ նախատեսութիւնը պէտք է ստիպեն քաղաքական և պետական գործիչներին դուրս գալու իրանց անտարբերութիւնից, տեսնելով միշտ աճող յուզմունքները Մակեդոնիայում և Հայաստանում։ Եւրոպայում, ինչպէս և Ասիայում, սուլթանը ճիգ է թափում կարգը վերականգնել սարսափով։ Կողոպուտը, բռնութիւնը, սպանութիւնը մահմեդականների սովորական զէնքերն են դարձել Վարդարի և Ստրումայի հովիտներում, ինչպէս և Վանի լճի ափերի վրայ կամ Եփրատի ափունքներում։ Մակեդոնիայի քրիստոնեաները, մանաւանդ սլաւօնները, պարզ տեսնում են, որ նրանց սպառնում է ջնջում։ Բալց որովհետեւ զիւղերում գոնէ նրանց թիւը շատ է և մանաւանդ, որ նրանք կարող են աջակցութիւն գտնել իշխանութեան բուլղար եղբայրակիցների կողմից, ուստի նրանց վերջապէս զգուցեցրեց վիպը ծոել իրանց դահիճների առաջ։ Երիտասարդութեան լաւագոյն մասը թողեց զիւղերը և գնաց լեռները, միանալով զինաւորուած հրոսակախօրհրի հետ։ Եթէ ձմեռը չը վրայ հասնէր, կարող էր ընդհանուր սպստամբութիւն ծագել։ Մակեդոնիայի ն'րկայ զրուծիւնը նման է Բօսնիայի և Հէրցեգօվինայի զրուծեան 1876

թուին: Եթէ եւրոպական դիպլոմատիան չը կարողանայ դժբաղ-
դութեան առաջն առնել, Մակեդոնիայում նոյնը տեղի կունենայ,
ինչ որ Բոսնիայում: Գարնանը ապստամբութիւնը կը տարած-
ուի ամեն տեղ: Բուլղարական կառավարութիւնը, որպէս երբեմն
Սերբիան և Չերնօզորիան, կամայ հարկադրուած կը լինի աչ-
կարայ օգնել Մակեդոնիայի քրիստոնեաներին: Սերբիան չի
կամենայ յետ մնալ բուլղարական իշխանութիւնից: Ռուսաստանը
ևս, չը նայելով իր համաձայնութեանը Աւստրո-Ունգարիայի
հետ և իր գծուարութիւններին և հոգսերին Հեռու Արևելքում,
չէ կարող, ի հարկէ, անտարբեր աչքով նայել իր ուղղափառ
եղբայրների կողմի և կորստեան վրայ: Այդպիսով, չնորհիւ դիպ-
լոմատիայի անհետաճանաչութեան կամ աւելի լաւ ասած՝ կառա-
վարութիւնների անտարբերութեան, Եւրոպան կարող է ընկ-
նել մի նոր արևելեան պատերազմի մէջ, որը կարող է համաշ-
խարհային դառնալ թիւրքիայում կրակը երկար ժամանակ
մարած էր երևում, յետոյ հրդեհը միանգամից բռնկեց և սարսա-
փեցրեց այն քաղաքագէտներին, որոնք դեռ նախընթաց օրը
չէին հաւատում, որ դրութիւնը լուրջ է: Եթէ Եւրոպան չէ
կամենում, որ իր հանգստութիւնը խախտուի ընդհանուր ապս-
տամբութեամբ օսմանեան նահանգներում, նա այժմ և եթ պէտք
է լսի գանգատներ այն տեղից: Միջամտութեան միակ եղանակը,
որը կարող կը լինէր որ և է հետևանքի հասնել, ի հարկէ,
եւրոպական պետութիւնների կօնֆէրէնցիան կը լինէր ձիւղ է,
պետութիւնները կարող են Իլլըզ-Քեօչկ դիմել առաջադրու-
թիւններով, բայց վտրձը արդէն համոզել է որ անհետևանք են
մնում այդ բոլոր բարեկամական առաջադրութիւնները, որոնց
Թ, Դուռը պատասխանում է խուսափող յայտադրելով կամ
Փանտաստիկական խոստումներով: Եւրոպան այդ շատ լաւ գիտէ,
և դա նրա լուրջեան և անգործունէութեան չարժաոյթներից
մէկն է, դէմ յանդիման այն բարբարոսութիւնների, որոնք
ամօթով են ծածկում XX-րդ դարի սկիզբը: Հէնց իրան թիւր-
քիայում խիստ շատ հարցեր կան, որոնք կարգարայնէին մի
այդպիսի կօնֆէրէնցիայի գումարումը: Բերլինի դաշնագրի
նշանաւոր յօդուածներից շատերը մեռած տառ են մնում, մի-
այն կօնֆէրէնցիան կարող կը լինէր, վերջապէս, ի կատար
ածել սալ դրանց: Գլխաւոր դժուարութիւնն այն է թէ պետ-
ութիւններից որը յանձն կ'առնէ այդպիսի առաջարկութեան
նախանձեռնութիւնը: Մենք կը յանկայինք, որ յանձն առնէր
Ֆրանսիան: Դա կը լինէր մի դեր, արժանի նրա անցեալին, և
կատարելապէս կը համապատասխանէր նրա լուսավոյն աւան-

գուլթիւններին: Յանձն առնելով մի այգպիսի նախաձեռնութիւն, Ֆրանսիան իր ետեւից կը քաշէր և ուրիշ ազգերին, պաշտպանելով Եւրօպայի պատիւը արեւելեան ժողովուրդների աչքում և ամբողջ աշխարհի առաջ»:

Տեսնենք որ պետութիւնը կը ստանձնի այդ վեհ գործի նախաձեռնութիւնը և ինչ դեր կը կատարի եւրոպական մամուլը:

Լ. Ս.

28 Հոկտ.

ՊՕԼՍԻ ԹԵՐԹԵՐԻՅ

Պարիզի հայոց եկեղեցիին հիմնադրութեան եւ օծման հանգիստը, կիրակի, հոկտ. 5. Պարիզի եկեղեցիի հիմնադրութեան և օծման հանգէսը կատարուեցաւ ձեռամբ Եւրօպայի առաջնորդ Տ. Գէորգ եպիսկոպոս Իւթիւճեանի: Հակառակ քանի օրէ ի վեր տեղացող անձրեւին եւ ցուրտ օդին, այս առաւօտ օդը գեղեցիկ էր: Կանուխէն ցրուած հրաւիրագիրներուն համեմատ, ժամը 9^{1/2}ին քաղաքիս երկսեռ ազգայինները գրեթէ ամբողջութեամբ լցուած էին նոր շինուելիք եկեղեցիին տեղը, ժան Կուժօն փողոց: Ներկայ էին նաեւ ֆրանսայիներ, ոստիկանութեան երկու պաշտօնակա կը հսկէին բարեկարգութեան՝ որ սակայն ամէն կերպով կատարեալ էր արդէն: Որոշեալ ժամուն առաջնորդ սրբազանը եկաւ եւ անմիջապէս սկսաւ արարողութեան: Սահմանեալ սաղմոսերգութեանց միջոցին տ. Վառնյապուն քահանայ հրամանաւ ն. սրբազանութեան, օծուելիք տաճարը խաչաքարերուն լուսցումը կատարեց: Մարգարէական եւ Առաքելական գրոց ընթերցումէն յետոյ սրբազան առաջնորդը կարգաց Աւետարանը «Դու ես վէմ եւ ի վերայ այդ վիմի շինեցիք զեկեղեցի իմ: Յետոյ մեռնեալիք կատարեց եւ Ս. Պետրոս առաքեալին խաչքարէն սկսեալ տասերկու առաքելոց քարերը, Ս. Պօղոսի, Ղուկասու, Գրիգոր Լուսաւորչի քարերը, ընդ ամէնն թուով տասնըվեց՝ օծեց: Խաչքարերը այլ եւ այլ ազգայիններ բռնած էին սպիտակ մաքուր կտաւով. սրբազան առաջնորդը զանոնք կարգաւ օծելէ յետոյ՝ իւրաքանչիւրը իր կտաւին մէջ պատելով թաղեց իրենց սահմանեալ փորուածներուն մէջ. յետոյ խնկարկութիւնը կատարեց եւ շարունակելով մնացեալ արարողութիւնը, հրամայեց պատրաստ գործաւորներուն, որոնք օծեալ վէմերը պարփակող փորուածները գոցեցին շաղախով ու

քարերով: Արարողութիւնը աւարտած ըլլալուն՝ տ. Գէորգ սրբազան համասու տոննարանութեամբ օրհնեց եկեղեցաշէն պ. Ա. Մանթաշեֆ՝ որ երկու օր առաջ մեկնած ըլլալով Պարիզէն, դժբաղդաբար բացակայ կը գտնուէր: Բարեմաղթութիւններ ըրաւ Ս. Հայրապետին համար: Ներկաներ ձայնակցեցան Ամեններով:

Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան պատուիրակ տ. Մովսէս եպիսկոպոս Կեօմրիւքճեան օգոստոս 16 թուակիր գրութեամբ մը պատգամաւորները հրաւիրած էր սեպտ. 29-ին ներկայ գտնուիլ Ատանա, կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար: Կաթող. տեղապահ Կիրակոս եպիսկոպոս գրով յալտներ էր թէ ինք չի կրնար մասնակցիլ ընտրութեան եւ Ատանա երթալ, իր ծերութեան եւ տկարութեան պատճառաւ: Կեօմրիւքճեան սրբազան երկու անգամ նամակ գրելով Կիրակոս սրբազանին, ղդացուցած էր թէ իր ներկայութիւնը անհրաժեշտ է: Կուսակալն ալ համամիտ գտնուած էր Կէօմրիւքճեան սրբազանին: Կաթող. տեղապահ տ. Կիրակոս եպիսկոպոս նամակ մը ուղղելով տ. Մովսէս եպիսկոպոսին, ղիտել տուեր էր թէ Սոսի վանքին միաբան պատգամաւորները նշանակելու, անոնց քանակը որոշելու իրաւունքը իրեն կը վերաբերի, թէ փոխանակ չորսի հինգ պէտք է ըլլայ անոնց թիւը: Տ. Մովսէս եպիսկոպոս պատասխաններ էր թէ ինք կէտ առ կէտ կը գործադրէ Պատրիարքարանի հրահանգը, եւ թէ Սիսի վիճակներուն մէջ զըտնուող բոլոր տեղապահները եւ եկեղեցականները եւ այլն իբրեւ Սիսի միաբան քուէ կու տան:

Ապա Ատանայէն քաշուած հեռագիրներ կը ծանուցանէին թէ Կիլիկիոյ կաթող. տեղապահ տ. Կիրակոս եպիսկոպոս, որ կը պատրաստուէր Ատանա երթալ, ներկայ գտնուելու համար ընտրողական ժողովին, ծանր կերպով հիւանդացեր է: Հետեւաբար, Կիրակոս սրբազան չպիտի կրնար մասնակցիլ գումարուելիք ընտրողական ժողովին, որի առաջին նիստը տեղի ունեցաւ սեպտեմբերի 29-ին նախագահութեամբ Մովսէս եպիսկոպոս Կեօմրիւքճեանի եւ ներկայութեամբ Ատանայի Մեթթուպճի պէյի: Կարգացուեց պատրիարքական կոնգակը, ընտրութեան հրահանգը, պատգամաւորաց գրերը եւ յետոյ երեք եկեղեցական եւ երեք աշխարհական անդամներէ յանձնաժողով մը կազմուեց: Յանձնաժողովը պատրաստեց ընտրելիներու ընդհանուր ցանկը: Այդ ցանկը տրուեց բոլոր պատգամաւորներուն եւ գաղտնի քուէարկութեամբ ընդհանուր ցանկին մէջէն ընտրուած

առաւելագոյն քուէ ստացող հետեւեալ վեց եկեղեցականներու անունները հեռագրուեցան պատրիարքարան:

Տրդատ եպիսկ. Պալեան (առաջնորդ Կեսարիոյ) 44 քուէ:

Ստեփաննոս եպիսկ. Յովակիմեան (առաջնորդ Նիկոմիդիոյ) 42 քուէ:

Բարդուղիմէոս արքեպս. Չամչեան (նախորդ առաջնորդ Պրուսա, և նախորդ պատր. տեղապահ) 40 քուէ:

Ներսէս եպիսկ. Արսլանեան (առաջնորդ Ռոտոսթոյի) 39 քուէ:

Սահակ եպիսկ. Խապահան (լուսարարապետ ս. Երուսաղէմի) 37 քուէ:

Մովսէս եպիսկ. Կէօմրիւքճեան (առաջնորդ Պիլէճիկի և նախագահ ընտր. ժողովոյ) 35 քուէ:

Ս. Պատրիարք հայրը ստանալով վեցանուն ցանկն անմիջապէս թագրերով մը մատուցած է ձեռնհաս իշխանութեան, հարկ եղած ձեւակերպութիւններն կատարելու համար:

ԷՄԻԼ ԶՕԼԱՆ ԵՒ ՆԱՏՈՒՐԱԼԻԶՄԸ*)

Մարդը յաւիտենական գոգոհն է, նրա հոգին գէպի ան-
յայտը, գէպի իրերի գաղտնիքը, նրանց մերկ բնութիւնը խոյա-
ցող մշտնջենական ծարաւին է: Մարդկային հոգու վսեմ գալա-
րունիները, նրա յարատեւ, անյագուրդ իղձերը իրանց բազմա-
պիսի և բազմախորհուրդ արտայայտութիւններով ընդգրկում
են մի լայնարձակ ամբողջութեան մէջ և՛ գեղարուեստ և՛ գիտու-
թիւն և՛ կրօն: Մտքի, գաղափարների պատմութիւնը մարդկային
յոյսերի, յարաճուն ու վառ յոյսերի, ինչպէս նաեւ ցաւոտ, կըսկ-
ծեցուցիչ յուսախաբութեան պատմութիւնն է միաժամանակ:
Գիտական և գեղարուեստական դպրոցներ, անթիւ կրօններ որ-
պէս մտքի անսահման էլօլիւղիայի անհրաժեշտ օղակներ յա-
ջորդում են իրար, կրեկտայ կատարեալն այսօր դառնում է
անկատար, անբաւարար, անընդհատ փոփոխւում են հոգեկան
պահանջները, ձեռք բերածից դժգոհ և յուսախաբ միտքը սա-
ւառնում է գէպի նորանոր տիրապետութիւններ և իդէալը շա-
րունակում է մնալ որպէս մի յաւիտենական փարոս, որ պըլ-
պըլում է անհունութեան մէջ, քաշելով է գէպի իրան տառա-
պող, ճգնող, լացող ու տենչացող այնքան սերունդներ: Որքան
վեհութիւն, բայց և որքան տրապիզմ կայ այն մարմարէ արծա-
նախմբերի մէջ, ուր սպիտակ մարդկային ուրուականներ իրար
բռնած, իրար քաշքշելով մի անկրկնայթ թափով, հանձարի ու-
ժով մղուած, ջանք են անում ձգուել և անհունութիւնը թեւա-
կոխել որպէս սիմվոլ գէպի անյայտը, գէպի նրա տիեզերական
միասինը սաւառնացող մտքի: Տանջուող ու յուսացող իր ան-
թիւ իղձերի, անյագուրդ մնացած ցանկութիւնների լայն ծփան-
քըներում օրօրուսդ մարդկութիւնն է այն, որ իր գոյութեան
իւրաքանչիւր մօմէնտում իր ճիգերի մէջ առաջնորդւում է ըստ
երեւոյթին տարբեր մօտիվներով, բայց բոլոր այդ ձգտումների,
բոլոր ջանքերի հիմնական պատճառը մնում է նոյնը-անվերջ

*) Տե՛ս „Մուրճ“ № 9.

խոյանցումն ընդգրկելու գեղեցիկն ու ճշմարիտը, որոնց իրականացումը կեանքի մէջ գերագոյն բարիքն է:

Հոգեկան բուռն տենչանքների, անորոշ, բայց զիւթիչ երազների արտայայտութեան նոր ձևեր աւելի զօրեղ, աւելի բելիք կերպով իդէալը պատկերացնելու, աւելի կենսունակութիւն աւելի հաւանականութիւն տալու որոշ մօմենտում իշխող գաղափարների, աւելի մօտ զգալու գերագոյն իդէալը, ահա բոլոր վարդապետութիւնների, բոլոր գրական դպրոցների *raison d'être*: Կլասիցիզմի, րոմանտիզմի և նատուրալիզմի յաջորդականութեան մէջ իշխողը մարդկային հոգու նոյն յախուռն ձգտումն է դէպի գեղեցկի և բարւոյ իդէալը:

*
* *

Այն ժամանակ, երբ Հիւզոն գեռ իշխում էր Պարսասի վրայ թառած մի հսկայ արծիւի պէս և իր «Իարերի լեզենդայով» ասես դարերի վրայ իր դպրոցով թագաւորելու յոյան ունէր, այդ ժամանակ Պարիզից հեռու, Ֆրանսիայի հարաւում մի խուլ անկիրնում մեծանում էր մի փոքրիկ մանուկ և նրա անունն էր Էմիլ Զօլա, որ իր հոգում կրում էր մի նոր գրական դպրոցի հիմնական գաղափարները:

Զօլայի մանրամասն կենսագրութիւնը այստեղ տալու կարեւորութիւն չեմ տեսնում, բայց եթէ նրա կեանքի զլխաւոր մօմենտների մասին մի քանի խօսք ասեմ, այդ կը լինի միայն նրա ապագայ գործնէութիւնը աւելի լաւ լուսաբանելու համար, որովհետեւ գրողի հոգին իր ապրած կեանքի հայելին է և իր երկերը այդ կեանքի արտացոլումները:

Զօլան Պարիզեցի է. նա ծնուեց այդ քաղաքում 1840 թ. Ապրիլի 2-ին Սէն-Ժօզեֆ փողոցի №10 տանը: Մայրը՝ Էմիլիայ Օբեր ֆրանսուհի էր, իսկ հայրը՝ Ֆրանսուայ Զօլա՝ Իտալացի, իր ժամանակին մի յայտնի ինժեներ և Էքսի գեղեցիկ ջրանցքի շինողը: Ֆրանսուան մեռաւ 1847 թ. թողնելով իր փոքրիկ ընտանիքը կարօտ վիճակի մէջ:

Էքսը մի փոքրիկ քաղաք է Մարսելից ոչ հեռու, հարուստ բնութեան ծոցում: Ահա այստեղ՝ հարաւի արեւի փարթամ չողերով ողողուած այս խուլ անկիրնում, ուր ամեն ինչ խօսում է մարդու հոգուն, ուր պատկերները բազմազան են և երեւկացութեան թոփքները վառ են ու յախուռն, այստեղ անցաւ Զօլայի մանկութիւնը:

Էքսից նա Պարիզ անցաւ 1858 թ.ին երբ արդէն 18 տարեկան էր և բարեկամների հովանաւորութեան չնորհիւ կարողացաւ մտնել Սէն-Լուի լիցէոնը: Բայց այս դպրոցում նա նոյն

երազողը մնաց ինչպէս էքսուս, առանձին սէր չունէր դէպի աշակերտական պարապմունքները, ի վերջոյ անկարող եղաւ զիպլում ձեռք բերել, որովհետեւ վերջնական քննութեանը կըտրուեց «գրական աշխատանքների մէջ ցոյց տուած անընդունակութեան համար» ինչպէս այդ յայտնեց Լիցէօնի վարչութիւնը։ Սրանով էլ վերջացաւ նրա կրթութիւնը, այնուհետեւ նա թողեց լիցէօնը, և նրա համար սկսուեց ծանր աշխատանքներով, զրկանքներով, տառապանքներով լի մի կեանք, որ ինքը Զօլան այսպէս է նկարագրում։

«Ինձ համար դա (զիպլում չը ստանալը) մի ծանր հարուած եղաւ, որովհետեւ ես զրկուեցի որեւէ վայելուչ տեղ ստանալու հնարաւորութիւնից, Հարկ եղաւ բաւականա՛նալ գրագրի ամսական 60 ֆրանկով, որ սակայն տեւեց միայն երկու ամիս»։

«Այնուհետեւ սկսուեց ինձ համար մի սարսափելի կեանք, կիսաքաղցած, պարտքերի մէջ թաղուած։ Ես այնպիսի կարտաթեան մէջ էի, որ յաճախ օրուայ ընթացքում իմ կերածը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի կտոր հաց ու պանիր կամ խաշած կարտօֆել, ինձոր, չաղանակ։ Երկու տարի չարունակ ես այսպիսի կեանք վարեցի։ Բոլոր այդ ժամանակ ես մի հատիկ սիւրտուկ ունէի, որ սկզբում սեւ էր, յետոյ կանաչ գոյն ստացաւ, իսկ վերջում դեղնեց։ Բայց անգամ քաղցած երիտասարդութիւնը—գարձեալ երիտասարդութիւն է, երջանիկ ժամանակ»։

«Մարմինս կերակուր չունէր, բայց միշտ դոնձում էի կերակուր հոգուս, որ չէր կշտանում՝ երբէք... Այդ ժամանակ ես ծխելը ձգեցի, և այդ ձեւով հաւաքած փողերով մում գնեցի, որ աշխատեմ զիշերները։ Վերջապէս սարսափելի կարիքից տանջուած՝ 1862 թ. ես գործակատարի տեղ զտայ Հաշեոի գրալահատանոցում ամսական 100 ֆրանկով։ Ակզբում իմ պաշտօնն էր ծրարներ կապել, յետոյ ինձ տեղափոխեցին մի այլ բաժին, ուր գործ ունէի նոր լոյս տեսած գրքերի հետ։ Երեկոնները ես նուիրում էի լուրջ գրական աշխատանքների։ Մի փոքր ոտքի կանգնելով՝ ես սկսեցի բնակուել մօրս հետ և վարում էի չափ համեստ կեանք։ Իմ ստաջին գրական երկը՝ «Contes à Ninon» ինձ դրամ չը տուեց, բայց հասարակութեան մէջ անունս յայտնի դարձրեց»։

*
* *

Զօլայի ապագայ կեանքն ու գործունէութիւնը ընորոշելու տեսակէտից երեք գլխաւոր հանգամանքներ ուշադրութիւն են դրաւում. նախ այն, որ նա ծաղումով կիսով չափ խալաղի է, երկրորդ՝ որ նա ծնուել է հարաւում և ապրել բնութեան ծո-

յուժ և վերջապէս, որ նա ճանաչել է հէնց իր կեանքի սկզբում ամենածայրայեղ կարիքը: Այս երեք հանգամանքների ազդեցութիւնը նրա կեանքի և գրականութեան վրայ ահագին եղաւ և կարելի է ասել զոյն և ուղղութիւն տուեց նրա գործունէութեանը: Խտալացի հօրից հաւանականաբար Զօլան ժառանգեց այդ հարուստ, հարաւային երեւկայութիւնը, առք երգրի ամբողջին յատուկ ցինիզմի հասնող բաց արտայայտութիւնները, պատկերների, նկարագրած տեսարանների զգայասէր, էրօտիկ բնավորութիւնը: Մերկութիւնը, մարմնի գեղեցիկ ձեւերի կուլտը, չը ճնշուած պոզաները միշտ յատուկ է եղել հարաւի ժողովուրդներին՝ այնտեղ բնութիւնն ինքն է, որ իր միշտ գոլ չընչով, իր փարթամ ծոցում իր հարուստ, կեանքով զեղուն կրծքի վրայ սիրում է գուրգուրել մերկութիւնը: Հիւսիսի մէջն ու մառախուղը չը կան այնտեղ, որ ամեն ինչ ծածկեն գունատ ու յուրտ քօղի խորհրդաւորութեան տակ, ամեն ինչ բաց է, ամեն ինչ հարաւի պայծառ շողերի պէս նրա վճիտ ջրերի պէս պարզ է ու յստակ: Լեզուն էլ այնտեղ զսպուած չէ, և նոյնքան բաց է, նոյնքան անսանձ, որքան բաց ու փարթամ է բնութիւնը:

Եւ յետոյ այդ բոց ու կրակ խանդը, որ մենք տեսնում ենք Զօլայի հերոսների մէջ, այդ յանկարծական բռնկումները, այդ դանակները, որոնք փայլում են խաւարի մէջ, այդ արիւնը, որ թափւում է ամեն տեղ, ուր նրանք ոտք են դնում, այս բոլորը բոլորը Խտալիան, և Խտալացիներին են յիշեցնում, նրա նկարագրոած բանուորներն էլ ասես Խտալացիներ լինին, այն վտանգաւոր, հազիւ զսպուած զայրոյթով լի տառապող աշխատաւորները, որոնք միշտ դանակներ ունեն գանգապանների մէջ:

Զարմանալի չէ, որ Ֆրանսիայից դուրս Զօլան ամենից աւելի լաւ հասկացւում էր Խտալիայում. նա միշտ մի բան ունէր իր մէջ Խտալական, որ նրան անկախ իր տաղանդից սիրելի, բնտանի էր դարձնում այդ երկրում: Մահուան առթիւ Հոռմի թերթերից մէկը նրան անուանեց «Դանտէի կրտսեր եղբայր» մէկը մարդկային հոգիների երեւակայական տանջանքների հանձարեղ նկարագիր և միւսը՝ աշխատող, տքնող լացող ամբոխի ցաւերի երգիչ: Երբ 1894 թ. իր «Հոռմը» գրելու համար Զօլան այցելեց Խտալիան և յաւիտենական քաղաքը, Խտալացիների նրան արած ընդունելութիւնը համարեա ազգային բնավորութիւն ունէր:

Եւ այդ տաք հարաւային բնավորութիւնը, այդ եռուն, կենդանի արիւնով մանուկը աճեց ու զօրացաւ էքստում, ներշնչումներ քաղեց ազատ բնութիւնից, ճաշակեց արձակ դաշտերի և կանաչադարձ լեռների հմայքը, ապրեց ծառերի չուկի,

անտառի փափուկի, կարկաշող փտակների, խայտապող հոտերի կողքին, հասկացաւ, ըմբռնեց բնութիւնը, թափանցեց նրա ստեղծագործող ոգու մէջ, աշխատանքը տեսաւ ջլուտ բազուկների, քրտինքը տեսաւ ակօսի վրայ կռացած կնճռոտ ճակատների և անդուլ պայքարի ու տքնութեան նուիրականութիւնն ու վեհութիւնը պաշտեց: «Դարբին» վերնագրով իր մի խիստ փոքրիկ պատմութեան մէջ Զօլան այնպէս է խօսում վարպետի ջլուտ բազուկների, նրա ծանր մուրճերի, հաստ ու կարծր սալի մասին, ասես այդ բոլորից կենսունակութեան, էներգիայի մի զօրեղ հով է փչում և պարարիչ շնչով կազդուրում, բարձրացնում, մաքրում է մեղկացած բնաւորութիւնը: Էքսի չրջակայքը խիստ բանաստեղծական է և հորիզոնը գրաւիչ, այնտեղ փռւում են լայնարձակ մարգագետիններ, գեղեցիկ բլուրներ քմահաճ ու դիւթիչ գալարումներով և նրանց ոտներին փարելով հոսում է Տօրս գետակը մերթ ջրաշատ, մերթ բարակ ինչպէս փայլուն երիզը: Զօլան ամբողջ տարիներ ապրեց ու թափառեց այդ հարուստ բնութեան ծոցում, այնտեղ նրանում մինչև յետին ծայր զարգացաւ այն համարեա տարերային սէրը դէպի բնութիւնը և նրա խորհուրդը: «La Terre-ը, կրկնագործական աշխատանքների այդ էլէպիան կարծեք Էքսի չրջակայքն է, հարաւի սեւահողի զեղուն կուրծքն է, կաթնատու անասունների հարուստ ստինքն է, մայր երկրի կենսատու աղբիւրն է, որի վրայ Զօլան դնում է տառապող ու պապական մարդու չրթունքները:

Եւ իր հոգին ու սիրտը բնութեան առաջ լայն բացած այդ մարդը մանկութեան օրերից ճանաչեց ծանր կարիքը, խեղճութիւնը, քաղցը, խորապէս զգաց թէ որքան ծանր է ճանապարհ հարթել դէպի հասարակական պիրամիդի կատարը, երբ մարդ ծնւած է ներքին աստիճանների վրայ, թէ որքան շատ են այն ձեռները, որոնք կատաղաբար վայր են գլորում յանդուգն մագրըցողին և որքան քիչ նրանք՝ որոնք մեկնւում են նրան վեր բարձրացնելու համար: Սեփական դառն փորձով, հոգու կսկիծով ու գուցէ դասուծով զգաց, թէ ինչ կը նշանակէ աշխատել բայց քաղցած մնալ, տեսնել սեփական ոյժերի չահագործումը, աշխատանք փնտրել չիտակ, արդար ճանապարհով, բայց ամեն տեղ գտնել միայն փակ դռներ, անտարբեր, քարէ դէմքեր: Իր կեանքի այդ ցաւերով ու կարիքով հարուստ չրջանն էր գուցէ որ Զօլային տուեց այդ անսովոր նկարագրական ոյժը, երբ պէտք է իր բոլոր հրէշաւորութեամբ փռել աշխարհի առաջ կուրած, մոլորած մասսայի, լուռ աշխատաւորի ցաւերը, երբ պէտք է հասարակական կազմը կրճատող չարիքը պատկերացնել, և

կեանքի գարշութիւնները, մարդկային հոգու մէջ քնող զաղանը շղթայագերծ ու ահաւոր նետել բազմամբոխ հրապարակների վրայ երախը բացած և խածնելու բոլոր կատաղութեան մէջ, իր կրած ու տեսած՝ մարդկային տառապանքները՝ դարձրին նրան մի բանաստեղծ տիտան, որ Դանտէի պէս իջաւ այն դժոխքը, ուր տքնում են հաղարները, և ուր աշխատանքի նուիրականութեան գրաւիչ ու հնչուն պրինցիպի անուշով միլիօնաւոր մարդկային էակներ լսում են իրանց ոսկորների ճարճատիւնը և տեսնում են իրանց սեւացած միսերի նողկալի ծուէնները:

* *

Եւ այդ մարդը իր տեսակի մի յեղափոխական էր, կամ աւելի ճիշտ մի յեղափոխիչ էր, (novateur): Մօպասանն իրաւացի կերպով է ասում Զօլայի մասին. «Ով որ վառ կերպով հասկանում է և բուռն ձգտում ունի դէպի նորութիւնը, ում միտքը գործում է անզաղար, նա կամայ թէ ակամայ մի յեղափոխական է»: Եւ այդ գրական-յեղափոխականը ստեղծում է մի դպրոց, նատուրալիստականը (Ecole naturaliste):

Զօլայի գրական վարդապետութեան թէօրիան մօտաւորապէս հետեւեալն է. Մենք ուրիշ օրինակ չունենք կեանքից դուրս, որովհետեւ մենք ոչինչ չենք կարող հասկանալ բացի այն, ինչ հասանելի է մեր զգայարաններին: Հետեւապէս ներկայացնել կեանքը խեղաթիւրուած ձևով, կը նշանակի ստեղծել վատ գործ, որովհետեւ նա անպատճառ սխալ կը լինի: Դեռ Հորացիոսն ասել է, որ երեւակայութեան ոչ մի ջանքով մենք չենք կարող պատկերացնել ձին գեղեցիկ կնոջ գլխով, ծածկուած փետուրներով և պոչի տեղ էլ մի ձուկ. սա կը լինէր հրէշաւոր: Հետեւապէս ամեն ինչ որ ճշգրիտ չէ, այլանդակ է, այսինքն հրէշաւոր, այստեղից դժուար չէ եզրակացնել, որ ֆանտաստիկական գրականութիւնն արտագրում է միմիայն հրէշներ: Զօլայի կարծիքով միայն ճշմարտութիւնը կարող է արուեստի գործեր արտադրել, պէտք չէ երևակայել, այլ դիտել և նկարագրել այն, ինչ տեսնում ենք:

Եւ Զօլան զիտում, պրպտում է կեանքը, վնտրում է նրա մէջ մերկ ճշմարտութիւնները և միմիայն ճշմարտութիւնները, իր ճանապարհին յաճախ, դուցէ և մեծաւ մասամբ, նա գտնում է կեանքի ամենանողկալի կողմերը, մարդկային հոգում տեսնում է քնած գաղանը «La bête humaine»-ը իր բոլոր հրէշաւորութեամբ և նա բռնում է, դուրս է քաշում այդ այլանդակութիւնը, լոյս աշխարհ է բերում, զնում է մարդու առաջ և ասում է նրան՝ ահա թէ դու ինչ ես: Նրա վէպերում մարդու

պատկերը զազրելի է, անտանելի, չի խնայուած ոչինչ, ոչ զգացմունքի քնքշութիւն, ոչ ընդունուած ամօթի սովորութիւնը, ոչ բարոյական տրագիցիաները: Մարմինն իր կատարեալ մերկութեամբ, իր ամենացած, ամենագարշելի հակումներով ընկած է հրապարակի վրայ և կարծես նեխուած, քայքայուած է: յետ է քաշուած քօղը այն բոլորի վրայից, ինչ կամ բնական նրբազգացութիւնը կամ դիտաւորեալ համեստութիւնը սիրում է ծածկել, անխնայ յինիզմով փռուած են կրքերի որոշ արտայայտութիւններն աշխարհի առաջ հեգնուած է պայմանական բարոյականութիւնը, ամօթը, համեստութիւնը: Եւ մարդը տեսնում է այդ բոլորը, նա կատաղում է իր մերկութեան համար, նա հրաժարւում է իրան վերագրած բնաւորութիւնից, նա խօսում, բողբոսում է յանուն իր առաքելութիւնների, որոնք իբր թէ զանց են առնուած, բայց Զօլայի փոյթը չէ, նա ասել է և շարունակում է պնդել, թէ դու այսպէս ես, ոճրածարաւ, արիւնըստը, ստոր կրքերի, կեղտոտ հակումների ողորմելի խաղալիք: Ահա այս էր հիմունքը այն կատաղի կռուի, որ սկսուեց նատուրալիզմի գէմ և որի հրապարակական արտայայտութիւնը Զօլայի կրկնուած փորձերի անյաջողութիւնն է անդամ դառնալ Փրանսիական ակադեմիայի:

Նորութիւնը, որ Զօլան մտցրեց գրականութեան մէջ մի յանդուգն փորձ էր: Նա կամեցաւ տալ «Երկրորդ Կայսրութեան ժամանակի մի ընտանիքի բնական և հասարակական պատմութիւնը»: (Histoire naturelle et sociale d'une famille sous le second Empire): Այս առթիւ նա ասում էր: «Ես կամենում եմ բացատրել թէ մի ընտանիք, մարդկային էակների մի փոքրիկ խումբ, ինչպէս է ապրում մի հասարակութեան մէջ, աճելով և ծնունդ տալով տասը, քսան անհատների, որոնք առաջին հայեացքից թւում են խորապէս տարբեր իրարից, բայց վերլուծութիւնը նրանց յոյց է տալիս կապուած իրար հետ, որովհետեւ ժառանգականութիւնն էլ, ինչպէս ձգողականութիւնը, իր օրէնքներն ունի»: Այդպիսի մի փորձ, որ կատարւում էր ոչ բնագէտի, ոչ մասնագէտ հոգեբանի, ոչ բժշկի աշխատանոցում (laboratoire) այլ գրողի գրասենեակում, ոչ մտքի անմիջական էքսպերիմենտալ (փորձնական) մեթոդով, այլ երեւակայութեան ուժով հիմնուած, թէկուզ կեանքում տեսած և զրքերից հուաքած բազմաթիւ մանր մունր փաստերի վրայ, չէր կարող վերջնաւ յաջողութեամբ և Զօլայի վէպերը չեն կարող բացատրել ժառանգականութեան բարդ օրէնքները: Եւ Բուգօն-Մակարների սերիան կազմող բօմանների խոշոր արժանիքը ամենեւին չի կայանում գործող անձերի ժառանգա-

կան կապերի և նրանցից առաջ եկող արամաբանական փիղիս-
լոգիական երեւոյթների լայն ամբողջութեան մէջ: Չը նայելով
հեղինակի յամառ համոզմունքին՝ այդ վէպերը հեշտութեամբ
կարող են նկատուել իրարից իբրեւ անկախ գործեր, ուրոյն
ստեղծագործութիւններ: Չափազանցութիւն չի լինի ասել գու-
ցէ, որ Բալզակի *La comédie humaine*-ի սերիան կազմող վէ-
պերի մէջ աւելի ընդհանուր գիտական կապ կայ, քան Ջօլայի
Բուզօն-Մակարների մէջ: Ինչ որ սակայն զարմացնում է այս
հսկայ տաղանդի այս հսկայական փորձի մէջ անկախ գիտական
հիմունքների ճշտութիւնից, այն ապշեցուցիչ հետեւողութիւնն
է, որ երեւում է բոլոր այդ հատորների մէջ, այդ սքանչելի
ցանցը, որի մէջ նրա տաղանդը չի խճողւում, և ընթանում է
մինչեւ վերջը արամաբանական չափած-ձեւած շաղկապ: Իր ամ-
բողջութեան մէջ «Բուզօն-Մակարների» սերիան թողնում է
մի ահագին չէնքի տպաւորութիւն, հաստատուած չորս մեծ
սիւնների վրայ՝ որոնք են՝ *L'Assomoir*, *Germinal*, *La Terre*,
և *La Débâcle*, բոմանները:

*
* *

Շէքսպիրն իր տիպերի մէջ դրել է մի տիտանեան, խօլա-
կան բան, նրանցից իւրաքանչիւրի կուրծքը փոթորկող կրքերը
իրանց ուժգնութեամբ, իրանց տարերային թափով համարեա
սասանեցուցիչ, գերբնական են: Նրանցից իւրաքանչիւրը մենակ
մի ամբողջ բնութիւն է, որի մէջ բաղլւում, փոթորկւում են
մութ, հսկայական ոյժերը և իրանց արտայայտութիւններով սո-
վորական մահկանայունների մէջ յարուցանում են մի համարեա
խեղդող, ոչնչացնող զգայմունք:

Ջօլան էլ Շէքսպիրի պէս տիտաններ է ստեղծել, բայց ոչ
առանձին անհատներից, այլ մարդկային այն սեւ ամբոխներից,
որոնք յիրաւի փոթորիկներ, խօլ, սնգուսպ ուժեր ունին թագյ-
րած իրանց լայն ու մութ կրծքերի տակ: Ասեա բնութեան
նման՝ անհատը, մի հատիկ ճակատագիրը Ջօլայի համար քիչ
նշանակութիւն ունի և նա իր տաղանդի բոլոր ոյժը թափում
է այնտեղ, ուր շարժուողը, աքնողը, տառապողը մասսան է,
այն խաւար մարդկանց բազմութիւնը, բաղդի միլիօնաւոր խորթ
զաւակները, որոնք համր են ու անգիտակից, բայց սարսափելի
և աւերիչ իրանց անհանգստութեան և վրդովմունքի ժեստերով:
Առանձին անհատներին, նրանց բնաւորութիւնը Ջօլան չի կա-
րողանում տալ այն ուժգնութիւնն ու կենդանութիւնը, որ ան-
հրաժեշտ են տիպեր ստեղծագործելիս, բայց երբ պէտք է ամ-
բօխը շարժել, նրան խօսեցնել, ապրեցնել, գործել տալ, Ջօլան

իր նմանը չունի ամբողջ աշխարհի գրականութեան պատմութեան մէջ, նա այդ ժամանակ մի վիթխարի հովիւ է, որի գաւազանի շարժումին հետեւում են հնազանդ հօտերը, մի ծեր զօրավար, որի մի սղաղակով բիւրաւոր գնդերը ներելում են ինչպէս փոթորիկի ժամին մոնչալով կռայող անտառ: Շէքսպիրի տիպերը մի-մի անհատներ են զանգուած բիւրերից, Զօլայի տիպերը այն հազարգլխանի վիթխարիներն են, որոնց անունն է ամբոխ, մարդկային ժխոր, կրքերով հարուստ, յախուռն ու ահաւոր: Աղմկուող, տառապող, տքնող ամբոխի ալիքանման շարժումները, հոգու փոթորիկները նկարագրելիս Զօլան հասնում է այնպիսի բանաստեղծական թռիչքի, այնպիսի վսեմ բարձրութեան, որ նա իրաւամբ անուանւում է իսաւար, աշխատող մասսայի մեծ բանաստեղծ, նրա երկերից իւրաքանչիւրը, մանաւանդ վերջինները մի-մի էպօպէներ են աշխատանքի, տքնութեան, մարդկային ցաւոտ ճակատագրի:

Հետեւելով Տէնի անալիտիկ մեթոդին, Զօլան իր բոլոր երկերում աշխատել է, մնալով կատարելապէս օբեկտիվ, ընդգրկել կեանքն իր լայն և բազմապիսի ամբողջութեամբ, իր գեղեցկութիւններով և գորշութիւններով: Դեռ ոչ ոք մինչև Զօլա այդպիսի մի լայն և վտանգաւոր գրական ծրագրի չի հետեւել: Նրա հատորներն ընդգրկում են ժամանակակից հասարակական կեանքի համարեա բոլոր կողմերը. բոլոր դասակարգերը, բոլոր միջավայրերը իրանց տքնութեամբ և վայելքներով, իրանց աշխատանքներով և ուղախութիւններով, իրանց ցաւերով և յոյսերով, գալիս, անյնում են նրա գրչի տակով, ներկայանում են նրան ասես մի մոգական գաւազանի շարժումով: Նրա նկարագրութիւնները միշտ ցաւոտ են, յաճախ էրօտիկ, մեծ մասամբ նոդկանք պատճառող, բայց միշտ զօրեղ ցնցումներ պատճառող, տպաւորութիւնը մնում է անջնջելի և շատ անգամ խորն անալիզի անընդունակ հոգիներում առաջ է բերում մի վնասութիւն, խեղդող յուսահատութիւն:

Հէնց այս է պատճառ, որ շատերը փութկոտ ու յախուռն դատաստանով գտնում են, որ Զօլան մի յոռետես է, որ նա աղաւաղել է մարդկային բնութիւնը, որ նա ասես դիտաւորեալ ընտրում է մարդու մէջ ամենագարշելի հակումները, անարդում է մարգին, որը սակայն մի բարդ բարոյական զանգուած է, որի հոգում կան և՛ լաւ և՛ վատ յատկութիւններ, և՛ գեղեցիկ և՛ տգեղ հակումներ, որ այդ հոգին լի է բարոյական հակասութիւններով, որպէս չարի, բարւոյ անդուլ պալքարի մի ասպարէզ և Զօլան մի յանցաւոր է, որ աշխատում է միմիայն

դժուանք յարուցանել գէպի կեանքը ներկայացնելով այն ախտեղի, ապականուած ու նեխուելու դատապարտուած:

Բայց այդ դատաստանն, ինչպէս ասացինք, փութկոտ է և անարդար, որովհետև նրա վէպերի մէջ մենք գտնում ենք և՛ լաւ և՛ վատ աիպեր, ճշմարիտ է, լաւ աիպերը քիչ են, որ գազանային ինստինկտներով մղուած բազմապիսի չարագործները վխտում են Զօլայի ընտրած միջավայրերում, բայց ով կ'ասի, որ կեանքի մեծ անապատում էլ գեղեցկի և բարւոյ համար մարտնչողները, հազարների համար տքնող, լաղողները նոյնպէս հազուադիւր ծաղիկներ չեն, ով կ'ասի, որ իւրաքանչիւր միջավայրում անձնուիրութիւնը, շիտակութիւնը հազուադիւր առաքինութիւններից չեն:

Ի՞նչ է ասում մեզ Զօլան իր վէպերով, որն է նրա փրկստփայութիւնը, ո՞ր է կամենում նա առաջնորդել այս ճշմարտութեան և երջանկութեան ծարաւ մարդկութիւնը, ի՞նչ օգուտ, որ մենք տեսնենք, թէ որքան ախտեղի է կեանքը, թէ որքան հրէշներ, գազաններ արտադրել գիտէ մարդը և մի՞թէ արժէր դրա համար այնքան հատորներ թափել իրար վրայ: Այս հարցերի պատասխանը շատ պարզ, շատ վճռական կերպով մենք գտնում ենք դարձեալ նրա երկերի, նրա անձնական կեանքի մէջ: Սխալ է երջանկութիւնը փնտրել ստութեան, կեղծիքի, անհիմն իլլիւզիաների մէջ, ցաւերով, տառապանքներով զարշուծիւններով լի է կեանքը, սա ճշմարտութիւն է և անօգուտ է ծածկել: Պէտք է սակայն ապրել այդ կեանքն իր ամբողջութեամբ, պէտք է ապրել մանաւանդ նրա ցաւերով, տեսնել և ճանաչել այն իր բոլոր գարշ մանրամասնութիւնների մէջ և ապա... աշխատել: Նուիրական, սրբագործող, ստեղծող, կենդանացնող Աշխատանք ահա Զօլայի իդէալը, ահա ինչին նա հաւատում է, և որով հնարաւոր է կարծում կեանքի վերափոխութիւնը, հասարակական փթած կազմի վերանորոգութիւնը, իսկ երջանկութիւնը, գերագոյն երջանկութիւնը նա տեսնում է այդ իդէալին հանելու կատարած պարտքի գիտակցութեան մէջ: Սա կեանքի յոռետես փրկստփայութիւնն է, սա մոռաց, յուսահատական թերօրա է, սա գիտակցական վերաբերմունքն է գէպի մարդկային ճակատագիրը:

Սակայն իսկական Զօլան, ամբողջ Զօլան ճանաչելու համար բաւական չէ միայն նրա վէպերը հասկանալ, անհրաժեշտ է մօտիկից դիտել և զրական աշխատանքներից դուրս նրա հասարակական գործունէութիւնը, որ միեւնոյն ժամանակ պատմութիւնն է Ֆրանսիայի ժամանակակից կեանքը յուզող բազմաթիւ բարդ խնդիրների:

Այդ մասին յաջորդ անգամ:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

(Եր ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ)

ՆԱՄԱԿ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԷՑ

Կոերականութիւնը Գերմանիայում *)

Գ.

Քաղաքական-սոցիալական ասպարիզում կաթօլիկ կղերականութիւնը մնում է նոյն ջատագովը միջնադարեան աշխարհայեցողութեան, նոյն ճարպիկ պաշտպանը Հռոմի եկեղեցական ու աշխարհական շահերի: Քանի որ Գերմանիայի ներկայ քաղաքական կազմը կը մնայ անխախտ ու անփոփոխ, ուստրամօնտանիզմը ևս կը շարունակի անսանձ աճել, զարգանալ, ի վնաս Գերմանիայի ընդհանուր քաղաքակրթութեան, ի վնաս ժողովրդի մտաւոր ու նիւթական բարգաւաճման: Ռօզա Լիւկսեմբուրգը իզուր չէ անուանում գերմանական ուսյիստագը «հաւաքուն»... Եւ իրօք, պարլամենտարիզմ ասած բանը գոյութիւն չունի Գերմանիայում: Նախարարութիւնը, օրինակ, չէ ընտրւում ուսյիստագի անդամների մեծամասնութիւնից, ինչպէս այդ տեղի է ունենում բոլոր սահմանադրական երկրներում (Անգլիա, Ֆրանսիա և այլն), հետեաբար նա չէ հանդիսանում ուսյիստագի, ապա ուրեմն և ժողովրդի, կամքի արտայայտիչ: Ռալիստագը նախարարութեան հաւատարմութեան քուէ տալու իրաւունքից զուրկ է: Կայսրն է նշանակում ու արձակում մինիստրութիւնը ըստ իր բարեհայեցողութեան: Պաստօր Նաումանը, որ երբեք չէ կարող արմատական համարուել, հետեալ պերճախօս ձևով է նկարագրում իւր «Die Zeit» շաբաթաթերթի մէջ Գերմանիայի ներկայ կառավարչական սիւտեմը:

*) Տե՛ս „Մուրճ“ № 9.

Հոկտեմբեր, 1902.

«Երևակայեցէք ձեզ, ասում է նա—հետեւեալը.

1) Ամեն ինչ անում է կայսրը.

2) Վերջնական որոշումները՝ ռայխստագում կայացնում են արդիւնաբերողների կենտրոնական ընկերութիւնը, գիւղատնտեսների միութիւնը և պապը:

3) Ռայխստագը չէ ունեցել որևէ նշանաւոր գործում նախաձեռնութիւն *)...:

Այսպիսի ձախող պայմաններում նոյն-իսկ նախարարութիւնը նախանձելի վիճակի մէջ չէ՝ նա՝ չունենալով իր ձեռքի տակ համախոհների որոշ մեծամասնութիւն՝ ստիպուած է անդադար ամեն հնարներ գործադրել, որպէս զի ձեռք բերի այս կամ այն կուսակցութեան աջակցութիւնը: Այսօր նա գործում է աջակողմեանի հետ ընդդէմ ձախակողմեանի, իսկ վաղը բոլորովին հակառակը: Կուսակցութիւնները բնականաբար, իրանց կողմից ձգտում են ամեն կերպ օգտուել հանգամանքներից ու էժան չեն ծախում իրանց աջակցութիւնը կառավարութեան. հետևանքը՝ մի շարք կոմպրոմիսներ զօրեղ կուսակցութիւններին...

Ներկայ ռայխստագի կուսակցութիւնների կոնստեղլացիան չափազանց բարեկաշիւ է Centrum-ի համար, և սա չը վարանեց օգտուելու իր բացառիկ դիրքից՝ Նա հանդէս եկաւ դեռ 1900 թ. նոյեմբերին մի օրինագծով, որի միակ անունը արդէն կարող է չփոխեցնել. օրինագիծը կրում է «Toleranzantrag» անունն, այսինքն՝ «կրօնական համբերատարութեան առաջարկ»...

—«Centrum-ն ու կրօնական համբերատարութիւն. սա ի՞նչ հանելուկ է».—բացականչում էր զարմացած հասարակութիւնը: Արդարեւ, դա հանելուկ էր, բայց հէնց իբր հանելուկ նա ունի և իր բացատրութիւնը: Մենք արդէն վերն նկատեցինք, որ կղերականութեան ձեռքին այսօրուայ կուլտուրական բոլոր բարիքները լսկ միջոցներ են իրագործելու իր նենգ ձգտումները: Նոյն է և այս դէպքում: Կրօնական համբերատարութիւնը ևս մի միջոց է հաստատելու կաթօլիկութեան նախամեծարութիւնը այնտեղ, ուր նա բացակայում է: Դեռ 1875 թ. Louis Venil-lot-ը հետեւեալ նշանաւոր խօսքերով էր ձևակերպել կաթօլիկ կղերականութեան տակտիկան:

«Այնտեղ, ուր մենք կազմում ենք փոքրամասնութիւն, մենք պահանջում ենք ազատութիւն համաձայն ձեր (ազատամիտների) համոզմունքներին, իսկ որտեղ մենք ունինք մե-

*) № 42, 17 Յուլիսի, 1902:

ծամանութիւն, մենք ժխտում ենք ազատութիւնը համաձայն մեր կրօնական հայեարեքներին»:

Toleranzantrag-ը այս մեթոդի գեղեցիկ ապացոյցն է: Հիւսիսային Գերմանիայում կաթօլիկները կազմում են բնակչութեան փոքրամասնութիւնը և ոչ սակաւ ենթարկւում կրօնական ճնշումների: Վերացնել ամեն կրօնական սահմանափակումներ ու բանալ ազատ ճանապարհ կաթօլիկութեան զարգացման համար—ահա Toleranzantrag-ի բուն նպատակը: Այսպէս օրինադիժը ոչ մի դէպքում չէ կարելի ընդունել որպէս արդիւնք կաթօլիկ կղերականութեան կրօնական համբերատար զգացմունքների ու համոզմունքների: Հանգուցեալ Լիբէրը՝ (Dr. Lieber.) Centrum-ի նախկին պարագլուխը, ռայխստագում պատճառարանեց օրինադիժը հէնց այս դիտումներով: Նա մատնացոյց արաւ մի շարք փաստեր, որոնք պարզ պատկերացնում են կաթօլիկների վատթար դրութիւնը, օրինակ, Մեկլենբուրգում, Բրաունշվայգում ու Սաքսոնիայում:

Հետաքրքրական են այդ փաստերը:

Մեկլենբուրգում 1899 թ. կաթօլիկներին արգելում են հիմնել եկեղեցի աշտարակով ու զանդակատնով...

Բրաունշվայգում կաթօլիկ ծնողները պարտադիր են, իրանց երեխային մկրտելուց առաջ, բողոքական պատօրից վկայագիր վերցնել. կաթօլիկ ժողովրդական ուսումնարանները հիմնւում ու պահպանւում են բացառապէս կաթօլիկների նիւթական միջոցներով, մինչդեռ բողոքական ուսումնարանները կառուցանւում ու պահպանւում են ամբողջ քաղաքական համայնքի հաշուով, հետևաբար և կաթօլիկ բնակիչների: Սաքսոնիայում կաթօլիկները պատարազ մատուցանելու համար պարտաւոր են ամեն անգամ առանձին թոյլտուութիւն ստանալ նախարարութիւնից և այլն և այլն:

Սրանք ինքն ըստ ինքեան վրդովեցուցիչ փաստեր են, սակայն մարդ առաւել ևս յուզւում է, երբ ի նկատի է առնում, որ այս ամենը կատարւում է XX-րդ դարի չեմքում և միևնոյն ժամանակ մի պետութեան մէջ, որի «երկիւղած» գահակալը կրօնական ջերմեռանդ ճառեր է արտասանում աջ ու ձախ և պարծենում համայն աշխարհի առաջ գերմանական կուլտուրայով, գերմանական մտքի յառաջադիմութեամբ, գերմանական քաղաքակրթութեան աշխարհակալութիւններով...

Բայց դառնանք օրինադիմ:

Եթէ Toleranzantrag-ը ուղղուած լինէր միմիայն յիշեալ չարիքների դէմ, անշուշտ՝ արժանի կը լինէր ամենայն համակրութեան, սակայն նա տողտողւած է այնպիսի հակումներով,

որոնք ոչինչ առնչութիւն ունին դաւանութիւններէ հաւասարութեան, կրօնական համբերատարութեան հետ և ուստի զարմանալի չէ, որ նա առաջ բերեց ընդդիմադրութիւն հասարակութեան՝ մասնաւորապէս, նայիօնալ լիբերալներին՝ կողմից։ Սոցա, որպէս քաղաքական կուսակցութեան, աչքի ընկնող արժանաւորութիւնն է՝—թերևս միակը—անդուլ մաքառումն ուլտրամոնտանիզմի դէմ. այստեղ նրան յաճախ աջակցում են նաև միւս ազատամիտ ու արմատական կուսակցութիւնները։ Այս անգամ ևս նայիօնալ-լիբերալները բռնեցին օպօզիցեայի առաջի շարքերը։ Սրանք առաջ բերին մի առաջնակարգ մաքառող, որ յատ մօտից ճանաչում է ուլտրամոնտաններին իր անձնական կեանքից ու բացի այդ մասնագիտօրէն ուսումնասիրել է կաթօլիկ եկեղեցու և պապականութեան պատմութիւնը *)։ Այս հետաքրքիր անձնաւորութիւնը Կոմս Հեօնսբրոեօնն է՝ նախկին եղուիտ...

Կոմսի անունը ակամայ յիշեցնում է մի սղմկալից միջնադէպ, որ մենք չէինք ուղենայ լոռութեամբ անցնել։ Այդտեղ ուլտրամոնտանները հանդէս եկան իրանց բարոյական բոքիկութեան ամբողջ քայլով. նրանք աւելորդ անգամ ապացուցեցին, որ նրանց համար սրբութիւն չը կայ...

Երբ ձմեռը ռայխստագում քննում էր Toleranzantrag-ն ու հասարակական կարծիքը դրադուած էր օրինագծով, կոմսը հրաւիրուեց Միւնխեն կարգալու այդ առիթով մի հրապարակական դասախօսութիւն։ Եզուիտը (թէև նախկին) եզուիտութեան դէմ... Դա և «դաւաճանութիւն» էր և սպանիչ ծաղր ուղղուած ուլտրամոնտանների դէմ. կարող էին դրանք այդ չափ խիստ բարոյական ապտակ լուռ մարսել։ Բայց ինչ միջոցների դիմել։ Որոշում է թոյլ չը տալ ոչ մի դէպքում, որ ժողովը կայանայ, — և այդ նրանց աջողում է։ Բաւարիայի մայրաքաղաքում հրապարակական ազատ դասախօսութեան ժամանակ տեղի է ունենում մի չը լսուած ամօթալի սկանդալ, որ վերջանում է դատաստանական դահլիճում... Անարժան ձեռքերով խօսքի ազատութեան հասցրած հարուածը սև արատ էր ձգում ամբողջ Միւնխենի վրայ. անհրաժեշտ էր շտապել սրբել։ Եւ ահա Միւնխենի ազատամիտները՝ որոնց թւում և համալսարանի պրօֆեսսորները, կազմակերպեցին մի նոր հրապարակական ժողով ու հրաւիրեցին Կոմսին կարգալու իր նախկին դասախօսութիւնը Toleranzantrag-ի դէմ։ Այս ժողովը, որ տեղի ու-

*) Graf von Hoensbroech, „Das Papsthum in seiner kulturellen Entwicklung“. 1902.

նեցաւ Մայիսի 17/30-ին բազմամարդ ու ընտիր հասարակութեան առաջ, անցաւ շատ յաջող Կոմսը մանրամասն քննութեան առնելով օրինագիծը, մատնայոյց արեց նրա բոլոր վտանգաւոր հետեանքները, առաջ բերեց մի շարք լուրջ առարկութիւններ, որոնց վրայ, սակայն, մենք տեղի սղութեան պատճառով, անկարող ենք կանգն առնել: Յիշենք երկու հիմնական առարկութիւններ, որոնք ի նկատի էին առնուած նաև ռայխըստագում օրինագծի ընդդիմախօսների կողմից: Ամենից առաջ օրինագիծը բացում է ազատ ճանապարհ ուլտրամօնտանների պրօպագանդայի համար, և ապա կաթօլիկ կղերի ձեռքն է տալիս սկզբնական կրօնական կրթութեան գործը: Իսկ ո՞վ չը գիտէ, սրայիսի վտանգաւոր գործիք է կաթօլիկ հոգևորականութեան ձեռքին մատաղ սերնդի կրօնական կրթութիւնը...

Չը նայած բոլոր ընդդիմադրութիւններին ռայխստագը ընդունեց օրինագիծը, և այդ զարմանալի չէ, սակայն տարակուսելի է որ Bundesrath-ը իր հաւանութիւնը տայ. արդէն փոքրիկ տէրութիւնները, ինչպէս օր. Սաքսօնիան, յայտնել են իրենց բողոքը օրինագծի դէմ:

Մինչդեռ հիւսիսային Գերմանիայում կաթօլիկ կղերական կուսակցութիւնները հանդիպում են միշտ հասարակութեան զօրեղ ընդդիմադրութեան, հարաւային Գերմանիայի մէջ, մանաւանդ Բաւարիայում ու Բադէնում, նա անսասն իշխում է: Այդ գերիշխանութեան արդիւնքն են մի շարք օրէնքներ ու օրինագծեր, որոնք այսօր զբաղեցում են այդ երկրների հասարակական կարծիքը: Առաջ բերենք դո՛ւնէ մի օրինակ Բադէնի կեանքից:

Բադէնի կառավարութիւնը ուլտրամօնտանների ազդեցութեան չնորհիւ հանդէս է եկել մի օրինագծով, որի նպատակն է թոյլ տալ հիմնել տէրութեան մէջ նաև արական մենաստաններ (Männerklöster, կանանց մենաստաններ արդէն գոյութիւն ունեն): Ակնհերի է, որ այդ օրինագիծը բնական արդիւնք է վալդէկի Ռուսօի ֆրանսիական կղերական կօնգրէգայիանների դէմ ուղղած օրէնքի: Ֆրանսիայից այսօր ստիպուած են հեռանալ այն միաբանները, որոնք չեն կամենում ենթարկուել օրէնքին: Արդ, բնական էր, որ գերմանացի «եղբայրները» նախօրօք հոգային տեղ տալու «հարածեալներին»...

Թէ որ օրինագիծը վտանգ է սպառնում Բադէնի տնտեսական ու սոցիալական խաղաղ բարգաւաճման՝ կարիք չը կայ այստեղ մի առ մի բացատրելու: Բաւական է միայն ի նկարի առնել որ նոր մենաստանների կառուցումը կը զօրացնի կաթօլիկ տարրը

ու այդպիսով կարող է խախտել բողոքական ու կաթոլիկ դաւանութիւնների մէջ տիրած խաղաղութիւնը. բազէնցիք լաւ են ըմբռնում Խնսբրուկի քաղաքացիի օգնական Նըլէրի արտասանած աւստրիական ռայխստագում Նշանաւոր խօսքերը թէ «ամեն մի նոր մենաստուն մի նոր բերդ է»...

Բազէնի հասարակութիւնը զինուել է այս սպառնող վտանգի առաջ: Օպպոզիցիան մղում է անդու կոխ օրինագծի ու կառավարութեան դէմ: Ազիտացիան տարածւում է ամենուրեք. անընդհատ տեղի են ունենում հրապարակական ժողովներ, ուր հասարակութիւնը բարձրաձայն յայտնում է իր բողոքը «սև գօրքի» մուտքի դէմ, յատուկ խնդրագրեր են մատուցանում կառավարութեան, իսկ մամուլը չէ դադարում խիստ դատապարտելուց թէ օրինագիծը, թէ կառավարութիւնը և թէ կղերականների նեղ շահախնդիր ձգտումները: Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ բողոքողների առաջի կարգերը բռնել են պրօֆեսորները...

«Ֆէլդիան, Սպանիան ու Ֆրանսիան—ասում է «Bad. Landes Zeitung»-ը—գեղեցիկ ապացոյց են, որ կրօնաւորների ազիտացիան սպառնում է նոյն-իսկ պետութիւնների գոյութեանը: Այն օրը՝ երբ վանականները մուտք կը գործեն Բազէն, կը լինի ամենազգախտ օրը...»:

Բաւականանք այս փաստերով:

Դրանք մի չարք երևոյթներ են, որոնք լուսաբանում են կաթոլիկ կղերականութեան դիրքն ու կերպարանը Գերմանիայի հասարակական-քաղաքական կեանքում: Մօմմսէնի չարժուժը մի զօրեղ բողոք է ուլտրամօնտանների հակախուլտուրական, հակակրթական ձգտումների դէմ: Toleranzantrag-ը ապացոյց կղերականութեան միջին դարերից ժառանգած կրօնական ու քաղաքական հայեացքների. միենոյն ժամանակ դրանք փաստեր են, որ պարզում են ուլտրամօնտանների այսօրուայ նենդ տակտիկան ու վկայում նրանց հեղինակաւոր ոյժը Գերմանիայի մէջ: Դիտելով այս երևոյթները մարդ մնում է ապշած, չուարած. միթէ այս ամենը կատարւում է XX-դ դարի շուրջում՝ մարդկային մտքի հզոր զարգացման օրերում... Ընչ չար պայմանների արդիւնք է ժամանակակից կաթոլիկութեան կենսունակութիւնը:

Ինչո՞ւ նա այդչափ դիմացկուն է:

Թողնենք առաջ խօսի պրօֆ. Իօզլը:

«Կաթոլիկութեան յաջողութիւնը չէ կարելի բացատրել—

ինչպէս սովորաբար անուամբ են բողոքականները—պապերի ու եղբայրների ճարպիկ, հնարագէտ զործունէութեամբ: Կաթոլիկութիւնը կրօնական կեանքի մի առանձին ձև է, որ խոր արմատներ է ձգել ժողովրդական մասսայի կրօնական բնազդունների և առհասարակ մարդկային բնաւորութեան որոշ հակումների մէջ: Այն ամենը, ինչ նրա մէջ հակասում է ժամանակակից գիտական աշխարհայեցողութեան, կազմում է հէնց նրա ոյժը: Այդպէս են՝ նրա ծէսերի ու սրբազան խորհուրդների հմայիչ բնաւորութիւնը, նրա լայնարձակ ընդունակութիւնը ներկայացնել վերացականը ու գերբնականը շօշափելի ու ըմբռնելի ձևերով, նրա միակ անսխալական հեղինակութեան վարդապետութիւնը, որ բացասում է ամեն անհատական ինքնուրոյնութիւնն ու միայն զօգմայական խնդիրների, այլ և իղձի ազատութեան մէջ: Մարդկային մտքի այն մեծ ֆանտասմագորիան, որ մենք անուանում ենք կրօն, ոչ մի տեղ չէ ընդունել այնչափ խոր ու միևնոյն ժամանակ այնչափ դիւթիչ կերպարանք, որչափ կաթոլիկութեան մէջ: Աստուածութեան խորիմաստ գաղափարը, որ քրիստոնէութիւնը մտցրեց պատմութեան մէջ, ոչ մի տեղ այնպէս չէ մարդացել ու մարմնացել ու միաժամանակ պահպանել իր գերբնական սրբութիւնը, որպէս կաթոլիկութեան մէջ^{*)}:

Արդարեւ, կաթոլիկ եկեղեցու հոգեբանական մեծ առաւելութիւնները՝ համեմատած բողոքականութեան հետ՝ անուրանալի են ժողովրդական մասսաների համար: Սակայն կաթոլիկութեան կենսունակութեան գլխաւոր զործօնը կաթոլիկ հոգևորականութեան տնտեսական դրութիւնն է ժամանակակից սոցիալական կեանքում: Կաթոլիկ եկեղեցին չափազանց հարուստ սեփականատէր է, որի բազմատեսակ շահերը կապուած են ներկայ հասարակական կազմակերպութեան հետ^{**)}: Նրա բազմաթիւ արբանեակները կազմում են փոխադարձ սերտ շահերով կապուած դասակարգ՝ որ մէկն է միւս արտօնեալ դասակարգերից և, թերևս, ամենաարտօնեալը: Կրօնը ու կապիտալը միացած գործում են մի ուղղութեամբ, ծառայում մի նպատակի... Կղերականութիւնը հանդիսանում է մի կողմից հզօր նեցուկ կարող դասա-

*) Pr. Dr. Fr. Jodl - „Gedanken über Reformkatholicismus“, էջ 12.

**) Գերմանիայի 19 միլիոնից աւել կաթոլիկները հաշւում են 36, 847 կրօնաւորներ ու միանձնուհիներ 2,86 մենաստաններում... Իսկ փոքրիկ Բաւարիան իւր 4 միլիոն կաթոլիկներով ունի 100 վանք տղամարդկանց համար 1850 կրօնաւորներով (Mönche), 1089 կուսանաց վանքեր 11,187 կոյսերով...

կարգերի նեղ շահերի ընդդէմ աշխատաւոր դասակարգերի սպառնալից ձգտումներին, միւս կողմից՝ ապաստան գոյութեան դաժան կուրմէջ թուլացած, յոգնած, անզօր տարրերի կղերականութեան անման նպաստում են նաև Գերմանիայի ներքին քաղաքական պայմանները: Յիշենք մէկը:

Գերմանիան դեռ եւս չէ ներկայացնում քաղաքական ամբողջութիւն. նա կազմուած է 26 մեծ ու փոքր իշխանութիւններից, որոնցից իւրաքանչիւրը համարեա ինքնուրոյն ու անկախ է իր ներքին քաղաքական ու սոցիալական կեանքում: Սակայն Պրուսիան, որ գլուխ է անցել Գերմանիայի դաշնակցութեան, ամեն կերպ ջանում է կլանել միւս տէրութիւնները ու ստեղծել միատարր ու միակերպ գերմանական պետութիւն: Պրուսիայի այս ձգտումները հանդիպում են միշտ ընդհանուր ընդդիմադրութեան, մանաւանդ հարաւային գերմանացիների կողմից: Բաւարիայում, օրինակ, ատեւութիւնը դէպի Պրուսիան համնում է հիւանդոտ նախանձախնդրութեան, ամեն մի բաւարացի տողորում է մինչև ոսկորների ծուծը կասկածանքով ու թերահաւատութեամբ դէպի Պրուսիան: Փոքրիկ ինքնուրոյն տէրութիւնների այս սեպարատ ձգտումներից կրկին մեծ հնարազրկութեամբ օգտւում է կաթօլիկ կղերականութիւնը, բարձրացնելու համար իր հեղինակութիւնը:

Բերլինը մի փոքրիկ, բայց շատ բնորոշ օրինակ:

Երբ այս տարի հարց ծագեց հաստատել ամբողջ Գերմանիայի մէջ պօստային մարկանների միակերպութիւն, Բաւարիան ի դէմս կղերականների միակն էր, որ ընդդիմադրեց ու չընդունեց «պետական մարկանները»: Պրոֆ. Հերտլինգը ռայստագում ուղղակի յայտարարեց, թէ.

«Գերմանական մարկանների միակերպութիւնը անհնարին է Բաւարիայի համար, որովհետեւ այդ հակասում է Բաւարիայի ժողովրդի ոգուն»:

Արդ, կաթօլիկ եկեղեցու կրօնական ամբողջ սիստէմը, նորա ներքին կազմը, քաղաքական կազմակերպութիւնը ու գործունէութեան եղանակը՝ մէկ կողմից, իսկ միւս կողմից Գերմանիայի տնտեսական, սոցիալական ու քաղաքական պայմանները լուսաբանում են կղերականութեան գիւղը, կերպարանքը և ուղղութիւնը: Նոյն այդ պայմանները առատ մնունք են տալիս կղերականութեան ու նպաստում նրա զարգացման: Սակայն որպէս ամեն մի պատմական երևոյթ կղերականութիւնը

*) „Wochenblatt der Frankfurter Zeitung“, № 27.

ևս անյողական է: Արդէն կրթուած ազգերի հասարակական-
քաղաքական կեանքի ներկայ պայմանները հրամայողաբար պա-
հանջում են եկեղեցու կատարեալ բաժանումը պետութիւնից,
իսկ մարդկութեան յետագայ զարգացումը անշուշտ կ'իրագործի
անմահ Ազիֆտի իղէալը՝ փոխադարձ սիրոյ կրօնի մասին...

Quidam.

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

„Русская Мысль“, հոկտեմբերի Մալթոսների ուրոյն գրականութեան մասին հոգիւ թէ լսած լինի մեր ընթերցողը Գուցէ միայն Շեվչինկոյի անունն է նրան յայտնի: Մինչդեռ վերջին քառորդ դարում մալթոսական գրականութիւնը և մասնատրսպէս նրա բանաստեղծութիւնը մեծ քաջ է արել ղէպի առաջ: 1900 թուականին Վիւվում հրատարակուած են լատգոյն մտնըր ոտանաւորների մի ժողովածու (անտօյօգիա) «Վիկ» անունով, որ նորերս ունեցաւ երկրորդ լրացրած հրատարակութիւնը 3 հատորում: Այդ ժողովածուի մէջ գետեղուած են մօտ 50 մալթօս բանաստեղծների ընտիր գրուածքները: Մալթօսական գրականութեան վրայ ուղադրութիւն է դարձրել և եւրօպական քննադատութիւնը: „Русс. Мысль“-ի համարում „Рес-винки украинской поэзія“, վերնագրի տակ տպուած է մի հետաքրքրական յօդուած, որի մէջ առանձին կանգ է առնուած երկու մալթօս գրողների վրայ, մէկը զըրանցից տիկին Լեսեա Ուկրաինկան է, իսկ միւսը՝ պ. Արեմսկին: Լեսեա Ուկրաինկայի ներշնչանքի հիմնական գիծն է անկեղծ սէր ղէպի հայրենիքը և իսեղճերը, ինչ ազգութիւնից էլ լինեն ղրանք: Բանաստեղծուհու իղէալն է եզրայրութիւն, հաւասարութիւն և ապատութիւն: Նրա երգը—ջերմ բողոք է անարդարութեան դէմ և խանդավառ կոչ՝ մաքառելու մի լատգոյն ապագայ ստեղծելու համար. ներկան նրան պատճառում է թախիծ և քամում է աղի արտասուք նրա աչքե-

րից, սակայն յուսահատուել նա չը ղիտէ: Նոյն համակրելի գծերով են ներկայանում և տղամարդ բանաստեղծները, որոնցից ամենաաչքի ընկնողն է Արեմսկին, որ, եթէ չենք սխալուտ, Լազ. ձեմարանում արարելէնի պրօֆէսօր է:

„Журналъ для всѣхъ“, հոկտեմբերի Այս համարում, ի միջի ալլոյ, տպուած է ուսաց առաջին հապարակախօթ Բաղիչեվի պատկերը և կենսագրութիւնը:

Բաղիչեվը հռչակ ստացաւ ուսաց գրականութեան մէջ 1790 թըւականին իր „Путешествіе изъ Петербурга въ Москву“ գրուածքով: «Մարդս լոյո աշխարհ է տեսնում ազատ և հաւաաար մէկը միւսին», գրում էր նա: Նա համարձակ յայտնում էր որ ճօրտութիւնը հակասում է բանականութեան և բարոյական ղգաղմունքի ամենատարրական պահանջներին: Բաղիչեվը առաջարկում էր կարուածատէրերին անյապօղ ազատել ճօրտերին: Նա խիստ յարձակում էր տիրող անարդար կարգերի վրայ: Նկատերինա կայարուհին կարդալով այդ «ձանսպարհօրդութիւնը» սաստիկ ղայրանում է և խիստ քննութեան ու ղատի ենթարկում հեղինակին: Բաղիչեվին մահուան են ղատապարտում: Վայարուհին, իբրև ողորմութիւն, մահուան պատիժը փոխարինեց յաւիանական աքսորով Սիբիր:

Ազատ մարդու անբռնաբարելի իրաւունքների առաջին քարոզիչն էր Բաղիչեվը Ռուսաստանում: Նրա ազատ և վեհ մտածողութեան հա-

մար նա միայն աբսոր, տանջանքներ և անարգանք կրեց իր կեանքում, սակայն նրա համարձակ խօսքը կայծակի նման լուսաւորեց այն ժամանակուայ խաւար իրականութիւնը և ցնցեց անշարժութեան մէջ բթացած սուսական միաբեր:

„Մ'օսակ“, №№ 280, 286, 288, մեծ հետաքրքրութեամբ են կարդացում Աստորիայում Ego-ի կատարած ուղևորութեան թոռացիկ նկարագրութիւնները: Աստորիայում կորած հայ զաղութները ժամանակակից դրութիւնը շատ կենդանի գոյներով են դուրս բերուած այդ յօդուածներում: Շատ ցանկալի կը լինէր, որ հեղինակը հնարաւորութիւն ունենար այցելել նաև Ռումանիայի, Ունգարիայի և Բուլղարիայի հայ զաղութները և ծանօթացնել մեզ եւրոպայում փոռուած հայ ազգի այդ փշրանքների հետ:

Վրաց մամուլը. Լեզուն ազգայնութեան հարցում գերակշռող նշանակութիւն ունի, սակայն „Իվերիայի“ խմբագրութիւնը ուղղում է օգտուել այդ ճշմարտութիւնից, հետեւալ անհեթեթ եղբակացութիւնը անելու համար, մի կողմ թողնելով պատմական այլ հանգամանքները: Պատմութիւնից յայտնի է, որ հայերը զաղթել են, ինչպէս շատ ուրիշ տեղեր այնպէս և հարեւան երկիր Վրաստանը: Այդտեղ, շրջապատուած լինելով հոծ վրացական տարրով, հայերը մոռացել են իրանց մայրենի լեզուն և սկսել են խօսել վրացերէն:

Նոյն ձևով Ղրիմի հայերը խօսում են թաթարերէն, Մոսկուայի հայերը ռուսերէն, Ունգարիայի հայերը ունգարերէն, Գալիցիայի հայերը լեհերէն, Ռումանիայի հայերը ռումաներէն, Հնդկաստանի հայերը

անգլիերէն, Կեսարիայի հայերը թիւրքերէն և այլն և այլն: Արդ, վրաց ազգասէրները, ցանկանալով մեծացնել իրանց ազգի թիւը, սկսել են քարոզել և համոզել նախ հայ կաթողիկոսներին, թէ դրանք վրացիներ են և, շնորհիւ այն հանգամանքի, որ ազգային եկեղեցուց անջատուած այդ տարրը հեշտ է ենթարկում վրացական պրօպագանդայի (հայերէն չեն կարդում), զանազան Խաչիկեաններ, Զաքարեաններ և այլն ճիշտ որ իրանք էլ իրանց սկսեցին վրացիկաթողիկ համարել, որովհետև ոչ լեզուն, ոչ ինքնաճանաչութիւնը և ոչ ազգային եկեղեցին դրանց չէր կապում միւս հայութեան հետ: Բայց „Իվերիան“ չի բաւականում այդ յաղթութեամբ. նա այժմ պընդում է, որ Վրաստանի չորիգորեականները հայեր չեն, այլ վրացիներ: Որո՞նք սակայն պատկանում են լուսաւորչական դասնութեան: Հետեւալ, հայոց կաթողիկոսը պէտք է յարգի այդ „վրացի-գորիգորեականներ“ մայրենի լեզուն (վրացերէնը և կարգազրի որ Ներսիսեան զպրօքում աւանդուի վրացերէնը, ժամ-պատարագն բոլոր եկեղեցիներում կատարուի վրացերէն և այլն և այլն: Այդ լօգիկայով հեշտ է պնդել որ Ղրիմի թաթարախօս հայերը իսկապէս թաթար-Գորիգորեականներ են, կեսաւրիայի թրքախօս հայերը՝ թիւրք-գորիգորեականներ են, Հնդկաստանի անգլիախօս հայերը՝ անգլիացի-գորիգորեականներ են և այլն և այլն: Թուղթը ամեն բան տանում է, իսկ „համարձակութիւնը քաղաքներ է աւնում“... Այդ լաւ խրատ է հայերին, որոնք օտար երկրում իրանց մայրենի լեզուն աւելի հեշտ են փոխում, քան քամելէօնը իր գոյնը...

Ն Ս Մ Ա Կ Խ Մ Բ Ս Գ Ր Ո Ւ Թ Ե Ս Ն

Պատասխան իմ քննադատին)

Ռուս-հայ բառարանների նկատմամբ պ. Ստ. Մալխասեանը յայտնի է իբրեւ խիստ քննադատ։ Ասածիս ապացոյց են հետեւեալ փաստերը։ Երկու տարի առաջ լոյս տեսաւ Գուրգոն Լուսինեանի Փրանս-հայ բառարանը, որ իր նախորդի, Նորայր Բիւզանդացու բառարանի համեմատութեամբ յետադիմութիւն եր։ Բայց պ. Ստ. Մալխասեանը այդ բառարանը քննադատեց հանգիստ, նոյն-իսկ համակրական տոնով **): Բայց հիմա տեսէք, թէ նոյն պ. Ստ. Մալխասեան ինչ զարհուրելի դատաւճիռ է կարգացել ինզճ Արքսոդոմ Յովհաննիսեանի բառարանի գլխին. «Մենք այս բառարանը (խօսքը, ի հարկէ, պ. Արքսոդոմ Յովհաննիսեանի բառարանի մասին է, որ լոյս տեսաւ 1888 թ.) գտնում ենք խիստ պակասաւոր, ժամանակի պահանջներին չը համապատասխանող, վատ, ուրեմն և վնասակար մի շարագրութիւն, որի երեւան գալը ամօթ պէտք է համարուի ինչպէս մեր գրականութեան, նոյնպէս և հասարակութեան համար, որ կարող է այդպիսի գրուածք իր մէջ հանդուրժել... Եթէ պ. Յովհաննիսեանի հրատարակած գիրքը կամենանք բառարան կամ բառ գրքոյի կոչել՝ այս բառարանը ամօթ և նախատինք կը լինի ոչ միայն պ. հեղինակի անուան, այլ և բոլոր այն ժողովրդին, որի մէջ և համար որ ապագրուել է. այս բառարանը բազմատեսակ թերութիւններով և աններելի սխալներով լի լինելով՝ մեծամեծ վնասներ կարող է բերել ան-

*) Տպագրում ենք այս յօդուածը, յարգելով andiatur et altera pars սկզբունքը։

**) Տես „Մուրճ“ 1901 թ.

հըմուտներին (համբալներին և աշակերտներին), ուստի և խըստիւ պէտք է արգելուի նրա գործածութիւնն ուսումնարաններում *)»:

Այսօր քննադատելով մեր կազմած ուսու-հայ լիակատար բառարանը, պ. Ստ. Մալխասեան ասում է. «Եթէ համեմատելու լինենք այս բառարանը իր նախորդների, Երեցվորեսանի և Ա. Յովհաննիսեանի բառարանների հետ՝ սա նրանցից բարձր է, այն էլ մի քանի աստիճան բարձր. նրանք խիստ պակասաւոր գործեր են եղել, բացասական յատկութիւններով լիքը. այն-ինչ սա անպայման ունի մի քանի դրական կողմեր, իսկ պակասութիւններն էլ այն աստիճան խոշոր չեն՝ ինչպէս նրանց մէջ»:

Պ. Մալխասեանը իր խօսքը մասնաւորելով, գտնում է մեր բառարանի «ուսերէնի մասը» յաջողուած: «Ընթերցողը—գրում է պ. Մալխասեանը, ամենայն վստահութեամբ կարող է գիմել բառարանի այս մասին, ուր կը գտնէ շատ օգտակար, բաւական մանրամասն, և որ գլխաւոր է՝ համարեւան անսխալ ցուցումներ որն է ուսերէն բառի ուղղագրութեան, շեշտագրութեան, քերականական ձեւերի եւ այլն մասին»:

Բայց և այնպէս պ. Ստ. Մալխասեան այս մասի վերաբերմամբ մի քանի նկատողութիւններ է անում, որ մենք ուղիղ չենք գտնում: «Բազմութիւն հնացած բառեր» և «գաւառաբանութիւններ» չը կան մեր բառարանում: «Барабанная шкура»-ն ոչ թէ «մի յետ ընկած գուռուում միայն», այլ ուս դրական լեզուի մէջ խիստ գործածական դարձուածք է, մինչև անգամ հայերէն էլ թարգմանուած է, այն էլ սխալ թարգմանուած: Լ. Տօլստոյի հոգեկաւոր «Воскресенье» վէպում կարգում ենք. «шкура барабанная! Чего гогочеть!». պ. Տ. Յովհաննիսեան, այդ վէպի թարգմանիչը, բառացի թարգմանում է. «ինչ ես ձայնը գլուխդ գցել, քմբուկի կաշի» («Յարութիւն», եր. 127): Արդ՝ քմբուկի կաշի հայերէն հայհոյանք չը կայ. «барабанная шкура» նշանակում է փուշ, յիմար կին, ինչպէս մենք մեր բառարանում բացատրել ենք:

Մեր արած կրճատումը տեղ ինայելու համար անհրաժեշտ էր: Փորձը ցոյց է տալիս, որ ընթերցողը հէնց առաջին ժամին գլխի է ընկնում, թէ բանն ինչո՞ւն է: Այդ կրճատումը (օր. До||бава;—бавить;—бавление;—бавливать;—бавокъ) մենք արել ենք միմիայն տեղ ինայելու համար, ամենեւին ուշադրութիւն չը դարձնելով բառի լեզուաբանական և քերականական կողմերի

*) «Երաբ» 1899, գիրք Ա. լուսիս, եր. 142 և 160:

վրայ: 2^ե որ իւրաքանչիւր բառ առանձին ստուգաբանութեամբ և բացատրութեամբ է: Բայց շեշտադրութեան կանոնները մեծ ճշտութեամբ պահպանութեամբ են (օր. տես բառարան, էր. 53 ր. Битва; էր. 193 Вышивальщица և Вышивальщица; էր. 208 ր. Гербики. . гербовый; էր. 266 ա. диалектикъ... диалектъ և այլն): Յամենայն դէպս պ. Ստ. Մալխասեանի առաջարկութիւնը այլ կերպ վերոյիշեալ բառը բաժանելու, այն է. Добав|а, Доба|вление... կոպիտ սխալ է տողագրութեան կանոնների դէմ (см. Гротъ, Правописание, стр. 98, изд. 13-ое). Մենք բոլորովին ուղիղ ենք վարուել, Акклиматизация բառը «գերմանական բառ մկրտելով»: Բառի արմատի մասին մեր կազմած ո՛չ-լինգուստիկական բառարանում խօսք չէ կարող լինել, այլ լոկ նրա պատմական ծագման մասին: Արդ, Акклиматизация բառի գաղափարը հենքին անձանօթ էր. այդ բառը ծնունդ է առել Գերմանիայում և արդի եւրոպական կեանքի բարդութիւններից մէկի արտայայտութիւնն է: Ռուսները այդ բառը վերցրել են գերմանացիներից և ոչ թէ յոյներից: Ճիշտ այսպէս էլ վարւում է երևելի Գրօսն իր ուղղագրութեան մէջ: Մենք խնդրում ենք պ. Մալխասեանին բանալ Mayers Kons. Let. Amphora բառը, որի առաջ կը գտնէ «lat» ցուցումը:

Պ. Ստ. Մալխասեանի նկատողութիւնների ամբողջ թափն ընկնում է մեր բառարանի երկրորդ, «հայերէնի մասին» վրայ: Պ. Ստ. Մալխ. մեզ վերագրում է մի շարք տառախալներ, որոնք մեծագոյն մասամբ տպագրական սխալներ են. զեղչ ևս եւս գրում եմ չ-ով, ինչպէս և պ. Ստ. Մալխասեանը (տես բառարան Вычетный... զեղչած. Вычетъ զեղչ, զեղչում. Вычитание... զեղչելը... զեղչել, զեղչուել. Дисконтеръ... զեղչող... մուրհակազեղչութիւն, մուրհակի զեղչումը... մուրհակը զեղչել կամ զեղչելու տալ... զեղչով գնել... մուրհակազեղչի... մուրհակազեղչ, այն զեղչը և այլն): Հրահանգ բառը մենք նոյնպէս գրում ենք գ-ով, ինչպէս և պ. Ստ. Մալխասեանը (տես բառարան էր. 265 Диспозиция... գրաւոր հրահանգ... հրահանգ. էր. 172 Вымуштровать... հրահանգել, էր. 263 дидактика... հրահանգախօսութիւն,—գախօսական,—գախօս... հրահանգիչ. էր. 265 Дисциплинировать-ն... հրահանգել): Չարաչար սխալւում է պ. Ստ. Մալխասեան, թէ չէ կարելի գրել յանկերգ: Կայ յանգեմ և յանկեմ, յանգիմ, և յանկիմ, (տես. Առձեռն բառարան էր. 581—82). ուրեմն կայ և յանգերգ և յանկերգ: Ինձ և ինձ հետ, ինչպէս լիայոյս եմ, ընթերցողներին մնում է—գարմանալ պ. Ստ. Մալխասեանի վրայ, որ նա կարծում է, թէ հրահանգ բա-

որ ուղղագրութիւնը ինձ անձանօթ է: Ընդունում եմ պ. Ստ. Մալխասեանի ստուգաբանութիւնը ներգոյական բառի մասին ինչպէս և ժպիր և խոչընդոտ բառերի ուղղագրութիւնը: Բայց պ. Ստ. Մալխասեանն էլ չարաչար սխալում է, կարծելով, թէ գերեզմանոց սխալ է և պէտք է գրել գերեզմաննոց *): Չարաչար սխալում է պ. Ստ. Մալխասեան, թէ «գրելթէ» սխալ է. անխտիր գրում են և գրեթէ և գրեթէ (տես Առձեռն բառարանը Գրեմ բայի տակ, Վենետիկ, Բ. տիպ): Անխտիր գրում են ամեն և ամեն, ամենախոնարհ և ամենախոնարհ, ամենակարող և ամենակարող: Չարաչար սխալում է պ. Ստ. Մալխասեան, թէ «անհարազատ և սխալ» են յատկիլ, կայսրադն, սայթոն, սայթքել, զարնանացնել, քծնուիլ, լինիլ ընկնիլ ձեւերը և պէտք է գրել յատկիլ, կայսերադն և այլն: Պ. Ստ. Մալխասեան իր յօդուածում, եր. 198-99 գրում է. «պէտք է դիմե... պէտք է խորհրդակցի, պէտք է մտածե, աշխատի, պէտք է հնարե...»:

*) Նոց վերջապրով բառեր կան, որոնք կամ առարկաների տեղն են ցոյց տալիս և կամ քանակութիւնը, օր. յարդ-աւ-նոց, ուսուցչ-աւ-նոց, անասն-աւ-նոց, հաւ-աւ-նոց, գժ-աւ-նոց, և հնգ-աւ-նոց, ութ-աւ-նոց պուղ-աւ-նոց և այլն: Ինչպէս երևում է, պ. Ստ. Մալխասեան նոց վերջադիրն անդեղչելի է համարում, մինչդեռ այս վերջադիրն երբեմն սղուելով դառնում է ոց, օր. մատն-աւ-նոց=մատն-ոց=մատնոց, կութ ոց=կթ-ոց (աամկարար քթոց), հեծան-աւ-նոց=հեծան-ոց (հորակիլ), կանաւ-ի-աւ-նոց=կանաւ-ոց=կանանոց և այլն: Իսկ պ. Ստ. Մալխասեանը մեր բառարանից առաջ բերած բառը, ինչպէս երևում է, այսպէս է ստուգաբանում. գերեզման-աւ-նոց=գերեզման-նոց=գերեզմաննոց: Սակայն այս սղումը զաւտական է, իսկ գրական լեզուի մէջ դորձածական է գերեզմաննոց ձեւը (տե՛ս օր. պ. Նորայր Բիզանդացու Փրանսերէնից հայերէն բառարանում Cimetiène բառը, որի դիմաց դրած է գերեզմանոց): Առհասարակ պ. Ստ. Մալխասեանի նկատողութիւններից երևում է, որ նա խստապահանջ է և մոռանում է արդի աշխարհագրի չեղցեղուկ դրութիւնը: Մեր բոլոր նոր գրողներն և թարգմանիչներն գրում են աշխարհայեցողութիւն (=աշխարհ+այեւ. ուստի և յայտնի չէ, թէ ինչո՞ւ հ-ն սղուում է), ինձ հետ և իմ հետ, Բո, Նրա վրայ և Քեզ վրայ, հաջել և հաչել, Կ գնամ և Կը գնամ և այլն և այլն: Պ. Ստ. Մալխասեան և մենք շատերս Միխիլայեան հայրերի հետեւողութեամբ գրում ենք. գրաբա՛ր, աշխարհագրա՛ր: Բայց ահա՛ թէ այս առթիւ հանգուցեալ լեզուաբան Սարգիս Սարգսեանցն ի՛նչ է ասում. «Աշխարհագրա՛ր-ով գրելը (աշխարհագրա՛ր, գրաբա՛ր) ես սխալ եմ համարում. այդ բառը բարդուած է կամ բառ, կամ (բար)բառ բառերի հետ (իբր՝ աշխարհաբա՛ս, գրաբա՛ս, աշխարհքի լեզու, գրքի լեզու) և արտասանելիս էլ աւելի լսելի է ռ քան ր, մինչդեռ աշխարհագրա՛ր մակբա՛յ է, ինչպէս զազանաբար, առիւծաբար և այլն, օրինակ՝ զազանաբար վարուել, առիւծաբար չարձակուել—բայց ո՛չ զազանաբար մարդ և այլն» («Պարզ» 1892 թ. Յալիլ, եր. 626)»: Այս գիտնական պատճառարանութիւնը այնպէս կտրուկ է, որ ես միայն ընդհանրութեան հնազանդուելով գրում եմ աշխարհագրա՛ր, գրաբա՛ր:

Պ. Ստ. Մալխասեանի վրայ պարտք է մնում բացատրելու, թէ ինչու պէտք է գրել խորհրդակցիլ և ոչ խորհրդակցել, աշխատիլ և ոչ աշխատել, բայց ցատկել և ոչ ցատկիլ, ընկնիլ և ոչ ընկնիլ և այլն: Մենք գրում ենք աւիլ և սանդուխս, որովհետեւ այս բառերը կենդանի ժողովրդի բերանում այսպէս են հնչում և այս ոչ պ. Ստ. Մալխասեան և ոչ էլ մի ուրիշ ոք կարող է հերքել: Յղութիւն և յղանալ բառերն ուրիշ լեզուներում փոխաբերական նշանակութիւն չունին. մինչդեռ հայերէնում նրանց փոխաբերական նշանակութիւնը աւելի գործածական է՝ քան բուն նշանակութիւնը: Մենք գիտամբ փոխաբերական նշանակութեամբ գործ ենք ածում յղանալ և յղութիւն (օր. մի միտք յղանալ), իսկ բուն նշանակութեամբ գործ ենք ածում յղիւնալ և յղիութիւն ձևերը: Խոստովանում ենք, որ այս նորաձեւութիւն է, բայց այս նորաձեւութիւնը նպաստում է լեզուի կանոնաւորութեանը և սխալ չէ: Չէ որ արի ածականից կազմուել է նոյն ձեւով արիութիւն գոյականը, այսպէս և գոլորչի, գոլորչիանալ, կղզի, կղզիանալ և այլն: Կտրիճ (ատամ), պղպնակ, յարդում բառերը սխալ են տպուած (պէտք է կարգալ կտրիչ, պղպշակ և հարթում) և այս ապացուցանել անկարող ենք: «Беременная յղի կինարմատ, ծննդկան» բոլորովին ուղիղ ենք թարգմանել: Սխալում է պ. Ստ. Մալխասեան կարծելով, թէ ծննդկան միայն ծնած, այսինքն աղատւած, երեխայ բերած կին է նշանակում: Ծննդկան նաեւ նշանակում է «որ պիտի ծնանի» (տես Առձեռն բառարանում ծննդական բառը), ուրեմն յղի:

Պ. Ստ. Մալխ. մեր բառարանում «օտարոտի և անհասկանալի» բառեր եւս գտել է: Դոքա են. արանգոնակ, արանգոնակաւոր, հեց, փաղցրիս, արեթեմի, ծո (յ) լ, յամբուկ, Ես գրել եմ. БАЛАХОНЬ ա. (պարսկերէն) արանգոնակ (արձակ վերնազգեստ, որ գիւղացին ամառը հագնում է գաշտային աշխատանքների ժամանակ): Այս ես արել եմ անճարացած, որովհետեւ БАЛАХОНЬ բառի համար հայերէն գրական բառ չր կայ, մինչդեռ Ղազարի գաւառում գործ է ածւում արանքոհնակ բառը, որ իր իմաստով ճիշտ համապատասխանում է БАЛАХОНЬ բառին: Բայց չեմ զլացել արանքոհնակ գաւառական բառը բացատրել: Պ. Ստ. Մալխ. իմ «խնջոյք տալ, խնջոյք սարքել, «մաղարիչ առնել» բացատրութիւնը համարում է «օտարոտի և տգեղ» և իր կողմից առաջարկում է «ջուրը քաշել, ջրել, ձէթվէթելիք տալ, առնել», որ ինձ նոյնպէս անհասկանալի է, ինչպէս պ. Ստ. Մալխասեանին արանքոհնակ բառը: Ուրեմն զփուարութիւնը

ինչորի մէջ է, բառարան կազմողը ոչ մի մեղք չունի: Ես ինչ մեղաւոր եմ, որ պ. Ստ. Մալխասեանին հեց, ոգորեցի, արեւ-
բեցի, ծո (յ) լ, յաւրուկ, քաղցրիս գրական և յաճախ գործածական
բառերը անհասկանալի են *):

«Գոռնկարանութիւն» և «օտարարանութիւն» եւս պ. Ստ.
Մալխ. գտել է մեր բառարանում: «Միայն 184 երեսում պա-
տահում ենք,—գրում է պ. Ստ. Մալխ.—այս գոռնկարանու-
թիւններին. դալմադալ բարձրացնել. ֆօթակ, ֆօթակել, բօյու՝
ամբողջ երկարութեամբ գետին փռուել: Ինչով պակաս կը լի-
նէր, եթէ ասէինք աղմուկ բարձրացնել, ծեծ, ծեծել կամ քա-
կել... Պ. Ստ. Մալխ. մինչեւ անգամ զլանում է մեր բառա-
րանի երեսները ճշտութեամբ նշանակելու: Եր. 184 միայն գրտ-
նըւում է. ВЫСТЕГАТЬ (նամկաբար) ծեծել, քակել, քօթակել: Իսկ
պ. Ստ. Մալխասեանի յիշած միւս տեղերը ուրիշ երեսներում
են գտնւում. Եր. 84 ОУЯНИТЬ (-НЮ-НЯТЬ) չ. ալմուկ, կոխ,
«զալմադալ» բարձրացնել: Եր. 161 ВЫДРАТЬ-С. (նամկաբար)
խիստ ծեծել, քակել, «քօթակել», «զխկել»: Եր. 259 дера ի.
(նամկական բառ) ծեծ, գան, քօթակ, զխկոյ: (Ձր կարողացայ
գտնել միայն այն երեսը, ուր գործ եմ ածել բօյի բառը): Ինչ-
պէս ընթերցողը տեսնում է, պ. Ստ. Մալխասեանի պահանջած
բոլոր բառերը կան, այն էլ առաջ են զրուած: Վերոյիշեալ
ոսերէն բառեր իրանք ուսմական բառեր են, իսկ հայերէն
ոսմական բառերը, ինչպէս բառարանիս համառօտութիւնների
ցուցակում յայտնել եմ, չակերտների մէջ են զրած: Ես դար-
ձեալ չեմ հասկանում, թէ էլ ինչ կարող էի անել որ պ. Ստ.
Մալխասեան գոհ մնար: Եւ զարմանալին այն է, որ «գոռնկա-
րան» բառերի ոխերիմ թշնամի պ. Ստ. Մ. քիչ յետոյ իր յօ-
դուածում (Եր. 199) գործ է ածում գլխից ուսդ անել զար-
ձուածքը: Գրական բառերից յետոյ ոսմական և ժողովրդական
բառերի գործածութիւնը մեր բառարանում և այն լաւ կողմն
ունի, որ մեր ընթերցողներից մի լաւ կոնտինգէնտ, զուրս գա-
լով ժողովրդի միջից, մտնելով պետական վարժարան և ապա
համալսարան, յաճախ անծանօթ է մնում հայ գրական լե-
զուին: Սոցա ժողովրդական և ոսմական բառերն աւելի հաս-
կանալի են, քան գրական բառերը: Թող չը զարհուրի պ. Ստ.

*) Հեց բառը ես գործ եմ ածել միւլիսայն անուի շրջանակի նշա-
նակութեամբ: Պ. Ստ. Մալխ. ցոյց չէ տուել այն տեղը, ուր. ես «զուգայի
նշանակութեամբ» եւս իբր թէ գործ եմ ածել: «Շուշանի գետեզր», որ
գրաբարագէտ պ. Ստ. Մալխ. կարդացել է «ի գետեզրի» եւս բառացի
վերցրել եմ հայր Մէնէվիշեանեց (տ. Բուսարանութիւն, Եր. 54):

Մ. այդպիսի բառերից, Ռամկական, ժողովրդական և գաւառական բառեր գործ են ածուծ մեր բոլոր նոր գրողներն և թարգմանիչները: Պ. Ստ. Մալխասեանից ոչ պակաս հմուտ լեզուաբան, հանգուցեալ Ս. Սարգսեան, իր սքանչելի գրախօսութեան մէջ, որ գրել է պ. Եաղուբեանի բառարանի առթիւ, կշտամբում է պ. Եաղուբեանին, որ նա «մի շարք թրքական բառերի, որոնք անդառնալի կերպով մտել են մեր նոր լեզուի մէջ», չէ զետեղել իր բառարանում: Այդ բառերն են. ղօշաղ, իօլա (գնալ, տանել), ախր, դարդ, հեշ, հեֆաթ և այլն *):

Պ. Ստ. Մալխասեան մեզ մեղադրում է, որ մենք ասել ենք ոուս եկեղեցու ռասկոլ և ոչ հեռձուած: Ինչպէս երևում է, պ. Ստ. Մալխասեանը թիւո հասկացողութիւն ունի ոուս եկեղեցու ռասկոլի մասին: Եկեղեցական պատմութեան մէջ յիշուած հերձուածողները լոկ կրօնական միութիւններ էին, կրօնական ձգտումներով: Բոլորովին ուրիշ, սօցիալական ձգտումներ ունի ոուս եկեղեցու ռասկոլը: Ահա այդ նրբութիւնը, (նիւանսը) պահպանելու համար է, որ ես գործ եմ ածել ուսկոյ: Կատարեալ մոլորութիւն է, ասել թէ հերձուած բառը «պատմական նշանակութեամբ ճիշտ համապատասխանում է ուսերէն расколъ բառին»: Եկեղեցական պատմութեան ուր չըջանում է պ. Ստ. Մալխասեանը կարդացել 13 միլիօն հերձուածողներ...

Սխալ է և այն բացատրութիւնը, որ պ. Ստ. Մալխասեանը տալիս է всемогущественный և всемогущий ածականներին: Պ. Ստ. Մ. всемогущий ածականի դիմաց ակադէմիական բառարանում օրինակներ է գտել Ասածու մասին, իսկ всемогущественный-ի դիմաց չէ գտել և զրանից խարուած ասում է. «всемогущественный բառը կարելի է գործ ածել և՛ մարդկանց համար, իսկ всемогущий միայն Ասածու համար»: Գրօտի նման լինգուիստ-լեզուաբանը գրում է. «всемогущественный=всесильный, всемогущий» և «всемогущий=... всесильный»: Բայց մենք ուրիշ օրինակ ես բերենք. մենք խնդրում ենք պ. Ստ. Մալխասեանին բացել Грубе, Исторические Очерки, стр. 412, 10 изд. 6-ое 1897 г. և կարդալ հետևեալ տողը. всемогущий Наполеонъ стоялъ на недосыгаемой высотѣ.

Պ. Ստ. Մալխասեանը իր քննադատութեան մէջ առհասարակ խիստ համարձակ և անզգոյշ է. կարդալով մեր բառարանում «раздѣльный актъ имѣнію»-ի բացատրութիւնը, պ. Ստ. Մալխ. բացականչում է «ձայրէ ձայր սխալ և բազմաթիւ թիւրիմացութիւնների տեղիք տուող բացատրութիւն»: Ես կտա-

*) Մուրճ 1892 թ. № 2, էր. 299:

կազիր թարգմանելով աչքի առաջ եմ ունեցել Տուրգենևի «Степной король Лиръ», гл. XII.

Բժարնդութիւն է вариация բառի թարգմանութիւնը «խոշոր սխալ» հրատարակել: Ի՞նչ տարբերութիւն կայ փոփոխութեան (այս մեր բացատրութիւնն է) և «զարդարուն զանազանիւրեքեան» (այս պ. Ստ. Մալխասեանի բացատրութիւնն է) մէջ, այդ մենք այժմ ևս չենք հասկանում: Միակ «խոշոր սխալ», որ պ. Ստ. Մալխ. մեր բառարանում գտել է, այդ այն է, որ մենք торгъ բառը փոխանակ առուտորի, աճուրդ ենք թարգմանել: Բայց թող պ. Ստ. Մալխասեանն իրան անսխալական չը համարէ: Օրինակ, պ. Ստ. Մալխասեան պ. Ար. Յովհաննիսեանի բառարանը քննադատելիս НАМЫЛИТЬ КОМУ ГОЛОВУ նախադասութիւնը թարգմանում է. «մէկի գլուխն օճառել,— մէկի գլուխը իւղ քսել» *):

Պ. Ստ. Մալխասեանը մեր բառարանում սխալ է համարում նաև Ажурный բառի թարգմանութիւնը: Նա բացականչում է. «եթէ պատահե՞նք ուսերէն, օրինակ, այսպիսի մի խօսքի—серебряный, ажурный, подсвѣчникъ—խնչպէս պէտք է թարգմանենք.—արծաթէ՛ ծակծկուած, ծակոտկէն, ցանցակերպ, նօսր, թափանցիկ աշտանակ», Պրն. Ստ. Մալխասեանի հարցումը միանգամայն իրաւացի կը լինէր, եթէ ես միմոսների և ծալբաժուների համար լինէի բառարան կազմած... Ահա, ասիկ պ. Ստ. Մալխասեանի առաջարկած նախադասութեան կոկիլիկ հայերէն թարգմանութիւնը հէնց մեր բառարանի բառերով. «արծաթէ աշտանակ ցանցակերպ դրուագով (կամ նաշխով)»: Ажурный ածականի ստուգաբանութիւնը շատ պարզ է. à jour (jour լոյսի նշանակութեամբ) և մեր թարգմանութիւնը բոլորովին ճիշտ է: Գերմանացին էլ ուրիշ կերպ չէ թարգմանել: Պալլուսկու բառարանում (Русско-нѣмецкій словарь, Рига 1900 г.) վերև յիշած բառը թարգմանուած է. «durchsichtig, durchbrochen»: Այս բառերը ճիշտ համապատասխանում են մեր թարգմանութեան «ցանցակերպ, ծակոտկէն, նօսր» բառերին, որովհետև durchsichtig բառացի նշանակում է քափանցիկ, բայց գործուածքների մասին կիրառուելով նշանակում է ցանցակերպ, վաճաղակերպ, հօսր»:

Պ. Ստ. Մալխասեանի նկատողութիւնը варенецъ բառի

*) Տե՛ս «Արաբ» 1899, գիրք Ա. յուլիս, էր. 143: НАМЫЛИТЬ կամ ВЗМЫЛИТЬ КОМУ ГОЛОВУ նշանակում է. «մէկին լանդիմանել, շշարել, ներկել, իսկ մէկի գլխին եղ քսել, մէկի գլուխը եղել բոլորովին ուրիշ բան է նշանակում»:

նկատմամբ կարող է ուղիղ լինել: Մեզ Վործնական մարդ ժամանակակից ոգով՝ անուանող պ. Ստ. Մալխ. վերջին տարիներս ինքը հայկաբանութիւնից անցել է կաթնատնտեսութեան, ուստի և նա կարող է варенецъ բառի ճիշտ նշանակութիւնը գիտնալ: Բայց և այնպէս պէտք է ասենք, որ варенецъ-ը նոյնքան տարբերոււմ է «ամեն մի հայի ծանօթ մածնից», որքան և простокваша-ն: Հային ծանօթ մածունը ուսը անուանոււմ է кислое молоко, ուրիշ ոչինչ:

Պ. Ստ. Մալխասեանը նոյնպէս պահանջոււմ է, որ մենք ամեն մի ուսերէն և օտարազգի բառ անպատճառ հայերէն թարգմանենք, իսկ ճարահատեալ դէպքում օտարազգի բառը դնենք և մեզ մատնացոյց է անոււմ պ. Նորայր Բիւզանդացի և հայր Քաջունի բառարանագիրներին: Սակայն այս հեղինակները պ. Ստ. Մալխասեանի համար անսխալական են, բայց ոչ մեզ համար: Իրաւ, այս հեղինակները ճիշդ են թափել ամեն մի բառ հայայնել, բայց զրա հետեանքն եղել է իրանց բառարանները մի շարք չինձու բառերով լցնելը, որ մեզ երբէք հաճելի չէ կարող լինել: Մենք չենք հաւատում, որ բառարանագիրը կարող է լեզու ստեղծել և որ բառարանը յաւիտեական բան է: Ո՛չ, այդ մոլորութիւն է, լեզու կազմողը ժողովուրդն և նրա գրականական աշխարհն է, բառարանը ժամանակաւոր բան է: Պ. Ն. Բիւզանդացու բառարանի հրատարակութիւնից մինչև այսօր անցած ժամանակամիջոցում հայ ժողովուրդը և գրականութիւնը գտել, հնարել են բազմաթիւ հիանալի հայերէն բառեր և դարձուածքներ, որոնց մօտ պ. Նորայրի չինձու բառերը ոչինչ են: Հինց վեր առնենք պ. Ստ. Մալխասեանի յիշած ГНОМЪ բառը: Այդ բառը պ. Ն. Բիւզանդացին թարգմանել է «հողապայ»: Վերջին բառն ամենեւին չէ համապատասխանում ГНОМЪ բառին, ուստի և ես այսպիսի բառեր չէի կարող ընդօրինակել վերև յիշուած հեղինակից: Ամեն մի բառի դէմ անպատճառ մի հայերէն բառ դնելը ունի և այն վնասը, որ զրանով բառարանագիրը թարգմանիչներին ոչ միայն յաճախ թիրիմացութիւնների մէջ է գցում, այլ և կաշկանդում է նրանց մտքի թռիչքները, նրանց առաջ քար է գցում և թոյլ չի տալիս նրանց ազատ մտածելու և հնարելու:

Պ. Ստ. Մալխասեանը այս առթիւ խօսելով, մեզ յորդորում է օրինակ առնել այս բարեխիղճ բառարանագիրներից, «ամբողջ օրեր միջնեցնել, գիշերներ լուսացնել, տասնեակ գրքերի դիմել մի բառի համար»: Ինչպէս երևում է, պ. Ստ. Մալխասեանի ամենեւին հոգսը չէ այն խայտառակ գրութիւնը, որի մէջ այսօր գտնոււմ է ոռոտահայ հրատարակութիւնը: Ահա

երրորդ տարին է, որ աշխարհիս երեսին ծախուռ ոչ մի ռուս-հայ բառարան չը կայ, ընթերցողը այրուելով-փոթոթուելով մի գրախանութից միւսն է վազում, կրկնակի գին է առաջարկում, բայց ամեն տեղ մերժում է ստանում: Շատերը բառարանի ձեռք զարկեցին, յայտարարութիւններ տուին, բայց ոչ ոք այս հասարակական աղէտին օգնութեան չը հասաւ: Եւ անս անս ժամին պ. Ստ. Մալխասեանը այսպիսի պահանջներ է անում: Դարձեալ պէտք է ասենք, որ մի հեղինակ կարող է իր գործի վրայ 14 տարի «Թշուստաբիրան» աշխատանք թափել, իսկ միւսը մինչ 8 տարի և նոյն հետեւանքներին հասնել: Հէնց սրան պարզ սպացոյց է, պ. Նորայր Բիւզանդացու տնայայտան բարեխիղճ և լուրջ բառարանը: Բայց ինչ օգուտ, քանի որ այդ զընահատելի բառարանի էջերը հայ ժողովրդի մաստայի համար փակ են: Պ. Ն. Բիւզանդացին գրաբարամոլութիւնից կուրացած կազմել է ֆրանսերէնից գրաբար բառարան, մոռանալով այն հանգամանքը, որ մենք ունենք աշխարհիկ լեզու, որ իր բնոյթով և ձկունութեամբ, անհամեմատ աւելի համապատասխանում է ֆրանսերէնին, քան մեզած գրաբարը: Այն ինչ «վկայութիւններ» են, որ պ. Ն. Բիւզանդացին տաժանելի աշխատանք թափելով գրաբար ձեռագիրներից և դասական մատենագիրներից քաղել և լցրել է իր բառարանը: Այդ քաղուածքները շատ անգամ բալաստ են բառարանի համար: Աւելացրէք սրան այդ բառարանի անմատչելի գինը և կը տեսնէք, որ պ. Նորայր Բիւզանդացու բառարանից հայ ընթերցողների 990/0-ը ոչ մի օգուտ չունի:

Պ. Ստ. Մալխասեանի պահանջը, թէ մենք մեր բառարանում պէտք է բացատրէինք կենդանաբանական, բուսաբանական, հանքաբանական և քիմիական բառերը (նրանց «գլխաւոր յատկութիւնները—այսինքն՝ գիտական դասաւորութիւնը, նկարագրութիւնը, ինչ բանի գործածուելը և այլն»—պահանջում է պ. Ստ. Մալխասեանը) մեր ծրագրից դուրս է: Եթէ այդ անէինք, մեր բառարանին կ'աւելանար 100—150 երես, որով և գինը պիտի ստիպուած բարձրացնէինք (պ. Ստ. Մալխասեանը խոստովանում է, որ մեր նշանակած գինը թանկ չէ): Բացի սրանից կան կենդանիներ, բոյսեր և հանքեր, որոնց պատկերները անհրաժեշտ պիտի գնէինք նրանց նկարագրութեան տակ, ընթերցողներին լաւ հասկացողութիւն տալու համար, որովհետեւ այլպէս նրանց ամենաճիշտ նկարագրութիւնից էլ ընթերցողները բան չէին հասկանալ:

Аблукать բառը Воскресенье III, 9 ռամիկ գիւղացին գործ է անել ինտէլիգենտ վաստաբանի համար, հետեւաբար

սխալ չէ մեր համառոտութիւնը: Թարգմանական բառերի «կուտակութիւնը» երբեմն անհրաժեշտ է լինում բառի նշանակութեան երանգները (nuance) ըստ պատկանելոյն անվթար բացատրելու: Ճիշտ է պ. Ստ. Մտլխասեանի նկատողութիւնը, թէ ВѢРОДОМІЕПЪ բառի դէմ հաւատադրուծ բառն աւելորդ է:

Վերջացնում եմ ասելիքս, աւելացնելով, որ ես չատ լաւ գիտեմ, թէ կատարելութիւնը նաեւ բառարան կազմելու գործում անհասանելի իդէալ է. ես հաւատացած եմ որ քննադատութիւնը կարող է յայտնի չափով մօտեցնել մեզ այդ իդէալին, եթէ միայն քննադատութիւնը աւելի բազմակողմանի և անբծախնդիր ոգով տողորուած լինի: Ինչ վերաբերում է «մըրցութեան»... ասպարէզը բայ է:

Գ. ԴԱՂԲԱՇԵԱՆ

Քիֆլիս, 15-ն հոկտ. 1902 թ.

Ն Ա Մ Ա Կ Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Թարիզ, 21 սեպտ. 1902 թ.

«Մուրհի» այս սարուայ № 8-ի մէջ կարդացի եր. Ֆրանգեանի գրած «Պարսկաստանի սնտեսական դրութիւնը» յօդուածում, սնանկացող պարսկահայ զանազան առեւտրական սների շարքում, նաեւ «Արամեան ընկերութեան» անունը եւ միանգամայն զարմացած մնացի պարոնի գրածից՝ թէ այդ ի՞նչ նպասակով է գրել կամ ի՞նչ Արամեան ընկերութիւն է այդ, քանի որ կայ մի ընկերութիւն միայն այդ անունով՝ որ կազմուած է 1889 թուին եւ այդ օրուանից գործել է մեծ յաջողութեամբ. եւ նոյն եռանդով գործում է եւ այսօր:

Ուսի զանազան թիւր կարծիքների տեղիք չը տալու եւ ընկերութեան պատիւն վերականգնելու համար պահանջում եմ պարոնից որ բարեհաճի հերքելու իր գրածը հայ պարբերական թերթերում*):

ԲԱՅԱՋԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

*) Այս նամակը ստանալուց ասաջ ինքը պ. Եր. Ֆրանգեանը լալտնել էր մեզ իր արած ազամայ սխալի մասին և խնդրել էր ուղղել այդ ցառալի թիւրիմացութիւնը
Խմբ.

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր

Բալախանի. պ. Ա. Ս տ.—Պէտք է ուղարկէք 5 ուրբի և ոչ 4, Համար-
ները ուղարկուած են:

Բousol. պ. Կ ա Ր Ի Ճ.—Սպասում ենք:

Շահրխար գիւղ. պ. Գ. Յ.—Խնդրում ենք պարզել թիւրիմացութիւնը:

Բալախանի. պ. Ալ. Առ. Սխալը ուղղուեց:

Մրեւան. Յ. Տ.-Մ.—Թարգմանութիւնը չի տպագրուելու:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Այս համարում.

Նրեւ սող	սպուած է	պէտք է լինի
85	8	խեղճ
158	1	շէնքերի
163	9	աշխատութեան

Լ Է Օ

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Ե Ր Կ Ո Ն Հ Վ Ս Ո Ր

Հատ. առաջին 12+224 էր., հատ. երկրորդ 14+406 էր.
ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐԻ ԳԻՆՆ Է ԹԻՖԼԻՍՈՒՄ 1 ՌՈՒԲԼԻ 50 ԿՈՊ.

Ճանապարհածախսով 2 սուբլի:

Դիմել. Тифлис. Редакция „Мшакъ“.

ԲԱԳՈՒՄ Վաճառում է Սամսոն Յարութիւնեանցի գրա-
վաճառանոցում:

Թիֆլիսի բաժանորդներին խնդրում են չտապել ստանա-
լու իրանց դրբերը:

Լ Ո Յ Ս Մ Ե Ս Ս Ա

Հ Ա Ն Ր Ի Բ Օ Ր Դ Օ Ի

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ

Վ.Է.ՊԸ

Թարգմանեց Հ. Առաքելեան

Արտատպւած „Մուրճ“ ամսագրից

Գինն է 60 ԿՈՊ. (ճանապարհած. 75 Կ.)

Մամուլի տակ է և չուտով լոյս կը տեսնի

Շ Ա Հ Ր Ի Ա Ր Ի

ԶՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ

(Հրէասպանութիւն)

Վ Է Պ Ը

Պարսկաստանի կեանքից

(Արտատպ. „Մուրճ“ ամսագրից)

Գինն է 50 Կ. (ճանապարհած). 60 Կ.)

Դիմել՝ Հ. Առաքելեանին, «Մուրճի» խմբագրատուն
և «Դուտտէներգ» գրավաճառանոցը:

„ЭНЦИКЛОПЕДИЧЕСКІЙ СЛОВАРЬ“

Брокгауза и Ефрона

(начатый проф. И. Е. Андреевскимъ)

ПРОДОЛЖАЕТСЯ ПОДЪ РЕДАКЦІЕЙ

К. К. АРСЕНЬЕВА и заслуженнаго проф. В. В. ПЕТРУШЕВСКАГО

Словарь выходитъ полутомами каждые ДВА мѣсяца.

Вышелъ 70-й полутомъ (Фенслы—Финляндія).

Цѣна cadaго полутома 3 р. въ переплетѣ.

Книги высылаются почтою, при чемъ за пересылку взимается 40 к. съ книги.

Всѣ вышедшія уже книги высылаются по ж. дор., съ уплатою за провозъ по желѣзнодорожному тарифу (требуется указаніе станці).

ДОПУСКАЕТСЯ ПОДПИСКА ВЪ РАЗСРОЧКУ:

1) При подпискѣ вносятся задатокъ отъ 10 р. и выдаются имѣющіеся налицо полутомы. Долгъ выплачивается ежемѣсячными взносами отъ 7 р, независимо отъ приобрѣтенія остальныхъ полутомовъ по 3 р. за книгу.

2) Лица, желающія подписаться въ разсрочку, благоволятъ указать на служебный, общественный или имущественный цензъ, при чемъ контора редакціи оставляетъ за собою право не принять подписку, если найдетъ гарантію уплаты недостаточною.

Принимается подписка на „Малый энциклопедическій словарь“ Брокгауза и Ефрона. Вышли 10 вып. Цѣна cadaго 1 р. 50 к. безъ пересылки.

Подписка принимается въ Баку, уг. Красноводской и Молоканской, д. Муса-Нагіева, у Ивана Өаддѣевича Мусиньянца.

5—1

Ա. Ա. ՀԱՐՈՆԵԱՆ

«Խ Ե Ղ Ճ Ե Ր Ը»

Պատմաճիւղի ժողովածուն, մօտ 400 երես, մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի: Գինն է 1 ոսկրի, ճանապարհածախսով 1 ո. 20 կ. ճանկացողները այժմէն կարող են դիմել «Մուրճի» խմբագրատուն՝ հեղինակին. Դիֆլիս, ռեդակցիա «Մուրճ».

5—2

Книгоиздательское Т-во „Просвѣщеніе“

“Большая Энциклопедія,”

Словарь общедоступныхъ свѣдѣній по всемъ отраслямъ знанія, под редакціей С. Н. Южанова.

20 томовъ въ переплетахъ по 6 руб.

Въ общей стоимости 120 ”

“Вся Природа“,

состоящая изъ слѣд. изданій:

Цѣна въ роскош. полукож. переплетѣ

„Мірозданіе“ д-ра Мейера	8 р. 60 к.
„Исторія земли“ проф. Неймайра, 2 тома	15 ” — ”
„Происхожденіе животнаго міра“ проф. Гааке	7 ” — ”
„Жизнь животных“ Брэма, 3 тома	24 ” — ”
„Жизнь растений“ проф. Кернера, 2 тома	15 ” — ”
„Человѣкъ“ проф. Ранке, 2 тома	14 ” 20 ”
„Народовѣдѣніе“ проф. Ратцеля, 2 тома	15 ” — ”

Всего . . 98 р. 80 к.

Альбомы картинъ по географіи и естествознанію:

Цѣна въ изящн. переп.

Альбомъ картинъ по географіи Европы	1 р. 50 к.
” ” ” ” вѣввропейск. странъ	1 ” 75 ”
” ” ” ” зоологіи птицъ,	1 ” 75 ”
” ” ” ” млекопитающихъ	1 ” 75 ”
” ” ” ” рыбъ	1 ” 75 ”
” ” ” ” низшихъ животныхъ	1 ” 75 ”
” ” ” географіи растений	1 ” 75 ”

Исторія нѣмецкой литературы

профессоровъ Фогта и Коха 8 р. 60 ”

Промышленность и техника

10 т. по 6 руб. = 60 руб.

Исторія человѣчества (Всемирная исторія)

подъ ред. д-ра Гельмольта.

8 томовъ по 6 руб. = 48 руб.

Подробные проспекты высылаются бесплатно;
первые выпуски за 6 семикоп. марокъ.

Продажа въ разсрочку на весьма выгодныхъ условіяхъ.

Подписка принимается въ Баку, у гл. Красноводской и Молоканской,
д. Муса Нагіева, у Ивана Фаддѣевича Мусиньянца.

16. ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Պարլամենտական նիստերի վերաբացումը Անդրիայում և Ֆրանսիայում.—Մակեդոնական հարցը.—Լըրուա Բօլիօի լոգուածը.—Նիլիկիայի կաթողիկոսական ընտրութիւնը.—Հայոց եկեղեցի Պարիզում:	195
17. ԷՄԻԼ ԶՕԼԱՆ ԵՒ ՆԱՏՈՒՐԱԼԻԶՄԸ, Ա. Ահարոնեանի:	203
18. ՆԱՄԱԿ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅ, Կղերականութիւնը Գերմանիայում, Quidam	213
19. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	222
20. ՆԱՄԱԿՆԵՐ ԵՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ	224
21. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	237
22. ՅԱԵԼՈՒՄ, «ՕՐԱՄՈՒՏԻՆ», Վէպ Տուրգենեվի (Վերջ)	145—160

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը՝ յատուկ խնդրում է լոգուածագիրներին՝ գրել պարզ, մանաւանդ թուերը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի երեսի վրայ:

2. Զընդունուած մեծ լոգուածները պահում են խմբագրատանը 6 ամիս, իսկ փոքր լոգուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերադարձնում: Զեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը:

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է Խմբագրութիւնը:

4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած լոգուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. „Մուրճի“ համարը չը ստացուելու դէպքում պէտք է Խմբագրութեան տեղեկութիւն տալ մինչև յաջորդ համարի լոյս տեսնելը: Այդ տեղեկութեան անհրաժեշտ է կցել տեղական պօստային գրասենեակի՝ հաւաստագիրը (удостоверение), որ ամառգրի համարը չի յանձնուած գանդատաւորին:

Բ Ա Յ Ո Ւ Ա Ծ Է

1903 ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

(Նոր շրջան, III-րդ տարի)

Խմբագրութեան անդամների եւ՝ աշխատակիցների նոյն կազմով:

1903 թուականին «Մուրճում» տպուկու է, ի միջի այլոց, Ա. Ահարոնեանի մի նոր մեծ վէպ՝ «ՄՐՐԿԻ ՍՈՒՐԲԸ», շարունակուելու է Լեօի «ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ», թարգմանուելու են Ա. Ուոլիեսի «ՀՐԱՇԱԼԻ ԴԱՐԸ» և Զօլայի վերջին՝ «ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ» վէպը:

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Ը՝

Ռուսաստանում տարեկան 10 ասր. Արաստահմանում՝ 12 ասր.

կէս տարին 6 " " 7 " " 1 ամսուան 1 " " 1 " 20 Կ.

«Մուրճ» ամսագրին կարելի է գրուել նաև՝

Թիֆլիսում—խմբագրատանը ձալճալճեան փողոց, տ. № 16) և «Գուտտենբերգ» գրալճառանոցում:

Բալախանի. պ. Մ. Տէր-Գանիէլեանի մօտ, «Անդրանիկ» ընկ. դորժարանում:

Բագու. պ. Յ. Մուսինեանի մօտ, Կրասնօլոզսկայա և Մալախանսկայա փողոցների անկիւն, տ. Մուսա Նաղիկիլի:

Կայսերութեան այլ քաղաքից պէտք է դիմել՝ Тифлисѣ, въ редакцію журнала „Мурчъ“.

Արաստահմանից՝ Tiflis, Rédaction de la revue „Mourtech“.

«Մուրճում» ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ զեկեղելու համար պէճ է վճարել.

Մի երես թանող չալտարարութեան համար . 10 Կ.

1/2 " " " " 5 "

1/4 " " " " 2 "